ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ՄԱՅԻՍ 2017

Լիահոնա

Գերագույն Համաժողովի Ելույթները

Հայտարարվել են հինգ նոր տաճարներ

Կանչվել են վեց նոր Յոթանասունականներ և Սփոփող Միության Գերագույն Նախագահություն

ԿԵՆԴԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԸ

Առաքյալների վկայությունը

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի

Հիշելով երկու հազարամյակ առաջ տեղի ունեցած Հիսուս Քրիստոսի Ծնունդը մենք բերում ենք մեր վկայությունը Նրա անզուգական կյանքի իրողության և Նրա քավող մեծ զոհաբերության անսահման զորության մասին: Չկա որևէ մեկը, որը այդպիսի խորը ազդեցություն ունենար բոլորի վրա, ովքեր ապրել և ովքեր դեռ ապրելու են երկրի վրա:

Նա Հին Կտակարանի Մեծ Եհովան էր և Նոր Կտակարանի Մեսիան: Իր Հոր ղեկավարության ներքո Նա էր երկրի արարիչը: «Ամեն ինչ նրանով եղավ, և առանց նրան ոչինչ չեղավ, ինչ որ եղավ» (Հովհ. Ա.3): Թեև անմեղ լինելով Նա մկրտվեց, որ ամեն արդարություն կատարվի: Նա «մանեկավ բարի անելով» (Գործք Ժ.38), թեև արհամարհվեց դրա համար: Նրա ավետարանը խաղաղության ու բարյացակամության ուղերձ էր: Նա կոչ արեց բոլորին հետևել Իր օրինակին: Նա քայլեց Պաղեստինի ճանապարհներով, բուժելով հիվանդներին, տեսողություն շնորհելով կույրերին, կենդանացնելով մահացածներին: Նա սովորեցնում էր հավերժական ճշմարտությունները, մեր նախաերկրային կյանքի իրողությունը, երկրի վրա մեր կյանքի նպատակը և գալիք կյանքի համար Աստծո որդիների ու դուստրերի ներուժը:

Նա հիմնեց հաղորդությունը որպես Իր մեծ քավող զոհաբերության հիշեցում: Նա ձերբակալվեց ու դատապարտվեց կեղծ մեղադրանքներով, մեղավոր ճանաչվեց ամբոխին բավարարելու համար, և մահվան դատապարտվեց Գագաթի խաչի վրա: Նա զոհեց Իր կյանքը քավելու համար ողջ մարդկության մեղքերը: Նա մեծ փոխարինող պարգև էր բոլոր նրանց օգտի համար, ովքեր երբևէ կապրեն երկրի երեսին:

Մենք ամենայն լրջամտությամբ վկայում ենք, որ Նրա կյանքը, որն առանցքային դեր ուներ ողջ մարդկության պատմության մեջ, սկիզբ չէ առել Բեթլեհեմում, ոչ էլ ավարտվել է Գագաթում: Նա Աստծո Առաջնեկն էր, Միածին Որդին մարմնում, աշխարհի Քավիչը:

Նա հարություն առավ գերեզմանից՝ «ննջածների առաջնեկ եղավ» (Ա Կորնթ. ԺԵ.20): Որպես հարություն առած Տեր, Նա այցելեց նրանց, ում սիրում էր կյանքի ժամանակ: Նա նաև առաքելությամբ այցելեց հնադարյան Ամերիկայի Իր «ուրիշ ոչխարներին» (Հովհ. Ժ.16): Մեր ժամանակներում Նա և Նրա Հայրը հայտնվեցին պատանի Զոզեֆ Սմիթին, սկսելով երկար խոստացված «ժամանակների լրիվության դարաշրջանը» (Եփես. Ա.10):

Կենդանի Քրիստոսի մասին մարգարե Զոզեֆը գրել է, որ Նրա աչքերը կրակի բոցի նման էին, Նրա գլխի մազերը ճերմակ էին, ինչպես մաքուր ձյունը, Նրա դեմքը փայլում էր, գերազանցելով արևի պայծառությունը, և Նրա ձայնը հորդացող մեծ ջրերի ձայնի նման էր, այո, Եհովայի ձայնը, ասելով,

որ Նա է առաջինն ու վերջինը, որ Նա ապրում է, որ Նա մահվան դատապարտվեց և, որ Նա է մեր պաշտպանը Աստծո առջև (տես ՎԿՈ 110.3-4):

Մարգարեն նաև ասել է, որ բոլոր վկայություններից հետո, որ տրվել են Փրկչի մասին, նա տալիս է այս վկայությունը, ամենավերջինը՝ որ Փրկիչը ապրում է:

Քանզի մարգարեն տեսել է Նրան Աստծո աջ կողմում և լսել է ձայնը, ազդարարող, որ Նա է Աստծո Միածին Որդին,

որ Նրա կողմից, Նրանով և Նրանից է, որ աշխարհները կան և ստեղծվել են և բնակիչները դրանց՝ ծնված որդիներն ու դուստրերն են Աստծո (տես ՎԿՈ 76.22-24):

Մենք ամենայն խոհեմությամբ ազդարարում ենք, որ Նրա քահանայությունը և Նրա Եկեղեցին վերականգնվել են երկրի երեսին. «Առաքյալների և մարգարեների հիմքի վրա շինված. որի անկյունի գլուխը Հիսուս Քրիստոսն է» (Եփեսացիս Բ.20):

Մենք վկայում ենք, որ մի օր Նա կվերադառնա երկիր: «Եվ պիտի հայտնվի Տիրոջ փառքը, և ամեն մարմին միասին պիտի տեսնեն» (Եսայիայի Խ.5): Նա կղեկավարի ինչպես Թագավորների Թագավորը և կկառավարի ինչպես Տերերի Տերը և ամեն ծունկ պիտի ծալվի ու ամեն լեզու խոստովանի Նրա առջև երկրպագության մեջ: Մեզանից յուրաքանչյուրը պետք է կանգնի դատվելու համար Նրա կողմից համաձայն մեր գործերի ու մեր սրտի ցանկությունների:

Որպես Նրա պատշաճ հաստատված Առաքյալներ, մենք վկայում ենք, որ Հիսուսը ապրող Քրիստոսն է, Աստծո անմահ Որդին: Նա է մեծ Թագավոր Էմմանուելը, որը կանգնած է այսօր Աստծո աջ կողմը: Նա է լույսը, կյանքը և հույսն աշխարհի: Նրա ճանապարհն այն արահետն է, որ տանում է դեպի երջանկություն այս կյանքում և հավիտենական կյանք գալիք աշխարհում: Փա՛ռք Աստծուն Իր սուրբ Որդու անզուգական պարգևի համար:

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Thomas S. Monson
James E. Faust

1 հունվարի, 2000թ.

ՏԱՍՆԵՐԿՈՒՍԻ ՔՎՈՐՈՒՄ

Boyd K. Packer
L. Tom Perry
David B. Haight
Neal A. Maxwell
Russell M. Nelson
Dallin H. Oaks

M. Russell Ballard
Joseph B. Wirthlin
Richard G. Scott
Robert D. Hales
Jeffrey R. Holland
Henry B. Eyring

Բովանդակություն մայիս 2017

Հատոր 18 • Համար 2

Կանանց ընդհանուր ժողով

6 **Տիրոջն ապավինիր և քո հասկացողությանը մի վստահիր**
Բոննի Հ. Քորդոն

9 **Սուրբ զարդարանք**
Քերոլ Ֆ. Մակքոնկի

12 **Վստահելի կանայք**
Լինդա Ք. Բըրթն

15 **«Իմ խաղաղութիւնն եմ թողում ձեզ»**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

Շաբաթ առավոտյան նիստ

19 **Աստծո ընտանիքի հավաքումը**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

23 **Նրա ամեն օր առաջնորդող ձեռքը**
Մ. Ջոզեֆ Բրոու

26 **Մեր Հոր փառահեղ ծրագիրը**
Երեց Վեթերֆորդ Թ. Քլեյթոն

29 **Մեր Բարի Հովիվը**
Երեց Դեյլ Գ. Ռենլանդ

33 **Անսասան ապավինեք Աստծուն**
Երեց Ուլիսես Սարես

36 **Ավելի ու ավելի պայծառ, մինչև կատարյալ օր**
Երեց Մարկ Ա. Բրագ

39 **Մեր կյանք հրավիրել Հիսուս Քրիստոսի զորությունը**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Շաբաթ ցերեկային նիստ

43 **Եկեղեցու պաշտոնյաների հաստատում**
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

45 **Եկեղեցու աուդիտի բաժնի հաշվետվություն, 2016**
Քեվին Ռ. Յերգենսեն

45 **Վիճակագրական հաշվետվություն, 2016**
Բրուք Պ. Հեյլս

46 **Դառնալ մեր Տեր Հիսուս Քրիստոսի աշակերտը**
Երեց Ռոբերտ Դ. Հեյլս

49 **Երգված ու չերգված երգեր**
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

52 **Ամուր եղեք ներքուստ և լիովին հանձն առեք**
Երեց Գարի Բ. Սաբին

55 **Ավետարանի լեզուն**
Երեց Վալերի Վ. Քորդոն

58 **Հաղթել աշխարհին**
Երեց Նիլ Լ. Անդերսեն

62 **Վերադառնալ և ստանալ**
Երեց Մ. Ռասսել Բալլարդ

Քահանայության գերագույն ժողով

66 **Բարություն, գթություն և սեր**
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

67 **Գործին կանչված**
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար

75 **Պատրաստեք ճանապարհը**
Եպիսկոպոս Ջերալդ Կոսե

78 **Ձեզանից մեծը**
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

82 **«Քայլիր ինձ հետ»**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

Կիրակի առավոտյան նիստ

86 **Մորմոնի Գրքի զորությունը**
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

87 **Մեղքին դիմակայող սերունդ**
Ջոյ Դ. Ջոնս

90 **Մի՛ նայիր շուրջդ, նայի՛ր վերև**
Երեց Յուն Հվան Չոյ

93 **Թող Սուրբ Հոգին առաջնորդի**
Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ

97 **Ինչ որ ասէ ձեզ, արէք**
Երեց Լ. Ուիթնի Քլեյթոն

100 **Աստվածագլուխը և փրկության ծրագիրը**
Երեց Դալլին Հ. Օուքս

104 **Կատարյալ սերը դուրս է մղում վախը**
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Կիրակի ցերեկային նիստ

108 **Նախազգուշացնող ձայնը**
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն

112 **Եկեղեցու ընկերներին և լսողներին**
Երեց Յոքին Ի. Կոստա

114 **Հիսուսն էլ նորան մտիկ տվավ՝ նորան սիրեց**
Երեց Ս. Մարկ Փալմեր

117 **Ինչպե՞ս է Սուրբ Հոգին օգնում ձեզ**
Երեց Գարի Ե. Սթիվենսոն

121 **Եվ սա է հավիտենական կյանքը**
Երեց Ս. Սքոթ Գրոու

124 **Որպեսզի ձեր լույսը չափանիշ լինի բոլոր ազգերի համար**
Երեց Բենջամին դե Հոյոս

127 **Հավատի հիմքերը**
Երեց Քվենթին Լ. Քուք

72 **Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորները և Բարձրագույն Պաշտոնյաները**

132 **Նրանք խոսեցին մեզ հետ. Համաժողովը դարձնել մեր կյանքի մասը**

134 **Համաժողովի պատմությունների ցուցիչ**

135 **Եկեղեցու նորությունները**

187-րդ ամենամյա գերագույն համաժողով

Շաբաթ երեկո, 25 մարտի, 2017, կանանց ընդհանուր ժողով
Վարող. Բոննի Լ. Օսկարսոն
Բացման աղոթք. Ռոբին Բոնհամ
Փակման աղոթք. Էլիզբեթ Ռոուզ
Երաժշտությունը՝ Բրիգամ Յանգ Համալսարանի միացյալ երգչախումբ, խմբավար՝ Ջին Ապոլինե, երգեհոնահար՝ Լինդա Մարգեթս. "Come, O Thou King of Kings," *Hymns,* no. 59, arr. Zabriskie, pub. by Holy Sheet Music; "I Feel My Savior's Love," *Children's Songbook,* 74–75, arr. Murphy; "Guide Us, O Thou Great Jehovah," *Hymns,* no. 83; "My Heavenly Father Loves Me," *Children's Songbook,* 228–29, arr. Staheli.

Շաբաթ առավոտ, 1 ապրիլի, 2017, գերագույն նիստ
Վարող՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Բացման աղոթք՝ Երեց Քիմ Բ. Քլարկ
Փակման աղոթք՝ Երեց Ջորջ Ֆ Զեբալլոս
Երաժշտություն՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ և Ռայան Մըրֆի, երգեհոնահարներ՝ Քլեյ Քրիսչենսեն և Ռիչարդ Էլիոթ. "The Morning Breaks," *Hymns,* no. 1; "Let Zion in Her Beauty Rise," *Hymns,* no. 41, arr. Kasen, pub. by Jackman; "Do What Is Right," *Hymns,* no. 237; "Glory to God on High," *Hymns,* no. 67; "Teach Me to Walk in the Light," *Hymns,* 304, arr. Wilberg; "Rejoice, the Lord Is King!" *Hymns*, no. 66, arr. Murphy.

Շաբաթ ցերեկ, 1 ապրիլի, 2017, գերագույն նիստ
Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացման աղոթք՝ Երեց Վոն Գ. Կիչ
Փակման աղոթք՝ Երեց Հյուգո Մոնտոյա
Երաժշտությունը Յուտայի Թերմոնտոն, Գերլանդ, և Ֆիլդիգ ցցերի երգչախումբ, խմբավար Ջեսիկա Լի Ջիլբերտ, երգեհոնահար՝ բոննի Գուդլիֆ. "Home Can Be a Heaven on Earth," *Hymns,* no. 298, arr. Bastian; medley: "I Am a Child of God," *Hymns,* no. 301, and "How Will They Know?" *Children's Songbook,* 182–85, arr. Gilbert and Mohlman; "Go Forth with Faith," *Hymns,* 263; "A Child's Prayer," *Children's Songbook,* 12–13, arr. Perry, pub. by Jackman.

Շաբաթ երեկո, 1 ապրիլ, 2017, Քահանայության նիստ
Վարող՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Բացման աղոթք՝ Երեց Վերն Պ. Սթենֆիլ
Փակման աղոթք՝ Երեց Կարլոս Ա. Գոդոյ
Երաժշտությունը՝ Յուտայի Հոլլադեյի և Մյուրեյի չափահաս երիտասարդների ցցերի քահանայության երգչախումբ, խմբավար Բրեթ Թեյլոր, երգեհոնահար՝ Բրեթ Թեյլոր. Music by a priesthood choir from young single adult stakes in Holladay and Murray, Utah; Brett Taylor, director; Andrew Unsworth, organist: "Rise Up, O Men of God" (Men), *Hymns,* no. 324, arr. Staheli, pub. by Jackman; "Jesus, Once of Humble Birth," *Hymns,* no. 196, arr. Ripplinger, pub. by Jackman; "Redeemer of Israel," *Hymns,* no. 6; "Hope of Israel," *Hymns,* no. 259, arr. Kasen, pub. by Jackman.

Կիրակի առավոտ, 2 ապրիլի, 2017, գերագույն նիստ
Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացման աղոթք՝ Նեյլ Ֆ. Մերիոթ
Փակման աղոթք՝ Երեց Ռիչարդ Ջ.Մեյնզ
Երաժշտությունը՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավար՝Մաք Վիլբերգ, երգեհոնահարներ՝ Ռիչարդ Էլիոթ և Էնդրյու Մնսվորթ. "Press Forward, Saints," *Hymns,* no. 81; "Now Let Us Rejoice," *Hymns,* no. 3, arr. Wilberg; "Love Is Spoken Here," *Children's Songbook,* 190–91, arr. Cardon; "Come, Ye Children of the Lord," *Hymns,* no. 58; "Dearest Children, God Is Near You," *Hymns,* no. 96, arr. Wilberg; "High on the Mountain Top," *Hymns,* no. 5.

Կիրակի ցերեկ, 2 ապրիլի, 2017, գերագույն նիստ
Վարող՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Փակման աղոթք՝ Երեց Էդուարդո Գավարեթ
Բացման աղոթք՝ Երեց Մարկոս Ա. Այդուկայտիս
Երաժշտությունը՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավար՝Մաք Վիլբերգ, երգեհոնահարներ՝ Ռիչարդ Էլիոթ և Էնդրյու Մնսվորթ. "Come, Rejoice," *Hymns,* no. 9, arr. Murphy; "More Holiness Give Me," *Hymns,* no. 131, arr. Staheli, pub. by Jackman; "The Iron Rod," *Hymns,* no. 274; "Keep the Commandments," *Hymns,* no. 303; "How Firm a Foundation," *Hymns,* no. 85, arr. Wilberg.

Համաժողովի ելույթները մատչելի են
Գերագույն համաժողովի ելույթները տարբեր լեզուներով մատչելի են համացանցում՝ conference.lds.org կայքում, որտեղ կարող եք ընտրել լեզուն: Ելույթները մատչելի են նաև Gospel Library mobile app-ում: Սովորաբար համաժողովից հետո վեց շաբաթվա ընթացքում անգլերեն լեզվով տեսագրությունները նույնպես մատչելի են բաշխման կենտրոններում: Գերագույն համաժողովի մասին տեղեկությունները հաշմանդամություն ունեցող անդամների համար հասանելի ձևաչափերով առկա են disability.lds.org-ում:

Տնային և այցելող ուսուցիչների ուղերձները
Տնային և այցելող ուսուցիչների ուղերձների համար ընտրեք այն ուղերձը, որը լավագույնս է համապատասխանում նրանց կարիքներին, ում ուսուցանում եք:

Կազմի վրա
Առջևի կազմ. Լուսանկարը՝ Մեյսոն Կոբերլի
Ետին կազմ. Լուսանկարը՝ Քրիստինա Սմիթի

Համաժողովի լուսանկարները
Գերագույն Համաժողովի տեսարանները լուսանկարել են. Սոլթ Լեյք Սիթիում՝ Քոդի Բել, Ջանե Բինգհեմ, Մասոն Քոբերլի, Ռենդի Քոլիեր, Վեսթոն Քոլթոն, Էշլի Լարսեն, Լեսլի Նիլսոն և Քրիստինա Սմիթ:

ՄԱՅԻՍ 2017 ՀԱՏՈՐ 18 ՀԱՄԱՐ 2
ԼԻԱՀՈՆԱ 14445 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ս. Մոնսոն, Հենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Տասներկու Առաքյալների Քվորում. Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն, Ռոնալդ Ա. Ռասբանդ, Գարի Է. Սթիվենսոն, Դեյլ Գ. Ռենլանդ

Խմբագիր. Ջոզեֆ Վ. Սիտատի

Խմբագրի օգնականներ. Ռանդալ Ք. Բաններ, Քերոլ Ֆ. Մակքոնկի

Խորհրդատուներ. Բրայան Ք. Էշթոն, Ջին Բ. Բինգհեմ, Լեգռան Ռ. Քըրթիս Կրտս., Քրիստոֆել Գոլդեն, Դուգլաս Դ. Հոլմս, Էրիկ Վ. Կոպիչկե, Լարի Ռ. Լորենս, Քերոլ Մ. Սթեֆենս

Գլխավոր տնօրեն. Ռիչարդ Ի. Հիթն

Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Ալան Ռ. Լոյբորգ

Գործարար ղեկավար. Գարֆ Քենոն

Գլխավոր խմբագիր. Աղամ Ս. Օլսոն

Գլխավոր խմբագրի օգնական. Ռայան Քար

Հրապարակման օգնական. Կրեմիդա Ամարալ

Գրողներ և խմբագրողներ. Մարիսա Դենիս, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Լորի Ֆուլեր, Գարեթ Հ. Գարֆ, Լառեն Փորթեր Գանթ, Ջոն Ռայան Ջենսեն, Շաղլոտ Լարկաբալ, Մայքլ Ռ. Մորիս, Էրիկ Բ. Մըրդոք, Սալի Ջոնսոն Օդեքրիկ, Ջոշուա Ջ. Փերկի, Յան Փինբորո, Ռիչարդ Մ. Ռոմնի, Մինդի Էնն Սելու, Մարիսա Վիդիսոն

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն

Արվեստի տնօրեն. Թեդ Ռ. Փեթերսոն

Ձևավորում. Ջանեթ Էնդրյուս, Ֆեյ Պ. Անդրուս, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Չայլդ, Դեյվիդ Գրին, Քոլլին Հինքլի, Էրից Պ. Ջոնսեն, Սյուզան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մույ, Մարք Վ. Ռոբինսոն, Ռաքել Սմիթ, Բրեդ Թիրը, Կ. Նիկոլ Վոլկենհորստ

Մտավոր սեփականության համակարգող. Քոլեթ Նեբեքեր Օն

Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս

Հրատարակում. Գլեն Անդեր, Քոննի Բոթորտի Բրիջ, Ջուլի Բըրդեթ, Թոմաս Գ. Քրոնին, Բրայըն Վ. Գիջի, Գիննի Ջ. Նիլսոն, Դերեկ Ռիչարդսոն

Նախատպագրություն. Ջոշուա Դեննիս, Ամմոն Հարիս

Տպագրության տնօրեն. Ստիվեն Տ. Լյուիս

Բաշխման տնօրեն. Տրոյ Կ. Վելինգա

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար այցելեք store.lds.org կամ դիմեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոն կամ ծխի/ճյուղի ղեկավարին:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝ liahona.lds.org; է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ Liahona, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թամիլ, թայերեն, թելուգու, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, լատիշերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորեերեն, հաիթերեն, հայերեն, հինդի, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամորեն, սինհալա, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քբեուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբերվում է ըստ լեզուների:)

© 2017 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Հեղինակային իրավունք. Եթե հատուկ նշված չէ, Լիահոնայի նյութերը կարելի է բազմացնել անձնական ոչ կոմերցիոն նպատակով օգտագործելու համար (այդ թվում Եկեղեցու կոչումների համար): Այդ իրավունքը կարող է ցանկացած ժամանակ սահմանափակվել: Տեսողական նյութերը չեն կարող բազմացվել, եթե սահմանափակումներ են նշված տվյալ աշխատանքի նկարագրական տողում: Հեղինակային իրավունքի հետ կապված հարցերը պետք է ուղղել. Intellectual Property Office, 50 E. North Temple St., L13, Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org: *Լիահոնան* տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada:
May 2017 Vol. 18 No. 2. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address must be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 507.1.5.2). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

Խոսնակների ցուցիչ

Այրինգ, Հենրի Բ., 15, 19, 82
Անդերսեն, Նիլ Լ., 58
Բալլարդ, Մ. Ռասսել, 62
Բեդնար, Դեյվիդ Ա., 67
Բըրթն, Լինդա Ք., 12
Բրեգ, Մարկ Ա., 36
Բրոու, Ջոզեֆ Մ., 23
Գրոու, Ս. Սքոթ, 121
Դե Հոյոս, Բենջամին, 124
Կոսե, Ջեռալդ, 75
Կոստա, Յոքին Ի., 112
Հեյլս, Բրուք Պ., 45
Հեյլս, Ռոբերտ Դ., 46
Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 49
Մակքոնկի, Քերոլ Ֆ., 9
Մոնսոն, Թոմաս Ս., 66, 86
Յերգենսեն, Քեվին Ռ., 45
Նելսոն, Ռասսել Մ., 39
Ուխդորֆ, Դիտեր Ֆ., 43, 78, 104
Չոյ, Յուն Հվան, 90
Ջոնս, Ջոյ Դ., 87
Ռասբենդ, Ռոնալդ Ա., 93
Ռենլանդ, Դեյլ Գ., 29
Սաբին, Գարի Ի., 52
Սթիվենսոն, Գարի Ի., 117
Սոարես, Ուլիսես, 33
Փալմեր, Ս. Մարկ, 114
Քլեյթոն, Լ. Ուիթնի, 97
Քլեյթոն, Վեթերֆորդ Թ., 26
Քորդոն, Բոննի Հ., 6
Քորդոն, Վալերի Վ., 55
Քուք, Քվենթին Լ., 127
Քրիստոֆերսոն, Դ. Թոդ, 108
Օուքս, Դալլին Հ., 100

Թեմաների ցուցիչ

Ակտիվացում, 15
Աղոթք, 6, 121
Աշակերտություն, 12, 39, 46, 49, 52, 58, 78, 87
Աշխարհիկություն, 58
Ապաշխարություն, 29, 52, 87, 112, 121
Առաջնորդություն, 78
Աստվածագլուխ, 93, 100, 117
Աստվածային էություն, 9, 87
Ավանդույթներ, 55
Արարում, 26, 100
Արժանավորություն, 67, 93, 117, 121
Բարություն, 29, 66
Բժշկում, 29
Գերագույն համաժողով, 124
Գթություն, 15, 46, 66
Դարձ, 90, 112
Եկեղեցու կոչումներ, 78
Եկեղեցու ղեկավարներ, 23, 78
Եկեղեցու միջոցառում, 36
Երաժշտություն, 49
Երեխաներ, 87, 117
Երիտասարդներ, 19, 23, 75
Զոհաբերություն, 12, 23
Ընտանեկան պատմություն, 19, 90, 124
Ընտանիք, 19, 36, 55, 62, 87
Խաղաղություն, 58
Խոնարհություն, 15, 78
Ծառայություն, 6, 15, 75, 78, 82
Ծնողներ, 23, 55, 87, 108
Կամքի ազատությունը, 26
Կանայք, 12
Կարեկցանք, 29
Հաղորդության ժողով, 127
Հաղորդություն, 9, 15, 75, 124
Հայր Աստված, 6, 62, 93, 100, 104, 121
Հանգստության օր, 55, 58, 124
Հավատք, 33, 39, 46, 49, 90, 97, 127
Հիսուս Քրիստոս, 6, 9, 12, 19, 23, 26, 29, 33, 36, 39, 46, 49, 58, 62, 66, 82, 90, 93, 97, 100, 104, 108, 114, 121, 124, 127
Հնազանդություն, 46, 97, 114, 121
Հույս, 104
Հուշումներ, 93, 117
Զախորդություն, 29, 33, 39, 46, 49, 52, 90, 97, 104, 127
Մահ, 26
Մարգարեներ, 108
Միություն, 15, 49, 75
Միսիոներական աշխատանք, 67, 90, 114
Մորմոնի Գիրք, 86, 112
Նախաերկրային կյանք, 6, 26, 100
Նախապատրաստություն, 67, 75
Ներում, 29
Նպատակներ, 62
Ուխտեր, 9, 12, 39, 52, 58, 62, 87
Ուսուցանել, 87, 124
Զափանիշներ, 108
Պատասխանատվություն, 108
Պատվիրաններ, 23, 26
Պարտավորություն, 52
Պոռնոգրաֆիա, 55
Ջոզեֆ Սմիթ, 127
Սեր, 29, 36, 46, 49, 66, 104, 108, 114
Սուրբ Հոգի, 9, 15, 19, 36, 39, 87, 93, 100, 117, 127
Սուրբ գրությունների ուսումնասիրություն, 6, 23, 39, 55, 86, 121
Վախ, 104
Վկայություն, 86
Վստահություն, 6, 33, 97
Տաճարային աշխատանք, 19, 36, 90, 124
Փրկության ծրագիր, 19, 26, 52, 62, 100, 104
Քահանայություն, 67, 75, 82
Քավություն, 6, 9, 19, 26, 29, 39, 62
Քրիստոսի Լույսը, 19, 36
Օրինակ, 55, 121

187-րդ ամենամյա գերագույն համաժողովի ամփոփում

Ամեն վեց ամիսը մեկ անգամ մենք հավաքվում ենք լսելու Աստծո խոսքը ապրող մարգարեների և Եկեղեցու ոգեշնչված ղեկավարների միջոցով: Ամբողջ աշխարհում տարբեր լեզուներով խոսող միլիոնավոր մարդիկ հավաքվում են միասին իրենց տներում, ժողովատներում, տարբեր ժամային գոտիներում, տարբեր չափերի էկրանների առջև նստած:

Բայց գերագույն համաժողովը հասարակ իրադարձություն չէ: Դա մի փորձառություն է, որը կարող է տևել այնքան, որքան մենք ենք ցանկանում: Համաժողովը մի իրադարձություն է, որը մենք ուսումնասիրում ենք, որից մենք սովորում ենք և որով ապրում ենք:

Որպեսզի օգնենք ձեզ համաժողովի ձեր փորձառության մեջ, մենք փորձում ենք հրավիրել իրադարձության հոգին այս թողարկման մեջ ամեն վեց ամիսը մեկ անգամ: Անկախ նրանից, դուք որ տարբերակով եք նախընտրում ուսումնասիրել համաժողովը՝ տպագիր, առցանց կամ բջջային, դա մի ջրհոր է, որին դուք հաճախ կանդրադառնաք:

Փառք քեզ Տեր, Մարգարեի համար

Էջ 86. Որպեսզի ամրացնենք մեր վկայությունները Փրկիչի և Նրա ավետարանի մասին, Նախագահ Թոմաս Ս Մոնսոնը խնդրել է մեզ «ամեն օր աղոթքով ուսումնասիրել Մորմոնի Գիրքը և խորհել դրա շուրջ»:

Էջ 66. Նա նաև կոչ է արել տղամարդկանց քննել իրենց կյանքը և «հետևել Փրկիչի կյանքին՝ լինելով բարի, սիրող և գթառատ»:

Հայտարարվել են նոր տաճարներ

Էջ 86. Նախագահ Մոնսոնը հայտարարել է հինգ նոր տաճարների մասին, որոնք պիտի կառուցվեն Բրազիլիայում (Բրազիլիա), ավելի մեծը Մանիլայում (Ֆիլիպիններ), Նաիրոբիում (Քենիա), Պոկատելո, Այդահոյում (ԱՄՆ) և Սարագոտա Սփրինգսում (ԱՄՆ): (Տես էջ 141 լրացուցիչ տեղեկության համար:)

Հաստատված նոր ղեկավարներ

Էջ 43. Շաբաթ օրը, ապրիլի 1-ին, Առաջին նախագահությունը հայտարարեց, որ կոչումից ազատվել է Սփոփող Միության Գերագույն Նախագահությունը՝ Լինդա Ք. Բըրթընը, Քերոլ Մ. Սթեֆենսը և Լինդա Ս. Ռիվզը:

Էջ 135. Ավելին իմացեք Եկեղեցու 10 նոր ղեկավարների կանչի մասին, ներառյալ՝ Սփոփող Միության Գերագույն Նախագահության կանչի մասին:

Վերանայված Հայտարարություններ

Կազմերի ներսի կողմի վրա. Մի քանի խոսնակներ հղումներ կատարեցին «Կենդանի Քրիստոսը» և «Ընտանիք. Հայտարարություն» աշխարհին» հայտարարություններին (տես էջ 26, 36, 39, 62 և 100): Դուք կարող եք գտնել այս կարևոր փաստաթղթերը այս թողարկման կազմի ներսի կողմերի վրա: ■

Բոննի Հ. Քորդոն
Երեխաների Գերագույն Նախագահության
Երկրորդ Խորհրդական

Տիրոջն ապավինիր և քո հասկացողությանը մի վստահիր

Մենք կարող ենք կենտրոնացնել մեր կյանքը Փրկիչի վրա, սկսելով ճանաչել Նրան, և Նա կուղղորդի մեր ուղիները։

Երբ ես ճանապարհորդում էի Ասիայում, մի հաճելի քույր մոտեցավ ինձ։ Նա ինձ գրկեց և հարցրեց. «Դուք իսկապես հավատո՞ւմ եք, որ այս ավետարանը ճշմարիտ է»։ Սիրելի քույր, ես գիտեմ, որ այն ճշմարիտ է։ Ես վստահում եմ Տիրոջը։

Առակաց 3.5–6-ում մենք կարդում ենք այս խորհուրդը.

«Տիրոջն ապավինիր քո բոլոր սրտովը, և քո հասկացողութեանը մի վստահիր։

Քո բոլոր ճանապարհներումը ճանաչիր նորան, եւ նա կուղղէ՝ քո ճանապարհները»։

Այս սուրբ գրությունը գալիս է երկու հորդորով՝ նախազգուշացումով և փառահեղ խոստումով։ Հորդորում է. «Տիրոջն ապավինիր քո բոլոր սրտովը» և «Քո բոլոր ճանապարհներումը ճանաչիր նորան»։ Նախազգուշացնում է. «քո հասկացողութեանը մի վստահիր»։ Եվ փառահեղ խոստում է տալիս. «նա կուղղէ՝ քո ճանապարհները»։

Եկեք առաջինը քննարկենք նախազգուշացումը։ Տեսողական պատկերը մեզ շատ բան է տալիս խորհրդածելու համար։ Նախազգուշացումը գալիս է «մի վստահիր» բառերով՝ «քո հասկացողութեանը մի վստահիր»։ Անգլերենում *lean* բառն ունի *ֆիզիկապես* դեպի մի կողմ թեքվելու կամ շարժվելու իմաստ։ Երբ մենք շրջվում ենք այս կամ այն կողմ, խախտում ենք կենտրոնը, հավասարակշռությունից դուրս ենք գալիս և թեքվում ենք։ Երբ մենք *հոգևորապես* վստահում ենք մեր հասկացողությանը, հեռանում ենք Փրկիչից։ Եթե մենք թեքվում ենք, մենք կենտրոնացած չենք, մենք հավասարակշռված չենք, մեր կիզակետը կենտրոնացած չէ Քրիստոսի վրա։

Քույրեր, հիշեք մեր նախամայրենական կյանքում մենք կանգնած էինք Փրկիչի հետ։ Մենք վստահում էինք Նրան։ Մենք բարձրաձայն արտահայտում էինք մեր աջակցությունը, խանդավառությունը և ուրախությունը երջանկության ծրագրի վերաբերյալ, որն առաջադրվել էր մեր Երկնային Հոր կողմից։ Մենք թեքված չէինք։ Մենք պայքարեցինք մեր վկայություններով և «շարված էինք Աստծո ուժերի հետ և այդ ուժերը հաղթական էին»։[1] Բարու և չարի միջև այս ճակատամարտը տեղափոխվել է երկիր։ Մենք մի սրբազան պարտականություն ևս ունենք՝ կանգնել որպես վկա և մեր վստահությունը դնել Տիրոջ վրա։

Մեզանից յուրաքանչյուրը պետք է հարցնի. Ինչպե՞ս եմ

կենտրոնացած մնում և *չեմ վստահում* իմ սեփական հասկացողությանը: Ինչպե՞ս եմ ճանաչում և հետևում Փրկիչի ձայնին, երբ աշխարհի ձայներն այնքան պարտադրողական են: Ինչպե՞ս եմ զարգացնում վստահություն Փրկիչի հանդեպ:

Կարո՞ղ եմ առաջարկել երեք ուղիներ, որ մեծացնենք մեր գիտելիքը և վստահությունն առ Փրկիչը: Դուք կպարզեք, որ այս սկզբունքները նոր չեն, բայց հիմնարար են: Դրանք երգվում են Երեխաների Խմբի յուրաքանչյուր երգում, արձագանք գտնում Երիտասարդ կանանց դասերում և պատասխան գտնում Սփոփող Միության շատ հարցերում: Դրանք կենտրոնացնող, այլ ոչ թեքող սկզբունքներ են:

Առաջինը, մենք կարող ենք սկսել ճանաչել Տիրոջը և վստահել Նրան, երբ «սնվեք Քրիստոսի խոսքերով, քանզի ահա Քրիստոսի խոսքերը կասեն ձեզ բոլոր բաները, որ դուք պետք է անեք»:[2]

Մի քանի ամիս առաջ մենք սուրբ գրությունների ընտանեկան ուսումնասիրություն էինք կատարում: Իմ երկու տարեկան թոռնիկը նստած էր իմ գրկում, երբ մենք կարդում էինք: Ես տատիկի լիակատար դերում էի՝ վայելելով որդուս ընտանիքի այցը:

Սուրբ գրությունների մեր ուսումնասիրությունն ավարտելուց հետո ես փակեցի գիրքը: Թոռնիկս գիտեր, որ շուտով քնելու ժամանակն է: Նա վերև նայեց իր կապույտ աշխույժ աչքերով և ասաց մի հավերժական ճշմարտություն. «Էլի սուրբ գրություններ, Նանա»:

Որդիս, որպես լավ և հետևողական ծնող, նախազգուշացրեց ինձ. «Մամ, թույլ մի եղիր: Նա ուղղակի չի ուզում քնել»:

Բայց երբ թոռնիկս խնդրում է ավելի շատ սուրբ գրություններ կարդալ, մենք ավելի շատ ենք կարդում: Ավելի շատ սուրբ գրությունները լուսավորում են մեր միտքը, սնուցում մեր հոգիները, պատասխանում մեր հարցերին, մեծացնում մեր վստահությունն առ Տերը և օգնում մեզ կենտրոնացնել մեր կյանքը Նրա վրա: «Հիշեք ջանասիրաբար քննել դրանք, որպեսզի դուք կարողանաք դրանց շնորհիվ օգուտ քաղել»:[3]

Երկրորդը, մենք կարող ենք սկսել ճանաչել Տիրոջը և վստահել Նրան աղոթքի միջոցով: Ինչպիսի՜ օրհնություն է կարողանալ աղոթել մեր Աստծուն: «Աղոթել Հորը, սրտի ողջ կորովով»:[4]

Ես մի քաղցր հիշողություն ունեմ աղոթքի մասին, որը ես փայփայում եմ: Քոլեջի արձակուրդներից մեկի ժամանակ ես աշխատանքի ընդունվեցի Տեխասում: Ես ստիպված էի իմ հին մեքենան վարել հարյուրավոր մղոններ Այդահոյից դեպի Տեխաս, մեքենա, որը ես քնքշորեն անվանել էի Վեռն: Վեռնը մինչև տանիքը բեռնավորված էր, և ես պատրաստ էի նոր արկածի:

Դռնից դուրս գալիս ես գրկեցի իմ սիրելի մորը և նա ասաց. «Նախքան մեկնելդ, արի աղոթենք»:

Մենք ծնկի իջանք և մայրս սկսեց աղոթել: Նա ինձ համար ապահովություն խնդրեց Երկնային Հորից: Նա աղոթեց առանց օդափոխիչի իմ մեքենայի համար, խնդրելով, որ մեքենան աշխատեր, ինչպես հարկն է: Նա խնդրեց, որ հրեշտակները լինեն ինձ հետ ողջ ամառվա ընթացքում: Նա շարունակ աղոթում էր ու աղոթում:

Խաղաղությունը, որ եկավ աղոթքից, ինձ քաջություն տվեց՝ ապավինելու Տիրոջը և չվստահելու իմ սեփական հասկացողությանը: Տերն ուղղորդում էր իմ ուղին այն բազմաթիվ որոշումներում, որ ես ընդունեցի այդ ամառ:

Երբ մենք մոտենում ենք Երկնային Հորը աղոթքով, մենք սկսում ենք ճանաչել Փրկիչին: Մենք սկսում ենք վստահել Նրան: Մեր ցանկություններն ավելի են նմանվում Նրան ցանկություններին: Մենք կարողանում ենք ապահովել մեզ և ուրիշներին օրհնություններով, որոնք Երկնային Հայրը պատրաստ է տալ, եթե միայն մենք խնդրենք հավատքով:[5]

Երրորդը, մենք կարող ենք սկսել ճանաչել Տիրոջը և վստահել Նրան, երբ ծառայում ենք ուրիշներին: Ես կիսվում եմ հետևյալ պատմությամբ Էմի Ռայթի մասին նրա թույլտվությամբ, ով սկսեց հասկանալ ծառայելու սկզբունքը, նույնիսկ, կյանքին սպառնացող սոսկալի հիվանդության մեջ: Էմին գրել է.

«2015թ.-ի հոկտեմբերի 29-ին ես պարզեցի, որ քաղցկեղ ունեմ: Քաղցկեղի այդ տեսակից հիվանդների 17 տոկոսն են ողջ մնում: Հավանականությունը փոքր էր: Ես գիտեի, որ պիտի պայքարեի իմ կյանքի համար: Ես վճռել էի տալ այն ամենը, ինչ ունեի, ոչ միայն ինձ, այլև, որ ավելի կարևոր է, իմ ընտանիքի համար, բայց: Դեկտեմբերին ես սկսեցի քիմիոթերապիան: Ես ծանոթ էի հակաքաղցկեղային դեղամիջոցների բազմաթիվ

կողմնակի ազդեցություններին, բայց չգիտեի, որ մարդը կարող է այդքան ծանր հիվանդ լինել, բայց դեռևս կենդանի մնալ:

Մի պահ ես հայտարարեցի, որ քիմիոթերապիան մարդու իրավունքների ոտնահարում էր: Ես ասացի ամուսնուս, որ հոգնել եմ: Ես դադարեցնում եմ: Ես չեմ վերադառնալու հիվանդանոց: Իմ սիրելին իր իմաստությամբ, համբերատարությամբ լսեց, իսկ հետո պատասխանեց. «Դեհ, ուրեմն մենք պետք է գտնենք ինչ որ մեկին, որ ծառայի»:

Ի՞նչ: Մի՞թե նա մոռացել էր այն փաստը, որ նրա կինը քաղցկեղ ուներ և չէր կարող տանել ևս մեկ սրտխառնոցի նոպա կամ սոսկալի ցավի ևս մեկ պահ:

Էմին շարունակեց բացատրել. «Իմ ախտանիշներն աստիճանաբար վատթարացան այն աստիճանի, որ ես ամիսը մեկ կամ երկու օր էի ինձ լավ զգում որպես կենդանի, շնչող մարդկային էակ: Դրանք այն օրերն էին, երբ մեր ընտանիքը գտնում էր ծառայելու ուղիներ:

Այդ օրերից մեկի ժամանակ Էմիի ընտանիքը բաժանեց քիմիոթերապիայի փաթեթներ մյուս հիվանդների համար, փաթեթները լցված էին իրերով, որ ուրախացնեն հիվանդներին և օգնեն թեթևացնել ախտանիշները: Երբ Էմին չէր կարողանում քնել, նա սովորաբար մտածում էր եղանակներ՝ մեկ ուրիշի օրը լուսավորելու համար: Եղանակներից մի քանիսը մեծ էին, իսկ մնացածը ուղղակի փոքրիկ երկտողեր էին կամ քաջալերանքի և սիրո տեքստային հաղորդագրություններ: Այն գիշերները, երբ նրա ցավերը չափազանց ուժեղ էին և քնել չէր կարողանում, նա պառկում էր անկողնում և իր iPad-ով որոնում արարողություններ, որոնք պետք է կատարվեին իր մահացած նախնիների համար: Հրաշագործ ձևով ցավը թուլանում էր, և նա ի վիճակի էր լինում դիմանալ:

«Ծառայությունը,- վկայում է Էմին,- փրկեց իմ կյանքը: Ի վերջո, այն տեղը, որտեղ ես գտա իմ առաջ շարժվելու ուժը, երջանկությունն էր, որը ես հայտնաբերեցի, փորձելով թեթևացնել իմ շրջապատում գտնվողների տառապանքը: Ես մեծ ուրախությամբ և ակնկալիքով անհամբեր սպասում էի մեր ծառայողական նախագծերին: Մինչև այսօր դա այնպիսի տարօրինակ երևույթ է թվում: Դուք կմտածեք, թե մեկը, ով ճաղատ էր, թունավորված և պայքարում էր [իր] կյանքի համար, իրավունք ուներ մտածելու, որ «հենց այժմ ես եմ կարևոր»: Սակայն, երբ ես մտածում էի իմ մասին, իմ վիճակի մասին, իմ տառապանքի և ցավի մասին, աշխարհը դառնում էր խիստ մռայլ և ճնշող: Երբ իմ կիզակետը կենտրոնանում էր ուրիշների վրա, այնտեղ կար լույս, հույս, ուժ, քաջություն և ուրախություն: Ես գիտեմ, որ սա հնարավոր է Հիսուս Քրիստոսի Քավության հաստատող, ապաքինող և հնարավորություն տվող զորության շնորհիվ:

Էմին սկսեց վստահել Տիրոջը, երբ նա սկսեց ճանաչել Նրան: Եթե նա նույնիսկ մի փոքր վստահեր իր սեփական հասկացողությանը, երևի կմերժեր ծառայելու միտքը: Ծառայությունը հնարավորություն տվեց նրան դիմանալ իր ցավին և չարչարանքներին և ապրել այս սուրբ գրության համաձայն. «Երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք»:[6]

Հիսուս Քրիստոսը հաղթել է աշխարհին: Եվ Նրա շնորհիվ, Նրա

անսահման Քավության շնորհիվ, մենք բոլորս մեծ պատճառ ունենք վստահելու, գիտենալով, որ, ի վերջո, ամեն ինչ լավ կլինի:

Քույրե՛ր, մեզանից յուրաքանչյուրը կարող է ապավինել Տիրոջը և *չվստահել [իրեն]:* Մենք կարող ենք կենտրոնացնել մեր կյանքը Փրկիչի վրա՝ սկսելով ճանաչել Նրան, և Նա կուղղի մեր շավիղները:

Մենք երկրի վրա ենք՝ ցույց տալու նույն վստահությունը *Նրա* հանդեպ, ով թույլ տվեց մեզ կանգնել Հիսուս Քրիստոսի հետ, երբ Նա հայտարարեց.«Ահա ես, ինձ ուղարկիր»:[7]

Իմ սիրելի՛ քույրեր, Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը վկայել է, որ «մեզ խոստացված օրհնություններն անչափ են: Չնայած փոթորկոտ ամպեր կարող են հավաքվել, չնայած անձրևներ կարող են տեղալ մեզ վրա, ավետարանի մեր գիտելիքը և մեր Երկնային Հոր ու մեր Փրկիչի սերը կմխիթարի և կհաստատի մեզ . . . երբ մենք շիտակ քայլենք: . . .Չի լինի ոչ մի բան այս աշխարհում, որ մեզ կարողանա պարտության մատնել»:[8]

Ես ավելացնում եմ իմ վկայությունը մեր սիրելի մարգարեի վկայությանը: Եթե մենք ապավինենք մեր Երկնային Հորը և մեր Փրկիչին և չվստահենք մեր հասկացողությանը, Նրանք կուղղորդեն մեր շավիղները և կտարածեն իրենց ողորմածության բազուկը դեպի մեզ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Նշում.ապրիլի 1-ին, 2017թ. Քույր Քորդոնը ազատվեց Երեխաների Խմբի Գերագույն Նախագահության Երկրորդ Խորհրդականի կոչումից և կանչվեց որպես Առաջին Խորհրդական:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Գորդոն Բ. Հինքլի, «Ավելի պայծառ օրվա լուսաբացը», *Լիահոնա,* մայիս 2004,81:
2. 2 Նեփի 32.3
3. Մոսիա 1.7
4. Մորոնի 7.48
5. Տես Սուրբ Գրքերի Ուղեցույց, «աղոթք», scriptures.lds.org:
6. Մոսիա 2.17
7. Աբրահամ 3.27
8. Թոմաս Ս. Մոնսոն, «Ուրախ եղեք», *Լիահոնա,* մայիս 2009, 92:

Քերոլ Ֆ. Մակքոնկի
Երիտասարդ Կանանց Գերագույն
Նախագահության Առաջին Խորհրդական

Սուրբ զարդարանք

Մեր Երկնային Հայրը տվել է մեզ հնարավոր ամեն բան, որպեսզի մենք կարողանանք դառնալ սուրբ, ինչպես Նա է սուրբ:

Ինչ ես պատրաստվում էի այս ժողովին, իմ սիրտը դարձավ դեպի բազում հավատարիմ քույրերը, որոնց ես հանդիպել եմ ամենուր: Կարծում եմ, նրանց լավագույն նկարագրությունը տրված է Դավիթ թագավորի օրհնաբանության երգում. «Տիրոջը տուէք նորա անուան փառքը, Ընծայ բերէք եւ մտէք նորա առաջը, Երկրպագեցէք Տիրոջը սուրբ զարդարանքով»:[1]

Ես տեսնում եմ սուրբ զարդարանքը քույրերի մեջ, որոնց սրտերը կենտրոնացած են բոլոր լավ բաների վրա, և ովքեր ցանկանում են ավելի շատ նմանվել Փրկիչին: Նրանք Տիրոջը տալիս են իրենց ողջ հոգին, սիրտը, զորությունը, միտքը և ուժը՝ համաձայն իրենց ապրելակերպի:[2] Սրբությունն առաջ է գալիս, երբ ձգտում ու պայքարում ենք պահել պատվիրանները և պատվել ուխտերը, որոնք մենք կապել ենք Աստծո հետ: Սրբությունն այնպիսի ընտրություններ կատարելն է, որոնք Սուրբ Հոգուն կպահեն որպես մեր ուղեկից:[3] Սրբությունը մեր բնական հակումները մի կողմ դնելն է և «Տեր Քրիստոսի Քավության միջոցով սուրբ դառնալը»:[4] «[Մեր կյանքի] ամեն մի պահը պետք է սուրբ լինի Տիրոջ համար»:[5]

Երկնքի Աստվածը պատվիրեց Իսրայելի զավակներին.«Որովհետեւ ես եմ ձեր Եհովայ Աստուածը. ուրեմն սրբեցէք ձեր անձերը եւ սուրբ եղէք, ըստ որում ես սուրբ եմ. եւ չպղծէք ձեր անձերը»:[6]

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնն ուսուցանել է.«Մեր Երկնային Հայրը բարձր ակնկալիքների Աստված է: . . . Նա առաջարկում է մեզ սուրբ դառնալ, որպեսզի մենք կարողանանք «մնալ սելեստիալ փառքում» (ՎԵՈՒ 88.22) և «բնակվել նրա ներկայության մեջ» (Մովսես 6.57)»:[7] *Հավատքի վերաբերյալ քարոզնում* բացատրվում է. «Ոչ մի էակ չի կարող վայելել նրա փառքը՝ առանց նրա կատարելությունն ու սրբությունն ունենալու»:[8] Մեր Երկնային Հայրը գիտի մեզ: Նա սիրում է մեզ, և Նա տվել է մեզ հնարավոր ամեն բան, որպեսզի մենք կարողանանք դառնալ սուրբ, ինչպես Նա է սուրբ:

Մենք Երկնային Հոր դուստրերն ենք, և մեզանից յուրաքանչյուրն ունի սրբության աստվածային ժառանգություն: Մեր Երկնային Հայրը հայտարարել է. «Ահա, ես եմ Աստված.Սրբության Մարդ է իմ անունը»:[9] Նախաերկրային կյանքում մենք սիրում էինք մեր Հորը և երկրպագում էինք Նրան: Մենք ցանկանում էինք լինել Նրա նման: Ծնողական կատարյալ սիրով մղված՝ Նա տվեց Իր Սիրելի Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, լինելու մեր Փրկիչն ու Քավիչը: Նա Սրբության Մարդու Որդին է:[10] Նրա «անունը Սուրբ է»,[11] «Իսրայելի Սուրբ»:[12]

Սրբության մեր հույսը կենտրոնանում է Քրիստոսի, Նրա ողորմության և Նրա շնորհի վրա: Առ Հիսուս Քրիստոսը և Նրա Քավությունն ունեցած հավատով մենք դառնում ենք մաքուր, անբիծ, երբ մերժում ենք անաստվածությունը[13] և անկեղծորեն ապաշխարում: Մենք մկրտվում ենք ջրով՝ մեղքերի թողության համար: Մեր հոգիները սրբագործվում են, երբ ընդունում ենք Սուրբ Հոգուն բաց սրտերով: Ամեն շաբաթ մենք մասնակցում ենք հաղորդության արարողությանը: Ապաշխարող հոգով անկեղծորեն արդարություն փափագելով, մենք ուխտում ենք, որ հոժար ենք մեզ վրա վերցնել Քրիստոսի անունը, հիշել Նրան և պահել Նրա պատվիրանները, որպեսզի մենք կարողանանք Նրա Հոգին միշտ մեզ հետ ունենալ: Ժամանակի ընթացքում, մինչ մենք շարունակ ձգտում ենք մեկ դառնալ Հոր, Որդու և Սուրբ Հոգու հետ, մենք հաղորդակից ենք դառնում Նրանց աստվածային էությանը:[14]

Սրբությունը մեր ուխտերը պահելն է

Մենք գիտակցում ենք, որ կան բազմաթիվ փորձություններ, գայթակղություններ և տառապանքներ, որոնք կարող են մեզ հեռացնել այն ամենից, ինչն առաքինի է և գովեստի արժանի Աստծո առաջ: Սակայն մահկանացու կյանքում ունեցած մեր փորձառությունները մեզ հնարավորություն են տալիս ընտրելու սրբությունը: Շատ հաճախ մեր ուխտերը պահելու համար կատարած զոհաբերություններն են, որ սրբագործում են մեզ և դարձնում սուրբ:

Ես սրբություն եմ տեսել Գանայից մի 13-ամյա աղջնակի՝ Էվենջելինի դեմքին: Եղանակներից մեկը, որով նա պահում է իր ուխտերը, իր կոչումը մեծարելն է՝ որպես Փեթակի դասարանի նախագահ: Նա համեստորեն բացատրեց, որ գնում է իր ընկերների՝ ոչ ակտիվ երիտասարդ կանանց տուն, որպեսզի խնդրի նրանց ծնողներին, որ թույլ տան նրանց գալ Եկեղեցի: Ծնողներն ասում են նրան, որ դա դժվար է, քանի որ կիրակի օրերին երեխաները պետք է կատարեն տնային գործեր: Ուստի, Էվենջելինը գնում և օգնում է կատարել այդ գործերը, և նրա ջանքերի շնորհիվ նրա ընկերներին հաճախ թույլ են տալիս գալ Եկեղեցի:

Եթե մենք պահենք սուրբ քահանայության արարողությունների հետ կապված ուխտերը, դրանք կփոխեն, կսրբագործեն և կպատրաստեն մեզ մտնելու Տիրոջ ներկայությունը:[15] Այսպիսով, մենք տանում ենք միմյանց բեռները, մենք ամրացնում ենք միմյանց: Մեր մեղքերը ներվում են մեզ, երբ հոգեպես և ֆիզիկապես օգնում ենք աղքատին, քաղցածին, մերկին ու հիվանդին:[16] Մենք մեր անձերն աշխարհից անարատ ենք պահում, երբ պահում ենք Հանգստության օրը և արժանիորեն ընդունում ենք հաղորդությունը Տիրոջ սուրբ օրը:[17]

Մենք օրհնում ենք մեր ընտանիքները և մեր տները դարձնում սուրբ վայրեր: Մենք սանձում ենք մեր կրքերը, որպեսզի լցվենք մաքուր ու հարատև սիրով:[18] Մենք բարյացակամորեն օգնության ենք հասնում ուրիշներին կարեկցանքով և կանգնում ենք որպես Աստծո վկաներ: Մենք դառնում ենք Սիոնի ժողովուրդ՝ մեկ սրտի և մեկ մտքի, մաքուր ժողովուրդ, որ ապրում են միասնության և արդարության մեջ:[19] «Քանզի Սիոնը պիտի աճի գեղեցկությամբ և սրբությամբ»:[20]

Քույրե՛ր, եկեք տաճար: Եթե մենք ուզում ենք լինել սուրբ ժողովուրդ՝ պատրաստ ընդունելու Փրկիչին Իր գալուստի ժամանակ, մենք պիտի բարձրանանք ու հագնենք մեր գեղեցիկ հանդերձները:[21] Մենք պիտի լինենք ուժեղ, պատվով հրաժարվենք աշխարհի ուղիներից և պահենք մեր ուխտերը, որպեսզի կարողանանք «հանդերձավորված լինել մաքրությամբ, այո, նույնիսկ արդարության պարեզոտով»:[22]

Սրբությունը Սուրբ Հոգուն դարձնում է մեր ուղեկիցը

Սրբությունը Հոգու պարգև է: Մենք ընդունում ենք այս պարգևը, երբ ընտրում ենք անել այն բաները, որոնք կմեծացնեն Սուրբ Հոգու սրբագործող զորությունը մեր կյանքում:

Երբ Մարթան ընդունեց Հիսուս Քրիստոսին իր տանը, նա մեծ ցանկություն զգաց լավագույնս ծառայելու Տիրոջը: Նրա քույրը՝ Մարիամը, ընտրեց նստել «Յիսուսի ոտների մօտ» և լսել Նրան: Երբ Մարթան դժվարացավ ծառայել առանց որևէ օգնության, նա դժգոհեց. «Տէր, հոգդ չէ որ քոյրս ինձ միայնակ թողեց ծառայելու»:

Ինձ դուր է գալիս այդ ամենաքնքուշ հանդիմանությունը, որ ես կարող եմ պատկերացնել: Կատարյալ սիրով և անսահման կարեկցանքով՝ Փրկիչը խրատեց.

«Մարթա, Մարթա, դու հոգս ես քաշում եւ շատ բաներով զբաղուած ես.

Բայց մէկ բան է պէտք. Մարիամը բարի բաժինն ընտրեց, որ վեր չի առնուիլ նորանից»:[23]

Քույրե՛ր, եթե մենք ցանկանում ենք սուրբ լինել, մենք պիտի սովորենք նստել Իսրայելի Սուրբի «ոտների մոտ» և ժամանակ հատկացնել սրբության համար: Արդյո՞ք մենք մի կողմ ենք դնում հեռախոսը, մեր գործերի անվերջանալի ցանկը, աշխարհիկ հոգսերը: Աղոթքը, Աստծո խոսքի ուսումնասիրումը և դրան ականջալուր լինելը հրավիրում են Նրա մաքրագործող ու բժշկող սերը: Եկեք ժամանակ տրամադրենք սուրբ լինելուն, որպեսզի մենք կարողանանք լցվել Նրա սրբազան և սրբագործող Հոգով: Սուրբ Հոգուն որպես մեզ ուղեկից ունենալով, մենք կնախապատրաստվենք ընդունելու Փրկիչին սուրբ զարդարանքով:[24]

Սրբությունը Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ Սուրբ դառնալն է

Բենիամին թագավորի ոգեշնչված խոսքերի համաձայն՝ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ սուրբ են դառնում նրանք, ովքեր ենթարկվող են, հեզ, խոնարհ, համբերատար և սիրով լի, ինչպիսին Փրկիչն է:[25] Նա մարգարեացավ, որ Հիսուս Քրիստոսը՝ «Ամենակարող Տերը, որն էր, և է, ողջ հավերժությունից ողջ հավերժություն, կիջնի ներքև երկնքից՝ մարդկանց զավակների մեջ և կբնակվի կավե տաղավարում»: Նա եկավ օրհնելու հիվանդին, կաղին, խուլին, կույրին և հարուցանելու նրանց, ովքեր մահացել են: Այնուամենայնիվ, Նա տարավ «ավելին, քան մարդ կարող է տանել և չմահանալ»:[26] Եվ չնայած Նա միակն է, ում միջոցով փրկություն է գալիս, Նրան ծաղրեցին, խարազանեցին ու խաչեցին: Սակայն Աստծո Որդին բարձրացավ գերեզմանից, որպեսզի մենք բոլորս էլ կարողանանք հաղթել մահին: Նա է, որ կկանգնի դատելու աշխարհը արդարությամբ: Նա կփրկի բոլորիս: Նա Իսրայելի Սուրբն է: Հիսուս Քրիստոսը սուրբ զարդարանքն է:

Եթե մենք ցանկանում ենք սուրբ լինել, մենք պիտի սովորենք նստել Իսրայելի Սուրբի ոտքերի մոտ և ժամանակ հատկացնել սրբության համար:

Երբ Բենիամին թագավորի ժողովուրդը լսեց նրա խոսքերը, նրանք ընկան գետնին, քանի որ մեծ էր նրանց խոնարհությունը և ակնածանքն առ մեր Աստծո շնորհը և փառքը: Նրանք գիտակցում էին իրենց մարմնական վիճակը: Արդյո՞ք մենք տեսնում ենք մեր բացարձակ կախվածությունը Քրիստոսի՝ մեր Տիրոջ շնորհից և ողորմածությունից: Արդյո՞ք մենք գիտակցում ենք, որ ամեն բարի պարգև՝ աշխարհիկ և հոգևոր, գալիս է մեզ Քրիստոսի միջոցով: Արդյո՞ք մենք հիշում ենք, որ համաձայն Հոր հավերժական ծրագրի, խաղաղությունն այս կյանքում և հավերժության փառքերը մերը կլինեն միայն Նրա սուրբ Որդու միջոցով:

Թող որ մենք միանանք Բենիամին թագավորի ժողովրդին, որ միաձայն աղաղակեցին բարձրաձայն.«Օ՜, ողորմություն ունեցիր և գործի դիր Քրիստոսի քավիչ արյունը, որպեսզի մենք կարողանանք ներում ստանալ մեր մեղքերից, և մեր սրտերը կարողանան մաքրվել. քանզի մենք հավատում

ենք Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն, որը ստեղծել է երկինքն ու երկիրը, և բոլոր բաները»:[27]

Ես վկայում եմ, որ եթե մենք զանք դեպի Իսրայելի Սուրբը, Նրա Հոգին կգա մեր վրա, որպեսզի մենք կարողանանք լցվել ուրախությամբ, ստանալ մեղքերի թողություն և խղճի հանգստություն:

Երկնային Հայրը մեզանից յուրաքանչյուրին տվել է սուրբ դառնալու կարողություն: Թող որ մենք լավագույնս պահենք մեր ուխտերը և ընդունենք Սուրբ Հոգին՝ որպես մեր ուղեկից: Առ Հիսուս Քրիստոսն ունեցած հավատով մենք դառնում ենք սրբեր Նրա Քավության շնորհիվ, որպեսզի կարողանանք ստանալ անմահություն և հավերժական կյանք և տանք Աստծուն՝ մեր Հորը, Նրա անվան փառքը: Թող մեր կյանքը միշտ սուրբ ընծա լինի, որ մենք կարողանանք կանգնել Տիրոջ առջև սուրբ զարդարանքով: Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ա Մնացորդաց 16.29
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.31–34
3. Տես Վարդապետություն և ուխտեր 45.57
4. Մոսիա 3.19
5. Տես Brigham Young, "Remarks," *Deseret News,* Apr. 2, 1862, 313. տես նաև Ջեյմս Ի. Ֆաուստ, «Կանգնել սուրբ տեղերում», *Լիահոնա,* մայիս 2005, 62:
6. Ղևտացոց 11.44
7. Դ. Թող Քրիստոֆերսոն, «Ես որոնց որ սիրում եմ, հանդիմանում եմ և խրատում եմ», *Լիահոնա,* մայիս 2011, 97:
8. *Lectures on Faith* (1985), 77
9. Մովսես 7.35
10. Տես Մովսես 6.57
11. Եսայիա 57.15
12. 1 Նեփի 22.21, 24, 26, 28
13. Տես Մորոնի 10.32–33
14. Տես Բ Պետրոս 1.4
15. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.20
16. Տես Մոսիա 4.26
17. Տես Վարդապետություն և Ուխտեր 59.9
18. Տես Ալմա 38.12
19. Տես Մովսես 7.18–19
20. Վարդապետություն և Ուխտեր 82.14
21. Տես 2 Նեփի 8.24
22. 2 Նեփի 9.14
23. Տես Ղուկաս 10.38–42
24. Տես Վարդապետություն և Ուխտեր 45.57–59
25. Տես Մոսիա 3.19
26. Մոսիա 3.5, 7
27. Մոսիա 4.2

Լինդա Ք. Բըրթն
Սփոփող Միության Գերագույն Նախագահ

Վստահելի կանայք

Վստահելի կանայք կենտրոնացած են Փրկիչ Հիսուս Քրիստոսի վրա և ունեն հույս Նրա քավիչ զոհաբերության խոստման միջոցով:

Սիրելի՛ քույրեր, որքան ենք սիրում ձեզ և շնորհակալություն ձեզ՝ Առաջին Նախագահության հրավերին և «Ես Օտարական էի» [ծրագրի] ջանքերին ձեր դյուրազգաց և խանդավառ արձագանքի համար: Խնդրում ենք, շարունակեք աղոթել, լսել Հոգու շշունջները և գործել ըստ ձեր ստացած հուշումների:

Անկախ նրանից, ես ճանապարհորդում եմ տեղական վայրերում, թե ողջ աշխարհով մեկ, անսովոր չէ, երբ ինչ-որ մեկը հարցնում է. «Հիշո՞ւմ եք ինձ»: Ցավալի է, բայց ես անկատար չեմ և պետք է ընդունեմ, որ հաճախ չեմ կարողանում հիշել անուններ: Սակայն, ես հիշում եմ այն շատ իրական սերը, որը Երկնային Հայրը թույլ է տվել ինձ զգալ, երբ ես հանդիպում եմ Նրա թանկագին դուստրերի և որդիների հետ:

Վերջերս ես հնարավորություն ունեցա այցելել որոշ սիրելի կանանց, ովքեր բանտում են: Երբ մենք ասում էինք մեր սրտառուչ ցտեսությունները, մի սիրելի կին աղերսեց. «Քույր Բըրթն, խնդրում եմ, մի մոռացեք մեզ»: Հուսով եմ, նա և մյուսները, ովքեր ուզում են իրենց հիշեն, կզգան այդ, երբ ես կիսվեմ ձեզ հետ մի քանի մտքերով:

Վստահելի կանայք Փրկիչի օրերում կենտրոնացած էին Փրկիչ Հիսուս Քրիստոսի վրա

Մեր քույրերը դարեր շարունակ ցուցաբերել են աշակերտության հավատարիմ օրինակ, որին մենք էլ ենք ձգտում: «Նոր Կտակարանը ներառում է պատմություններ [վստահելի] կանանց մասին՝ անուններով և անանուն, ովքեր հավատք գործադրեցին Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ, սովորեցին և ապրեցին Նրա ուսմունքներով և վկայեցին Նրա ծառայության, հրաշքների ու վեհափառության մասին: Այդ կանայք դարձան օրինակելի աշակերտներ և կարևոր վկաներ փրկության աշխատանքում:[1]

Խորհեք Ղուկասի գրքի այս պատմությունների շուրջ: Առաջինը, Փրկիչի ծառայության ժամանակ.

«Եվ եղաւ . . . որ [Հիսուսը] ման էր գալիս քաղաքները եւ գիւղերը քարոզելով եւ Աստուծոյ արքայութիւնն աւետարանելով. Եւ այն տասներեքուսն էլ նորա հետ.

Եւ *մի քանի կանայք,* . . . Մագթաղենացի կոչուած Մարիամը, . . . եւ Յովհաննան՝ . . . , եւ Շուշանը եւ շատ ուրիշներ, որ իրանց ստացուածքներիցը նորան ծառայութիւն էին անում»:[2]

Հաջորդը՝ Նրա հարությունից հետո.

«Բայց *մի քանի կանայք էլ* . . . որ առաւօտանց կանուխ գնացին գերեզմանը,

«. . . Եւ նորա մարմինը չգտած եկան եւ ասեցին, թէ . . . հրեշտակների տեսիլք են տեսել, որ ասում էին, թէ նա կենդանի է»:[3]

Նախկինում ես կարդացել եմ և անցել «մի քանի կանայք» անունը թվացող արտահայտության վրայով բազմաթիվ անգամներ, բայց վերջերս, երբ ավելի ուշադիր խորհրդածեցի, այդ խոսքերը, թվում է դուրս ցատկեցին էջից: Մտածեք *certain* բառի մեկ իմաստի հետևյալ հոմանիշների մասին, որը կապված է հավատարիմ *մի քանի կանանց*. արտահայտության հետ՝ «համոզված», «դրական», «համարձակ», «ամուր», «ինքնավստահ» և «վստահելի»:[4]

Երբ ես խորհեցի այդ հզոր նկարագրական բառերի շուրջ, ես հիշեցի Նոր Կտակարանի այն երկու *վստահելի կանանց*, ովքեր բերեցին համոզված, համարձակ, ամուր, ինքնավստահ վկայություններ Փրկիչի մասին: Չնայած նրանք մեզ նման ոչ կատարյալ կանայք էին, նրանց վկայությունը ոգեշնչող է:

Հիշեք անանուն կնոջը ջրհորի մոտ, ով հրավիրեց մյուսներին գալ և տեսնել, թե ինչ էր նա իմացել Փրկիչի մասին: Նա բերեց իր *վստահելի* վկայությունը հարցի ձևով. «Արդեօք նա՞ է Քրիստոսը»:[5] Նրա վկայությունն ու հրավերն այնքան համոզիչ էր, որ «շատերը . . . հաւատացին նորան»:[6]

Իր եղբոր՝ Ղազարոսի մահից հետո, Մարթան՝ Տիրոջ սիրելի աշակերտը և ընկերը, հայտարարեց, որը լի էր մեծ հուզմունքով. «Տէր, եթէ այստեղ լինէիր իմ եղբայրը չէր մեռնիլ»: Մտածեք նրա համոզվածության մասին, երբ նա շարունակեց. «*Բայց հիմա էլ գիտեմ,* թէ ինչ որ Աստուածանից խնդրես, Աստուած կտա քեզ»: Հետո նա վկայեց. «Ես հաւատացել եմ, թէ դու ես Քրիստոսն՝ Աստուծոյ Որդին, որ պետք է աշխարհք գայիր»:[7]

Մենք իմանում ենք այս քույրերից, որ *վստահելի կանայք*

կենտրոնացած են Փրկիչ Հիսուս Քրիստոսի վրա և ունեն հույս Նրա քավիչ զոհաբերության խոստման միջոցով:

Վերականգնման ուխտը պահող վստահելի կանայք հոժարակամ են զոհաբերություն կատարել

Հնադարյան ժամանակների *վստահելի կանայք* զոհաբերում էին, երբ վկայում էին և ապրում էին Հիսուսի ուսմունքներով: Վերականգնման ժամանակների *վստահելի կանայք* վաղ օրերին անում էին նույնը: Դրուսիլլա Հենդրիքսը և նրա ընտանիքը նրանց շարքում էին, ովքեր, որպես նորադարձներ, տառապեցին Սրբերի հալածանքների ժամանակ Քլեյ Քաունթիում (Միսսուրի): Նրա ամուսինը Քրուքիդ գետի ճակատամարտում կաթվածահար եղավ և մինչև կյանքի վերջը մնաց այդպես: Կնոջը թողեցին, որ հոգ տանի ամուսնու և ընտանիքի մասին:

Հատկապես մի աղետալի ժամանակ, երբ ընտանիքը մնացել էր առանց ուտելիքի, նա հիշում էր, թե ինչպես մի ձայն ասաց նրան. «Դիմացիր, Տերը կապահովի»:

Երբ Նրա որդին պետք է կամավորական դառնար Մորմոնների գումարտակում, Դրուսիլլան սկզբում դեմ էր և աղոթքով մաքառում էր Երկնային Հոր հետ, մինչև «կարծես մի ձայն ասաց նրան. «Ուզո՞ւմ ես բարձրագույն փառքը»: Նա բնականաբար պատասխանեց. «Այո» և ձայնը շարունակեց. «Ինչպե՞ս ես մտածում ձեռք բերել այն առանց մեծագույն զոհաբերություններ կատարելու»:[8]

Այս *վստահելի կնոջից* մենք սովորում ենք, որ ուխտը պահող հետևորդությունը պահանջում է զոհաբերելու մեր պատրաստակամությունը:

Վստահելի կանայք այսօր հիշում և նախապատրաստվում են տոնելու Նրա Վերադարձը

Ես նշեցի *վստահելի կանանց* Փրկիչի ժամանակ և ավետարանի վերականգնման վաղ շրջանում: Իսկ *վստահելի կանանց հետևորդության և վկայությունների* ի՞նչ օրինակներ կան մեր իսկ օրերում:

Իմ վերջին հանձնարարությունը Ասիայում էր, ես կրկին ոգեշնչված էի բազմաթիվ *վստահելի կանանցով,* ում ես հանդիպեցի: Ես հատկապես մեծ տպավորություն ստացա Հնդկաստանի, Մալազիայի և Ինդոնեզիայի առաջին սերնդի անդամներից, ովքեր ձգտում են ապրել ավետարանի մշակույթով իրենց սեփական տներում, երբեմն մեծ զոհաբերությամբ, քանի որ ավետարանով ապրելը հաճախ բախվում է ընտանիքի և երկրի մշակույթներին: Բազմասերունդ *վստահելի կանայք* Հոնգ Կոնգում և Թայվանում շարունակում են օրինել իրենց ընտանիքների կյանքը, Եկեղեցու անդամներին և համայնքներին՝ կենտրոնանալով Փրկիչի վրա և պատրաստակամ զոհաբերություն

կատարելով՝ ուխտերը պահելու համար: Նմանատիպ *վստահելի կանանց* կարելի է գտնել ողջ Եկեղեցով մեկ:

Մի *վստահելի կին,* ով օրհնել է իմ կյանքը վերջին 15 տարիների ընթացքում, պայքարում էր հյուծող, դժվարին և խորացող հիվանդության դեմ, որը կոչվում է մարմնի մկանային միոպաթիա. Չնայած նա զամված է անվասայլակին, աշխատում է երախտապարտ լինել և պահում է «Կարողանում եմ, կարողանում եմ ցուցակ». ընթացիկ ցուցակ այն բաների, որ նա *կարողանում է* անել, ինչպես օրինակ՝ Ես կարողանում եմ շնչել, ես կարողանում եմ աղոթել, և ես կարողանում եմ զգալ իմ Փրկիչի սերը: Գրեթե ամեն օր նա բերում է իր Քրիստոսակենտրոն *վստահելի* վկայությունը ընտանիքին և ընկերներին:

Ես վերջերս լսեցի Ջեննիի պատմությունը: Նա վերադարձած միսիոներ էր, ում ծնողներն ամուսնալուծվել էին, մինչ նա ծառայում էր միսիայում:Նա պատմեց, թե ինչպես էր տուն վերադառնալու միտքը «[իրեն] մահու չափ վախեցնում»: Բայց Իտալիայում իր միսիայի վերջում, երբ նա կանգ առավ միսիայի տանը դեպի Միացյալ Նահանգներ տուն մեկնելու ճանապարհին, *վստահելի մի կին*՝ միսիայի նախագահի կինը, քնքշորեն ծառայեց նրան, պարզապես սանրելով նրա մազերը:

Տարիներ անց, մեկ այլ *վստահելի կին*, Թերրին՝ ցցի Սփոփող Միության նախագահը և Հիսուս Քրիստոսի աշակերտը, օրհնեց Ջեննիի կյանքը, երբ Ջեննիին կանչեց որպես ծխի Սփոփող Միության նախագահ: Այդ ժամանակ Ջեննին աշխատում էր իր դիսերտացիայի վրա՝ դոկտորական աստիճանի համար: Թերրին ծառայեց ոչ միայն որպես դաստիարակ Ջեննիին՝ որպես նրա ղեկավար, այլև նստեց նրա հետ 10 ժամ հիվանդանոցում, երբ Ջեննին ստացավ լեյկեմիայի տագնապալի ախտորոշումը: Թերրին այցելեց հիվանդանոց և մեքենայով Ջեննիին տարավ տեսակցությունների: Ջեննին խոստովանեց. «Կարծում եմ, մի քանի անգամ ես երևի փսխեցի նրա մեքենայում»:

Չնայած իր հիվանդությանը, Ջեննին շարունակեց քաջաբար ծառայել որպես ծխի Սփոփող Միության նախագահ: Նույնիսկ իր ծայրահեղ վիճակում, նա հեռախոսային զանգեր էր կատարում և տեքստեր ու էլ-փոստով նամակներ էր ուղարկում իր մահճակալից և հրավիրում էր քույրերին գալ և տեսնել իրեն: Նա քարտեր և երկտողեր էր ուղարկում մարդկանց, չնայած հեռավորությանը՝ սեր արտահայտելով իր քույրերին: Երբ նրա ծուխը լուսանկար խնդրեց իր նախագահության վերաբերյալ իրենց ծխի պատմության համար, ահա թե նրանք ինչ ստացան: Որովհետև Ջեննին ինքը *վստահելի կին* է, նա հրավիրեց բոլորին կիսել մյուսների բեռները, ներառյալ՝ իր սեփականը:

Որպես *վստահելի կին*, Ջեննին վկայել է. «Մենք այստեղ ենք ոչ միայն ուրիշներին փրկելու համար, այլև ինքներս մեզ փրկելու համար: Իսկ այդ փրկությունը գալիս է Հիսուս Քրիստոսի հետ ընկերակցելուց, Նրա շնորհը և Նրա Քավությունը և Եկեղեցու կանանց հանդեպ Նրա սիրո զգացմունքները հասկանալուց: Դա պատահում է այնպիսի պարզ բաների միջոցով, ինչպես օրինակ՝ ինչ-որ մեկի մազերը սանրելով, ոգեշնչված, հստակ, հայտնության ոգով հույսի և շնորհի հաղորդագրություն ուղարկելով կամ թույլ տալով կանանց մեզ ծառայել»:[9]

Քույրե՛ր, երբ մենք դառնում ենք շեղված, կասկածամիտ, հուսալքված, մեղսավոր կամ հոգեպես լարված, եկեք ընդունենք Իր կենդանի ջրից խմելու Տիրոջ հրավերը, ինչպես Նա արեց դա՝ այն *վստահելի* կնոջը ջրհորի մոտ՝ հրավիրելով ուրիշներին անել նույնը, երբ մենք ևս բերում ենք մեր սեփական *վստահելի* վկայությունը. «Արդեօք նա՞ է Քրիստոսը»:

Երբ կյանքն անարդար է թվում, ինչպես դա թվացել էր Մարթային իր եղբոր մահվան ժամանակ, երբ մենք զգում ենք մենակություն, տառապում ենք անպտղությունից, կորցրել ենք սիրելիներին, ամուսնության և ընտանիքի բաց թողած հնարավորություններ, ունենք խորտակված օջախներ, հյուծող ընկճախտ, ֆիզիկական կամ մտավոր հիվանդություն, ծանր սթրես, տագնապ, կախվածություն, ֆինանսական դժվարություններ կամ բազմաթիվ այլ հավանականություններ, եկեք հիշենք Մարթային և հայտարարենք մեր նույնանման *վստահելի* վկայությունը. «*Բայց ես գիտեմ . . . [և] հավատում եմ* որ Դու ես Քրիստոսը՝ Աստծո Որդին»:

Եկեք հիշենք այն բազմաթիվ *վստահելի կանանց,* ովքեր հրաժարվեցին լքել մեր թանկագին Փրկիչին այն ցավատանջ փորձառության ընթացքում, երբ Նա

Ջեննին (կենտրոնում) ծառայում է որպես ծխի Սփոփող Միության նախագահ, չնայած տառապում է լեյկեմիա հիվանդությամբ իր նախագահության անդամների հետ:

տառապում էր խաչի վրա և դեռ ժամեր անց արտոնություն ունեցան լինել Նրա փառահեղ Հարության *վստահելի* վկաների շարքում: Եկեք մոտենանք Նրան, նախապատրաստվելով և ճաշակելով Նրա քավիչ զոհաբերության խորհրդանիշներից ամեն շաբաթ հաղորդության արարողության ժամանակ, և երբ պահենք ուխտերը՝ ծառայելով ուրիշներին նրանց կարիքի դեպքում: Միգուցե այդ ժամանակ մենք կարող ենք լինել *վստահելի կանանց,* Հիսուս Քրիստոսի աշակերտների մի մասը, ովքեր կտոնեն Նրա փառահեղ վերադարձը, երբ Նա կրկին գա:

Քույրե՛ր, ես վկայում եմ Երկնային սիրառատ Ծնողների, մեր Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի և մեզ համար Նրա անսահման Քավության մասին: Ես գիտեմ Մարգարե Ջոզեֆ Սմիթը նախակարգված էր որպես Վերականգնման մարգարե: Ես գիտեմ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է և թարգմանվել է Աստծո զորությամբ: Մենք օրհնված ենք մեր ժամանակներում ապրող մարգարեով՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնով: Այս ճշմարտություններում ես *վստահ* եմ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Նշում. Ապրիլի 1-ին, 2017թ., Քույր Բլեթլոնը ազատվեց Սփոփող Միության Գերագույն Նախագահի կոչումից:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 3.
2. Ղուկաս 8.1–3, շեշտադրումն ավելացված է:
3. Ղուկաս 24.22–23, շեշտադրումն ավելացված է:
4. Անգլերենում *certain* բառն ունի երկրորդ իմաստ «մի քանի» կամ «ինչ-որ» իմաստը: Բայց վստահության, համարձակության և հավատարմության իմաստն է, որ ես կամեցել եմ շեշտադրել այսօր:
5. Հովհաննես 4.29
6. Հովհաննես 4.39
7. Հովհաննես 11.21–22, 27, շեշտադրումն ավելացված է:
8. Տես Jennifer Reeder and Kate Holbrook, eds., *At the Pulpit: 185 Years of Discourses by Latter-day Saint Women* (2017), 51–52
9. Օգտագործվել է հեղինակի՝ Ջեննիֆեր Ռիդերի թույլտվությամբ, ով Եկեղեցու Պատմության բաժնում 19 դարի կանանց պատմության մասնագետ է:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

«Իմ խաղաղությունն եմ թողում ձեզ»

Տերը խաղաղություն խոստացավ Իր աշակերտներին, երբ մոտեցավ նրանցից հեռանալու ժամանակը: Նա տվել է մեզ այդ նույն խոստումը:

Իմ թանկագին քույրեր, այս երեկո մենք օրհնվեցինք Աստծո Հոգով: Զորեղ քույր ղեկավարների ոգեշնչված ուղերձները և երաժշտությունը ամրացրին մեր հավատը և մեծացրին մեր ցանկությունը՝ պահելու սուրբ ուխտերը, որ կապել ենք մեր սիրելի Երկնային Հոր հետ: Մենք զգացինք, որ մեծացավ մեր սերը Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ և երախտագիտությունը՝ Նրա քավության հրաշալի պարգևի հանդեպ:

Այսօր ես ունեմ մի պարզ ուղերձ: Այս երեկո մենք բոլորս զգացինք խաղաղություն: Բոլորս էլ կցանկանանք հաճախ զգալ

այդ խաղաղությունը մեր մեջ, մեր ընտանիքներում և մեզ շրջապատող մարդկանց հետ: Տերը խաղաղություն խոստացավ Իր աշակերտներին, երբ մոտեցավ նրանցից հեռանալու ժամանակը: Նա տվել է մեզ այդ նույն խոստումը: Բայց Նա ասաց, որ խաղաղությունը կտա Իր ձևով, այլ ոչ աշխարհի: Նա նկարագրեց խաղաղություն ուղարկելու Իր ուղին.

«Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը կուղարկէ իմ անունովը, նա ամեն բան կսովորեցնէ ձեզ, եւ կյիշեցնէ ձեզ ամեն ինչ որ ձեզ ասեցի:

Խաղաղութիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ. ոչ թէ ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. ձեր սիրտը չխռովի եւ չվախենայ» (Հովհաննես 14.26–27):

Մոսիայի որդիները ունեին խաղաղության այդ պարգևի կարիքը, երբ սկսեցին իրենց առաքելությունը լամանացիների մեջ: Իրենց առջև դրված խնդրի մեծության զգացումից անհանգստանալով՝ նրանք աղոթեցին հավաստիացման համար: Եվ «Տերն այցելեց նրանց իր Հոգով և ասաց նրանց. Հանգիստ եղեք: Եվ նրանք հանգստացան» (Ալմա 17.10, տես նաև Ալմա 26.27):

Ժամանակ առ ժամանակ դուք խաղաղություն կփափագեք, երբ հանդիպեք անորոշության և վերահաս մարտահրավերների: Մոսիայի որդիներին ծանոթ էր այն դասը, որը Տերն ուսուցանեց Մորոնիին: Այն ուղեցույց է բոլորիս համար. «Եթե մարդիկ գան ինձ մոտ, ես նրանց ցույց կտամ իրենց թուլությունը: Ես մարդկանց թուլություն եմ տալիս, որպեսզի նրանք խոնարհ լինեն. և իմ շնորհը բավական է բոլոր մարդկանց համար, ովքեր իրենց խոնարհեցնում են իմ առջև.քանզի, եթե նրանք խոնարհեցնեն իրենց իմ առջև, և հավատք ունենան ինձանում, այն ժամանակ, նրանց թույլ կողմերը ես կդարձնեմ ուժեղ» (Եթեր 12.27):

Մորոնին ասել է, որ երբ լսեց այս խոսքերը, նա հանգստացավ (Եթեր 12.29): Դրանք կարող են հանգստություն բերել մեզ բոլորիս: Նրանք, ովքեր չեն տեսնում իրենց թուլությունները, առաջ չեն շարժվում: Տեսնել ձեր իսկ թուլությունը օրհնություն է, քանի որ դա օգնում է ձեզ խոնարհ լինել և շարունակ դարձնում է ձեզ դեպի Փրկիչը: Հոգին ոչ միայն մխիթարում է ձեզ, այլև Նրա միջոցով Քավությունը փոխում է ձեր էությունը: Ապա թույլ կողմերը դառնում են ուժեղ:

Ժամանակ առ ժամանակ ձեր հավատը կփորձվի սատանայի կողմից. դա պատահում է Հիսուս Քրիստոսի բոլոր աշակերտների հետ: Այս հարձակումներից պաշտպանվելու համար դուք պետք է ունենաք Սուրբ Հոգին՝ որպես ձեր զուգընկեր: Սուրբ Հոգին խաղաղություն կխոսի ձեր հոգիներին: Նա ձեզ առաջ կմղի հավատքով: Եվ Նա կհիշեցնի ձեզ այն ժամանակները, երբ դուք զգացել եք Հիսուս Քրիստոսի լույսը և սերը:

Հիշելը կարող է լինել Հոգու ամենաթանկ պարգևը: Նա «կյիշեցնէ ձեզ ամեն ինչ որ ձեզ [ասել է Տերը]» (Հովհաննես 14.26): Դրանք կարող են լինել հուշեր պատասխանված աղոթքի, քահանայության ստացած արարողության, ձեր վկայության հաստատման կամ այն պահի մասին, երբ դուք տեսել եք Աստծո առաջնորդող ձեռքը ձեր կյանքում: Հավանաբար մի օր ապագայում, երբ դուք ամրապնդման կարիք ունենաք, Հոգին կհիշեցնի ձեզ այն զգացումները, որ ունենում եք այս ժողովի ժամանակ: Աղոթում եմ, որ դա այդպես լինի:

Հոգին հաճախ ինձ հիշեցնում է մի երեկո, երբ տարիներ առաջ Ինսբրուքում (Ավստրիա) հաղորդության ժողով անցկացվեց մի մետաղյա ծածկի տակ: Ծածկը գտնվում էր երկաթուղու գծերի ստորոտում: Այնտեղ փայտե աթոռներին նստած մոտ տասը մարդ կար: Մեծ մասը կանայք էին՝ երիտասարդ և տարիքով: Ես երախտագիտության արցունքներ տեսա, մինչ հաղորդությունը բաժանվեց փոքրիկ խմբի մեջ: Ես զգացի Տիրոջ սերն այդ Սրբերի

հանդեպ. նույնը զգում էին նաև նրանք: Բայց հրաշքը, որը ես պարզ հիշում եմ, այն լույսն էր, որը կարծես լցվեց այդ մետաղյա ծածկի տակ՝ բերելով իր հետ խաղաղության զգացում: Երեկո էր և պատուհաններ չկային, սակայն սենյակն այնքան լուսավոր էր, կարծես կեսօր լիներ:

Այդ երեկո Սուրբ Հոգու լույսն այդտեղ պայծառ էր ու առատ: Իսկ պատուհանները, որոնցով թափանցում էր լույսը, խոնարհ սրտերն էին այն Սրբերի, ովքեր եկել էին Տիրոջ առաջ ներում փնտրելու իրենց մեղքերին և պարտավորվում էին միշտ հիշել Նրան: Այդ պահին դժվար չէր Նրան հիշելը, իսկ այդ սուրբ փորձառության իմ հիշողությունը հեշտացրեց ինձ համար հիշել Նրան և Նրա Քավությունը հետագա տարիներին: Այդ օրը կատարվեց հաղորդության աղոթքի խոստումը, որ Հոգին կլինի մեզ հետ, ինչն էլ բերեց լույս ու խաղաղություն:

Ձեզ նման ես էլ երախտապարտ եմ տարբեր եղանակների համար, որոնցով Տերն այցելել է ինձ Մխիթարիչի միջոցով, երբ ես խաղաղության կարիք եմ ունեցել: Սակայն մեր Երկնային Հորը մտահոգում է ոչ միայն մեր մխիթարությունը, այլ ավելի շատ մեր առաջիկա զարգացումը: «Մխիթարիչը» եղանակներից միայն մեկն է, որով Սուրբ Հոգին նկարագրվում է սուրբ գրություններում: Ահա մեկ ուրիշը. «Եվ արդ, ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ. Ապավինիր այն Հոգուն, որն առաջնորդում է բարիք գործել» (ՎևՈւ 11.12): Շատ հաճախ, բարիքը, որը Նա կառաջնորդի ձեզ անել, ներառում է նաև՝ օգնել մեկ ուրիշին Աստծուց մխիթարություն ստանալու համար:

Իր իմաստությամբ Տերը միավորել է ձեզ Իր Եկեղեցու կազմակերպություններում և դասարաններում: Նա արել է դա բարիք գործելու ձեր զորությունը մեծացնելու համար: Այդ կազմակերպություններում դուք ունեք հատուկ պարտականություններ՝ ծառայելու ուրիշներին Նրա փոխարեն: Օրինակ՝ եթե դուք երիտասարդ կին եք, ձեր եպիսկոպոսը կամ Երիտասարդ Կանանց ձեր ղեկավարը միգուցե խնդրել է ձեզ օգնության հասնել մի Դափնու, ով դարձել է, ինչպես մենք ենք երբեմն կոչում, «ոչ ակտիվ»: Միգուցե դուք նրան ավելի լավ եք ճանաչում, քան եպիսկոպոսը կամ Երիտասարդ Կանանց ղեկավարը: Միգուցե ձեզ հայտնի է, որ նա մտահոգություն ունի կապված տան կամ դպրոցի, կամ հենց երկուսի հետ էլ: Ձեր ղեկավարները գուցե չգիտեն, թե ինչու են ոգեշնչվել ձեզ խնդրել օգնության հասնել նրան, սակայն Տերը գիտի, և Նա ղեկավարում է այս աշխատանքը Իր Հոգու ոգեշնչման միջոցով:

Ձեր ջանքերը հաջողության կհասնեն, եթե թե՛ ձեր սրտում, թե՛ այն երիտասարդ կնոջ սրտում, որին փրկելու համար դուք ուղարկվել եք, տեղի ունենա հրաշք փոփոխություն, իսկ դա պահանջում է Սուրբ Հոգու ընկերակցությունը: Հոգին կարող է ձեզ թույլ տալ տեսնելու քիչ ակտիվ Դափնուն այնպիսին, ինչպիսին Տերն է տեսնում նրան: Տերը գիտի նրա սիրտը և ձեր սիրտը, և Նա գիտի սրտերի փոփոխության հավանականությունը: Նա կարող է այցելել Իր Հոգով ձեզ երկուսիդ՝ ոգեշնչելով խոնարհություն, ներում և սեր:

Այդ Հոգին կարող է ոգեշնչել խոսքեր, գործեր և համբերություն, որ անհրաժեշտ են ձեզ՝ ետ հրավիրելու զառնուկին դեպի հոտը: Եվ Նա կարող է դիպչել Դափնիների դասարանի հոտի սրտերին՝ սիրելու և ողջունելու կորած ոչխարին, որպեսզի երբ նա հետ գա, զգա, որ տուն է եկել:

Որպես Աստծո դուստրեր, բարիք գործելու ձեր զորությունը մեծապես կախված է ձեր մեջ առկա միասնությունից և սիրուց: Սա խաղաղության մեկ այլ պարգև է, որ գալիս է Սուրբ Հոգու միջոցով:

Ալման հասկանում էր սա: Ահա թե ինչու նա աղերսում էր իր ժողովրդին, «որ չպետք է լինի ոչ մի հակառակություն մեկը մյուսի հետ, այլ որ նրանք պետք է նայեն դեպի ապագան մեկ աչքով, ունենալով մեկ հավատք և մեկ մկրտություն, միավորելով իրենց սրտերը միությամբ ու սիրով մեկը մյուսի հանդեպ» (Մոսիա 18.21):

Միությունն անհրաժեշտ է, որ մենք ունենանք Հոգին մեր դասարանում և մեր ընտանիքում: Սակայն փորձառության միջոցով մենք գիտենք, որ նման սիրառատ

միությունը դժվար է պահպանել: Մեր աչքերը բացելու և մեր զգացողությունները մեղմացնելու համար պահանջվում է, որ ունենանք Սուրբ Հոգուն որպես զուգընկեր:

Ես հիշում եմ, թե ինչպես մի անգամ յոթ կամ ութ տարեկան մեր որդին այնպես էր թռչկոտում մահճակալի վրա, որ կարծեցի, թե այն կկոտրվի: Ես վրդովված արագ շարժվեցի տեղիցս՝ իմ տանը կարգ ու կանոն ապահովելու համար: Ես բռնեցի որդուս փոքրիկ ուսերից ու բարձրացրի նրան այնքան, որ մեր աչքերը հանդիպեցին իրար:

Հոգին իմ մտքում շշնջաց խոսքեր: Դա կարծես մի մեղմ ձայն լիներ, սակայն մխրճվեց սրտիս մեջ. «Քո ձեռքերում մի հրաշալի անձնավորություն է»: Ես նրան քնքշորեն վայր իջեցրի մահճակալի վրա և ներողություն խնդրեցի:

Այժմ նա դարձել է այն հրաշալի անձնավորությունը, ում Սուրբ Հոգին ինձ թույլ տվեց տեսնել 40 տարի առաջ: Ես հավերժ երախտապարտ եմ, որ Տերը փրկեց ինձ անբարյացակամ զգացումներից՝ ուղարկելով Սուրբ Հոգին, որ թույլ տա ինձ տեսնել Աստծո զավակին այնպիսին, ինչպիսին Նա էր տեսնում նրան:

Միությունը, որ փնտրում ենք մեր ընտանիքներում և Եկեղեցում, կգա, երբ թույլ տանք Սուրբ Հոգուն ներգործել մեր տեսածի վրա, երբ նայում ենք միմյանց և նույնիսկ, երբ մտածում ենք միմյանց մասին: Հոգին տեսնում է Քրիստոսի մաքուր սիրով: Լսեք խոսքերը, որոնք Մորմոնն օգտագործեց գթությունը նկարագրելիս: Մտածեք այն պահերի մասին, երբ զգացել եք այն.

«Գթությունը երկայնամիտ է և բարի, չի նախանձում, փքվաճ չէ, իրենը չի փնտրում, չի գրգռվում հեշտորեն, չարը չի մտածում և չի հրճվում անօրինությամբ, այլ հրճվում է ճշմարտությամբ, տանում է ամեն բան, հավատում է ամեն բանի, ամեն բանի հույս ունի, ամեն բանի համբերում է:

Ուստի, իմ սիրելի եղբայրներ [և ես ավելացնում եմ քույրեր], եթե դուք չունեք գթություն, դուք ոչինչ եք, քանզի գթությունը երբեք չի խափանվում: Ուստի, հարեք գթությանը, որը բոլորից մեծ է, քանզի բոլոր բաները պիտի խափանվեն.

Բայց գթությունը Քրիստոսի մաքուր սերն է, և այն տևում է հավերժ, և ով որ օժտված լինի դրանով վերջին օրը, նրա համար լավ կլինի:

Ուստի, իմ սիրելի եղբայրներ [և քույրեր], աղոթեք Հորը, սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով, որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն են, որ դուք կարողանաք դառնալ Աստծո որդիները [և դուստրերը], որպեսզի երբ նա հայտնվի, մենք լինենք նրա նման, քանզի մենք պիտի տեսնենք նրան, ինչպես որ ինքն է, որ մենք կարողանանք ունենալ այդ հույսը, որ մենք կարողանանք մաքրվել ճիշտ ինչպես նա է մաքուր» (Մորոնի 7.45–48):

Սա է նպատակը, որ ձեր Երկնային Հայրն ունի ձեր՝ Իր թանկագին դուստրերի համար: Այն կարող է թվալ ձեզ հեռվում գտնվող մի նպատակ, սակայն Նրա տեսանկյունից դուք այդքան էլ հեռվում չեք: Ուստի, Նա այցելում է ձեզ Իր Հոգով, որպեսզի մխիթարի, քաջալերի և ոգեշնչի ձեզ՝ առաջ գնալու համար:

Ես թողնում եմ ձեզ հետ իմ անտարակուսելի վկայությունը, որ Հայրը գիտի ձեզ. գիտի ձեր կարիքները և ձեր անունը, սիրում է ձեզ և լսում է ձեր աղոթքները: Նրա Սիրելի Որդին հրավիրում է ձեզ գալ Նրան մոտ: Եվ Նրանք ուղարկում են Սուրբ Հոգուն այցելելու ձեզ՝ Իրենց փոխարեն ուրիշներին ծառայելու ձեր ջանքերում:

Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը սրբագործող ու մաքրագործող ազդեցություն կունենա ձեր հոգու վրա: Ապա դուք կզգաք խաղաղությունը, որը Փրկիչը խոստացել էր թողնել Իր աշակերտների հետ: Այդ խաղաղության հետ կգա պայծառ հույս և լույսի ու սիրո զգացում՝ Հոր և Նրա Սիրելի Որդու կողմից, ով առաջնորդում է Իր թագավորությունը Երկրի վրա՝ Իր ապրող մարգարեին տրված հայտնության միջոցով: Այս ամենը ես վկայում եմ Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին նախագահության առաջին խորհրդական

Աստծո ընտանիքի հավաքումը

Հայր Աստծո ցանկությունն է, որ իր զավակները ընտանիքներով ու փառքով շրջապատված կրկին տուն վերադառնան

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ես ուրախ եմ գերագույն համաժողովի այս նիստի սկզբում ձեզ հետ լինելու հնարավորության համար: Ամենայն ջերմությամբ ողջունում եմ ձեզ:

Գերագույն համաժողովի ժամանակ Վերջին Օրերի Սրբերը միշտ հավաքվում են միասին: Վաղուց անցել են այն ժամանակները, երբ ֆիզիկապես հնարավոր էր մի վայրում հավաքվել, սակայն Տերը ապահովել է ուղիներ, որ գերագույն համաժողովի օրհնությունները հասանելի լինեն ձեզ՝ անկախ ձեր գտնվելու վայրից: Մեզ՝ ամբիոնի մոտ կանգնածներիս համար, տպավորիչ է տեսնել Սրբերի հավաքը այս մեծ Համաժողովների կենտրոնում, սակայն մեր մտքի աչքերը միշտ ուղղված են դեպի այն միլիոնավոր մարդիկ, ովքեր հավաքված են մեզ հետ ողջ աշխարհում՝ դիտելու և լսելու այս համաժողովը: Շատերդ հավաքվել եք ձեր ընտանիքներով, ոմանք էլ, հավանաբար, հավաքվել են ընկերների կամ Եկեղեցու անդամների հետ:

Որտեղ էլ լինեք և ինչպես էլ իմ ձայնը լսեք, խնդրում եմ իմացեք, որ թեև ֆիզիկապես մեր դահլիճում չեք, մենք զգում ենք, որ դուք հոգով մեզ հետ եք: Մենք հույս ունենք, որ բոլորդ միասնական եք մեզ հետ, որ դուք կզգաք հոգևոր զորությունը, որը գալիս է ամեն անգամ, երբ հավատացյալները հավաքվում են Հիսուս Քրիստոսի անունով:

Այսօր ես ոգեշնչված ուզում եմ խոսել մեկ այլ հավաքման մասին: Հավաքման այդ տեսակը չի կրկնվում յուրաքանչյուր վեց ամիսը մեկ, ինչպես գերագույն համաժողովը: Փոխարենը, այն շարունակվում է անընդհատ, Եկեղեցու վերականգնման օրերից սկսած և վերջին տարիներին ավելի է արագանում: Ես ակնարկում եմ Աստծո ընտանիքի հավաքումը:

Այդ հավաքը լավագույնս նկարագրելու համար վերհիշենք, թե ինչ տեղի ունեցավ նախքան մեր ծնունդը, նախքան այն, ինչ Աստվածաշունչն անվանում է «սկիզբ» (Ծննդոց 1.1): Այդ ժամանակ մենք ապրում էինք Երկնային Հոր հետ որպես Իր հոգևոր զավակներ: Դա ճշմարիտ է յուրաքանչյուր մարդու համար, ով երբևէ ապրել է երկրի վրա:

Միմյանց «եղբայր» և «քույր» անվանելը ոչ միայն բարեկամական ողջույնի կամ քաղցր վերաբերմունքի բառեր են մեզ համար: Դրանք արտահայտում են հավերժական ճշմարտություն. Աստված

բառացիորեն ողջ մարդկության Հայրն է, մենք բոլորս Նրա հավերժական ընտանիքի մասն ենք: Քանի որ Նա սիրում է մեզ կատարյալ Հոր սիրով, Նա ուզում է, որ մենք զարգանանք ու առաջընթաց ունենանք և նմանվենք Իրեն: Նա մի ծրագիր է սահմանել, ըստ որի մենք պետք է գանք երկիր, ապրենք ընտանիքներում և փորձառություններ ունենանք, որոնք մեզ կնախապատրաստեն վերադառնալ Նրա մոտ և ապրել այնպես, ինչպես Նա է ապրում:

Այդ ծրագրի առանցքային տարրը խոստումն էր, որ Հիսուս Քրիստոսը իրեն զոհ կմատուցի, որպեսզի փրկի մեզ մեղքից ու մահից: Ծրագրի մեր մասը Փրկիչի զոհաբերությունն ընդունելն էր՝ հնազանդվելով ավետարանի օրենքներին ու արարողություններին: Ես և դուք ընդունեցինք ծրագիրը: Իրականում, մենք ուրախացանք ծրագրի համար, չնայած անհրաժեշտ էր հեռանալ Հոր ներկայությունից և մոռանալ Նրա մոտ ունեցած փորձառության մասին:

Բայց մեզ չուղարկեցին այստեղ բացարձակ խավարի մեջ: Յուրաքանչյուրիս տրվեց Աստծո լույսի մի մաս, որը կոչվում է «Քրիստոսի Լույս», որպեսզի օգնի մեզ տարբերել չարն ու բարին, ճիշտն ու սխալը: Սա է պատճառը, թե ինչու Հոր ծրագրի մասին անգամ քիչ իմացողները կամ ընդհանրապես չիմացողները ևս կարող են զգալ իրենց սրտում, որ կան ինչպես արդար ու բարոյական, այնպես էլ ոչ արդար և ոչ բարոյական գործեր:

Ճշտի ու սխալի մեր զգացումը սրվում է հատկապես, երբ մեծացնում ենք մեր երեխաներին: Գրեթե ամեն մի ծնողի բնատուր ցանկությունն է՝ բարոյական արժեքներ սովորեցնել իր երեխաներին: Դա Երկնային Հոր ծրագրի հրաշալի մասերից մեկն է: Նա ցանկանում է, որ Իր զավակները գան երկիր, հետևելով ընտանիքների հավերժական օրինակին, որը գոյություն ունի երկնքում: Ընտանիքը հավերժության թագավորությունների հիմնական կազմակերպչական միավորն է, ուստի Հոր մտադրությունն է, որ այն հիմնական միավոր լինի նաև երկրի վրա: Թեև երկրային ընտանիքները հեռու են կատարյալ լինելուց, նրանք երկրի վրա Աստծո զավակներին ընդունելու լավագույն հնարավորությունն են ապահովում, որտեղ կա երկնքում զգացած սիրուն ամենամոտ ծնողական սերը: Ընտանիքները նաև բարոյական արժեքներ ու ճշմարիտ սկզբունքներ պահպանելու ու փոխանցելու լավագույն միջոցն են, որոնք, ամենայն հավանականությամբ, կվերադարձնեն մեզ Աստծո ներկայություն:

Այս կյանքի ընթացքում Աստծո զավակների միայն փոքր մասն է ամբողջապես հասկանում Աստծո ծրագիրը և ստանում քահանայության արարողություններն ու ուխտերը, որոնք Փրկիչի քավիչ զոհաբերության ուժը գործուն են դարձնում մեր կյանքում: Անգամ լավագույն ծնողներ ունեցողները կարող են ապրել հավատարմորեն՝ իրենց ձեռք բերած լույսի համաձայն, բայց երբեք չլսել Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության մասին, ոչ էլ երբևէ հրավեր ստանան մկրտվելու Նրա անունով: Սա իրականություն է եղել բազում միլիոնավոր մեր եղբայրների ու քույրերի համար ողջ աշխարհի պատմության ընթացքում:

Ոմանք դա անարդար կհամարեն: Նրանք այդ փաստը կարող են անգամ վկայություն համարել, որ չկա ծրագիր, ոչ էլ առանձնահատուկ պահանջներ կան փրկության համար, մտածելով, որ արդար և սիրող Աստված չի ստեղծի ծրագիր, որը հասանելի է Իր զավակների միայն փոքրամասնությանը: Մյուսները կարող են եզրակացնել, որ Աստված նախապես կանխորոշել է, թե իր զավակներից ում պետք է փրկի և այն հասանելի է դարձրել նրանց, մինչդեռ նրանք, ովքեր չեն լսել ավետարանի մասին, պարզապես «ընտրված» չեն:

Բայց ես և դուք գիտենք, Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով վերականգնված ճշմարտությունների շնորհիվ, որ Աստծո ծրագիրը շատ ավելի սիրառատ է և արդար: Մեր Երկնային Հայրը մտահոգված է, որպեսզի հավաքի և օրհնի Իր ամբողջ ընտանիքին: Թեև Նա գիտի, որ ոչ բոլորն են ընտրելու հավաքվել, Նրա ծրագիրը Իր զավակներից յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս ընդունելու կամ մերժելու Նրա հրավերը: Իսկ ընտանիքները այդ ծրագրի առանցքում են:

Դարեր առաջ, Մաղաքիա մարգարեն ասել է, որ գալիք մի օր Աստված ուղարկելու է Եղիային, որպեսզի «հայրերի սրտերը դարձնի դեպի զավակները, և զավակների սրտերը՝ դեպի իրենց հայրերը» (Մաղաքիա 4.6):

Այս մարգարեությունը այնքան կարևոր էր, որ Փրկիչը վկայակոչեց այն, երբ Իր Հարությունից հետո այցելեց Ամերիկյան մայրցամաք (տես 3 Նեփի 25.5–6): Եվ երբ Մորոնի հրեշտակը այցելեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին, նա ևս վկայակոչեց Եղիայի և սրտերի, հայրերի և զավակների մասին նույն մարգարեությունը (տես Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.36–39):

Այսօր ապրիլի 1-ն է: Երկու օր անց՝ ապրիլի 3-ին, լրանում է 181 տարի այն օրվանից, երբ Մաղաքիայի մարգարեությունը կատարվեց: Այդ օրը Եղիան եկավ, և նա Ջոզեֆ Սմիթին հանձնեց ընտանիքները հավերժ կնքելու քահանայության իշխանությունը (տես ՎԿՈ 110.13–16):

Այդ օրվանից մինչ այժմ ընտանեական պատմությունն ուսումնասիրելու հետաքրքրությունը մեծապես աճել է: Արագ աճող տեմպերով մարդիկ հետաքրքրվում են իրենց նախնիներով ավելի խորապես, քան պատահական հետաքրքրասիրությունն է: Այդ հետաքրքրությունը բավարարելու համար աշխարհով մեկ տոհմաբանական գրադարաններ և ընկերություններ են բացվել և նոր տեխնոլոգիաներ են ստեղծվել: Հաղորդակցությունը մատչելի դարձնելու համացանցի ներուժը հնարավորություն է ընձեռել, որ ընտանիքները միասին աշխատեն և ընտանեկան պատմության ուսումնասիրություն կատարեն այնպիսի արագությամբ ու խորությամբ, որ երբևէ նախկինում հնարավոր չի եղել:

Ինչո՞ւ է այդ ամենը կատարվում: Ավելի լավ եզրույթի բացակայության պատճառով՝ մենք այն անվանում ենք «Եղիայի ոգի»: Այն նաև կարող էին հավասարապես կոչել «մարգարեության իրականացում»: Ես բերում եմ վկայությունը, որ Եղիան իսկապես եկել է: Զավակների սրտերը, այսինքն՝ իմ և ձեր սրտերը, դարձել է դեպի մեր հայրերը, դեպի մեր նախնիները: Ջերմությունը, որ դուք զգում եք ձեր նախնիների հանդեպ, այդ մարգարեության կատարման մասն է: Այն խորապես նստած է ձեր ով լինելու գիտակցության մեջ: Սակայն, այն ավելին է, քան պարզապես ժառանգած ԴՆԹ-ն:

Օրինակ, երբ դուք հետևում եք ձեր ընտանեկան պատմությունն ուսումնասիրելու հուշումներին, դուք կարող եք բացահայտել, որ հեռավոր ազգականներից մեկը դիմագծերով, գիրք կարդալու հետաքրքրությամբ կամ երգելու տաղանդով շատ նման է ձեզ: Դա կարող է շատ հետաքրքիր և անգամ ուսուցանող լինել: Բայց եթե ձեր աշխատանքը դադարի այդտեղ, դուք կզգաք, որ ինչ-որ բան պակասում է: Դա այն պատճառով է, որ Աստծո ընտանիքը հավաքելու համար ավելին է անհրաժեշտ, քան ջերմ զգացումները: Այն պահանջում է քահանայության արարողությունների հետ կապված ուխտեր:

Ձեր նախնիներից շատերը չեն ստացել այդ արարողությունները: Սակայն, Աստծո նախախնամությամբ, դուք ստացել եք: Եվ Աստված գիտեր, որ ձեր մոտ սեր կառաջանա ձեր նախնիների հանդեպ և դուք նրանց գտնելու անհրաժեշտ տեխնոլոգիաներ կունենաք: Նա գիտեր նաև, որ դուք կապրեք մի ժամանակաշրջանում, երբ տաճարները, որտեղ կարող են արարողություններ կատարվել, ավելի հասանելի կլինեն, քան երբևէ պատմության մեջ եղել են: Եվ Նա գիտեր, որ կարող է վստահել ձեզ իրականացնել այդ աշխատանքը՝ ի դեմս ձեր նախնիների:

Իհարկե, մենք բոլորս ունենք շատ հրատապ և կարևոր պարտականություններ, որոնք պահանջում են մեր ուշադրությունը և ժամանակը: Բոլորս առնչվում ենք այն փաստի հետ, որ Տիրոջ ակնկալիքները երբեմն պահանջում են մեր ուժերից վեր բաներ անել: Բարեբախտաբար, Տերը ուղի է ապահովում յուրաքանչյուրիս համար, որ վստահություն ձեռք բերենք և բավարարվածություն ստանանք բոլոր մեր ծառայություններից, այդ թվում, ընտանեկան պատմությունից: Մենք ուժ ենք ստանում անել այն, ինչ Նա խնդրում է, շնորհիվ մեր հավատքի, որ Փրկիչը չի տալիս պատվիրաններ «առանց ուղի պատրաստելու [մեզ] համար, որպեսզի [մենք] կարողանանք իրագործել այն, ինչ նա պատվիրել է» (1 Նեփի 3.7):

Իմ փորձից գիտեմ, որ սա ճշմարիտ է: Տարիներ առաջ, երբ համալսարանի ուսանող էի, հանդիպեցի մի մարդու, որը աշխարհի ամենախոշոր համակարգչային ընկերություններից մեկում էր աշխատում: Դա համակարգիչների ստեղծման վաղ շրջանում էր, և ընկերությունը նրան ուղարկել էր, որպեսզի համակարգիչներ վաճառի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն:

Ինչքանով գիտեի, այդ վաճառողը կրոնական որևէ հավատի չէր դավանում: Չնայած դրան, նա ասաց զարմանքով ու թերահավատությամբ. «Այս եկեղեցում անում են այն, ինչ նրանք կոչում են «ծագումնաբանություն», որոնելով մարդկանց անունները, ովքեր մահացած են՝ փորձելով բացահայտել իրենց նախնիներին: Մարդիկ, հիմնականում կանայք, վազվզում էին մի քարտարանից մյուսը՝ տեղեկություն որոնելով փոքր քարտերում»: Եթե ճիշտ եմ հիշում, նա ասաց, որ կանայք սպորտային կոշիկներ էին հագնում, որ կարողանան ավելի արագ տեղաշարժվել: Տղամարդը շարունակեց. «Տեսնելով նրանց աշխատանքի ծավալը, թե նրանք ինչ էին փորձում անել, ես հասկացա, թե ինչի համար էր անհրաժեշտ համակարգիչների գյուտը»:

Դե՛, նա մասամբ ճիշտ էր: Համակարգիչները լինելու էին ընտանեկան պատմության աշխատանքի ապագայի կարևոր մասը, պարզապես միայն ոչ նրա վաճառած համակարգիչները: Եկեղեցու ոգեշնչված ղեկավարը որոշեց չգնել նրա համակարգիչները: Եկեղեցին սպասելու էր մի տեխնոլոգիայի, որի հավանականությունն այդ ժամանակ դեռ չէին էլ պատկերացնում: Իսկ հաջորդող տարիներին ես սովորեցի, որ անգամ լավագույն տեխնոլոգիան չի կարող փոխարինել հայտնությանը երկնքից, ինչպես որ եկեղեցու այդ

առաջնորդը ստացավ: Սա հոգևոր աշխատանք է, և Տերը ղեկավարում է այն Իր Սուրբ Հոգով:

Ընդամենը մի քանի շաբաթ առաջ ես աշխատում էի իմ ընտանեկան պատմության վրա՝ կողքիս ունենալով մի խորհրդատու և մի օգնական հեռախոսով: Իմ համակարգչի էկրանին մի խնդիր կար, որի լուծումը իմ մարդկային ուժերից վեր էր: Իմ առջև երկու մարդու անուն էր, տեխնոլոգիայի հրաշքով ինձ ուղարկված, որոնք հնարավոր է, սպասում էին տաճարային արարողությունների: Թեև անունները տարբեր էին, բայց ինչ-որ պատճառ կար ենթադրելու, որ այդ երկուսը, հնարավոր է, նույն մարդիկ լինեն: Իմ խնդիրն էր պարզել ճշմարտությունը:

Ես խնդրեցի, որ իմ խորհրդատուներն ինձ ասեն: Նրանք ասացին. «Ոչ, դուք պետք է ընտրեք»: Եվ նրանք լիովին համոզված էին, որ ես կբացահայտեմ ճշմարտությունը: Համակարգիչը, իր ողջ զորությամբ և տեղեկատվությամբ, ինձ էր թողել օրհնությունը՝ նայելու էկրանի այդ անուններին, գնահատելու առկա տեղեկությունը, այլ հետազոտություններ անելու, լուռ աղոթելու և բացահայտելու, թե որն է ճշմարտությունը: Երբ աղոթեցի, ես վստահաբար իմացա, թե ինչ անեմ, ճիշտ ինչպես այլ իրավիճակներում, երբ կարիք ունեի ապավինել երկնքի օգնությանը խնդիրը լուծելու համար:

Մենք չգիտենք, թե ինչ զարմանահրաշ միջոցներ Աստված կոգեշնչի ստեղծել, որպեսզի օգնի Իր ընտանիքը հավաքելու աշխատանքում: Բայց ինչպիսի հրաշալի գյուտեր էլ որ հայտնվեն, դրանց օգտագործումը պահանջում է Հոգու աշխատանք ինձ և ձեր նման մարդկանց հետ: Մենք չպետք է զարմանանք: Ի վերջո, նրանք Աստծո սիրելի որդիներն ու դուստրերն են: Նա կուղարկի ցանկացած անհրաժեշտ ոգեշնչում, որպեսզի նրանց հնարավորություն տա վերադառնալ Իր մոտ:

Վերջին տարիներին Եկեղեցու երիտասարդները Եղիայի ոգուն արձագանքել են ոգեշնչող եղանակներով: Շատերը այժմ սահմանափակ օգտագործման տաճարային երաշխավորագիր են կրում և հաճախ օգտագործում են այն: Տաճարների մկրտարանները ավելի շատ են զբաղված, քան նախկինում. որոշ տաճարներ անգամ ստիպված են եղել փոխել իրենց հերթափոխները, որպեսզի կարողանան սպասարկել աճող թվով տաճար այցելող երիտասարդներին:

Նախկինում հազվադեպ, բայց ողջունելի բացառություն էր, որ երիտասարդները իրենց սեփական նախնիների անունները բերեին տաճար: Այժմ դա բնականոն երևույթ է դարձել, և շատ հաճախ երիտասարդներն իրենք են գտնում իրենց նախնիներին:

Բացի այդ, շատ երիտասարդներ հայտնաբերել են, որ իրենց ժամանակը ընտանեկան պատմության հետազոտությանը և տաճարային աշխատանքին նվիրելով խորացել է իրենց վկայությունը փրկության ծրագրի վերաբերյալ: Այն մեծացրել է Հոգու ազդեցությունն իրենց կյանքում և նվազեցրել է թշնամու ազդեցությունը: Այն օգնել է նրանց ավելի մոտ զգալ ինչպես իրենց ընտանիքներին, այնպես էլ Տեր Հիսուս Քրիստոսին: Նրանք հասկացել են, որ այդ աշխատանքը փրկում է ոչ միայն մահացածներին. այն փրկում է մեզ բոլորիս (տես ՎԿՈ 128.18):

Երիտասարդները հրաշալի ըմբռնել են տեսլականը. այժմ նրանց ծնողների հերթն է: Ներկայումս շատ մարդիկ կան, որոնք երիտասարդների կատարած աշխատանքի շնորհիվ ընդունել են մկրտությունը հոգիների աշխարհում և սպասում են մյուս արարողություններին, որոնք միայն չափահասները կարող են կատարել տաճարներում այս աշխարհում: Երկնային Հոր ընտանիքը հավաքելու աշխատանքը միայն երիտասարդներինը չէ, ոչ էլ միայն պապերինն ու տատերինն է: Մենք բոլորս հավաքման մասնակից պիտի լինենք:

Սա մեր սերնդի աշխատանքն է, որին Պողոս առաքյալն անվանել է. «Ժամանակների լրության տնտեսություն», երբ ասել է, որ Աստված «ամեն բան կբովանդակի Քրիստոսում, ինչ որ երկնքումն է՝ եւ ինչ որ երկրումը» (Եփեսացիս 1.10): Սա հնարավոր է դարձել Աստծո Սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի քավության միջոցով: Նրա շնորհիվ, մեր ընտանիքի անդամները, որոնք «ժամանակով հեռաւոր էին, մօտաւոր եղան Քրիստոսի արիւնովը: Վասնզի նա է մեր խաղաղութիւնը որ երկուսին մէկ արաւ եւ մէջ տեղի բաժանող պատը՝ թշնամութիւնը քանդեց իր մարմնովը» (Եփեսացիս 2.13–14): Ես զգացել եմ այդ, ինչպես դուք եք զգացել, երբ նայել եք ձեր հարազատ նախնիի նկարին ու զգացել, թե ձեր սերը ինչպես է աճում: Դուք ունեցել եք այդ զգացումը տաճարում, երբ քարտի անունը հուշել է, որ ավելին է, քան գրված անուն և զգացել եք, որ այդ անձը գիտի, թե ինչ եք դուք անում և զգում է ձեր սերը:

Ես վկայում եմ, որ Հայր Աստծո ցանկությունն է, որ իր զավակները ընտանիքներով ու փառքով շրջապատված կրկին տուն վերադառնան: Փրկիչն ապրում է: Նա առաջնորդում և օրհնում է այս աշխատանքը և տեսնում ու ուղղորդում է մեզ: Նա ձեզ շնորհակալ է Իր Հոր ընտանիքը հավաքելիս ձեր հավատարիմ աշխատանքի համար, և ես խոստանում եմ, որ դուք կստանաք ձեր որոնած և ձեզ անհրաժեշտ ոգեշնչված օգնությունը: Հիսուս Քրիստոսի անունով՝ ամեն: ■

Մ. Ջոզեֆ Բրոու
Երիտասարդ տղամարդկանց գերագույն
նախագահության երկրորդ խորհրդական

Նրա ամեն օր առաջնորդող ձեռքը

Երկնային Հայրը գիտի իմ և ձեր կարիքներն ավելի լավ, քան մեկ ուրիշը։

Իր զավակներին առաջնորդելու հարցում Երկնային Հոր սիրելի գործիքներից մեկը առաքինի ծնողներն են։ Իմ հոր մայրը այդպիսի կին էր։ Երբ ես շատ փոքր էի, մի առիթով հայրս ինձ կարգապահության դաս էր տալիս։ Լսելով այդ նկատողությունը, տատիկս ասել է. «Մոնթե, ես կարծում եմ, որ դու շատ կոպիտ ես նրան դաստիարակում»։

Հայրս պատասխանել է. «Մայրիկ, ես կդաստիարակեմ իմ երեխաներին, ինչպես կուզեմ»։

Եվ իմ իմաստուն տատիկը մեղմ ասել է. «Ես էլ այդպես կանեմ»։

Ես համոզված եմ, որ այդ օրը հայրիկս հետևել է իր մոր իմաստուն առաջնորդությանը։

Առաջնորդության մասին մտածելիս կարող ենք հիշել մեր կողմից սիրված ու հայտնի հիմնը. «Աստծո զավակն եմ»։ Կրկներգում հանդիպում ենք այս խոսքերին. «Առաջնորդիր, քայլիր ինձ հետ, որ ուղին գտնեմ»։[1]

Մինչև վերջերս ես մտածում էի, որ կրկներգը սուրբ ուղղորդում է ծնողների համար։ Մինչդեռ խորհելով այս խոսքերի շուրջ, ես հասկացա, որ թեպետ դրանք պարունակում են այդ ուղղորդումը, այդտեղ առկա է ավելի խորը իմաստ։ Անհատապես, մենք բոլորս ամեն օր աղաչում ենք, որ Երկնային Հայրն առաջնորդի մեզ և քայլի մեզ հետ։

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը բացատրել է. «Մեր Երկնային Հայրը գիտի Իր զավակների կարիքներն ավելի լավ, քան մեկ ուրիշը։ Նրա աշխատանքը կայանում է նրանում, որ օգնի մեզ բոլոր շրջադարձներում, տալով մեզ հրաշալի նյութական և հոգևոր ռեսուրսներ, որպեսզի օգնի մեզ Իր մոտ վերադառնալու մեր ճանապարհին»։[2]

Ուշադրություն դարձրեք այս խոսքերին. Երկնային Հայրը գիտի իմ և ձեր կարիքներն ավելի լավ, քան մեկ ուրիշը։ Արդյունքում նա կազմել է հոգատարության անձնական փաթեթ, որը հարմար է յուրաքանչյուրիս։ Այն շատ բաղադրիչներ ունի։ Այն ներառում է Իր Որդուն և Քավությունը, Սուրբ Հոգուն, պատվիրաններ, սուրբ գրություններ, աղոթք, մարգարեներ, առաքյալներ, ծնողներ, տատիկներ ու պապիկներ, Եկեղեցու տեղական ղեկավարներ և շատ ուրիշների՝ այս ամենը մեզ օգնելու համար, որ մի օր վերադառնանք Իր հետ ապրելու։

Թույլ տվեք այսօր կիսվել այդ հոգատարության փաթեթի մի քանի բաղադրիչներով, որոնց շնորհիվ ես հասկացել եմ, որ սիրող Հայրն առաջնորդում է և քայլում է իմ և ընտանիքիս հետ։ Ես աղոթում եմ, որ ձեզանից յուրաքանչյուրը հասկանա կյանքում, որ Երկնային Հայրն առաջնորդում է և քայլում ձեր հետ, և այդ գիտելիքով դուք վստահ առաջ կշարժվեք, իմանալով, որ երբեք մենակ չեք։

Երկնային Հոր պատվիրաններն այդ հոգատարության փաթեթի հիմնական բաղադրիչներն են։ Ալման ասել է. «Ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել»։[3] Անպատշաճ վարքի հանդուրժումը՝

առանց սիրալիր ուղղման, կեղծ կարեկցանք է և ամրապնդում է ընդունված գաղափարը, որ ամբարշտությունը կարող է երջանկություն լինել: Սամուել Լամանացին հստակ հակադարձեց այդ գաղափարին. «Դուք փնտրել եք երջանկություն անօրինություն անելու մեջ, մի բան, որը հակառակ է այն արդարության էությանը, որը մեր մեծ ու Հավերժական Գլխավորի մեջ է»:[4]

Իր մարգարեների միջոցով Երկնային Հայրը մշտապես հիշեցնում է մեզ, որ արդարությունը երջանկություն է: Օրինակ, Բենիամին թագավորն ուսուցանել է, որ Երկնային Հայրը «պահանջում է, որ դուք անեք, ինչպես նա է պատվիրել ձեզ. որի համար, եթե դուք անում եք, նա անմիջապես օրհնում է ձեզ»:[5] Մեկ այլ օրհներգից նույնպես այդպիսի հիշեցում է հնչում.

Պահեք պատվիրանները, պահեք պատվիրանները,
Դրանցում է ապահովությունը և խաղաղությունը:
Նա կուղարկի օրհնություններ:[6]

14 տարեկան հասակում ես հասկացա այդ օրհնություններից մի քանիսը: Ես նկատեցի իմ ծնողների արտասովոր վարքը: Ելնելով իմ տեսածից, հարցրի. «Գնում ենք միսիա՞»: Մայրիկիս շանթահար դեմքը հաստատեց իմ կասկածը: Ավելի ուշ, ընտանեկան խորհրդի ժամանակ ես, եղբայրներս ու քույրերս հասկացանք, որ մեր ծնողները կանչվել են նախագահելու մի միսիա:

Մենք ապրում էինք Վայոմինգի մի գեղեցիկ ագարակատանը: Իմ տեսանկյունից կյանքը հիասքանչ էր: Երբ դպրոցից տուն էի վերադառնում, կարող էի ավարտել իմ գործերը և գնալ որսի, ձկնորսության կամ ժամանակ անցկացնել շանս հետ:

Կանչի մասին իմանալուն պես ես հասկացա, որ պետք է բաժանվեմ շանս՝ Բլուի հետ: Ես հակառակվեցի հորս, հարցնելով, թե ինչ պետք է անեմ Բլուի հետ: Ես ցանկանում էի շեշտել անարդարությունը այն բանի, ինչ Աստված պահանջում էր: Ես երբեք չեմ մոռանա հորս պատասխանը: Նա ասաց. «Վստահ չեմ: Նա պարզապես չի կարող գալ մեզ հետ, ավելի լավ է Երկնային Հորը հարցնես»: Դա այն պատասխանը չէր, որը ես ակնկալում էի:

Ես սկսեցի կարդալ Մորմոնի Գիրքը: Ես անկեղծորեն աղոթում էի իմանալու համար, թե արդյո՞ք պետք է արձակեմ իմ շանը: Պատասխանը նույն րոպեին չեկավ, փոխարենը մի որոշակի միտք սկսեց ներթափանցել իմ մեջ. «Բեռ մի եղիր ծնողներիդ համար: Բեռ մի եղիր: Ես կանչել եմ ծնողներիդ»:

Ես գիտեի, թե ինչ էր պահանջում Երկնային Հայրը: Այդ գիտելիքը չէր թեթևացնում շնից հրաժարվելու ցավը: Այնուամենայնիվ, այդ փոքրիկ զոհաբերությամբ իմ սիրտը փափկեց և ես խաղաղություն գտա՝ Երկնային Հոր կամքը կատարելով:

Ես շնորհակալ եմ Երկնային Հորս այն օրհնությունների ու երջանկության համար, որոնք գտել եմ սուրբ գրությունների, աղոթքի, Սուրբ Հոգու և արժանի երկրային հոր համար, ով ընդունել էր իր դերը՝ որպես իր երեխաների համար ավետարանի գլխավոր ուսուցիչ: Նրանք առաջնորդել են ինձ, նույնիսկ քայլել են իմ կողքին, որպեսզի օգնեն ինձ գտնել ճանապարհը՝ հատկապես, երբ ես պետք է դժվար մի բան անեի:

Իմ նշած հոգատարության փաթեթն ունենալուց բացի մենք բոլորս օրհնված ենք, ունենալով քահանայության ղեկավար, որն առաջնորդում է մեզ:

Նախագահ Բոյդ Կ. Փաքերն ասել է. «Եպիսկոպոսները ոգեշնչված են: Մեզանից յուրաքանչյուրի ազատ կամքն է՝ ընդունել կամ մերժել մեր ղեկավարների խորհուրդները, սակայն երբեք անուշադրության չմատնեք ձեր եպիսկոպոսի խորհուրդը՝ լինի դա ամբիոնից տրված, թե անհատապես»:[7]

Այս մարդիկ ջանում են ներկայացնել Տիրոջը: Լինենք մենք տարեց, թե երիտասարդ, երբ սատանան ցանկանում է, որ մտածենք, թե ամեն ինչ կորած է, եպիսկոպոսները մեր կողքին են, որ առաջնորդեն մեզ: Խոսելով եպիսկոպոսների հետ, ես նկատել եմ մի ընդհանուր վարքագիծ՝ անհնազանդության վերաբերյալ խոստովանությունների կամ ահավոր սխալների պատճառով անմեղ տառապանքներ տեսնելու պարագայում: Եպիսկոպոսներն անմիջապես ցանկանում են արտահայտել Երկնային Հոր սերը անհատի հանդեպ և նրա կողքին քայլելու ցանկությունը, երբ այդ մարդը փնտրում է տունդարձի ճանապարհը:

Թերևս Երկնային Հոր հոգատարության փաթեթի ամենամեծ բաղադրիչը նկարագրված է այս խոսքերով. «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը որ իր միածին Որդին տուավ»:[8]

Որպեսզի ուսուցանի մեզ այն ամենը, ինչ մենք պետք է անենք, Հիսուս Քրիստոսն առաջնորդեց մեզ, ցույց տալով կատարյալ օրինակ, որին պետք է փորձենք հետամուտ լինել: Նա աղերսում է մեզ պարզած ձեռքերով, որ գնանք, հետևենք Իրեն:[9] Երբ մենք

ձախողվում ենք, ինչը բոլորիս հետ է պատահում, Նա մեզ հիշեցնում է. «Քանզի ահա, ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն»:[10]

Ի՜նչ հրաշալի նվեր է: Ապաշխարությունը պատիժ չէ, այլ՝ արտոնություն: Դա արտոնություն է, որն առաջնորդում է մեզ: Զարմանալի չէ, որ սուրբ գրությունները կոչ են անում մեզ ուսուցանել ոչ այլ ինչ, քան ապաշխարություն:[11]

Երկնային Հայրը շատ միջոցներ ունի, բայց հաճախ Իրեն օգնելու նպատակով Նա ընտրում է մեկ ուրիշի: Ամեն օր նա մեզ հնարավորություններ է տալիս առաջնորդելու և քայլելու մեկի հետ, ով կարիքի մեջ է Մենք պետք է հետևենք Փրկիչի օրինակին: Մենք նույնպես պետք է մասնակից լինենք Երկնային Հոր գործին:

Որպես Երիտասարդ Տղամարդկանց գերագույն նախագահություն, մենք գիտենք, որ երիտասարդներն օրհնված են, երբ ունեն ծնողներ և ղեկավարներ, ովքեր գործում են Երկնային Հոր փոխարեն՝ առաջնորդելով և քայլելով նրանց հետ: Սրանք են այն սկզբունքները,[12] որոնք կօգնեն մեզ դառնալ մարդկանց նկատմամբ Երկնային Հոր հոգատարության փաթեթի մասը.

Առաջինը՝ լինել երիտասարդների հետ: Նախագահ Հենրի Բ. Այրինգը շեշտել է այս կետը. «Կան բաներ, որոնք մեր ուժերի սահմաններում են, որ առավել կարևոր են: Վարդապետությունն ուսուցանելիս մեր խոսքերից շատ ավելի զորեղ է վարդապետությամբ ապրելու մեր օրինակը»:[13] Երիտասարդներին առաջնորդելը պահանջում է լինել նրանց հետ: Նվիրած ժամանակը սիրո արտահայտություն է, որը թույլ է տալիս մեզ սովորեցնել խոսքով և օրինակով:

Երկրորդը՝ երիտասարդներին պատշաճ առաջնորդելու համար մենք պետք է կապենք նրանց երկնքի հետ: Ժամանակը միշտ գալիս է, երբ յուրաքանչյուրը պետք է մենակ դիմակայի: Միայն Երկնային Հայրը կարող է լինել այդտեղ,

առաջնորդելով ցանկացած ժամանակ և ցանկացած վայրում: Մեր երիտասարդները պետք է իմանան, թե ինչպես փնտրել Երկնային Հոր առաջնորդությունը:

Երրորդը՝ մենք պետք է թույլ տանք երիտասարդներին առաջնորդել: Ինչպես սիրող ծնողը, որը բռնում է մանկան ձեռքը, երբ նա սովորում է քայլել, մենք պետք է թողնենք, որ քայլեն, որպեսզի առաջադիմեն: Կպահանջվի համբերություն և սեր, որպեսզի թույլ տանք երիտասարդներին առաջնորդել: Դա ավելի դժվար է և ավելի շատ ժամանակ է պահանջում, քան եթե մենք դա ինքներս անենք: Նրանք կարող են սայթաքել ճանապարհին, բայց մենք նրանց հետ կքայլենք:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մեր կյանքում կլինեն ժամանակներ, երբ առաջնորդության օրհնությունները հեռու կամ բացակա կթվան: Այդպիսի աղետալի ժամանակների առումով երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը խոստացել է. «Թող ձեր ուխտերը լինեն առաջնային և ձեր հնազանդությունը՝ ամուր: Ապա դուք կարող եք հարցնել հավատքով, առանց տատանվելու, համաձայն ձեր կարիքի և Աստված կպատասխանի: Նա կաջակցի ձեզ աշխատելիս և հոգ տանելիս: Իր ժամանակին և Իր ձևով Նա կմեկնի Իր ձեռքը ձեզ, ասելով. «Ես այստեղ եմ»:[14]

Այդպիսի մի ժամանակ ես մի տարուց ավել փնտրում էի Երկնային Հոր խորհուրդը մշտական ու սրտաբուխ աղոթքի միջոցով, մի դժվար իրավիճակից ելք գտնելու նպատակով: Տրամաբանորեն ես գիտեի, որ Երկնային Հայրը պատասխանում է բոլոր անկեղծ աղոթքներին: Այնուամենայնիվ, մի օր ես մի այնպիսի հիասթափության աստիճանի հասա, որ այցելեցի տաճար միայն մի հարցով. «Երկնային Հայր, Դուք իրո՞ք հոգ եք տանում»:

Ես նստած էի Լոգան Յուտա Տաճարի սպասասրահի ետնամասում, երբ ի զարմանս ինձ, սենյակ մտավ տաճարի նախագահ Վոն Ջ.

Ֆիդերսթոնը, մեր ընտանիքի մտերիմ ընկերը: Նա կանգնեց ժողովրդի առաջ և ողջունեց բոլորիս: Երբ նա նկատեց ինձ տաճարի այցելուների շարքում, նայեց աչքերիս մեջ, ապա ասաց. «Եղբայր Բրուգ, ուրախ եմ տեսնել ձեզ այսօր տաճարում»:

Ես երբեք չեմ մոռանա այդ պարզ պահի զգացումը: Այդ ողջույնով Երկնային Հայրը կարծես ինձ մեկնեց իր ձեռքը, ասելով. «Ես այստեղ եմ»:

Երկնային Հայրն իրոք հոգ է տանում, լսում է ու պատասխանում յուրաքանչյուր երեխայի աղոթքին:[15] Որպես Նրա զավակներից մեկը, ես գիտեմ, որ իմ աղոթքների պատասխանները եկել են Տիրոջ ժամանակին: Եվ այդ փորձառության շնորհիվ ես հասկացել եմ ավելի լավ, քան երբևէ, որ մենք Աստծո զավակներն ենք, և Նա ուղարկել է մեզ այստեղ, որպեսզի զգանք Նրա ներկայությունն այժմ և մի օր վերադառնանք ապրելու Նրա հետ:

Ես վկայում եմ, որ Երկնային Հայրն առաջնորդում է մեզ և քայլում մեզ հետ: Եթե հետևենք Նրա Որդուն և հետամուտ լինենք նրա ծառաներին՝ առաքյալներին ու մարգարեներին, մենք կգտնենք հավերժական կյանքի ճանապարհը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Աստծո զավակն եմ», *Լիմներ,* 58
2. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Մեր Հայրը, մեր ուսուցիչը¦, *Լիահոնա,* հունիս 2016, 5
3. Ալմա 41.10
4. Հելաման 13.38
5. Մոսիա 2.24
6. “Keep the Commandments,” *Hymns,* no. 303.
7. Boyd K. Packer, “The Bishop and His Counselors,” *Liahona,* July 1999, 72.
8. Հովհաննես 3.16
9. Տես Ղուկաս 18.22
10. Վարդապետություն և Ուխտեր 19.16
11. Տես Մոսիա 18.20
12. Տես “Young Men Auxiliary Training,” lds.org/callings/aaronic-priesthood/auxiliary-training:
13. Հենրի Բ. Այրինգ, “Նախապատրաստական քահանայություն,” *Լիահոնա,* նոյ. 2014, 61
14. D. Todd Christofferson, “The Power of Covenants,” *Liahona,* May 2009, 22:
15. Տես “A Child’s Prayer,” *Children’s Songbook,* 12–13:

Երեց Վեթերֆորդ Թ. Քլեյթոն
Յոթանասուն

Մեր Հոր փառահեղ ծրագիրը

Աստծո սրբազան ծրագրի շնորհիվ մենք գիտենք, որ ծնունդն ու մահն իրականում պարզապես կարևոր պահեր են հանդիսանում մեր Երկնային Հոր հետ հավերժական կյանք տանող ճանապարհին:

Որպես բժիշկ, իմ ուսումնառության վաղ շրջանում հնարավորություն ունեցա օգնել մի երիտասարդ կնոջ իր առաջին երեխայի ծննդաբերության ժամանակ: Նա հանգիստ էր, ուշադիր ու երջանիկ: Երբ երեխան ծնվեց, ես թանկագին նորածնին նրան տվեցի: Երջանկության արցունքները հոսում էին նրա դեմքի վրայով, երբ նա վերցրեց իր նորածին բալիկին և ոտքից գլուխ զննեց նրան: Նա ամուր

գրկեց նրան ու սիրում էր այնպես, ինչպես միայն մայրն է կարողանում սիրել: Հրաշալի էր այդ սենյակում նրա հետ լինելը:

Այդպես է սկսվում մեզանից յուրաքանչյուրի կյանքը: Սակայն իրականում մեր ծնունդո՞վ է ամեն ինչ սկսվում: Աշխարհը ծնունդն ու մահն ընկալում է որպես սկիզբ ու վերջ: Սակայն Աստծո սրբազան ծրագրի շնորհիվ մենք գիտենք, որ ծնունդն ու մահն իրականում կարևոր պահեր են հանդիսանում մեր Երկնային Հոր հետ հավերժական կյանք տանող ճանապարհին:[1] Դրանք կարևոր մաս են կազմում մեր Երկնային Հոր ծրագրում՝ սրբազան պահեր, երբ երկիրն ու երկինքը հատվում են: Այսօր, խորհելով ծնունդի ու մահվան դիտարկումների մասին, որ կատարել եմ իմ բժշկական ուսումնառության տարիների ու Եկեղեցում ծառայելու ընթացքում, ցանկանում եմ վկայել մեր Հոր փառավոր ծրագրի մասին:

«Նախքան մեր ծնունդը մենք ապրել ենք Աստծո՝ մեր հոգիների Հոր հետ: [Բոլորս], որ երկրի վրա ենք գտնվում, բառացիորեն

եղբայրներ ու քույրեր ենք Նրա ընտանիքում,[2] և մեզանից յուրաքանչյուրը սիրելի է Նրա համար: Մենք Նրա հետ շատ երկար ենք ապրել, նախքան մեր ծնունդը մահկանացու կյանքում, որն իր մեջ ներառում է սովորել, ընտրել ու պատրաստվել:

Քանի որ Երկնային Հայրը սիրում է մեզ, Նա ցանկանում է, որ մենք ունենանք ամենամեծ պարգևը, որ Նա կարող է տալ՝ հավերժական կյանքի պարգևը:[3] Նա չէր կարող հեշտությամբ տալ մեզ այս պարգևը. մենք պետք է ստանայինք այն՝ ընտրելով Իրեն ու Իր ուղիները: Սա պահանջում էր, որ մենք հեռանայինք Նրա ներկայությունից ու սկսեինք հավատքի, աճի ու ավելի լավը դառնալու մի հրաշալի ու դժվարին ճանապարհ: Ճանապարհը, որ մեր Երկնային Հայրը պատրաստել է մեզ համար, կոչվում է փրկության ծրագիր կամ երջանկության ծրագիր:[4]

Նախաերկրային մեծ խորհրդի ժամանակ մեր Երկնային Հայրն ասաց մեզ Իր ծրագրի մասին:[5] Երբ մենք հասկացանք այն, այնքան ուրախացանք, որ բոլորս գովաբանում էինք, իսկ «առավոտյան աստղերը միասին ցնծում էին»:[6]

Այդ ծրագիրը կառուցված է երեք հիմնական սյուների վրա, որոնք հանդիսանում են հավերժության սյուները:[7]

Առաջին սյունը երկրի արարումն է՝ մեր մահկանացու կյանքի ճամփորդության միջավայրը:[8]

Երկրորդ սյունը մեր առաջին երկրային ծնողների՝ Ադամի ու Եվայի անկումն է: Անկումի շնորհիվ մեզ մի քանի հրաշալի բան տրվեց: Մենք կարողացանք ծնվել ու ֆիզիկական մարմին ստանալ:[9] Ես հավերժ երախտապարտ կլինեմ մայրիկիս ինձ ու եղբայրներիս լույս աշխարհ բերելու և մեզ Աստծո մասին ուսուցանելու համար:

Աստված մեզ տվել է նաև ազատ ընտրության իրավունք՝ ինքներս մեզ համար ընտրելու և գործելու կարողություն ու արտոնություն:[10] Որպեսզի մեզ ընտրության հարցում օգնի, Երկնային Հայրը պատվիրաններ է տվել: Ամեն օր, երբ պահում

ենք Նրա պատվիրանները, ցույց ենք տալիս Աստծուն, որ սիրում ենք Նրան ու Նա օրհնում է մեր կյանքը:[11]

Գիտենալով, որ ոչ միշտ լավ ընտրություն կկատարենք, կամ, այսպես ասած, մեղք կգործենք, Հայրը մեզ տվեց երրորդ սյունը՝ Փրկիչ Հիսուս Քրիստոսին ու Նրա Քավությունը: Իր տառապանքի միջոցով Քրիստոսը քավեց և՛ ֆիզիկական մահը, և՛ մեղքը:[12] Նա ուսուցանել է. «Որովհետև Աստուած այնպէս սիրեց աշխարհը որ իր միածին Որդին տուաւ, որ ամեն նորան հաւատացողը չկորչի, այլ յաւիտենական կեանքն ունենայ»:[13]

Հիսուս Քրիստոսը կատարյալ կյանք է ապրել՝ միշտ պահելով Իր Հոր պատվիրանները: «Նա քայլում էր Պաղեստինի ճանապարհներով»՝ ուսուցանելով հավերժության ճշմարտությունները, «բուժելով հիվանդներին, տեսողություն շնորհելով կույրերին և կենդանացնելով մահացածներին»:[14] Նա «ման եկաւ բարի անելով»[15] և «կոչ արեց բոլորին հետևել Իր օրինակին»:[16]

Իր մահկանացու կյանքի ավարտին Նա ծնկի իջավ ու աղոթեց՝ ասելով.

«Հայր, եթէ կամիս այս բաժակը անցրու ինձանից. սակայն ոչ թէ իմ կամքը՝ բայց քո կամքը լինի: . . .

Եվ նա տագնապի մէջ լինելով, աւելի եռանդով էր աղօթք անում: Են նորա քրտինքն էր ինչպէս արիւնի կաթիլներ, որ թափվում են երկրի վերայ»:[17]

Քրիստոսը մեզ օգնեց ավելի լավ հասկանալ Իր տառապանքի աստիճանը, երբ Նա Մարգարե Ջոզեֆ Սմիթին ասաց.

«Ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն.

Բայց, եթե չապաշխարեն, նրանք պետք է տառապեն, ճիշտ ինչպես ես.

Տառապանք, որը ստիպեց ինձ, նույնիսկ Աստծուս, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե՛ մարմնով, թե՛ ոգով»:[18]

Այնտեղ՝ Գեթսեմանի պարտեզում, Նա քավեց մեր բոլորի մեղքերը, հիվանդությունները, ցավերն ու թուլությունները:[19] Քանի որ Նա այդպես վարվեց, մենք երբեք միայնակ չենք լինի մեր թուլությունների մեջ, եթե ընտրենք քայլել Իր հետքերով: «Նա ձերբակալվեց ու դատապարտվեց կեղծ մեղադրանքներով, մեղավոր ճանաչվեց ամբոխին բավարարելու համար, և մահվան դատապարտվեց Գագաթի խաչի վրա»: «Նա Իր կյանքը տվեց» խաչի վրա, «որպեսզի քավեր ողջ մարդկության մեղքերը՝ որպես մեծ փոխարինող պարգև բոլոր նրանց օգտի համար, ովքեր երբևէ կապրեին երկրի երեսին»:[20]

Նա հայտնել է.

«Ահա, ես եմ Հիսուս Քրիստոսը, ում մասին մարգարեները վկայել էին, որ պիտի գա աշխարհ:

Եվ ահա, ես եմ լույսն ու կյանքն աշխարհի. և ես խմեցի այն դառը բաժակից, որը Հայրը տվեց ինձ, և փառավորեցի Հորը՝ վերցնելով ինձ վրա աշխարհի մեղքերը, որով ես ենթարկվեցի Հոր կամքին, բոլոր բաներում, ի սկզբանե»:[21]

Այնուհետև, շաբաթվա առաջին օրը,[22] Նա գերեզմանից դուրս եկավ հարություն առած կատարյալ անմահ մարմնով: Եվ քանի որ Նա հարություն է առել, մենք նույնպես հարություն կառնենք:

Ես վկայում եմ, որ Քրիստոսն իսկապես գերեզմանից դուրս է եկել: Սակայն որպեսզի դուրս գար այդ գերեզմանից, Նա նախ և առաջ պետք է մահանար: Դա այդպես է նաև մեզ համար:

Իմ կյանքի մյուս ամենամեծ օրհնություններից մեկն էլ եղել է այն պահին, երբ նստել եմ մահացող մարդու անկողնու մոտ ու զգացել եմ, թե որքան մոտիկ է երկինքը: Մի քանի տարի առաջ վաղ առավոտյան ես մտա մի հավատարիմ Վերջին Օրերի Սուրբ այրի կնոջ հիվանդասենյակը, ով քաղցկեղ ուներ: Նրա երկու դուստրերը նստած էին նրա մոտ: Երբ մոտեցա մահճակալին, ես անմիջապես զգացի, որ նա այլևս չէր տանջվում, որովհետև հենց նոր էր մահացել:

Մահվան այդ պահին սենյակը լի էր խաղաղությամբ: Նրա դուստրերը լցված էին հանգիստ տխրությամբ, և նրանց սրտերը լի էին հավատքով: Նրանք գիտեին, որ իրենց մայրը չի հեռացել, այլ տուն է վերադարձել:[23] Նույնիսկ մեր ամենածանր վշտի պահերին, երբ թվում է, թե ժամանակը կանգ է առել, ու կյանքն այնքան անարդար է, մենք կարող ենք սփոփանք գտնել մեր Փրկիչի մեջ, որովհետև Նա էլ է տանջվել:[24] Ինձ համար այդ սենյակում գտնվելը պատիվ էր:

Երբ մահանում ենք, մեր հոգին լքում է մեր մարմինն ու մենք գնում ենք մեր ճամփորդության հաջորդ փուլ՝ հոգևոր աշխարհ: Դա սովորելու, ապաշխարելու, ներելու և ավելի լավը դառնալու մի վայր է[25], որտեղ մենք սպասում ենք հարություն առնելուն:[26]

Մի հրաշալի օր, բոլոր նրանք, ովքեր ծնվել են, հարություն են առնելու: Մեր հոգին ու մեր ֆիզիկական մարմինը կմիավորվեն իրենց կատարյալ ձևով: Բոլորը հարություն կառնեն՝ «տարեց, թե երիտասարդ, տղամարդ, թե կին, ամբարիշտ, թե արդար», և «ամեն ինչ պիտի վերականգնվի իր կատարյալ կառուցվածքով»:[27]

Հարություն առնելուց հետո մենք Փրկիչի կողմից դատվելու գերագույն օրհնությունը կունենանք, ով ասել է.

«Ես բոլոր մարդկանց կձգեմ դեպի ինձ, որպեսզի նրանք կարողանան դատվել՝ համաձայն իրենց գործերի:

«Եվ կլինի այնպես, որ ով որ ապաշխարի և մկրտվի իմ անունով, նա կլցվի. և եթե նա համբերի մինչև վերջ, ահա, նրան ես անմեղ կհամարեմ իմ Հոր առաջ այն օրը, երբ ես կկանգնեմ՝ դատելու աշխարհը»:[28]

Ու այնուհետև, Քրիստոսի ու Նրա Քավության միջոցով, բոլոր նրանք, ովքեր կընտրեն հետևել Նրան հավատքի, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգին ստանալու միջոցով ու կհամբերեն մինչև վերջ,[29] կտեսնեն, որ ճանապարհի վերջը հավերժական կյանքի «իրենց աստվածային ճակատագրի ժառանգությունը ստանալն է»:[30] Նրանք կվերադառնան իրենց Հոր ներկայություն՝ Նրա հետ հավերժ ապրելու: Հուսով եմ, որ մենք լավ ընտրություն կկատարենք:

Մեր գոյության հետ կապված ավելի շատ բան կա, քան այն, ինչ տեղի է ունենում ծնունդի ու մահվան միջև: Ես ձեզ հրավիրում եմ գալ ու հետևել Քրիստոսին:[31]

Ես հրավիրում եմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու բոլոր անդամներին ամեն օր «[գալ] Քրիստոսի մոտ և [կատարելագործվել] նրանում, և [հրաժարվել] ամեն անաստվածությունից, . . . [որ] Քրիստոսի արյան հեղվելով, . . . դուք [դառնաք] սուրբ՝ առանց բծի»:[32]

Բոլոր նրանց, ովքեր դեռ այս Եկեղեցու անդամ չեն, ես հրավիրում եմ գալ ու կարդալ Մորմոնի Գիրքն ու լսել միսիոներներին: Եկեք ու հավատացեք և ապաշխարեք ձեր մեղքերը: Եկեք ու մկրտվեք ու ստացեք Սուրբ Հոգին: Եկեք և ապրեք երջանիկ ու Քրիստոսով լի կյանք: Եթե մոտենաք Նրան ու պահեք Նրա պատվիրանները, ես խոստանում եմ, որ դուք կգտնեք խաղաղություն

ու նպատակ մահկանացու կյանքի այս դժվար փորձառության մեջ և «հավերժական կյանք գալիք աշխարհում»:[33]

Նրանց, ովքեր զգացել են այս ճշմարտությունները, սակայն որոշ պատճառով հեռացել են, ես հրավիրում եմ ձեզ ետ գալ: Ետ եկեք այսօր: Մեր Հայրն ու Փրկիչը սիրում են ձեզ: Ես վկայում եմ, որ Քրիստոսը ձեր հարցերին պատասխանելու, ձեր ցավերն ու տառապանքները բուժելու և ձեր մեղքերը ներելու զորություն ունի: Գիտեմ, որ սա ճիշտ է: Գիտեմ, որ բոլոր այս բաները ճիշտ են: Քրիստոսն ապրում է: Սա Նրա Եկեղեցին է: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես 2 Նեփի 31.18
2. "Plan of Salvation," Gospel Topics, topics.lds.org.
3. Տես Վարդապետություն և Ուխտեր 14.7, Մովսես 1.39
4. Տես Ալմա 42.8
5. Տես Աբրահամ 3.24–28
6. Հոբ 38.7
7. Տես Russell M. Nelson, "Standards of the Lord's Standard-Bearers," *Ensign,* Aug. 1991, 5–6
8. Տես 3 Նեփի 9.15
9. Տես 2 Նեփի 2.22–25
10. Տես Թոմաս Ս. Մոնսոն, «Ընտրություններ,» *Լիահոնա,* Մայիս 2016, 86, "Agency," Gospel Topics, topics.lds.org:
11. Տես Հովհաննես 14.15, 23, տես նաև Ալմա 38.1
12. Տես Ալմա 34.8–16
13. Հովհաննես 3.16, տես նաև Հովհաննես 3.17
14. «Կենդանի Քրիստոսը». Առաքյալների վկայությունը», *Լիահոնա,* Ապր. 2000, 2:
15. Գործք 10.38
16. «Կենդանի Քրիստոսը», 2
17. Ղուկաս 22.42, 44
18. Վարդապետություն և Ուխտեր 19.16–18
19. Տես Եսայիա 53.4–6, Ալմա 7.11–13
20. «Կենդանի Քրիստոսը», 2
21. 3 Նեփի 11.10–11
22. Տես Հովհաննես 20.1
23. Տես Ալմա 40.11
24. Տես Ա Պետրոս 2.21–25
25. Տես Վարդապետություն և Ուխտեր 138.57–59
26. Տես Ալմա 40.2–12
27. Ալմա 11.44
28. 3 Նեփի 27.15–16
29. Տես *Քարոզիր իմ ավետարանը. Միսիոներական ծառայության ուղեցույց* (2004), 1
30. «Ընտանիք. հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129
31. Տես 2 Նեփի 9.50–51; 31.13
32. Մորոնի 10.32–33
33. Վարդապետություն և Ուխտեր 59.23

Երեց Դեյլ Գ. Ռենլանդ
Տասներկու Առաքյալների Քվորում

Մեր Բարի Հովիվը

Հիսուս Քրիստոսը՝ մեր Բարի Հովիվը, ուրախություն է ապրում, երբ տեսնում է, որ Իր հիվանդ ոչխարը առաջադիմում է բուժման մեջ:

Մենք հասկացողություն ենք ձեռք բերում մեր Երկնային Հոր բնույթի վերաբերյալ, երբ ճանաչում ենք այն անսահման ողորմածությունը, որ Նա ունի մեղավորների հանդեպ, և գնահատում ենք այն տարբերակումը, որը Նա անցկացնում է մեղքի և մեղքը գործողի միջև: Այս ըմբռնումն օգնում է մեզ ունենալ «ավելի ճիշտ հասկացողություն նրա բնույթի, արժանիքների և հատկությունների մասին»[1] և հիմնարար է Նրա ու Նրա Որդի Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատ գործադրելիս: Փրկիչի ողորմածությունը, անկախ մեր թերություններից, դեպի իրեն է գրավում մեզ և մեր մշտական պայքարի մեջ մեզ մղում է ապաշխարել ու նմանվել Իրեն: Երբ մենք ավելի ենք մոտենում Նրան, սովորում ենք վերաբերվել ուրիշներին այնպես, ինչպես Նա էր վերաբերվում՝ անկախ ֆիզիկական բնութագրերից և վարքագծից:

Անհատի ֆիզիկական հատկանիշների և անհատի միջև տարբերակում կատարելու ներգործությունը առանցքային դեր ունի ֆրանսիացի վիպասան Վիկտոր Հյուգոյի *«Թշվառները»* վեպում:[2] Վեպի սկզբում

հեղինակը ներկայացնում է Դին քաղաքի եպիսկոպոս Շառլ Ֆրանսուա Միրիելին և քննարկում է այն երկընտրանքը, որի առջև կանգնած է եպիսկոպոսը. արդյո՞ք ինքը պիտի այցելի մի մարդու, ով բացահայտ աթեիստ է և համայնքի մեջ արհամարհված՝ ֆրանսիական հեղափոխության ժամանակ դրսևորած իր վարքագծի պատճառով:[3]

Հեղինակը ներկայացնում է եպիսկոպոսի բնական և խորը հակակրանքի զգացողությունը այդ մարդու նկատմամբ: Ապա մի պարզ հարց է առաջադրում. «Նշանակություն չունի, մի՞թե ոչխարի վերքերը կարող են ստիպել, որ հովիվը նահանջի»:[4] Պատասխանելով եպիսկոպոսի փոխարեն, հեղինակը տալիս է որոշակի պատասխան. «Ո՛չ»: Ապա կատակով ավելացնում է մի մեկնաբանություն. «Բայց ի՜նչ ոչխար է»:[5]

Այս հատվածում Հյուգոն այդ մարդու «չարությունը» համեմատում է ոչխարի մաշկային հիվանդության հետ, իսկ եպիսկոպոսին համեմատում է հովվի հետ, ով չի նահանջում, երբ հանդիպում է հիվանդ ոչխարի: Եպիսկոպոսը կարեկցող է և հետագայում վեպի մեջ նույնանման գթություն է ցուցաբերում մեկ այլ մարդու՝ վեպի գլխավոր հերոս Ժան Վալժանի հանդեպ, ով պատվազրկված նախկին բանտարկյալ էր: Եպիսկոպոսի գթասրտությունն ու կարեկցությունը մղում են Ժան Վալժանին փոխել իր կյանքի ընթացքը:

Քանի որ սուրբ գրություններում Աստված օգտագործում է հիվանդությունը որպես փոխաբերություն մեղքի համար, խելամիտ կլիներ հարցնել. «Ինչպիսի՞ն է Քրիստոսի արձագանքը, երբ Նա բախվում է մեր փոխաբերական հիվանդություններին՝ մեղքերի հետ»: Ի վերջո, Փրկիչն ասում էր. «չեմ կարող մեղքը նվազագույն իսկ աստիճանով թույլատրելի համարել»,[6] ուրեմն Նա ինչպե՞ս կարող է նայել մեզ՝ անկատարներիս, առանց սարսափով ու զզվանքով ընկրկելու:

Պատասխանը հասարակ ու պարզ է: Ինչպես[7] Բարի Հովիվ, Հիսուս Քրիստոսը դիտարկում է Իր ոչխարի հիվանդությունը որպես մի վիճակ, որը բուժման, հոգատարության և գթության կարիք ունի: Այս Հովիվը՝ մեր Բարի Հովիվը ուրախություն է ապրում, երբ տեսնում է, որ Իր հիվանդ ոչխարը առաջադիմում է բուժման մեջ:

Փրկիչը կանխագուշակել էր, որ «Հովիւի նման հովուելու է նա իր հօտին»,[8] «կորածը որոնելու եմ, . . . եւ մոլորուածը ետ եմ բերելու, . . . եւ կոտրածը պիտի կապեմ և . . . եւ հիւանդը պիտի զօրացնեմ»:[9] Չնայած ուրացող Իսրայելը պատկերված է որպես «վէրքերով եւ շարաւալի խոցերով»[10] պատված, Փրկիչը խրախուսում էր, հորդորում էր և խոստանում էր բժշկել:[11]

Փրկիչի մահկանացու ծառայությունը իսկապես բնութագրվում էր սիրով, ողորմածությամբ և կարեկցանքով: Նա արհամարհանքով չէր քայլում Գալիլեայի և Հրեաստանի փոշոտ փողոցներով, խույս տալով մեղավորներին հանդիպելուց: Նա չէր խուսափում նրանցից անարգ սոսկումով: Ոչ, Նա ճաշում էր նրանց հետ:[12] Նա օգնում և օրհնում էր, բարձրացնում և խրատում էր, վախն ու հուսահատությունը փոխարինում էր ուրախությամբ և հույսով: Որպես ճշմարիտ հովիվ, Նա փնտրում ու գտնում է մեզ՝ առաջարկելով սփոփանք և հույս:[13] Նրա գթության և սիրո ըմբռնումն օգնում է մեզ հավատ գործադրել Նրա հանդեպ՝ ապաշխարելու և բժշկվելու համար:

Հովհաննեսի ավետարանը արձանագրում է մեղավորի նկատմամբ Փրկիչի կարեկցանքի ազդեցությունը: Դպիրներն ու փարիսեցիները Փրկիչի մոտ բերեցին մի կնոջ, ում բռնել էին շնության մեջ: Մեղադրողները ենթադրում էին, որ նա պիտի քարկոծվեր՝ համաձայն Մովսեսի օրենքի: Ի պատասխան համառ հարցադրմանը, Հիսուսը, ի վերջո, ասաց նրանց. «Ձեզանից ով որ անմեղ է, թող առաջ նա քար գցէ դորա վերայ»:

Մեղադրողները հեռացան. «Եւ Յիսուսը միայն մնաց, եւ կինը կանգնած մէջտեղը»:

«Յիսուսն . . . ոչ ոքին չ՚տեսաւ այն կնկանից ջոկ, եւ ասեց նորան. Ով կին, ո՞ւր են քեզ ամբաստանողները»:

«Նա էլ ասեց. Ոչ, ով Տէր. Եւ Յիսուսն էլ ասեց նորան. Ես էլ չեմ քեզ դատապարտում. Գնա, եւ այսուհետեւ մեղք մի գործիր»:[14]

Անշուշտ, Փրկիչը չէր խրախուսում շնությունը: Բայց Նա նաև չդատապարտեց կնոջը: Նա խրախուսեց նրան վերափոխել իր կյանքը: Նրա կարեկցանքն ու ողորմածությունը դարձան այն շարժառիթը, որի շնորհիվ կինը գիտակցաբար փոխվեց: Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը վկայում է նրա սկսված հետևորդության մասին. «Եվ կինը փառաբանում էր Աստծուն այդ պահից սկսած և հավատում նրա անվանը»:[15]

Չնայած Աստված կարեկցող է, մենք չպիտի սխալմամբ կարծենք, որ Նա անկանխակալ է և պատրաստ է ընդունել մեղքը: Ոչ, այդպես չէ: Փրկիչը աշխարհ է եկել մեզ *մեղքից* փրկելու համար և, ավելին, չի փրկի մեզ մեր մեղքերի *մեջ*:[16] Զիզրոմ անունով մի փորձառու դատավոր մի անգամ փորձեց Ամուղեկին թակարդը գցել, հարցնելով. «Կփրկի՞ [գալիք Մեսիան] իր ժողովրդին իրենց մեղքերի մեջ»: Իսկ Ամուղեկը պատասխանեց նրան. «Ես ասում եմ քեզ, նա չի՛ փրկի, քանզի անհնարին է նրա համար դրժել իր խոսքը: . . . Նա չպետք է փրկի իր ժողովրդին իրենց մեղքերի մեջ»:[17] Ամուղեկը հիմնարար ճշմարտություն ասաց, որ մեր մեղքերից փրկվելու համար մենք պիտի ընդունենք «ապաշխարության պայմանները», որոնք թույլ են տալիս, որ Փրկիչի զորությունը փրկի մեր հոգիները:[18]

Փրկիչի կարեկցանքը, սերը և գթությունը մեզ «ձգում է» դեպի Նա:[19] Նրա Քավության միջոցով մենք այլևս բավարարված չենք մեր մեղավոր վիճակով:[20] Աստված հստակ գիտե, թե ինչն է ճիշտ և ընդունելի Իր համար, և ինչն է սխալ ու մեղսալի: Նա չի ցանկանում ունենալ չմտածող և հնազանդ հետևորդներ: Ոչ, մեր Երկնային Հայրը ցանկանում է, որ Իր զավակները գիտակցաբար, պատրաստակամ և իրենց ընտրությամբ նմանվեն Իրեն[21] և արժանի լինեն այնպիսի կյանքի, որն Ինքն ունի:[22] Այդպես վարվելով, Նրա

զավակները կատարում են իրենց աստվածային ճակատագիրը և դառնում այն ամենի ժառանգորդը, որ Նա ունի:[23] Այս պատճառով Եկեղեցու ղեկավարները չեն կարող փոխել Աստծո պատվիրաններն ու վարդապետությունը Նրա կամքին հակառակ՝ հարմարեցնելով կամ հանրամատչելի դարձնելով:

Այնուամենայնիվ, Հիսուս Քրիստոսին հետևելու մեր ցմահ որոնումներում, մեղավորների հանդեպ Նրա ցուցաբերած բարության օրինակը հատկապես ուսանելի է: Մենք՝ մեղավորներս, Փրկիչի նման պիտի կարեկցանքով ու սիրով հասնենք ուրիշներին: Մեր դերը նաև օգնելն ու օրհնելն է, բարձրացնելն ու կատարելագործելն է, վախն ու հուսահատությունը հույսով և ուրախությամբ փոխարինելն է:

Փրկիչը հանդիմանում էր այն անհատներին, ովքեր խուսափում էին մարդկանցից, ում համարում էին անմաքուր և երեսպաշտորեն դատում էին ուրիշների մասին՝ որպես ավելի մեղավորների, քան իրենք էին:[24] Դա այն շեշտադրված դասն էր, որը Փրկիչն ուղղում էր նրանց, ովքեր «իրանցում վստահ էին, թէ արդար են, եւ ուրիշներին ոչինչ էին համարում»: Նա պատմեց հետևյալ առակը.

«Երկու մարդ վեր ելան տաճարն աղօթք անելու. Մեկը Փարիսեցի եւ միւսը մաքսաւոր:

Փարիսեցին առանձին կանգնած այս էր աղօթք անում. Ով Աստուած, գոհանում եմ քեզանից, որ չեմ ինչպէս ուրիշ մարդիկը՝ յափշտակող, անիրաւ, շնացող, կամ ինչպէս էլ այս մաքսաւորը.

Շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում, եւ իմ բոլոր ստացուածքներիցը տասանորդ եմ տալիս:

Եւ մաքսաւորը հեռու կանգնած իր աչքերն էլ չէր կամենում դէպի երկինքը բարձրացնել. Այլ իր կուրծքը ծեծում էր եւ ասում. Ով Աստուած, ողորմիր ինձ մեղաւորիս:

Հետո Հիսուսը եզրակացնում է. «Ասում եմ ձեզ, թէ սա արդարացած իջաւ իր տունը քան թէ նա. որովհետեւ ամեն ինքն իրան բարձրացնողը կխոնարհուի, եւ ինքն իրան խոնարհեցնողը կբարձրանայ»:[25]

Այս պատգամը մեզ համար պարզ է. ապաշխարող մեղավորը ավելի է մոտենում Աստծուն, քան երեսպաշտ մարդը, ով դատապարտում է այդ մեղավորին:

Մարդկային երեսպաշտության և քննադատության միտումը գոյություն ուներ նաև Ալմայի ժամանակներում: Երբ մարդիկ «ավելի լիովին սկսեցին հաստատել եկեղեցին . . . եկեղեցու ժողովուրդը սկսեց հպարտանալ, . . . եկեղեցու ժողովուրդը հպարտությունից սկսել էր բարձրանալ իր աչքում, . . . նրանք սկսել էին դառնալ արհամարհական մեկը մյուսի հանդեպ, և նրանք սկսել էին հալածել նրանց, ովքեր չէին հավատում ըստ իրենց սեփական կամքի ու քմահաճույքի»:[26]

Այս հալածանքը հատկապես արգելված էր. «Այժմ եկեղեցու ժողովրդի մեջ կար մի խիստ օրենք, որ եկեղեցուն պատկանող որևէ մարդ չպետք է վեր կենար ու հալածեր նրանց, ովքեր չէին պատկանում եկեղեցուն, և որ միմյանց միջև չպետք է լիներ որևէ հալածանք»:[27] Եկեղեցու առաջնորդող սկզբունքները Վերջին Օրերի Սրբերի համար նույնն են: Մենք չպիտի հալածենք միմյանց Եկեղեցու ներսում կամ նրանց, ովքեր Եկեղեցու անդամ չեն:

Նրանք, ովքեր հալածանքի են ենթարկվել որևէ պատճառով, գիտեն, թե ինչ է անարդարությունն ու մոլեռանդությունը: 1960-ականներին, երբ ես պատանի էի և ապրում էր Եվրոպայում, հաճախ էի ենթարկվում քննադատության ու ծաղրի, քանի որ ես ամերիկացի էի և Եկեղեցու անդամ: Իմ համադասարանցիներից մի քանիսը վերաբերվում էին ինձ այնպես, կարծես անձամբ ես էի պատասխանատու Միացյալ Նահանգների ժողովրդականություն չվայելող քաղաքականության համար: Ինձ նաև վերաբերվում էին այնպես, կարծես իմ կրոնը վիրավորանք էր այն ազգերի համար, որոնց մեջ ես ապրում էի, քանի որ այն տարբեր էր պետականորեն հովանավորվող կրոնից: Ավելի ուշ, աշխարհի տարբեր երկրներում ես նշմարում էի խտրականության և նախապաշարմունքի դաժանությունը, որը զգացել են այն մարդիկ, ովքեր տառապել են դրանից իրենց ռասսայական կամ ազգային պատկանելության պատճառով:

Հալածանքը դրսևորվում է մի քանի ձևերով՝ ահաբեկում, ատելություն, արտաքսում, մեկուսացում, ծաղր, ճնշում և ատելություն մեկ ուրիշի հանդեպ: Մենք պիտի զգուշանանք մոլեռանդությունից, որն արտահայտում է իր դաժան վերաբերմունքը նրանց նկատմամբ, ովքեր ունեն տարբեր կարծիքներ: Մոլեռանդությունը մասամբ դրսևորվում է, երբ սահմանափակվում է ազատ արտահայտվելու սկզբունքը:[28] Բոլորը, ներառյալ կրոնի մարդիկ, իրավունք ունեն հրապարակավ արտահայտել իրենց կարծիքը: Բայց ոչ ոք իրավունք չունի ատելությամբ

լցվել ուրիշների հանդեպ, երբ վերջիններս իրենց կարծիքն են հայտնում:

Եկեղեցու պատմությունը մեզ բազում վկայություններ է տալիս այն մասին, թե մեր անդամներին ինչպիսի ատելությամբ ու մոլեռանդությամբ էին վերաբերվում: Որքան տխուր կլիներ, եթե մենք վերաբերվեինք ուրիշներին այնպես, ինչպես մեզ էին վերաբերվում: Փրկիչն ուսուցանում է, «Ամեն ինչ որ կամենում էք՝ թէ ձեզ անեն մարդիկ, այնպէս էլ դուք արէք նորանց»:[29] Եթե կամենում ենք, որ մեզ հարգեն, մենք պիտի լինենք հարգալից: Բացի այդ, մեր իսկական դարձը բերում է «հեզություն և սրտի խոնարհություն», որը հրավիրում է «Սուրբ Հոգուն» և լցնում է մեզ «կատարյալ սիրով»,[30] ուրիշների հանդեպ «մաքուր սիրով»:[31]

Մեր Բարի Հովիվն անփոփոխ է և այսօր նույն վերաբերմունքն ունի մեղքի և մեղավորների հանդեպ, ինչպիսին Նա ուներ, երբ քայլում էր երկրի վրա: Նա չի խուսափում մեզանից, քանի որ մենք մեղք ենք գործում, նույնիսկ, եթե Նա որոշ դեպքերում կարող է մտածել. «Բայց ի՞նչ ոչխար է»: Նա մեզ այնքան է սիրում, որ մեզ տվեց ապաշխարության և մաքրվելու ճանապարհը, որպեսզի մենք կարողանանք վերադառնալ Նրա և մեր Երկնային Հոր մոտ:[32] Այդպես վարվելով Հիսուս Քրիստոսը մեզ նաև օրինակ ծառայեց հետևելու, հարգանք ցուցաբերելու բոլորի հանդեպ և ատելություն ոչ մեկի նկատմամբ:

Որպես Նրա աշակերտներ, եկեք լիարժեք նմանակենք Նրա սերը և միմյանց հանդեպ սերը, այնքան անկեղծորեն և կատարելապես, որ մեզանից ոչ մեկը չզգա լքված, միայնակ և անհույս: Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը մեր Բարի Հովիվն է, ով սիրում է մեզ և հոգ տանում մեր մասին: Նա գիտե մեզ և «Իր կյանքը դրեց Իր ոչխարների համար»:[33] Նա նաև ապրում է մեզ համար և ցանկանում է, որ մենք ճանաչենք Իրեն և հավատ գործադրենք Իր հանդեպ: Ես սիրում ու պաշտում եմ Նրան և խորապես երախտապարտ եմ Նրա համար, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Lectures on Faith* (1985), 38
2. Վիկտոր Հյուգոյի (1802–85), *«Թշվառները»* վեպը մեզ պատմում է ժան Վալժանի պատմությունը, ով մի փոքր հանցանք էր գործել՝ մի հաց գողանալով ընտանիքին կերակրելու համար: Դատապարտվելով հինգ տարվա բանտարկության, Վալժանը 19 տարվա տաժանակիր աշխատանքի դատապարտվեց, քանի որ չորս անգամ փախչելու փորձ էր կատարել: Բանտից նա դուրս եկավ որպես մի անպատկառ ու դաժան մարդ:

   Իր «դեղին անձնագրի» պատճառով Վալժանը չէր կարողանում գտնել աշխատանք, սնունդ և օթևան: Ուժասպառ և բարոյալքված, նրան, ի վերջո, օթևան է տալիս Դին քաղաքի եպիսկոպոսը, ով բարություն ու կարեկցանք է դրսևորում Վալժանի հանդեպ: Գիշերը, տեղի տալով հուսահատությանը, նա գողանում է եպիսկոպոսի արծաթե մոմակալը և փախչում:

   Վալժանին կալանավորում են և վերադարձնում եպիսկոպոսի մոտ: Ի հակադրություն Վալժանի սպասելիքների, եպիսկոպոսն անսպասելիորեն ասում է ոստիկաններին, որ ինքն է Վալժանին տվել մոմակալը և պնդում է, որ Վալժանը վերցնի երկու մոմակալները ևս: (Տես Վիկտոր Հյուգո, *«Թշվառները»*, Fantine, հատոր 2 գլուխ 10–12:)
3. Տես Վիկտոր Հյուգո, *«Թշվառները»*, Fantine, Book 1, An Upright Man, Chapter 10
4. Հեղինակը հարցնում է՝ *Toutefois, la gale de la brebis doit-elle faire reculer le pasteur?* (Hugo, *Les Misérables,* [1985], book 1, chapter 10, page 67). *Gale,* անասնաբուժական ախտաբանության մեջ վերաբերում է տարբեր մաշկային հիվանդություններին, որոնց պատճառը մակաբույծ տիզերն են, և որոնք ուղեկցվում են մազաթափությամբ և քոսի դրսևորումներով:
5. The narrator's humorous editorial comment about the conventionist is *Mais quelle brebis!* It has occasionally been translated as "But what a black sheep."
6. Վարդապետություն և Ուխտեր 1.31
7. Տես Հովհաննես 10.11, 14,Ալմա 5.38, Վարդապետություն և Ուխտեր 50.44
8. Եսայիա 40.11
9. Եզեկիել 34.16
10. Եսայիա 1.6
11. Տես Եսայիա 1.18
12. Տես Ղուկաս 15.1–2
13. Տես Մատթեոս 18.11
14. Տես Հովհաննես 8.3–11
15. Ջոզեֆ Սմիթ թարգմանություն, Հովհաննես 8.11 (Հովհաննեսի 8.11, ծանոթագրություն *q*)
16. Տես Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Իմ սիրո մեջ հաստատո՞ւն մնացեք», Լիահոնա, նոյեմբեր 2016, 48–51
17. Ալմա 11.34, 37
18. Տես Հելաման 5.10–11
19. Տես 3 Նեփի 27.14–15
20. Մեր ժամանակներում Փրկիչը հստակեցնում է. «Նա, ով խախտում է օրենքը, և չի մնում օրենքի մեջ, այլ փնտրում է ինքն իր օրենքը դառնալ, և կամենում է մնալ մեղքի մեջ, և ամբողջովին մեղքի մեջ է մնում, չի կարող սրբագործվել օրենքով, ոչ ողորմությամբ, ոչ արդարադատությամբ, ոչ էլ դատաստանով: Հետևաբար, նրանք կեղտոտ էլ պետք է մնան» (Վարդապետություն և Ուխտեր 88.35):
21. Տես 2 Նեփի 2.26–27
22. Տես Վարդապետություն և Ուխտեր 14.7, 132.19–20, 24, 55
23. Տես Հռովմայեցիս 8.16–17, Վարդապետություն և Ուխտեր 84.38
24. Տես Մատթեոս 23.13
25. Ղուկաս 18.9–14
26. Ալմա 4.4, 6, 8
27. Ալմա 1.21
28. Տես *Oxford English Dictionary*, "bigotry" and "intolerance."
29. Մատթեոս 7.12
30. Մորոնի 8.26
31. Ա Պետրոս 1.22
32. Տես Հավատո Հանգանակներ 1.3
33. Տես Հովհաննես 10.11–15

Երեց Ուլիսես Սարես
Յոթանասունի Նախագահություն

Անսասան ապավինեք Աստծուն

Եթե մենք անսասան ենք և չենք տատանվում մեր հավատքում, Տերը կմեծացնի կյանքի դժվարությունները հաղթահարելու մեր կարողությունը։

Սիրելի եղբայրներ և քույրեր, իմ այսօրվա ելույթը ցանկանում եմ սկսել, վկայելով, որ Թոմաս Ս. Մոնսոնը Աստծո մարգարեն է մեր օրերում։ Առաջին Նախագահության նրա խորհրդականները և Տասներկու Առաքյալները նույնպես, ըստ էության, մարգարեներ են, տեսանողներ և հայտնողներ։ Նրանք ներկայացնում են Տեր Հիսուս Քրիստոսին և իրավունք ունեն հայտարարել Նրա միտքը, և հայտարարում են, եթե այն հայտնությամբ տրվում է իրենց։ Ես վկայում եմ, որ նրանց խորհրդին հետևելը ապահովություն է բերում։ Տերը ներշնչում է նրանց շեշտադրել մեր հավատի զորացումը Երկնային Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի Քավության հանդեպ, որպեսզի մենք չսասանվենք մեր ժամանակների մարտահրավերներին բախվելիս։

Մորմոնի Գրքում մենք կարդում ենք Ամմոն անունով մի մարդու մասին, ով Զարահեմլայի երկրից ուղարկվեց Լեքի-Նեփիի երկիրը՝ տեղեկանալու իր եղբայրների մասին։ Այնտեղ նա գտավ թագավոր Լիմքիին և նրա ժողովրդին, ովքեր Լամանացիների լծի տակ էին։ Լիմքիին խրախուսեցին այն բանը, որոնցով Ամմոնը կիսվեց նրա հետ Զարահեմլայի իր ժողովրդի մասին։ Նրա սիրտը լցվեց այնպիսի մեծ հույսով և ուրախությամբ, որ նա հավաքեց իր ժողովրդին տաճարում և ասաց.

«Հետևաբար, բարձրացրե՛ք ձեր գլուխները և ուրախացե՛ք, և ապավինեք Աստծուն։ . . .

. . . Բայց, եթե դուք սրտի ողջ նվիրվածությամբ դառնաք դեպի Տերը . . . և մտքի ողջ ջանասիրությամբ ծառայեք նրան, . . . նա կազատի ձեզ ճորտությունից՝ իր իսկ կամքի և հաճության համաձայն»։[1]

Ամմոնի խոսքերը այնպիսի հիմնարար ներգործություն ունեցան Թագավոր Լիմքիի ժողովրդի հավատի վրա, որ նրանք Աստծո հետ ուխտ կապեցին ծառայել Նրան և պահել Նրա պատվիրանները, անկախ իրենց կյանքի դժվարին պայմաններից։ Իրենց հավատի շնորհիվ նրանք կարողացան փախուստի ծրագիր կազմել Լամանացիների երկրից։[2]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, խնդրում եմ խորհեք Թագավոր Լիմքիի խնդրանքի կարևորության շուրջ, որով նա դիմեց իր ժողովրդին և մտածեք, թե որքանով է այն առնչվում մեզ հետ։ Նա ասաց. «Հետևաբար, բարձրացրե՛ք ձեր գլուխները և ուրախացե՛ք, և ապավինեք Աստծուն»։ Այս բառերով Լեքմին հրավիրեց իր ժողովրդին հավատի աչքերով նայել ապագային, որպեսզի նրանք իրենց հավատը փոխարինեն հույսի լավատեսությամբ, որը գալիս է հավատ ունենալու արդյունքում, և չտատանվեն Աստծուն ապավինելիս՝ անկախ իրենց պայմաններից։

Մահկանացու կյանքը փորձվելու մի ժամանակ է, երբ մենք

կապացուցենք, թե արդյո՞ք կանենք բոլոր բաները, որոնք մեր Տեր Աստվածը կպատվիրի մեզ:[3] Սրա համար Քրիստոսի հանդեպ անսասան հավատ կպահանջվի, հատկապես, մեծ դժվարությունների ժամանակ: Կպահանջվի, որ մենք առաջ գնանք Քրիստոսի հանդեպ անխախտ հավատով, առաջնորդվելով Հոգով և հավատալով, որ Աստված կհոգա մեր կարիքները:[4]

Իր մահկանացու ծառայության վերջում՝ բանտարկվելուց առաջ, Փրկիչն ուսուցանեց Իր աշակերտներին. «Աշխարհքումը նեղութիւն կ'ունենաք. բայց քաջացէք, ես յաղթել եմ աշխարհքին»:[5]

Մի պահ խորհեք ինձ հետ. Հիսուս Քրիստոսը՝ Հոր Միածին որդին, ապրեց անմեղ կյանքով և հաղթահարեց աշխարհի բոլոր գայթակղությունները, ցավերը, դժվարություններն ու դժբախտությունները: Նրա արյան կաթիլները թափվեցին Գեթսեմանում, Նա տառապեց աննկարագրելի ցավերից: Նա Իր վրա վերցրեց բոլոր ցավերն ու հիվանդությունները: Նա պատրաստ է օգնել մեզանից յուրաքանչյուրին՝ կրելու ցանկացած բեռ: Իր կյանքի, տառապանքի, մահվան և Հարության միջոցով Նա հեռացրեց բոլոր խոչընդոտները, որոնք խանգարում են մեզ ուրախանալ և խաղաղություն գտնել այս աշխարհում: Նրա քավիչ զոհաբերության օգուտները տարածվում են բոլոր նրանց վրա, ովքեր ընդունում են Նրան և ուրանում իրենց անձը, նրանց վրա, ովքեր վեր են առնում Նրա Խաչը՝ որպես Նրա ճշմարիտ հետևորդ:[6] Հետևաբար, երբ մենք հավատ գործադրենք Հիսուս Քրիստոսի և Նրա քավության հանդեպ, մենք կզորանանք, մեր բեռները կթեթևանան և Նրա միջոցով մենք կհաղթենք աշխարհին:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, երբ մենք խորհում ենք այն ուժի և հույսի մասին, որոնք մենք կարող ենք ստանալ Փրկիչից, մենք պատճառ ունենք բարձրացնելու մեր գլուխները, ուրախանալու և առանց երկմտելու առաջ գնալ հավատով, որովհետև երկմտողը նման է ծովի հողմակոծուած եւ տատանուած ալիքի: . . . Երկմիտ մարդը անհաստատ է իր բոլոր ճանապարհներումը»:[7]

Թագավոր Լիքմին նույնպես պնդում էր. «Դարձեք դեպի Տերը սրտի *ողջ* նվիրվածությամբ ու մտքի ողջ ջանասիրությամբ ծառայեք նրան,– եթե դուք անեք այդ, նա կազատի ձեզ ճորտությունից՝ իր իսկ կամքի և հաճության համաձայն»:[8]

Լսեք Տիրոջ խոսքերը, երբ Նա ասում է մեզ.

«Ձեր սիրտերը թող չ'խռովին. Աստուծուն հաւատացէք, եւ ինձ հաւատացէք: . . .

«Եթէ ինձ սիրում էք, իմ պատուիրանքները պահեցէք: . . .

«Ով որ իմ պատուիրանքներն ունի եւ նորանց պահում է, նա է ինձ սիրողը. Եւ ինձ սիրողն իմ Հօրիցը կ'սիրուի. Եւ ես կ'սիրեմ նորան, եւ ինձ կ'յայտնեմ նորան»:[9]

Աստված օրհնում է մեզ համաձայն մեր հավատի:[10] Հավատը աստվածային նպատակով և հավերժության հեռանկարով ապրելու աղբյուրն է:Հավատը գործնական սկզբունք է, որը ջանասիրություն է ներշնչում: Այն կարևոր, կենդանի ուժի դրսևորում է մեր դրական մերաբերմունքի մեջ, այն ցանկություն է՝ պատրաստակամ անելու այն ամենը, ինչ Աստված և Հիսուս Քրիստոսն են խնդրում մեզանից: Այն մեզ ծնկի է իջեցնում աղոթելու և առաջնորդություն խնդրելու Տիրոջից, բարձրանալու և գործելու վստահությամբ, որպեսզի հասնենք այն ամենին, ինչը ներդաշնակ է Նրա կամքին:

Տարիներ առաջ, երբ ես ծառայում է որպես միսիայի նախագահ, մի հեռախոսազանգ ստացա մեր սիրելի միսիոներներից մեկի ծնողներից, ովքեր հաղորդեցին նրա կրտսեր քրոջ մահվան մասին: Ես հիշում եմ, որ այդ վշտալի պահին ես և այդ միսիոները քննարկեցինք Աստծո հրաշալի փրկության ծրագիրը իր զավակների համար ու նաև քննարկեցինք, թե այս գիտելիքն ինչպես կսփոփեր նրան:

Չնայած այս միսիոները ցնցված ու տխուր էր այդ վշտի պատճառով, իր արցունքների միջից և հավատով առ Աստված ուրախանում էր իր քրոջ կյանքով, արտահայտելով անսասան վստահությունը Տիրոջ գործավարութ ողորմությունների վերաբերյալ: Նա վճռականորեն ասաց ինձ, որ կշարունակի ծառայել միսիայում ողջ հավատով և ջանասիրությամբ, որպեսզի արժանի լինի այն խոստումներին, որոնք Աստված ուներ նրա և նրա ընտանիքի համար: Այդ կարիքի ժամին այս հավատարիմ միսիոները դարձրեց իր սիրտը դեպի Աստված, իր ողջ վստահությունը դնելով Նրա վրա և նորոգելով ողջ հավատով և ջանասիրությամբ Նրան ծառայելու իր հանձնառությունը:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, եթե մեր հավատը առ Աստված հիմնարար չէ, և մենք ցանկություն չունենք ծառայել նրան, ապա մահկանացու կյանքի ցավոտ փորձառությունները կարող են հանգեցնել զգացողության, ասես մենք կրում ենք ծանր լուծը, և մենք կարող ենք կորցնել ավետարանով լիարժեք ապրելու նպատակասլացությունը: Առանց հավատի մենք, ի վերջո, կկորցնենք Աստծո ծրագիրը գնահատելու կարողությունը այն բաների վերաբերյալ, որոնք ապագայում տեղի են ունենալու մեր կյանքում:[11]

Փորձության և վշտի պահերին հակառակորդը, ով միշտ իր գայթակղությունների համար փնտրում է խոցելի մարդկանց, փորձում է մեր տրամաբանությունն ու դատողությունն օգտագործել մեր դեմ: Նա փորձում է համոզել մեզ, որ անօգուտ է ապրել ավետարանի սկզբունքներով: Խնդրում եմ հիշեք, որ բնական մարդու տրամաբանությունը «Հոգու բաները չէ ընդունում. որովհետեւ նորանք յիմարութիւն են նորա համար»:[12] Հիշեք, որ դևը «թշնամի է Աստծուն, և շարունակ կռվում է նրա դեմ, և հրավիրում է ու հրապուրում ի մեղք, և շարունակ անելու այն, ինչ չար է»:[13] Մենք չպիտի թույլ տանք, որ նա խաբի մեզ, քանի որ երբ թույլ ենք տալիս, մեր հավատը թուլանում է, և մենք կորցնում ենք Աստծո օրհնությունները ձեռք բերելու ուժը:

Եթե մենք անսասան ենք և չենք տատանվում մեր հավատքում, Տերը կմեծացնի կյանքի դժվարությունները հաղթահարելու մեր կարողությունը: Մենք կկարողանանք ճնշել բացասական ազդակները, մենք կկարողանանք զարգացնել հաղթահարելու ունակությունը, նույնիսկ, երբ դրանք անհաղթահարելի խոչընդոտներ թվան: Հենց դա էր, որ Թագավոր Լեքիի ժողովրդին հնարավորություն տվեց աննկարագրելի փախուստ կատարել Լամանացիների գերությունից:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ես հրավիրում եմ ձեզ լիովին ապավինել Աստծուն և Նրա մարգարեների ուսմունքներին: Ես հրավիրում եմ ձեզ նորոգել ձեր ուխտերը Աստծո հետ, ծառայել նրան ձեր ողջ սրտով՝ անկախ կյանքի բարդ իրավիճակներից: Ես վկայում եմ, որ Քրիստոսի հանդեպ ունեցած ձեր անսասան հավատի ուժով դուք կազատվեք մեղքի, կասկածի, անհավատության, դժբախտության, տառապանքի գերությունից և կստանաք մեր սիրող Երկնային Հոր կողմից խոստացված բոլոր օրհնությունները:

Ես վկայում եմ, որ Աստված գոյություն ունի: Նա ապրում է ու սիրում է մեզ: Նա լսում է մեր աղոթքները մեր երջանկության կասկածի, տխրության և հուսահատության պահերին: Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը աշխարհի Փրկիչն ու Քավիչն է:

Այսօր ես եզրափակում եմ իմ խոսքը օրհներգերի պորտուգալերեն գրքից «Ոչ հիմա, այլ գալիք տարիներին» օրհներգի բառերով.

Եթե արեգակի փոխարեն ամպերը ստվերեն քո սիրտը,
Եթե ցավը տանջի մեզ, ոչինչ, մենք շուտով կիմանանք՝ ով ես Դու,
Հիսուսն առաջնորդում է մեզ Իր ձեռքով և Նա կասի մեզ՝ ինչո՞ւ,
Եթե մենք լսենք Նրա ձայնը, Նա մեզ կասի մեկ առ մեկ:
Ապավինեք Աստծուն անսասան և թող Նա օգնի մեզ,
Գովերգեք Նրա փառքը անվերջ.
Շուտով Նա կբացատրի:[14]

Ես ասացի այս ամենը Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մոսիա 7.19, 33
2. Տես Մոսիա 22.13–14, 22.1–14
3. Տես Աբրահամ 3.25
4. Տես 1 Նեփի 4.6–7, 2 Նեփի 31.20
5. Հովհաննես 16.33
6. Տես Ղուկաս 9.23
7. Հակոբոս 1.6, 8
8. Մոսիա 7.33, շեշտադրումն ավելացված է
9. Հովհաննես 14.1, 15, 21
10. Տես 2 Նեփի 27.23,Ալմա 37.40, Եթեր12.29
11. Տես Վարդապետություն և Ուխտեր 58.3
12. Ա Կորնթացիս 2.14
13. Մորոնի 7.12
14. «Ոչ հիմա, այլ գալիք տարիներին», թարգմանված է. “Agora não, mas logo mais,” *Օրհներգեր* պորտուգալերենով, հ. 156

Երեց Մարկ Ա. Բրագ
Յոթանասունից

Ավելի ու ավելի պայծառ, մինչև կատարյալ օր

Նույնիսկ ամենադժվար և ամենախավար ժամանակներում մեր շուրջ բոլորը կա լույս և բարություն։

Պողոսը Կորնթացիների հետ կիսվել է հույսի մի սքանչելի ուղերձով.

«Ամեն բանի մեջ նեղուած ենք, բայց չենք ճնշուած, կարոտ ենք, բայց չենք տարակուսել։

Հալածուած, բայց երեսից չընկած, վայր ընկած, բայց չկորած»։[1]

Ո՞րն էր Պողոսի հույսի աղբյուրը։ Լսեք նրա բացատրությունը. «Որովհետեւ Աստուած որ ասեց թէ խաւարիցը լոյս ծագէ, ինքը մեր սրտերի մէջ ծագեցրեց Աստուծոյ փառքի գիտութեան լուսաւորութիւնը տալու համար Հիսուս Քրիստոսի դէմքումը»։[2]

Նույնիսկ ամենադժվար և ամենախավար ժամանակներում մեր շուրջ բոլորը կա լույս և բարություն։ Անցյալ հոկտեմբերին Նախագահ Ուխդորֆը հիշեցրեց մեզ. «Մենք շրջապատված ենք . . . լույսի և ճշմարտության [այնպիսի] ապշեցուցիչ հարստությամբ, որ ես ուզում եմ իմանալ՝ արդյոք մենք իսկապես գնահատում ենք, թե ինչ ունենք»։[3]

Սակայն հակառակորդը ավելի շուտ մեզ ստիպում է կենտրոնանալ «խավարի մշուշների վրա . . . որոնք կուրացնում են աչքերը, . . . կարծրացնում . . . սրտերը . . . , և . . . տանում . . . հեռու»։[4]

Այնուամենայնիվ, մեր օրերի մարտահրավերների կատարյալ հասկացողությամբ, Տերը խոստանում է. «Այն ինչ Աստծուց է՝ լույս է և նա, ով ստանում է լույսը և շարունակում է Աստծո հետ, ստանում է ավելի շատ լույս, և այդ լույսն ավելի ու ավելի է պայծառանում.մինչև որ կատարյալ օր է դառնում»։[5]

Մենք Աստծո զավակներն ենք։ Լույս ստանալ, շարունակել Աստծո հետ և ավելի շատ լույս ստանալ. մենք ստեղծվել ենք, որ կատարենք սրանք։ Ի սկզբանե մենք հետևել ենք լույսին, մենք հետևել ենք մեր Երկնային Հորը և Նրա ծրագրին։ Լույսին ձգտելը մեր հոգևոր ԴՆԹ-ի մեջ է։

Ես լսեցի, թե ինչպես այս հավերժական ճշմարտությունը գեղեցիկ ուսուցանում էին մի անսպասելի վայրում։ Երբ աշխատում էի մի մեծ բանկում, ինձ հրավիրեցին մասնակցել մի գործադիր ծրագրի Միչիգանի համալսարանում։ Ծրագրի ընթացքում Պրոֆեսոր Կիմ Կամերոնն ուսուցանեց դրական ղեկավարման և դրա հելիոտրոպիկ ազդեցության մասին։ Նա բացատրեց. «Սա վերաբերում է այն միտմանը, որ բոլոր կենդանի համակարգերը հակում ունեն դեպի դրական էներգիան[լույսը] և հեռանում են բացասական էներգիայից [խավարից]։ Միաբջիջ օրգանիզմներից սկսած մինչև մարդկային բարդ համակարգերը ամեն կենդանի էակ ունի բնորոշ հակում դեպի դրականը և հեռացում բացասականից»։[6]

Հենվելով հարուստ ուսումնասիրությունների վրա, նա կենտրոնացավ նաև հաջող աշխատավայրի մշակույթի երեք բաղադրիչների՝ կարեկցանքի, ներողամտության և երախտագիտության վրա:[7] Կատարյալ իմաստ է ձեռք բերում այն, որ երբ մարդիկ դառնում են դեպի դրականը (լույսը), այն հատկանիշները, որոնք կատարյալ օրինակ են ծառայում Հիսուս Քրիստոսի՝ Աշխարհի Լույսի կողմից, ի հայտ են գալիս:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, խնդրում ենք մխիթարվեք, որ մեզ համար կա մատչելի լույս: Կարող եմ առաջարկել երեք տարածքներ, որտեղ մենք *միշտ* կգտնենք լույս:

1. Եկեղեցու լույսը

Եկեղեցին լույսի փարոս է խավարող աշխարհում: Սա հրաշալի ժամանակ է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ լինելու համար: Եկեղեցին ավելի ուժեղ է, քան երբևէ եղել է,[8] և բառացիորեն ավելի է ուժեղանում ամեն օր, երբ նոր անդաներ են միանում մեզ, նոր համայնքներ են կազմվում, նոր միսիոներներ են կանչվում, և նոր տաճարներ են բացվում ավետարանի համար: Մենք տեսնում ենք, թե ինչպես են վերադառնում նրանք, ովքեր որոշ ժամանակով հեռացել են Եկեղեցու գործունեությունից, երբփրկարար ջանքերը, որ կանխատեսել էր Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, բերում է ամենօրյա հրաշքներ:

Ես վերջերս այցելեցի Պարագվայի, Ուրուգվայի, Չիլիի և Արգենտինայի երիտասարդներին իրենց Երիտասարդներին զորացնելու համար համաժողովում: Հազարավոր երիտասարդներ և աղջիկներ մեկ շաբաթ անցկացրին, ուժեղացնելով իրենց սերը Փրկիչի հանդեպ և ապա վերադարձան տուն՝ իրենց ընտանիքներն ու ընկերները, ճառագելով Քրիստոսի լույսն ու սերը:

Եկեղեցին միշտ կունենա իրեն քննադատողներին: Դա այդպես է եղել սկզբից ի վեր և կշարունակվի մինչև վերջ: Բայց մենք չենք կարող թույլ տալ, որ այդպիսի քննադատությունը բթացնի մեր զգայունությունը լույսի հանդեպ, որը մատչելի է մեզ համար: Ճանաչելով լույսը և ձգտելով դեպի այն, մենք իրավունք ձեռք կբերենք ավելի շատ լույսի համար:

Խավարող աշխարհում, *Եկեղեցու լույսը* կփայլի ավելի ու ավելի պայծառ, մինչև կատարյալ օր:

2. Ավետարանի լույսը

Ավետարանի լույսը այն արահետն է, որն «ավելի ու ավելի է փայլում, մինչև կատարյալ օր»,[9] և այն փայլում է ավելի ուժեղ մեր ընտանիքներում և տաճարներում ողջ աշխարհով մեկ:

«Քարոզիր Իմ Ավետարանը» նշում է. «Ավետարանի լույսի միջոցով ընտանիքները կարող են լուծել թյուրըմբռնումները, հակառակությունները և մարտահրավերները: Տարաձայնություններից բաժանված ընտանիքները կարող են ապաքինվել ապաշխարության, ներողամտության և Հիսուս Քրիստոսի Քավության հանդեպ հավատքի միջոցով»:[10] Այժմ, ավելի քան երբևէ, մեր ընտանիքները պետք է լինեն մեծ լույսի աղբյուրներ մեր շրջապատի բոլոր մարդկանց համար: Ընտանիքներն ուժեղանում են լույսով, երբ նրանք մեծանում են սիրով և բարությամբ: Երբ մենք հաստատում ենք «հավատքի, . . . ապաշխարության, ներողամտության, հարգանքի, սիրո [և] կարեկցանքի ընտանիքներ»,[11] մենք կզգանք, որ մեր սերը կմեծանա Փրկիչի և միմյանց հանդեպ: Ընտանիքը ավելի կուժեղանա, և լույսը մեզանից յուրաքանչյուրի մեջ ավելի կպայծառանա:

Մենք կարդում ենք Աստվածաշնչի բառարանում, որ «միայն տունը կարող է համեմատվել տաճարի հետ իր սրբազանությամբ»:[12] Մենք այժմ ունենք 155 գործող տաճարներ և շուտով կլինեն նորերը: Ավելի ու ավելի շատ ընտանիքներ են կնքվում ժամանակի և ողջ հավերժության համար: Տաճարներում անդամները մուտքագրում են ավելի ու ավելի շատ նախնիների անուններ՝ կատարելով նրանց փրկարար արարողությունները: Մենք վարագույրի երկու կողմում էլ իսկապես զգում ենք մեծ ուրախություն և տոնակատարություն:

Խավարող աշխարհում *ավետարանի լույսը* կշողա ավելի ու ավելի պայծառ մինչև կատարյալ օր:

3. Քրիստոսի լույսը

Դուք չեք կարող խոսել լույսի մասինաշխարհում, առանց խոսելու Աշխարհի Լույսի՝ Հիսուս Քրիստոսի *մասին:* Երկնային Հոր սիրո դրսևորումներից մեկն այն է, որ բոլորը, ովքեր գալիս են այս կյանք, օրհնված են Քրիստոսի Լույսով, որը կօգնի նրանց տուն վերադառնալ: Նախագահ Բոյդ Ք. Փաքերն ուսուցանել է. «Քրիստոսի Հոգին միշտ այնտեղ է: . . . Քրիստոսի Լույսը տիեզերական է, ինչպես ինքը՝ արևի լույսը: Որտեղ մարդկային կյանք կա, այնտեղ կա Քրիստոսի Հոգին:[13] Քրիստոսի Հոգին «շարունակ հրավիրում է բարիք գործել»[14] և նախապատրաստում բոլորին, ովքեր ձգտում են բարության և ճշմարտության՝ Սուրբ Հոգին ստանալու համար:

Փրկիչն ուսուցանում է, որ Նա է լույսը, ով «լուսավորում է ձեր աչքերը», «կենդանացնում է ձեր հասկացողությունը» և «կյանք տալիս բոլոր բաներին»:[15] Քրիստոսի Լույսը կօգնի մեզ տեսնել ուրիշներին Քրիստոսի աչքերով: Մենք ավելի սիրառատ և հասկացող կլինենք ուրիշների մաքառումների հանդեպ: Այն կօգնի մեզ ավելի համբերատար լինել նրանց հետ, ովքեր չեն երկրպագում, ինչպես մենք ենք երկրպագում կամ ծառայում, ինչպես մենք ենք կարողանում: Այն կօգնի մեզ լիարժեք հասկանալ երջանկության մեծ ծրագիրը և տեսնել, թե ինչպես ենք մենք բոլորս համապատասխանում այդ մեծ սիրո ծրագրին: Այն տալիս է կյանք, իմաստ և նպատակ այն ամենին, ինչ մենք անում ենք: Այժմ ողջ այն երջանկությամբ, որը կգա մեզ, երբ մենք լիարժեք հասկանանք Քրիստոսի Լույսը, այն չի համեմատվի այն ուրախության հետ, որը մենք զգում ենք, երբ մենք տեսնում ենք, թե ինչպես է աշխատում Քրիստոսի Լույսը մյուսների՝ ընտանիքի, ընկերների և նույնիսկ լրիվ օտարականների մեջ:

Ես զգացի այդ ուրախությունը, երբ լսեցի քաջարի հրշեջների խմբի ջանքերի մասին, ովքեր պայքարում էին՝ փրկելու հարավային Կալիֆորնիայում 2015թ.-ին այրվող ցցի կենտրոնը: Երբ կրակը մոլեգնում էր, գումարտակի հրամանատարը զանգեց մի ՎՕՍ ընկերոջ հարցնելու, թե որտեղ էին պահվում սրբազան մասունքները և հաղորդության բաժակները, որպեսզի նրանք փրկեին դրանք: Նրա ընկերը հավաստիացրեց նրան, որ սրբազան մասունքներ չկային, և հաղորդության բաժակներն ըստ էության փոխարինելի էին: Բայց հրամանատարը զգում էր, որ պետք է ավելին աներ, այսպիսով նա ուղարկեց հրշեջներին ետ՝ դեպի այրվող շենքը՝ պատերի վրայից հանելու Քրիստոսի յուրաքանչյուր նկարը, որպեսզի դրանք պահպանվեին: Նրանք նույնիսկ դրեցին դրանցից մեկը հրշեջ մեքենայում, հույս ունենալով, որ հրշեջները պաշտպանված կլինեին: Ես իսկապես հուզվեցի հրամանատարի բարությունից, առաքինությունից և Լույսի հանդեպ զգայունությունից այդ վտանգավոր և դժվարին իրավիճակում:

Խավարող աշխարհում *Քրիստոսի Լույսը* կշողա ավելի ու ավելի պայծառ, մինչև կատարյալ օր:

Ես կրկին արձագանքում եմ Պողոսի խոսքերին. Եկեք «հագնենք լույսի զենքերը»:[16] Ես վկայում եմ Քրիստոսի մասին: Նա է Աշխարհի Լույսը: Թող որ մենք զորանանք լույսից, որը մատչելի է մեզ, երբ ավելի մեծ է եկեղեցու հաճախելիությունների թիվը և մեր ընտանիքներում ավելի շատ են կիրառվում ավետարանի սկզբունքները: Թող որ մենք անընդհատ տեսնենք Քրիստոսի Լույսն ուրիշների մեջ և օգնենք նրանց տեսնել դա իրենց մեջ: Երբ մենք ստանանք այդ լույսը, մենք կօրհնվենք ավելի շատ լույսով, նույնիսկ, մինչև կատարյալ օր դառնա, երբ մենք կրկին կտեսնենք «Լույսերի Հորը»՝[17] մեր Երկնային Հորը: Այսպես եմ ես վկայում Աշխարհի Լույսի՝Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

Հրշեջը փրկում է Փրկիչի նկարը հրդեհով բռնկված ցցի կենտրոնից Կալիֆորնիայում (ԱՄՆ):

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Բ Կորնթացիս 4.8–9
2. Բ Կորնթացիս 4.6
3. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Օ, որքա՜ն մեծ է մեր Աստծո ծրագիրը» *Լիահոնա,* նոյ. 2016, 20:
4. 1 Նեփի 12.17
5. Վարդապետություն և Ուխտեր 50.24
6. Kim Cameron, *Positive Leadership: Strategies for Extraordinary Performance,* 2nd ed. (2012), xii; see also Kim S. Cameron, "Leading with Energy,"Wheatley Institution Fellow Notes, Feb. 17, 2017, wheatley.byu.edu.
7. Տես Կամերոն, *Դրական ղեկավարում,* 33, 36, 39
8. Տես Քվենթին Լ. Քուք, «Տերն է իմ լույսը», *Լիահոնա,* մայիս 2015, 65:
9. Առակաց 4.18
10. *«Քարոզիր Իմ Ավետարանը. Միսիոներական ծառայության ուղեցույց»* (2004), 3:
11. «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
12. Աստվածաշնչի բառարան, «Տաճար»
13. Բոյդ Ք. Փաքեր, «Քրիստոսի Լույսը», *Լիահոնա,* ապր. 2005, 13:
14. Մորոնի 7.13
15. Վարդապետություն և Ուխտեր 88.11, 13
16. Հռովմեացիս 13.12
17. Հակոբոս 1.17, Վարդապետություն և Ուխտեր 67.9

«ԹՐԻՍՏՈՍ», ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ ՍԱՆԻՄԱՆ, © 1941, 1968 BY WARNER PRESS, INC., ANDERSON, INDIANA, USED WITH PERMISSION



Նախագահ Ռասսել Մ. Նելսոն
Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ

Մեր կյանք հրավիրել Հիսուս Քրիստոսի զորությունը

Հիսուս Քրիստոսի ավետարանը լի է Նրա զորությամբ, որը հասանելի է Աստծո յուրաքանչյուր դստերը կամ որդուն, ով ջանասիրաբար փնտրում է այն։

Ի՞մ թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, մենք ապրում ենք մի շատ դժվար տնտեսությունում։ Մենք շրջապատված ենք մարտահրավերներով, հակասություններով ու բարդություններով։ Այս անհանգիստ ժամանակները կանխատեսվել էին Փրկիչի կողմից։ Նա զգուշացրել էր, որ մեր օրերում հակառակորդը բարկության կդրդի մարդկանց սրտերը և կմոլորեցնի նրանց։[1] Սակայն մեր Երկնային Հայրը երբեք չի նախատեսել, որ անձնական խնդիրների և սոցիալական հարցերի լաբիրինթոսում մենք մենակ մնանք։

Աստված այնպես սիրեց աշխարհը, որ ուղարկեց Իր Միածին Որդուն[2] մեզ օգնության։[3] Իսկ Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, Իր կյանքը զոհաբերեց մեզ համար։ Այդ ամենը նրա համար, որ աստվածային զորությունը մեզ հասանելի լինի, զորություն, որը բավարար կլինի դիմակայելու մեր ժամանակի բեռներին, խոչընդոտներին ու գայթակղություններին։ Այսօր ես ցանկանում եմ խոսել, թե *ինչպես* կարող ենք մեր Տեր և Վարդապետ Հիսուս Քրիստոսի զորությունը մեր կյանք հրավիրել։

Մենք սկսում ենք՝ սովորելով Նրա մասին։[5] «Անհնար է փրկվել անգիտության մեջ»։[6] Որքան շատ ենք իմանում Փրկիչի ծառայության և առաքելության մասին[7], որքան շատ ենք հասկանում Նրա վարդապետությունը,[8] և ինչ է արել Նա մեզ համար, այնքան ավելի շատ ենք իմանում, որ Նա կարող է զորություն տալ մեզ, որի կարիքն ունենք այս կյանքում։

Տարվա սկզբում ես խնդրեցի Եկեղեցու չափահաս երիտասարդներին յուրաքանչյուր շաբաթ իրենց ժամանակի մի մասը նվիրել *այն ամենի* ուսումնասիրմանը, ինչ Հիսուսն ասել ու արել է, որոնք արձանագրված են կանոնիկ աշխատություններում։[9] Ես հրավիրեցի նրանց Սուրբ գրությունների ուղեցույցի Հիսուս Քրիստոսի մասին սուրբ գրությունների մեջբերումները դարձնել իրենց անձնական ուսումնական ձեռնարկը։[10]

Ես նետեցի այդ մարտահրավերը, քանի որ ինքս արդեն նման մարտահրավեր էի ընդունել։ Ես կարդացել և ընդգծել էի Հիսուս Քրիստոսի մասին *յուրաքանչյուր* հատված, որ նշված էր անգլերեն սուրբ գրությունների «Թեմատիկ ուղեցույցի» հիմնական խորագրի և 57 ենթախորագրերի ներքո։[11] Երբ ես ավարտեցի այդ հետաքրքիր վարժությունը, կինս հարցրեց, թե ինչ ազդեցություն ունեցավ այն ինձ վրա։ Ես նրան պատասխանեցի. «Ես նոր մարդ եմ դարձել»։

Ես նորացված մի նվիրվածություն զգացի Նրա հանդեպ, երբ կրկին կարդացի Փրկիչի սեփական հայտարարությանը Մորմոնի Գրքում իր մահկանացու առաքելության մասին: Նա հայտարարել է.

«Ես եկա աշխարհ՝ կատարելու իմ Հոր կամքը, որովհետև իմ Հայրն ուղարկեց ինձ:

Եվ իմ Հայրն ուղարկեց ինձ, որպեսզի ես խաչի վրա բարձրացվեմ»:[12]

Որպես Վերջին Օրերի Սրբեր, մենք Նրա առաքելությունը կոչում ենք Հիսուս Քրիստոսի Քավություն, ինչը բոլորի համար իրականություն դարձրեց հարությունը և հնարավոր դարձրեց հավերժական կյանքը նրանց համար, ովքեր ապաշխարում են իրենց մեղքերը և ստանում ու պահում են փրկարար արարողությունները և ուխտերը:

Վարդապետության տեսանկյունից թերի է, երբ խոսում ենք Տիրոջ քավիչ զոհաբերության մասին համառոտ արտահայտություններով, ինչպիսիք են պարզապես «Քավությունը», «Քավության հնարավորություն տվող զորությունը», «Քավության կիրառումը» կամ «Քավության միջոցով ամրապնդումը»: Այդ արտահայտությունները հավատքից շեղելու իրական վտանգ են ներկայացնում, ներկայացնելով *իրադարձությունը,* կարծես *այն* մեր Երկնային Հորից և Նրա Որդի Հիսուս Քրիստոսից անկախ գոյություն և կարողություն ունի:

Ըստ Հոր մեծ հավերժական ծրագրի, Փրկիչն էր, որ տառապանք տարավ: Փրկիչն էր, որ կոտրեց մահվան կապանքները: Փրկիչն էր, որ վճարեց մեր մեղքերի ու օրինազանցությունների գինը, ջնջելով դրանք մեր ապաշխարության պայմանով: Փրկիչն է, որ մեզ ազատում է ֆիզիկական և հոգևոր մահից:

Չկա «Քավություն» անունով որևէ անկերպ էակ, որին մենք կարող ենք դիմել բժշկվելու, օգնության, ներողամտության կամ զորության համար: Այդ ամենի աղբյուրը Հիսուս Քրիստոսն է: *Քավություն* և *Հարություն* սրբազան եզրույթները նկարագրում են այն, ինչ Փրկիչն արեց ըստ Հոր ծրագրի, որպեսզի մենք կարողանանք հույսով ապրել այս կյանքում և ձեռք բերել հավերժական կյանք գալիք աշխարհում: Փրկիչի քավիչ զոհաբերությունը՝ ողջ մարդկության պատմության առանցքային գործողությունը, լավագույնս հասկանում և գնահատում ենք, երբ բացարձակորեն և հստակորեն այն կապում ենք Նրա հետ:

Փրկիչի առաքելության կարևորությունն ընդգծել է Մարգարե Ջոզեֆ Սմիթը, որն ազդեցիկ հայտարել է. «Մեր կրոնի հիմնական սկզբունքներն Առաքյալների և Մարգարեների վկայություններն են Հիսուս Քրիստոսի մասին, որ նա մահացել է, թաղվել է և երրորդ օրը կրկին հարություն է առել ու համբարձվել երկինք. բոլոր մյուս բաները, որոնք վերաբերում են մեր կրոնին, միայն դրա հավելումներն են»:[13]

Մարգարեի հենց այդ հայտարարությունն էր պատճառը, որ 15 մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ հրատարակեցին և ստորագրեցին իրենց վկայությունը՝ ի հիշատակ Տիրոջ ծննդյան 2000-ամյակի: Այդ պատմական վկայությունը հայտնի է «Կենդանի Քրիստոսը»[14] վերնագրով: Շատ անդամներ մտապահել են այդ ճշմարտությունները: Մյուսները քիչ գիտեն այդ վկայության մասին: Մինչ դուք փնտրում եք ավելին իմանալ Հիսուս Քրիստոսի մասին, ես ձեզ կոչ եմ անում ուսումնասիրել «Կենդանի Քրիստոսը» փաստաթուղթը:

Նվիրելով մեր ժամանակը Փրկիչի և Նրա քավիչ զոհաբերության մասին սովորելուն, մենք մասնակցում ենք Նրա զորությունից օգտվելու մեկ այլ առանցքային տարրին. մենք ընտրում ենք հավատք ունենալ Նրա հանդեպ և հետևել Նրան:

Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտները պատրաստ են առանձնանալ, բարձրաձայնել և տարբերվել աշխարհի մարդկանցից: Նրանք անվեհեր, նվիրված և համարձակ են: Ես լսել եմ նման աշակերտներից մի քանիսի մասին Մեքսիկայում՝ իմ վերջին հանձնարարության ընթացքում, որտեղ ես հանդիպեցի կառավարական պաշտոնյաների հետ, ինչպես նաև երկրի մյուս

կրոնական դավանանքների ներկայացուցիչների հետ: Յուրաքանչյուրը շնորհակալություն էր հայտնում իրենց երկրում ամուր ամուսնություններ և ընտանիքներ պաշտպանելու և պահպանելու գործում մեր անդամների հերոսական և հաջող ջանքերի համար:

Նման հզոր աշակերտ դառնալը հեշտ չէ և ինքնաբերաբար տեղի չի ունենում: Մեր ուշադրությունը պետք է կենտրոնանա Փրկիչի և Նրա ավետարանի վրա: Մտավոր կարգապահություն է պահանջվում *բոլոր* մտորումներում:[15] Բայց երբ դա անում ենք, մեր կասկածներն ու վախերը ցրվում են:[16]

Վերջերս լսեցի մի անվախ երիտասարդ դափնիի մասին: Նրան հրավիրել էին իր ավագ դպրոցը ներկայացնել նահանգային մի մրցույթի՝ նույն երեկոյան, երբ նա ցցի Սփոփող Միության ընդհանուր ժողովին մասնակցելու պարտավորություն էր վերցրել: Երբ նա գիտակցեց, որ ժամերը համընկնում են և բացատրեց մրցույթի պաշտոնյաներին, որ պետք է մրցույթից շուտ դուրս գա մեկ այլ կարևոր միջոցառման մասնակցելու համար, նրան ասացին, որ եթե նա այդպես վարվի, ապա կարող է որակազրկվել:

Ի՞նչ արեց Վերջին Օրերի այդ դափնին: Նա հավատարիմ մնաց Սփոփող Միության հավաքին մասնակցելու իր պարտավորությանը: Ինչպես խոստացել էին, նրան որակազրկեցին նահանգային մրցույթից: Երբ հարց տվեցին իր որոշման մասին, նա պարզապես պատասխանեց. «Դե, Եկեղեցին ավելի կարևոր է, այդպես չէ՞»:

Հավատն առ Հիսուս Քրիստոս մեզ մղում է կատարել քայլեր, որոնք այլ դեպքում չէինք անի: Հավատքը, որը դրդում է մեզ գործողությունների, մեզ ավելի է մոտեցնում Նրա զորությանը:

Մենք նաև ավելացնում ենք Փրկիչի զորությունը մեր կյանքում, երբ սրբազան ուխտեր ենք կապում և ճշգրտությամբ պահում ենք այդ ուխտերը: Մեր ուխտերը մեզ կապում են Նրա հետ և մեզ աստվածային զորություն են տալիս: Որպես

հավատարիմ աշակերտներ, մենք ապաշխարում ենք և հետևում Նրան՝ մտնելով մկրտության ջրերը: Մենք քայլում ենք ուխտի ճանապարհով, որ ստանանք այլ կարևոր արարողություններ:[17] Եվ երախտապարտ ենք, որ Աստծո ծրագիրը նախատեսում է այդ օրհնությունները հասանելի դարձնել մեր նախնիներին, ովքեր մահացել են՝ հնարավորություն չունենալով ստանալ այդ արարողությունները իրենց մահկանացու կյանքի ընթացքում:[18]

Ուխտեր պահող տղամարդիկ և կանայք ուղիներ են փնտրում իրենց անբիծ պահել աշխարհից, որպեսզի ոչինչ չարգելափակի դեպի Փրկիչի զորություն նրանց մուտքը: Մի հավատարիմ կին և մայր վերջերս գրել է. «Մենք ապրում ենք անհանգիստ ու չար ժամանակներում: Որքա՜ն օրհնված ենք մենք, որ մեծ գիտելիքներ ունենք փրկության ծրագրի մասին, որ ունենք սիրող մարգարեների, առաքյալների և ղեկավարների ոգեշնչված առաջնորդությունը, ինչը մեզ օգնում է ալեկոծված ծովով անվտանգ նավարկել: Մենք մոռացել ենք առավոտյան ռադիո միացնելու սովորությունը: Փոխարենը, մինչ պատրաստվում ենք հերթական օրվան, մեր բջջային հեռախոսներով մենք այժմ գերագույն համաժողովի ելույթ ենք լսում ամեն առավոտ»:

Փրկիչի զորությունը մեր կյանք հրավիրելու մեկ այլ տարր է հանդիսանում հավատքով Նրան մոտենալը: Նման հրավերը պահանջում է եռանդուն ու կենտրոնացած ջանքեր:

Հիշո՞ւմ եք աստվածաշնչյան պատմությունը կնոջ մասին, որը 12 տարի տառապում էր կեղեքիչ հիվանդությամբ:[19] Նա Փրկիչի հանդեպ մեծ հավատք դրսևորեց, բացականչելով, «Եթէ միայն նորա հանդերձին դպչիմ, կ՚փրկուիմ»:[20]

Իր հավատին կենտրոնացած այս կինը պետք է ձգվեր այնքան, որ հասներ Նրա զորությանը: Այս ֆիզիկական լարումընրա հոգևոր լարման խորհրդանիշն էր:

Մեզանից շատերը այդ կնոջ նման սրտի խորքից աղաղակել են. «Եթե կարողանայի հոգևորապես բավականաչափ ձգվել, որպեսզի Փրկիչի զորությունը իմ կյանք հրավիրեմ, ես կիմանայի, թե ինչպես կարգավորեմ իմ սրտաճմլիկ վիճակը: Ես կիմանայի, թե ինչ պետք է անեմ: Եվ ես այն անելու զորություն կունենայի»:

Երբ փորձում եք հասնել Տիրոջ զորությանը ձեր կյանքում նույն լարվածությամբ, ինչպես ջրում խեղդվող մարդն է ջանում օգնություն կանչել ու ազահաբար օդ շնչել, Հիսուս Քրիստոսի զորությունը ձերը կլինի: Երբ Փրկիչը գիտի, որ դուք իսկապես ուզում եք հասնել Նրան, երբ Նա զգում է, որ ձեր սրտի մեծագույն ցանկությունն է իր զորությունը ձեր կյանք հրավիրել, Սուրբ Հոգու

զորությամբ դուք ճշգրիտ կիմանաք, թե ինչ պիտի անեք:[21]

Երբ դուք հոգևորապես լարվում եք նախկինում ձեր արածից ավելին անելու համար, Նրա զորությունը դեպի ձեզ կհորդի:[22] Այն ժամանակ դուք կկարողանաք հասկանալ մեր երգած «Աստծո Հոգին» օրհներգի խորիմաստ խոսքերը.

Տերը մեծացնում է սրբոց
ըմբռնումը. . . .
Ընդարձակվում է Աստծո
գիտությունը,
Ցրվում է խավարը երկրի երեսից:[23]

Հիսուս Քրիստոսի ավետարանը լի է Նրա զորությամբ, որը հասանելի է Աստծո յուրաքանչյուր դստերը կամ որդուն, ով ջանասիրաբար փնտրում է այն: Ես վկայում եմ, որ երբ Նրա զորությունը հրավիրում ենք մեր կյանք, ինչպես նա, այնպես էլ մենք, միասին ցնծություն կապրենք:[24]

Որպես Նրա հատուկ վկաներից մեկը, ես հայտարարում եմ, որ Աստված ապրում է, Հիսուսը Քրիստոսն է: Նրա Եկեղեցին վերականգնվել է երկրի վրա: Աստծո մարգարեն երկրի վրա այսօր Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն է, որին ես աջակցում եմ իմ ողջ սրտով: Ես այդ մասին վկայում եմ, արտահայտելով իմ սերը և թողնելով իմ օրհնությունը ձեզանից յուրաքանչյուրին Հիսուս Քրիստոսի սուրբ անունով. ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես 2 Նեփի 28.19–30:
2. Տես Հովհաննես 3.16:
3. Հիսուսն էր Օծյալը՝ Երկնային Հոր կողմից օծված, որ լինի Նրա անձնական ներկայացուցիչը մարդկության փրկությանը վերաբերող բոլոր հարցերում: Հիսուսը օծվեց, որ լինի մեր Փրկիչն ու Քավիչը: Նախքան աշխարհի ձևավորումը, Հիսուսն օծվեց, որ իրականություն դարձնի անմահությունը և հավերժական կյանքի հնարավորություն տա Աստծո բոլոր զավակներին (տես Հովհաննես 17.24, Ա Պետրոս 1.20): Այդպիսով, Հիսուսը երկու եզակի տիտղոս էր կրում. *և՛ Մեսիա* (արամեական բառ), *և՛ Քրիստոս* (հունարեն բառ), երկուսն էլ «օծյալ» իմաստով (Տես Սուրբ գրքերի ուղեցույց «Օծյալը» բառահոդվածը):
4. Մենք կարող ենք պաշտպանվել՝ իմանալով և ապրելով ըստ Աստուծո խոսքի (տես Եփեսացիս 6.17–18, Վարդապետություն և Ուխտեր 27.18):
5. Հոր ղեկավարության ներքո՝ Հիսուսը արարիչն էր այս աշխարհի (տես Հովհաննես 1.2–3) և անթիվ այլ աշխարհների (տես Մովսես 1.33): Իր մահկանացու ծննդից առաջ՝ շատ վաղուց, Հիսուսը մեծ Եհովան էր՝ Հին Կտակարանի Աստվածը: Եհովան էր, որ խոսեց Մովսեսի հետ Սինայ սարի վրա: Եհովան էր, որ ուխտ արեց Աբրահամի հետ, որ երկրի բոլոր ազգերը կօրհնվեն Աբրահամի սերնդով: Եհովան էր, ով ուխտ կապեց Իսրայէլի տան ընտանիքների հետ: Հիսուսը նաև խոստացված Էմմանուելն էր, ինչպես մարգարեացել էր Եսայիան (տես Եսայիա 7.14):
6. Վարդապետություն և Ուխտեր 131.6
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 76.40–41
8. Տես 2 Նեփի 31.2–21
9. Աստվածաշունչ, Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտեր և Թանկագին Մարգարիտ:
10. Տես սուրբ գրությունների «Թեմատիկ ուղեցույցի», «Հիսուս Քրիստոս» բառահոդվածը: Ի լրումն հիմնական խորագրի ներքո ընդգրկված տեքստի՝ 57 ենթախորագրեր կան Նրա մասին: Ոչ անգլերեն հրատարակությունների համար օգտագործեք «Սուրբ գրությունների ուղեցույցը»:
11. Անգլերեն սուրբ գրությունների «Թեմատիկ ուղեցույցի» 18 էջերը 2200 հղում են ներառում:
12. 3 Նեփի 27.13–14
13. *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 49
14. Տես «Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Լիահոնա,* ապրիլ 2000, 2–3:
15. Տես Հելաման 8.15
16. Տես Վարդապետություն և Ուխտեր 6.36
17. Հիսուս Քրիստոսը մեզ ուսուցանել է կարևորությունը սրբազան արարողությունների կարևորությունը, ինչպիսիք են՝ մկրտությունը (տես Հովհաննես 3.5), հաղորդությունը (տես Վարդապետություն և Ուխտեր 59.9), ինչպես նաև տաճարային օժտման և կնքման արարողությունները (տես Վարդապետություն և Ուխտեր 124:39–42):
18. Տես Վարդապետություն և Ուխտեր 124:29–32
19. Տես Ղուկաս 8.43–44
20. Մարկոս 5.28
21. Տես Վարդապետություն և Ուխտեր 88.63
22. Երբ հավատացող կինը դիպավ Փրկիչի հանդերձին, Նա ակնթարթորեն արձագանքեց. «Ես իմացայ՝ որ զօրութիւն [անգլերենում օգտագործված է *virtue* «առաքինություն» բառը, որը համարժեք է [հունարեն *dunamis,* «զորություն» իմաստով] դուրս եկաւ ինձանից»: (Ղուկաս 8.46, շեշտադրումն ավելացված է):
23. «Աստծո Հոգին», *Հիմներ և մանկական երգեր,* էջ 38
24. Տես 3 Նեփի 17.20

Ներկայացրեց Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Եկեղեցու պաշտոնյաների հաստատում

Իմ թանկագին եղբայրներ և քույրեր, Նախագահ Մոնսոնը խնդրել է ձեր հաստատմանը ներկայացնել Եկեղեցու բարձրագույն իշխանություններին, Տարածքային Յոթանասունականներին և Եկեղեցու օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահությանը:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Թոմաս Սփենսեր Մոնսոնին՝ որպես մարգարե, տեսանող և հայտնող և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, Հենրի Բենիոն Այրինգին՝ որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական և Դիտեր Ֆրիդրիխ Ուխդորֆին որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական:

Ովքեր կողմ են, խնդրում ենք արտահայտել ձեռքի բարձրացումով:

Ովքեր դեմ են, եթե կան, կարող են արտահայտել նույն նշանով:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Ռասսել Մ. Նելսոնին՝ որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ և հետևյալ եղբայրներին՝ որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներ՝ Ռասսել Մ. Նելսոն, Դալին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալարդ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն, Ռոնալդ Ա. Ռասբանդ, Գարի Ի. Սթիվենսոն և Դեյլ Ջ. Ռենլանդ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք արտահայտել ձեռքի բարձրացումով:

Ովքեր դեմ են, նույնպես կարող են արտահայտել:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Առաջին Նախագահության Խորհրդականներին և Տասներկու Առաքյալներին՝ որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք արտահայտել ձեռքի բարձրացումով:

Դեմ, եթե կան, կարող են արտահայտել:

Ցանկանում ենք երախտագիտությամբ նշել Երեց Բրյուս Դ. Փորթերի՝ մեր բարեկամի և գործընկերոջ ծառայությունը, որը մահացավ 2016թ. դեկտեմբերի 28-ին: Մենք սրտանց ցավակցում ենք քույր Սյուզան Փորթերին և նրանց երեխաներին ու թոռներին: Մենք երախտապարտ ենք այդ լավ մարդու հետ ծառայելու հնարավորության համար:

Առաջարկվում է, որ մենք ազատենք Թեյլոր Գ. Գոդոյին և Ջոն Ս. Փինգրի Կրտսերին որպես Տարածքային Յոթանասունականներ: Ովքեր ցանկանում են այս եղբայրներին արտահայտել իրենց երախտագիտությունը նրանց ծառայության համար, կարող են արտահայտել ձեռքի բարձրացումով:

Առաջարկվում է խորին երախտագիտությամբ ազատել Քույր Լինդա Ք. Բըրթնին, Քերոլ Մ. Սթեֆանսին և Լինդա Ս. Ռիվասին որպես Սփոփող Միության Գերագույն Նախագահություն: Նմանապես ազատվում են Սփոփող Միության Գերագույն Խորհրդի անդամները:

Բոլորը, ովքեր ցանկանում են միանալ մեզ, երախտագիտություն հայտնելու այս քույրերին իրենց ակնառու ծառայության և նվիրվածության համար, խնդրում ենք արտահայտել ձեռքի բարձրացումով:

Առաջարկվում է, որ մենք ազատենք Քույր Ժան Բ. Բինգամին որպես Երեխաների Միության Գերագույն Նախագահության Առաջին Խորհրդական և Քույր Բոննի Հ. Քորդոնին որպես Երեխաների Միության Գերագույն Նախագահության Երկրորդ Խորհրդական:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ, երախտագիտություն հայտնելու այս քույրերին, կարող են արտահայտել ձեռքի բարձրացումով:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք հետևյալ եղբայրներին որպես Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունականներ. Թեյլոր Գ. Գոդոյ, Ջոնի Լ. Քոչ, Ադիլսոն դե Պաուլա Պարելլա, Ջոն Ս. Փինգրին կրտսեր, Բրայն Ք. Թեյլոր և Թանիելա Բ. Վակոլո:

Ովքեր կողմ են, խնդրում ենք արտահայտվել:

Ովքեր դեմ են, կարող են արտահայտել նույն նշանով:

Առաջարկվում է, որ հաստատենք Ջին Բ. Բինգամին որպես Սփոփող Միության Գերագույն Նախագահ և Շարոն Լ. Էուբանին՝ որպես Առաջին Խորհրդական և Ռեյնա Ի. Աբուրտոյին որպես Երկրորդ Խորհրդական:

Առաջարկվում է, որ հաստատենք Բոնի Հ. Քորդոնին որպես Երեխաների Խմբի Գերագույն Նախագահության Առաջին Խորհրդական, իսկ Քրիստինա Բ. Ֆրանկոյին որպես Երեխաների Խմբի Գերագույն Նախագահության Երկրորդ Խորհրդական:

Ովքեր կողմ են, խնդրում ենք արտահայտվել:

Ովքեր դեմ են, նույնպես կարող են արտահայտվել:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք հետևյալ եղբայրներին որպես Տարածքային նոր Յոթանասունականներ. Լուիս Ռ. Արբիզու, Դեյվիդ Ա. Բենալչազար, Բերն Ս. Բրոդբենթ, Դեյվիդ Լ. Բաքներ, Լ. Թոդ Բաջ, Լուչանո Քասքարդի, Թինգ Ցունգ Չանգ, Պաբլո Հ. Չավես, Ռայմոնդ Ա. Քաթլեր, Ֆերնանդո Պ. Դել Կարպիո, Խոսե Լուիս դել Գուերսո, Ալեքսանդր Ա. Դրաչով, Ի. Ռայմոնդ Էգբո, Կառլոս Ռ. Ֆուսքո կրտսեր, Խորխե Ա. Գարսիա, Գարի Ֆ. Գեսել, Գիլյերմո Ի. Գուարդիա, Մարսել Գուեի, Խոսե Հերնանդես, Կարլ Դ. Հիրստ, Ռեն Ս. Ջոնսոն, Ջեյ Բ. Ջոնս, Էնթոնի Մ. Կակու, Փոլ Ն. Լեկիաս, Ջոն Ա. Մակկուն, Թոմաս Ս. Մերդեգիա, Արթուր Ջ. Միրանդա, Էլի Կ. Մոնգա, Խուան Ս. Պոզո, Էնթոնի Քուաիսի, Ջեյմս Ռ. Ռասբանդ, Կառլոս Գ. Ռովիլլո կրտսեր, Մարտին Ս. Ռիոս, Ջոնի Ֆ. Ռուիզ, Կ. Ռոյ Թունիքլիֆ և Մոիսես Վիլանուեվա:

Ովքեր կողմ են, կարող են արտահայտվել:

Ովքեր դեմ են, նույնպես կարող են արտահայտվել:

Առաջարկվում է հաստատել մյուս բոլոր Բարձրագույն Իշխանավորներին, Տարածքային Յոթանասունականներին և Օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահություններին իրենց ներկա կազմով:

Ովքեր կողմ են, խնդրում ենք արտահայտել:

Ովքեր դեմ, թող արտահայտվեն:

Քվեարկությունը անցկացվեց: Նրանք, ովքեր դեմ են առաջադրվածներից որևէ մեկին, պետք է կապ հաստատեն իրենց ցցերի նախագահների հետ:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, շնորհակալ ենք Եկեղեցու ղեկավարների հանդեպ ձեր շարունակական վստահության և աղոթքների համար:

Այժմ մենք հրավիրում ենք Բարձրագույն Իշխանավոր նոր Յոթանասունականներին Սփոփող Միության նոր Գերագույն Նախագահությանը զբաղեցնել իրենց տեղը բեմահարթակի վրա: Նախագահ Մոնսոնը միշտ ասում է. «Բեմահարթակին հասնելը երկար ճանապարհ է»: Շնորհակալ ենք քույրեր: Շնորհակալություն, եղբայրներ: Ի գիտություն անդամների՝ քույր Ֆրանկոն ներկայումս իր ամուսնու հետ ծառայում է միսիայում՝ Արգենտինայում: Ինչպես իմացաք, նա այսօր հաստատվեց և իր ծառայությունը պաշտոնապես կսկսի հուլիս ամսին միսիայից վերադառնալուց հետո: ■

Եկեղեցու աուդիտի բաժնի հաշվետվություն, 2016

Ներկայացնող՝ Քեվին Ռ. Յերգենսեն
Եկեղեցու աուդիտի բաժնի գլխավոր տնօրեն

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությանը

Հարգելի՛ եղբայրներ, ինչպես ասվում է Վարդապետություն և Ուխտերի 120-րդ բաժնում տրված հայտնության մեջ, Եկեղեցու ֆոնդերի ծախսերը թույլատրում է Տասանորդների տնօրինման խորհուրդը: Այս խորհուրդը կազմված է Առաջին Նախագահությունից, Տասներկու Առաքյալների Քվորումից և Նախագահող Եպիսկոպոսությունից: Եկեղեցու բաժինները ծախսում են ֆոնդերը՝ ըստ հաստատված բյուջեների և համաձայն Եկեղեցու քաղաքականությանը և ընթացակարգերին:

Եկեղեցու աուդիտի բաժինը, որի աշխատակազմը բաղկացած է հավաստագրված արհեստավարժ մասնագետներից և անկախ է Եկեղեցու մյուս բաժիններից, պատասխանատու է աուդիտների անցկացման համար, որպեսզի խելամիտ վերահսկողություն հաստատվի ստացվող նվիրատվությունների, կատարվող ծախսերի և Եկեղեցու ակտիվները պահպանելու ուղղությամբ:

Հիմնվելով կատարված աուդիտների վրա, Եկեղեցու աուդիտի բաժինն այն կարծիքին է, որ բոլոր նյութական առումներով 2016 թվականին ստացված նվիրատվությունները, կատարված ծախսերը և Եկեղեցու ակտիվները գրանցվել և տնօրինվել են համապատասխան Եկեղեցու հաստատված բյուջեի, քաղաքականությանը և ընթացակարգերին: Եկեղեցին հետևում է իր անդամներին ուսուցանվող քաղաքականությանը՝ ապրել բյուջեի սահմաններում, խուսափել պարտքից և խնայողություններ կատարել կարիքի ժամանակի համար:

Հարգանքներով ներկայացրեց՝
Եկեղեցու աուդիտի բաժնից
Քեվին Ռ. Ջերգենսենը
Գործադիր տնօրեն ■

Վիճակագրական հաշվետվություն, 2016

Ներկայացնող՝ Բրուք Փ. Հեյլս
Առաջին Նախագահության Քարտուղար

Առաջին Նախագահությունը հրապարակել է հետևյալ վիճակագրությունը Եկեղեցու կարգավիճակի վերաբերյալ 2016թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Եկեղեցու միավորներ

Ցցեր	3,266
Միսիաներ	421
Շրջաններ	556
Ծխեր և ճյուղեր	30,304

Եկեղեցու անդամություն

Անդամների ընդհանուր թիվը	15,882,417
Գրանցված երեխաների թիվը	109,246
Մկրտված նորադարձներ	240,131

Միսիոներներ

Լիաժամկետ միսիոներներ	70,946
Եկեղեցու ծառայության մեջ գտնվող միսիոներներ	33,695

Տաճարներ

2016 թվականին նվիրագործված տաճարներ՝ Պրովո Կենտրոնական, Սապպարո Ճապոնիա, Ֆիլադելֆիա Փենսիլվանիա, Ֆորտ Կոլլինզ Կոլորադո, Սթար Վելի Վայոմինգ և Հարթֆորդ Կանեկտիկուտ:	6
Վերանվիրագործված տաճարներ՝ Սուվա Ֆիջի և Ֆրեյբերգ Գերմանիա:	2
Գործող տաճարները տարեվերջին	155

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս
Տասներկու Առաքյալների Քվորում

Դառնալ մեր Տեր Հիսուս Քրիստոսի աշակերտը

Առանձնահատկությունների հանրագումարը, որը բխում է Քրիստոսի հանդեպ հավատից, անհրաժեշտ է, որ մենք ամուր կանգնենք այս վերջին օրերում։

Ի՞նչ է նշանակում լինել մեր Տեր Հիսուս Քրիստոսի աշակերտը։ Աշակերտը նա է, ով մկրտվել է և պատրաստ է իր վրա վերցնել Փրկիչի անունը և հետևել Նրան։ Աշակերտը ձգտում է նմանվել Նրան, պահելով Նրա պատվիրանները մահկանացու կյանքում այն աշակերտի նման, որը ձգտում է նմանվել իր վարպետին։

Շատ մարդիկ լսում են *աշակերտ* բառը և կարծում են, թե այն նշանակում է «հետևորդ»։ Բայց իսկական աշակերտությունը գոյավիճակ է։ Այն ենթադրում է ավելին, քան ուսումնասիրությունը և անհատական հատկանիշների ցուցակի կիրառումը։ Աշակերտներն այնպես են ապրում, որ Քրիստոսի հատկանիշները միահյուսված լինեն իրենց ինքնության հետ՝ ստեղծելով հոգևոր գոբելեն։

Լսեք, թե Պետրոս Առաքյալն ինչպես է հրավիրում դառնալ Փրկիչի աշակերտը.

«Եւ սոյն այս բանի համար ամեն ջանք անելով ձեր հաւատքովը ներկայացրէք առաքինութիւնը, եւ առաքինութիւնովը գիտութիւնը,

Եւ գիտութիւնովը ժուժկալութիւնը, եւ ժուժկալութիւնովը համբերութիւնը, եւ համբերութիւնովն աստուածպաշտութիւնը,

Եւ աստուածպաշտութինովն եղբայրսիրութիւնը, եւ եղբայրսիրութիւնովը սէրը»։[1]

Ինչպես տեսնում եք, անձնական աշակերտության հոգևոր գոբելենը հյուսելու համար պահանջվում է ավելին, քան միայն թելն է։ Փրկիչի ժամանակներում կային շատ մարդիկ, ովքեր պնդում էին, որ իրենք արդարակյաց են իրենց կյանքի այս կամ այն ոլորտներում։ Նրանք դրսևորում էին, այսպես կոչված, ընտրովի հնազանդություն։ Օրինակ՝ նրանք պահում էին Հանգստության օրը աշխատանքից ձեռնպահ մնալու պատվիրանը, սակայն քննադատում էին Փրկիչին այդ սուրբ օրը բժշկելու համար։ [2] Նրանք ողորմություն էին տալիս աղքատներին, բայց առաջարկում էին միայն իրենց ավելցուկը, այն, ինչ իրենց պետք չէր։[3] Նրանք ծոմ էին պահում, բայց տխուր դեմքով։[4] Նրանք աղոթում էին, բայց այնպես, որ մարդիկ տեսնեին։[5] Հիսուսն ասել է. «Այս ժողովուրդը իր բերանովն է մօտենում եւ իր շրթունքներովն են ինձ պատուում, իսկ նորանց սիրտը հեռու է ինձանից»։[6] Այդպիսի տղամարդիկ և կանայք կարող են կենտրոնանալ որևէ հատուկ հատկանիշի կամ գործողության տիրապետման վրա, բայց պարտադիր չէ, որ իրենց սրտերում դառնան այպիսին, ինչպիսին Նա է։

Նրանց մասին Հիսուսն ասել է.

«Շատերը կ՚ասեն ինձ այն օրը, Տէ՛ր, Տէ՛ր, չէ՞ որ քո անունովը մարգարէացանք, եւ քո անունովը դեւեր հանեցինք, եւ քո անունովը շատ զօրութիւններ գործեցինք։

Եւ ես այն ժամանակ պարզ կ'ասեմ նորանց, թէ Երբէք ձեզ չեմ ճանաչել. ինձանից դէն գնացէք, ով անօրէնութիւն գործողներ»:[7]

Փրկիչի հատկանիշները, ինչպես մենք ենք ընկալում դրանք, ձեռագիր չէ, որին պիտի հետևել, կամ հանձնարարությունների ցուցակ, որոնք պիտի կատարել: Դրանք կարևոր բնութագրեր են, ավելացված մեկը մյուսին, որոնք մեր մեջ զարգանում են փոխգործակցման եղանակներով: Այլ խոսքերով, մենք չենք կարող ձեռք բերել մեկ Քրիստոսանման հատկանիշ, առանց ձեռք բերելու ու ենթարկվելու այլ հատկանիշների ազդեցությանը: Երբ որևէ հատկանիշ ամրանում է, մնացած հատկանիշները ևս ամրանում են:

Բ ՊետրոսիցՎարդապետություն և Ուխտերի 4 բաժնից մենք իմանում ենք, որ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատը հիմքն է: Մենք մեր հավատը չափում ենք նրանով, թե ինչ է այն ուղղորդում մեզ անել մեր հնազանդության միջոցով: «Եթե դուք հավատք ունենաք առ ինձ, -խոստացել է Տերը,- ապա զորություն կունենաք՝ անելու ինչ որ նպատակահարմար է ինձ»:[8] Հավատը խթանիչ է: Առանց գործերի, առանց առաքինի ապրելակերպի մեր հավատը զորություն չի ունենա գործի դնելու աշակերտությունը: Անշուշտ, հավատն առանց գործերի մեռած է:[9]

Հետևաբար, Պետրոսը բացատրում է. «Ձեր հաւատքովը ներկայացրէք առաքինութիւնը»: Այս առաքինությունը ավելին է, քան սեռական մաքրությունը: Այն մաքրությունն ու սրբությունն է մտքում և մարմնում: Առաքինությունը նաև ուժ է: Երբ մենք հավատարիմ ապրում ենք ավետարանով, մենք ուժ ենք գտնում առաքինի լինել մեր մտքերում, զգացմունքներում և գործողություններում: Մեր մտքերը ավելի ընկալունակ են դառնում Սուրբ Հոգու հուշումներին և Քրիստոսի Լույսին:[10] Մենք մարմնավորում ենք Քրիստոսին ոչ միայն նրանով, թե ինչ ենք ասում և անում, այլև նրանով, թե ով ենք մենք:

Պետրոսը շարունակում է. «Ձեր առաքինութիւնովը ներկայացրէք գիտութիւնը»: Երբ մենք ապրում ենք առաքինի կյանքով, մենք հատուկ ձևով ենք ճանաչում Երկնային Հորն ու Նրա Որդուն: «Եթէ մէկը կամենում է նորա կամքն անել, նա կ'իմանայ այս վարդապետութեան համար»:[11] Այս գիտելիքը անձնական վկայություն է, որը գալիս է անձնական փորձառությունից: Սա այն գիտելիքն է, որը փոխակերպում է մեզ, որ մեր «լույսը հարլ[ի] [Նրա] լույսին» և մեր «առաքինությունը սիրլ[ի] [Նրա] առաքինությանը»:[12] Մեր առաքինի ապրելակերպով մենք կատարում ենք մեր ճամփորդությունը «Ես հավատում եմ»-ից մինչև փառավոր վերջնակետը՝ «Ես գիտեմ»:

Պետրոսը հորդորում է մեզ ավելացնել «գիտութիւնովը ժուժկալութիւնը, եւ ժուժկալութիւնովը համբերութիւնը»: Որպես ժուժկալ աշակերտներ, մենք ապրում ենք ավետարանով կայուն և հավասարակշռված կյանքով: Մենք չենք «վազլում] ավելի արագ, քան ուժ ունլենք]»:[13] Ամեն օր մենք առաջ ենք շարժվում՝ մահկանացու կյանքի մարտահրավերներով խանդավառված:

Այսպիսի չափավորությամբ մենք զարգացնում ենք համբերություն և ապավինում ենք Աստծուն: Մենք կարող ենք ապավինել մեր կյանքի համար ունեցած Նրա ծրագրին, չնայած մենք չենք կարող տեսնել այն մեր սեփական աչքերով:[14] Հետևաբար, մենք կարող ենք «հանգիստ [լինել] և իմա[նալ], որ [Նա է] Աստված»:[15] Երբ բախվում ենք անհաջողությունների փոթորիկներին, մենք հարցնում ենք. «Ի՞նչ կկամենայիր, որ ես սովորեի այս փորձառությունից»: Նրա ծրագիրն ու նպատակները մեր սրտերում, մենք առաջ ենք շարժվում ոչ միայն տանելով բոլոր բաները, այլև տանում ենք դրանք համբերությամբ և լավ:[16]

Պետրոսն ուսուցանում է, որ այս համբերությունը առաջնորդում է մեզ դեպի աստվածայնություն: Ինչպես Հայրն է համբերատար Իր զավակների հետ, մենք, նույնպես, համբերատար ենք դառնում միմյանց և մեր հանդեպ: Մենք հիանում ենք ուրիշների ազատ կամքով և այն հնարավորությամբ, որ այն նրանց տալիս է աճելու «տող առ տող»,[17] «ավելի ու ավելի է

պայծառանում, մինչև որ կատարյալ օր է դառնում»:[18]

Մեր բնույթը փոխվում է ժուժկալությունից մինչև համբերություն և համբերությունից մինչև աստվածայնություն: Մենք ձեռք ենք բերում եղբայրական բարություն, որը բոլոր ճշմարիտ աշակերտների փորձադրոշմն է: Բարի Սամարացու նման մենք հատում ենք ճանապարհը, որպեսզի ծառայենք կարիքի մեջ գտնվողներին, նույնիսկ, եթե նրանք մեր ընկերական շրջանակից չեն:[19] Մենք օրհնում ենք մեզ անիծողներին: Մենք բարություն ենք անում մարդկանց, ովքեր դաժանորեն օգտագործում են մեզ:[20] Կա՞ որևէ հատկություն, որն ավելի բարեպաշտ կամ Քրիստոսանման է:

Ես վկայում եմ, որ մեր Փրկիչի աշակերտը դառնալու համար գործած ջանքերը իսկապես ավելանում են, մինչև մենք «բռնկվում ենք» այն սիրով, որը նման է Նրա սիրուն:[21] Այս սերը Քրիստոսի հետևորդի բնորոշ առանձնահատկությունն է.

«Եթէ մարդկանց եւ հրեշտակների լեզուներով խօսիմ, բայց սէր չ՚ունիմ, ես եղայ ձայն հանող պղինձ, կամ հնչեցող ծնծղայ:

Եւ եթէ մարգարէութիւն ունենամ, եւ գիտենամ ամեն խորհուրդները եւ ամեն գիտութիւնը. Եւ եթէ ամեն հաւատքն ունենամ, մինչեւ սարերն էլ տեղափոխելու, բայց սէր չ՚ունիմ, ոչինչ եմ»:[22]

Հավատքը, հույսը և գթությունն են, որ մեզ պիտանի են դարձնում Աստծո գործի համար:[23] «Ապա մնում է . . . այս երեքը, եւ սորանցից մէծը սէրն է»:[24]

Եղբայրներ և քույրեր, հիմա, ավելի քան երբևէ, մենք չենք կարող լինել «կես դրույքով հետևորդ»: Մենք չենք կարող պարզապես լինել վարդապետության այս կամ այն կետի հետևորդը: Առանձնահատկությունների հանրագումարը, որը բխում է Քրիստոսի հանդեպ հավատից, ներառյալ նրանք, որոնց մասին խոսեցինք այսօր, անհրաժեշտ է, որ մենք ամուր կանգնենք այս վերջին օրերում:

Երբ մենք ջերմեռանդորեն ջանում ենք լինել Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդը, այս առանձնահատկությունները միահյուսվում են, ավելացվում և փոխգործակցելով զորացնում են մեզ: Չպիտի լինի ոչ մի տարբերություն մեր թշնամու և մեր ընկերների հանդեպ ցուցաբերած բարության միջև: Մենք նույնքան ազնիվ կլինենք, երբ ոչ-ոք չի տեսնում մեզ, որքան, երբ ուրիշները հետևում են մեզ: Մենք Աստծուն նույնքան նվիրված կլինենք հանրության մեջ, որքան ծածուկ տեղերում:

Ես վկայում եմ, որ բոլորը կարող են լինել Փրկիչի աշակերտներ: Աշակերտությունը չի սահմանափակվում տարիքով, սեռով, ազգային պատկանելությամբ կամ կոչումով: Մեր անհատական աշակերտության միջոցով, որպես Վերջին Օրերի Սրբեր, մենք կառուցում ենք մի հավաքական ուժ՝ օրհնելու մեր եղբայրներին և քույրերին ամբողջ աշխարհում: Հիմա ժամն է նորից հանձնառություն ստանձնել՝ լինել Նրա աշակերտները ողջ ջանասիրությամբ:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մենք բոլորս կանչված ենք լինելու մեր Փրկիչի հետևորդները: Թող այս համաժողովը լինի ձեր հնարավորությունը «սկսել[լ], ինչպես հին ժամանակներում, և [գալ] Տիրոջ մոտ ձեր ամբողջ սրտով»:[25] Սա Նրա Եկեղեցին է: Ես բերում եմ իմ հատուկ վկայությունը, որ Նա ապրում է: Թող Նա օրհնի մեզ նվիրյալ և անվեհեր աշակերտներ դառնալու մեր հավերժական որոնումներում: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Բ Պետրոս 1.5–7
2. Տես Ղուկաս 13.14
3. Տես Ղուկաս 21.4
4. Տես Մատթեոս 6.16
5. Տես Մատթեոս 6.5, տես նաև Ալմա 38.13
6. Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.19, տես նաև Եսայիա 29.13, Ղուկաս 6.46
7. Մատթեոս 7.22–23
8. Մորոնի 7.33
9. Տես Հակոբոս 2.20
10. Տես Ա Կորնթացիս 2.16
11. Հովհաննես 7.17
12. Վարդապետություն և Ուխտեր 88.40
13. Մոսիա 4.27
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 58.3
15. Վարդապետություն և Ուխտեր 101.16
16. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.8
17. Վարդապետություն և Ուխտեր 98.12
18. Վարդապետություն և Ուխտեր 50.24
19. Տես Ղուկաս 10.33
20. Տես Մատթեոս 5.44
21. Մորոնի 7.47
22. Ա Կորնթացիս 13.1–2
23. Տես Վարդապետություն և Ուխտեր 4.5
24. Ա Կորնթացիս 13.13
25. Մորմոն 9.27

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու Առաքյալների Քվորում

Երգված ու չերգված երգեր

Խնդրում եմ, որ բոլորդ մշտապես և հավատարմությամբ մնաք երգչախմբում։

«Շողում է պայծառ հոգիս այսօր», - գրել է Էլիզա Հյուիթը։ «Երկնքից էլ փառավոր։ Շողում է վառ ու անմար, քանզի Հիսուսն է լույսը իմ»։[1] Տողերը հրաշալի են, այդ քրիստոնեական սքանչելի, հնագույն օրհներգը գործնականում անհնար է երգել առանց ժպիտի։ Բայց այսօր ցանկանում եմ այլ կերպ մեկնաբանել այդ երգի տողերը, որոնք մեզ կօգնեն այն օրերին, երբ կդժվարանանք երգել *կամ* ժպտալ, երբ կարծես «խաղաղ երջանիկ պահերը» *չեն* գա։ Եթե, երբևէ, չեք կարողացել ձայնակցել այն ուրախ մեղեդիներին, որոնք երգել են ուրիշները, ապա խնդրում եմ, որ դուք հետևեք այս օրհներգի խոսքերին, որոնք հավաստիացնում են. «Կլսի Հիսուսը [իմ] հոգու չլսվող մեղեդին»։[2]

Որպես Աստծո զավակներ, ապրելով անկում ապրող աշխարհում, մենք բախվում ենք բազում իրողությունների, որոնց թվում են այն դժվարին օրերը, երբ մեր հավատքն ու տոկունությունը փորձվում է։ Այդ մարտահրավերները կարող են գալ մեր անկատարությունից, ուրիշների անկատարությունից կամ, պարզապես, կյանքի անկատարությունից։ Բայց ինչպիսին էլ որ լինեն այդ պատճառները, նրանք կարող են զրկել մեզ երգելու ցանկությունից և մթագնել «հոգու զարունը»,[3] որի մասին Էլիզա Հյուիթը նկարագրում է իր երգի տողերում։

Ուրեմն, մենք ի՞նչ ենք անում այդ պահերին։ Առաջինը, մենք ընդունում ենք Պողոս Առաքյալի խորհուրդը և «այն որ չենք տեսնում, նորան յոյս ունինք, [և] համբերութեամբ սպասում ենք»։[4] Այդ պահերին, երբ մեղեդու ուրախությունն այլևս չենք զգում, մենք կարող ենք լուռ մնալ միառժամանակ և պարզապես լսել ուրիշներին՝ ուժ ստանալով մեր շուրջը հնչող երաժշտության վեհությունից։ Մեզանից շատերը, ովքեր «երաժշտությունից կաղում են», դառնում են ավելի ինքնավստահ ու երգելու կարողությունը մեծապես աճում է, երբ կանգնում են այն մարդու կողքին, ով ավելի զորեղ ու որոշակի ձայն ունի։ Անշուշտ, երբ գործ ենք ունենում հոգևոր օրհներգի հետ, մենք պետք է հնարավորինս մոտ կանգնենք աշխարհի Փրկիչին ու Քավիչին, ով միանգամայն կատարյալ վեհություն ունի։ Ապա քաջալերվում ենք մեր լռությունը լսելու Նրա կարողությունից և հուսադրվում մեր համար Նրա կատարած ներդաշնակ և առաքելական բարեխոսությունից։ Իսկապես, «երբ Տերն իմ կողքին է», այդ պահերին է «թռչում սիրտս զվարթ երգով՝ աղավնու թևերին»։[5]

Այն օրերին, երբ մեր մտքերն ու խոսքերը ներդաշնակության մեջ չեն գտնվում ուրիշների մտքերի ու խոսքերի հետ, ես կխնդրեի բոլորիս, հատկապես Եկեղեցու երիտասարդներին, որ չմոռանան, որ աստվածային ծրագրի համաձայն, Աստծո երգչախմբի ոչ բոլոր ձայներն են միանման։ Տարբեր ձայների՝ սոպրանո և ալտ, բարիտոն և բաս, համադրությամբ է հարուստ երաժշտությունը ձևավորվում։ ՎերջինՕրերի Սրբերի երկու նշանավոր կանանց ուրախ նամակագրությունից մեջբերման մի տողում ասվում է. «Աստծո բոլոր արարածները տեղ

ունեն երգչախմբում»:[6] Երբ մենք թերագնահատում ենք մեր յուրահատկությունը և փորձում նմանվել շինծու կարծրատիպերին, որոնք ծնունդ են սպառողական անկուշտ մշակույթի և կատարելատիպ են դառնում սոցիալական լրատվամիջոցների և դրանից դուրս տրամադրված հնարավոր ընկալման արդյունքում, այդ ժամանակ մենք կորցնում ենք մարդկանց միջև գոյություն ունեցող առանձնահատկություններն ու տարբերությունները, որոնք Աստված նկատի է ունեցել բազմազան աշխարհը ստեղծելիս:

Այժմ դա չի նշանակում, որ այս աստվածային երգչախմբում ամեն ոք կարող է զոռալ իր անձնական օրատորիան: Բազմազանությունը չի ենթադրում աններդաշնակություն և պահանջում է կարգապահություն, Երե՛ց Հեյլս, մեր այսօրվա նպատակի համար, ես կասեի, պահանջվում է աշակերտի նվիրվածություն, իսկ երբ աշխարհի ստեղծումից առաջ մենք ընդունեցինք աստվածայնորեն տրված երգի խոսքերը և ներդաշնակ երգեցողությունը, մեր Երկնային Հայրը ուրախությամբ թույլ տվեց երգել մեր իսկ ձայնով, այլ ոչ ուրիշի: Հավատացեք ինքներդ ձեզ և հավատացեք Նրան: Չնվազեցնեք ձեր արժեքը և չթերագնահատեք ձեր ներդրումը: Ամենից առավել՝ չհրաժարվեք երգչախմբում ունեցած ձեր դերից: Ինչո՞ւ: Որովհետև դուք եզակի ու անփոխարինելի եք: Նույնիսկ մեկ ձայնի կորուստը թուլացնում է մեկ այլ երգչի ձայնը մեր այս հրաշալի մահկանացու երգչախմբում, այդ թվում, այն մարդկանց կորուստը, ովքեր զգում են հասարակության կամ Եկեղեցու կողմից լայնորեն չընդունված:

Չնայած, հորդորում եմ *ձեզ* հավատք ցուցաբերել դժվար ըմբռնելի երգերի հանդեպ, նաև պատրաստակամորեն ընդունում եմ, որ տարբեր պատճառներով *ես* դժվարացել եմ այլ երգերի հարցում, որոնք պետք է երգեի, սակայն դեռ չեմ երգել:

Երբ աշխարհում տեսնում եմ երերացող տնտեսական անհավասարությունը, մեղավոր եմ զգում Տիկին Հյուիթի հետ միասին երգելու «օրհնությունների համար բոլոր, [որոնք Աստված տալիս է], հույսերի երկնքի» մասին:[7] Այդ կրկներգն ամբողջովին ու անկեղծորեն չենք կարող երգել, մինչև որ պատվով չհոգանք աղքատների մասին: Տնտեսական դժվարությունները անեծք է, որը շարունակում է անիծել տարեց-տարի և սերնդե-սերունդ: Այն վնասում է մարմինները, խեղում է հոգիները, վնասում է ընտանիքներին և կործանում երազները: Եթե մենք կարողանայինք անել ավելին, որպեսզի մեղմեինք աղքատությունն այնպես, ինչպես Հիսուսն է բազմիցս պատվիրել, գուցե աշխարհում քիչ հաջողակը կարողանար մի քանի նոտա երգել «Շողում է պայծառ հոգիս այսօր» երգից և միգուցե՝ առաջին անգամ իր կյանքում:

Նաև դժվարանում եմ երգել զվարթ ու կենսուրախ երգեր, երբ մեզ շրջապատող մարդկանցից շատերը տառապում են մտավորև հոգեական հիվանդություններով կամ այլ առողջական սահմանափակումներով: Դժբախտաբար, հիվանդության այդ բեռը երբեմն մնում է, անկախ բուժքույրերի և ընտանիքի անդամների բազմաթիվ խիզախ ջանքերից: Աղոթում եմ, որ մենք թույլ չտանք Աստծո այս զավակներին տառապել լռության մեջ և ձեռք բերենք Նրա ունակությունը՝ լսելու այն երգերը, որոնք այդ մարդիկ չեն կարող այժմ երգել:

Եվ հույս ունեմ, որ մի օր բոլոր ազգերից կազմված մեծ համաշխարհային երգչախումբը ներդաշնակ կլինի և կհայտարարի, որ զենքերը, վիրավորանքները և հեգնանքը *չեն* հանդիսանում մարդկային հակասությունները լուծելու միջոցներ: Երկնքի հռչակագրերն աղաղակում են, որ հասարակության բարդ խնդիրները գոհացուցիչ կերպով երբևէ լուծելու միակ միջոցը Աստծուն սիրելը և Նրա պատվիրանները պահելն է, այդպիսով՝ բացելով միակ երկարատև ու փրկարար ուղու դուռը, որը սերն է միմյանց հանդեպ: Եթեր մարգարեն ուսուցանել է, որ մենք պիտի «հուսանք ավելի լավ աշխարհի համար»: Մորոնին, ով տեսել էր բազում պատերազմներ ու բռնություններ, հազարավոր տարիներ անց այդ միտքը կարդալով, հայտարարեց, որ այդ աշխարհի համար «ավելի գերազանց ուղի» միշտ կլինի Հիսուս Քրիստոսի ավետարանը:[8]

Որքա՜ն երախտապարտ ենք, որ այս դժվարությունների ժամանակ, երբեմն, հանդիպում ենք մեկ այլ տեսակ երգի, որը դժվարանում ենք երգել, բայց այս անգամ արդեն մեկ այլ պատճառով:Դա այն ժամանակ է, երբ զգացմունքներն այնքան խորն ու անձնական են, նույնիսկ սուրբ, որ դրանք կամ չեն կարող կամ չի կարելի արտահայտել, ինչպես օրինակ՝ Կորդելիայի սերը իր հոր հանդեպ, ում նա ասել է. «Իմ սերն . . . ավելին է, քան իմ լեզուն կարող է

արտահայտել. . . . Չեմ կարող սրտիս խոսքերը բերանով արտասանել»:[9] Այդ սուրբ զգացմունքները պարզապես աննկարագրելի են, հոգևոր առումով զորեղ, ինչպես Նեփիացիների զավակներին արտասանած Հիսուսի աղոթքը: Այդ իրադարձությանը ներկա եղած մարդիկ գրել են.

«Աչքը երբևէ չի տեսել, ոչ էլ ականջը լսել, նախկինում, այնպիսի մեծ և սքանչելի բաներ, ինչպիսիք մենք տեսանք ու լսեցինք Հիսուսին Հոր հետ խոսելիս

«. . . *ոչ մի լեզու չի կարող խոսել, ոչ էլ կարող է գրվել որևէ մարդու կողմից, ոչ էլ կարող է մարդկանց սրտերը երևակայել այնպիսի մեծ և սքանչելի բաներ, ինչպիսիք մենք թե՛ տեսանք, թե՛ լսեցինք Հիսուսին խոսելիս*»:[10]

Այդպիսի սրբազան պահերը մնում են աննկարագրելի, որովհետև խոսքը, նույնիսկ, եթե դա հնարավոր լիներ արտահայտել, կթվար սրբապղծություն:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մենք ապրում ենք մահկանացու աշխարհում, որտեղ կան բազմաթիվ երգեր, որոնք դեռ չենք երգել կամ չենք կարող երգել: Բայց ես խնդրում եմ բոլորիդ մշտապես ու հավատարմությամբ մնալ երգչախմբում, որտեղ մենք կարող ենք մշտապես վայելել այդ ամենաթանկ օրհներգը՝ «քավիչ սիրո երգը»:[11] Բարեբախտաբար, այդ բացառիկ համարի տեղերն անսահմանափակ են: Տեղերն ազատ են նրանց համար, ովքեր խոսում են տարբեր լեզուներով, ունեն տարբեր մշակույթներ և ապրում են տարբեր վայրերում: Տեղերն ազատ են միայնակ, ամուսնացած, մեծ ընտանիքների ու երեխաների համար: Տեղերն ազատ են նրանց համար, ովքեր մի ժամանակ հարցեր են ունեցել իրենց հավատքի վերաբերյալ և նրանց համար, ովքեր դեռ ունեն այդ հարցերը: Տեղերն ազատ են տարբեր սեռական հակվածություն ունեցող անձանց համար: Ընդհանուր առմամբ, տեղերն ազատ են բոլոր նրանց համար, ովքեր սիրում են Աստծուն և պատվում Նրա պատվիրանները, որպես անխախտ չափորոշիչ իրենց անձնական

վարքի, քանզի, եթե Աստծո սերը մեր ընդհանուր երգի մեղեդին է, ապա անշուշտ, Նրան հնազանդվելու մեր ընդհանուր ցանկությունները պետք է անխախտ ներդաշնակության մեջ լինեն այդ երգի հետ: Սիրո ու հավատքի, ապաշխարության ու ողորմածության, ազնվության ու ներողամտության աստվածային պատվիրանները պահող մարդկանց համար տեղերն ազատ են այս երգչախմբում:[12] «Եկե՛ք, ինչպիսին որ կաք»,-ասում է սիրող Հայրը յուրաքանչյուրիս, բայց Նա ավելացնում է. «Մի՛ նախատեսիր մնալ, ինչպիսին կաս»: Մենք ժպտում և հիշում ենք, որ Աստված վճռել է մեզանից դարձնել ավելին, քան մեր կարծիքով կարող էինք ինքնուրույն դառնալ:

Թող որ այս մեծ օրատորիայում, որը Նրա ծրագիրն է մեր վեհացման համար, մենք խոնարհաբար հետևենք Նրա դիրիժորական փայտիկին և շարունակենք աշխատել այն երգերի վրա, որոնք մենք չենք կարող երգել, մինչև կարողանանք երգել «տաղերգ [մեր] թագավորին»:[13] Ապա, ինչպես մեր շատ սիրված երգում է ասվում.

Երկնային զորքի հետ պիտ բարձր երգենք մենք՝
Օվսաննա, օվսաննա Աստծուն ու Գառին: . . .
Երբ հրեղեն կառքով Հիսուսն է գալու:[14]

Ես վկայում եմ, որ ժամը կգա, երբ Աստված՝ մեր Երկնային Հայրը, նորից աշխարհ կուղարկի Իր Միածին Որդուն, այս անգամ արդեն հավերժ կառավարելու և թագավորելու՝ որպես Թագավորների Թագավոր: Ես վկայում եմ, որ սա է Նրա վերականգնված եկեղեցին և այն փոխադրամիջոցը, որի շնորհիվ Նրա ավետարանի ուսմունքներն ու փրկագնող արարողությունները հասնում են ողջ մարդկությանը: Երբ նրա ուղերձը «թափանցի ամեն մայրցամաք և այցելի ամեն երկիր»,[15] Հիսուսն իսկապես «[ցույց կտա Իր] ժպիտը»:[16] Եվ այդ օրն իսկապես հոգին պայծառ կշողա: Այդ խոստացված պահի համար ես կարոտով աղոթում եմ, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «There Is Sunshine in My Soul Today», *Hymns,* հմր. 227 անգլերեն հիմնարաններում:
2. *Hymns,* հմր. 227
3. *Hymns,* հմր. 227
4. Հռովմայեցիս 8.25
5. *Hymns,* հմր. 227
6. Բիլ Սթեյնս՝ «All God's Critters Got a Place in the Choir», Լաուրել Թեթչեր Ուրլիխի և Էմմա Լու Թայնի *All God's Critters Got a Place in the Choir* (1995), 4:
7. *Hymns,* հմր. 227
8. Տես Եթեր 12.4, 11
9. Վիլիամ Շեքսպիր, *«Լիր արքա»,* գործողություն 1, տեսարան 1, 79–80, 93–94 տողեր:
10. 3 Նեփի 17.16–17, շեշտադրումն ավելացված է
11. Ալմա 5.26, տես նաև Ալմա 26.13
12. Տես 2 Նեփի 26.33
13. *Hymns,* հմր. 227
14. «Աստծո Հոգին», *Հիմներ և մանկական երգեր,* հմր. 28
15. *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 142
16. *Hymns,* հմր. 227

Երեց Գարի Բ. Սաբին
Յոթանասունի Քվորում

Ամուր եղեք ներքուստ և լիովին հանձն առեք

Մնհրաժեշտության դեպքում եկեք երթուղու վերահաշվարկ կատարենք և առաջ նայենք մեծ հույսով ու հավատով: Թող որ «ամուր մնանք ներքուստ»՝ լինելով անվեհեր ու «լիովին հանձն առած»:

Մի քանի տարի առաջ մեր երիտասարդ թոռնուհին վազելով եկավ ինձ մոտ ու ոգևորված հայտարարեց. «Պապի՜կ, պապի՜կ, այսօր ֆուտբոլի խաղի ժամանակ երեք գոլերն էլ ես խփեցի»:

Ես խանդավառությամբ պատասխանեցի. «Հրաշալի՜ է, Սառա»:

Այնուհետև նրա մայրը փայլող աչքերով նայեց ինձ ու ասաց. «Հաշիվը երկու մեկ էր»:

Ես չհամարձակվեցի հարցնել, թե ով էր հաղթել:

Համաժողովը խորհելու, հայտնության ու երբեմն նաև *վերաուղղորդման* ժամանակ է:

Մեքենաների վարձույթի մի կազմակերպություն կա գլոբալ տեղորոշման համակարգով, որի անունն է «Երբեք չես մոլորվի»: Ձեր ցանկացած ուղղությունը մոտքագրելուց հետո, եթե սխալ կողմ շրջվեք, առաջնորդող ձայնը չի ասում՝ «Դու հիմար ես»: Այլ շատ հաճելի ձայնով ասում է՝ «Երթուղու վերահաշվարկ՝ հնարավորության դեպքում շրջադարձ կատարեք»:

Եզեկիելի գրքում մենք կարդում ենք այս հրաշալի խոստումի մասին.

«Եվ ամբարիշտը, երբոր դարձի գայ իր բոլոր մեղքերիցը որ արել էր, և պահէ իմ բոլոր օրէնքները և իրաւունք ու արդարութիվն գործէ, պէտք է անշուշտ ապրէ, նա պիտի չմեռնէ:

Նորա արած բոլոր յանցանքները պիտի չյիշվին նորան. իր արած արդարութիվնովը նա պիտի ապրէ»:[1]

Ինչպիսի՜ հրաշալի խոստում, սակայն այն մեզանից պահանջում է պահել երկու *«բոլոր օրենքները»*՝ երրորդի խոստումը ստանալու համար: Եթե դարձի գանք բոլոր մեղքերից, պահենք բոլոր օրենքները, ապա բոլոր մեղքերը կներվեն: Սա պահանջում է «լիարժեք հանձնառություն»:

Մենք չպիտի լինենք այն մարդու նման, ում մասին հայտնում է *«Wall Street» ամսագիրը,* ով Ներքին եկամուտների ծառայությունների գրասենյակ է ուղարկել կանխիկ գումարով լցված մի ծրար և դրան կից մի անանուն նամակ, որն ասում է հետևյալը. «Հարգելի Ներքին եկամուտների ծառայություն, կից ստացեք գումարը, որը ես պարտք եմ նախորդ հարկերից: Ի միջի այլոց, եթե սրանից հետո խիղճս դեռ շարունակի տանջել ինձ, մնացածը նույնպես կուղարկեմ»:[2]

Այդպես չենք կարող վարվել: Մենք մնացորդ չենք պահում, որպեսզի տեսնենք, թե որքանն է այն նվազագույնը, որի համար չենք դատապարտվի: Տերը պահանջում է սիրտն ու պատրաստակամ միտքը:[3] Մեր ողջ սիրտը: Երբ մկրտվում ենք, մենք ամբողջովին ընկղմվում ենք ջրի մեջ՝ ի նշան ոչ թե կիսով չափ, այլ Փրկիչին լիարժեք հետևելու մեր տված խոստումի: Երբ մենք ամբողջովին պարտավորվում ենք և «լիովին հանձն ենք առնում», երկինքները ցնծում են մեր կատարած բարի գործի համար:[4] Երբ անտարբեր ենք կամ ոչ լիարժեք պարտավորված, կորցնում ենք երկնքի ամենաընտիր օրհնություններից մի քանիսը:[5]

Շատ տարիներ առաջ սկաուտներին ճամբար ուղեկցեցի դեպի անապատ: Տղաները քնեցին իրենց վառած մեծ խարույկի շուրջ, իսկ ես, ինչպես ամեն մի լավ սկաուտական ղեկավար, քնեցի մեքենայիս հետնամասում: Առավոտյան, երբ նստած նայում էի ճամբարի ուղղությամբ, տեսա մի սկաուտի, ում ես կանվանեմ Փոլ, ով հոգնած տեսք ուներ: Հարցրի, թե ինչպես է քնել, և նա պատասխանեց. «Ոչ այնքան լավ»:

Երբ հարցրի, թե ինչու, նա պատասխանեց. «Մրսում էի, խարույկը հանգել էր»:

Ես ասացի . «Իհարկե, այն պետք է հանգեր: Քո քնապարկը բավականաչափ տաք չէ՞ր»:

Նա չպատասխանեց:

Այնուհետև սկաուտներից մեկը բարձր ձայնով բացատրեց. «Նա չի օգտագործել իր քնապարկը»:

Ես զարմացած հարցրի. «Ինչո՞ւ ոչ, Փոլ»:

Նա լուռ էր, այնուհետև վերջապես շփոթված պատասխանեց. «Ես մտածեցի, որ եթե չբացեմ իմ քնապարկը, ստիպված չեմ լինի կրկին այն հավաքել»:

Սա ճշմարիտ պատմություն է. նա մրսեց ժամեր շարունակ, որպեսզի հինգ րոպե գործ չաներ: Գուցե մտածենք. ինչպիսի՜ հիմարություն: Ո՞վ այդպիսի բան կաներ:

Մենք բոլորս էլ անում ենք ավելի վտանգավոր բաներ: Մենք իրականում հրաժարվում ենք բացել մեր հոգևոր քնապարկը, երբ ժամանակ չենք հատկացնում անկեղծորեն աղոթելուն, ուսումնասիրելուն և ամեն օր ջանասիրաբար ավետարանով ապրելուն. խարույկը ոչ միայն կհանգչի, այլև մենք կլինենք անպաշտպան ու հոգեպես կմրսենք:

Երբ լուրջ չենք վերաբերվում մեր ուխտերին, հետևանքների առջև ենք կանգնում: Տերը մեզ խորհուրդ է տվել «[զգուշանալ մեր] համար, որ ջանասիրաբար ուշք [դարձնենք] հավերժական կյանքի խոսքերին»:[6] Այնուհետև Նա հայտնել է. «իմ արյունը չի մաքրի նրանց, եթե նրանք ինձ չլսեն»:[7]

Իրականում շատ ավելի հեշտ է «լիովին հանձն առնել», քան մասնավորապես: Երբ մենք մասնավորապես ենք հանձն առնում կամ բոլորովին չենք առնում, ինչպես ասվում է «*Star Wars*» ֆիլմում, «անհանգստանալու տեղ ունենք»: Մենք ներդաշնակության մեջ չենք Աստծո կամքի հետ, և հետևաբար, ներդաշնակության մեջ չենք երջանկության հետ:[8] Եսայիան ասել է.

«Բայց ամբարիշտները ալէծուփ ծովի նման են, որ չէ կարող հանդարտել, և նորա ջուրերը տիղմ ու ցեխ են դուրս տալիս:

Խաղաղութիւն չկայ, ասում է իմ Աստուածը, ամբարիշտների համար»:[9]

Բարեբախտաբար, որտեղ էլ որ լինենք, որտեղ էլ որ եղել ենք, մենք հեռու չենք Փրկիչի ազդեցությունից, ով ասել է. «Հետևաբար, ով որ ապաշխարում է և գալիս ինձ մոտ, ինչպես մի փոքր երեխա, նրան ես կընդունեմ, քանզի այդպիսիններինն է Աստծո արքայությունը: Ահա, այդպիսինների համար եմ ես իմ կյանքը ցած դրել, և վերցրել այն կրկին»:[10]

Եթե մենք շարունակաբար ապաշխարենք ու ապավինենք Տիրոջը, ձեռք կբերենք ուժ, երբ ետ վերադառնանք՝ ունենալով փոքրիկ երեխայի հեզությունն ու հավատքը,[11] հարստանալով փորձառությունով լի կյանքից ծնված իմաստությամբ: Հոբը հայտարարել է. «Արդարը

պինդ կբռնէ իր ճանապարհը, և մաքուր ձեռք ունեցողը քանի գնայ կզօրանայ»:[12] Թեննիսոնը գրել է. «Իմ ուժը հավասար է տասը հոգու ուժի, որովհետև սիրտս մաքուր է»:[13] Տերը խորհուրդ է տվել. «Կանգնեք սուրբ տեղերում, և մի շարժվեք»:[14]

Մեր որդին՝ Ջասթինը, մահացավ 19 տարեկանում՝ մինչև վերջ պայքարելով հիվանդության դեմ: Մեզանից հեռանալուց առաջ հաղորդության ժողովներից մեկի ժամանակ իր ելույթում նա կիսվեց իր համար մի իմաստալից պատմությամբ, որը մի հոր ու նրա տղայի մասին էր, ովքեր գնացել էին խաղալիքների խանութ, որտեղ կար տղամարդու կերպարանք ունեցող մի փչած տոպրակ: Տղան բռունցքով հարվածում էր փչած տղամարդուն, որն ամեն զարկից հետո շրջվում ու անմիջապես ետ էր գալիս իր նախկին դիրքին: Հայրը հարցրեց տղային, թե ինչու էր տղամարդը միշտ ետ գալիս: Տղան մի պահ մտածեց ու այնուհետև ասաց. «Չգիտեմ: Կարծում եմ որովհետև այն «ամուր է ներսից»: Որպեսզի մենք «լիովին հանձն առնենք», մենք միշտ պետք է «ամուր լինենք ներքուստ», «ինչ էլ որ պատահի»:[15]

Մենք ներքուստ ամուր ենք, երբ համբերությամբ սպասում ենք Տիրոջը, որ հեռացնի կամ ուժ տա մեզ, որպեսզի դիմանանք «մարմնի խայթերին»:[16] Նման խայթ կարող են լինել հիվանդությունները, սահմանափակ կարողությունները, մտավոր հիվանդությունները, սիրելիի մահը և ուրիշ այլ խնդիրներ:

Մենք ներքուստ ամուր ենք , երբ բարձրացնում ենք թուլացած ձեռքերը:Մենք ներքուստ ամուր ենք, երբ պաշտպանում ենք ճշմարտությունը ամբարիշտ ու կենսասեր աշխարհից, որն ավելի ու ավելի անհարմար է դառնում լույսի համար՝ չարին ասելով բարի և բարուն՝ չար,[17] և «դատապարտելով արդարներին իրենց արդարության համար»:[18]

Չնայած դժվարություններին՝ ներքուստ ամուր լինելը հնարավոր է հանգիստ խղճի, Սուրբ Հոգու զորացնող ու մխիթարող հավաստիացման ու հավերժական հեռանկարի շնորհիվ, որը վեր է մարդկային հասկացողությունից:[19] Մեր նախաերկրային կյանքում մենք բոլորս ցնծացինք ուրախությամբ՝ մահկանացու կյանքում փորձառություն ունենալու հնարավորության համար:[20] Մենք բոլորս «լիովին հանձն առանք», երբ ոգևորված որոշեցինք լինել մեր Երկնային Հոր ծրագրի քաջ պաշտպանները: Ժամանակն է կրկին ամրանալ ու պաշտպանել Նրա ծրագիրը:

Իմ 97-ամյա հայրիկը վերջերս մահացավ: Երբ ինչ-որ մեկը հարցնում էր նրան, թե ինչպես է իրեն

զգում, նրա մշտական պատասխանն էր. «1–10 սանդղակով 25 տարեկան եմ զգում»: Նույնիսկ, երբ այս սիրելի մարդն այլևս չէր կարողանում կանգնել կամ նստել և խիստ դժվարանում էր խոսել, նրա պատասխանը դեռ նույնն էր: Նա միշտ ներքուստ ամուր էր:

Երբ հայրս 90 տարեկան էր, և մենք օդանավակայանում էինք, ես հարցրի նրան, արդյոք կուզենար, որ նրա համար սայլակ բերեի: Նա ասաց. «Ոչ Գարի, գուցե հետո, երբ ծերանամ»: Այնուհետև նա ավելացրեց. «Բացի դրանից, եթե հոգնեմ քայլելուց, ապա միշտ կարող եմ վազել»: Եթե ներկայումս մեր քայլերում մենք չենք կարող «լիովին հանձն առնել», ապա գուցե պետք է վազենք, գուցե պետք է մեր երթուղու վերահաշվարկ կատարենք: Հնարավոր է, շրջադարձ կատարելու կարիք ունենանք: Հնարավոր է, ավելի նպատակային ուսումնասիրելու, ավելի ուժգին աղոթելու կարիք ունենանք, կամ պարզապես ուշադրություն չդարձնենք որոշ բաների վրա, որպեսզի կարողանանք կառչել այն բաներից, որոնք իսկապես կարևոր են: Մենք պետք է թողնենք աշխարհիկը, որպեսզի կարողանանք կառչել հավերժությունից: Հայրս հասկանում էր սա:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ նա ռազմածովային նավատորմում էր, շատերը կային այնտեղ, ովքեր մեծ ու ընդարձակ շենքում էին,[21] ու ծաղրի էին ենթարկում նրա սկզբունքները, սակայն նրա ընկեր-նավաստիներից երկուսը՝ Դեյլ Մեդոքսն ու Դոն Դեյվիդսոնը, նկատում էին դա ուշէին ծաղրում նրան: Նրանք հարցրին. «Սաբի՛ն, ինչո՞ւ ես այդքան տարբերվում բոլորից: Դու ունես բարոյական բարձր չափանիշներ՝ չես խմում, չես ծխում, չես հայհոյում, բայց հանգիստ ու ուրախ ես երևում»:

Հայրիկիս մասին նրանց դրական տպավորությունը չէր համապատասխանում այն ամենի հետ, ինչ նրանց սովորեցրել էին մորմոնների մասին, սակայն հայրս կարողացավ իր երկու ընկեր-նավաստիներին էլ ուսուցանել ու մկրտել: Դեյլի ծնողներին դա դուր չեկավ, ու նրան զգուշացրին, որ եթե միանա Եկեղեցուն, նա կկորցնի իր սիրելիին՝ Մերի Օլիվին, սակայն Դեյլի խնդրանքով նա հանդիպեց միսիոներների հետ և նույնպես մկրտվեց:

Պատերազմի ավարտին մոտ Նախագահ Հեբեր Ջ. Գրանտը կանչեց միսիոներների, այդ թվում նաև մի քանի ամուսնացած տղամարդկանց: 1946 թ.-ին Դեյլն ու իր կինը՝Մերի Օլիվը, որոշեցին, որ Դեյլը պետք է ծառայի՝ չնայած որ նրանք սպասում էին իրենց առաջնեկին: Ի վերջո, նրանք ունեցան ինը երեխա՝ երեք տղա ու վեց աղջիկ: Բոլոր ինն էլ ծառայեցին միսիաներում, որից հետո Դեյլն ու Մերի Օլիվը միասին ծառայեցին երեք միսիաներում: Նրանց տասնյակ թոռնիկները նույնպես ծառայել են: Նրանց որդիներից երկուսը՝ Ջոն ու Մեթյու Մեդոքները, ինչպես նաև Մեթյուի փեսան՝ Ռայանը, այժմ Թաբերնաքլի երգչախմբի անդամներ են: Մեդոքս ընտանիքն այժմ բաղկացած է 144 հոգուց, և բոլորը «լիովին հանձն առնողների» հրաշալի օրինակ են հանդիսանում:

Հայրիկիս թղթերը տեսակավորելիս՝ մենք մի նամակ տեսանք Ջենիֆեր Ռիչարդսից, ով մյուս ընկերոջ՝ Դոն Դեյվիդսոնի հինգ դուստրերից մեկն էր: Նա գրել էր. «Ձեր արդարակեցությունը փոխեց մեր կյանքը: Դժվար է ըմբռնել, թե ինչպիսին կլիներ մեր կյանքն առանց Եկեղեցու: Հայրս մահացավ ավետարանի հանդեպ սիրով լցված ու մինչև վերջ փորձելով ապրել դրա չափանիշներով»:[22]

Դժվար է չափել այն դրական ազդեցությունը, որ ամեն մեկը կարող է ունենալ՝ ներքուստ ամուր մնալով: Հայրս ու նրա երկու ընկերները հրաժարվեցին ուշադրություն դարձնել մեծ ու ընդարձակ շենքի մարդկանց վրա, ովքեր նրանց կողմ էին ուղղում արհամարհանքի մատը:[23] Նրանք գիտեին, որ ավելի լավ է հետևել Արարիչին, քան ամբոխին:

Պողոս Առաքյալը գուցե նկարագրում էր մեր օրերը, երբ նա ասաց Տիմոթէոսին, որ «ոմանք խոտորելով ունայն խօսքերի ետևից գնացին»:[24] Այսօր աշխարհում շատ ունայն խոսքեր կան: Դրանք մեծ ու ընդարձակ շենքում գտնվողների զրույցներն են:[25] Հաճախ դրանք ամբարշտությունն արդարացնելու բացատրություններ են հանդիսանում կամ ի հայտ են գալիս, երբ մարդիկ կորցնում են իրենց ճանապարհն ու հեռանում ավետարանից: Երբեմն դա տեղի է ունենում նրանց հետ, ովքեր չեն կատարել անհրաժեշտ քայլերը, որպեսզի «լիովին հանձն առնեն» և նախընտրում են մարգարեին հետևելու փոխարեն հետևել բնական մարդուն:

Բարեբախտաբար, մենք գիտենք, թե ամեն ինչ ինչպես է ավարտվում հավատարիմների համար: Երբ մենք «լիովին հանձն ենք առնում», մենք ունենում ենք այդ լիարժեք հավաստիացումը, որ «Աստուծուն սիրողներին ամեն բաները գործակից են լինում դէպի բարին»:[26] Ինչպես ասել է Երեց Նիլ Ա. Մաքսվելը. «Մի՛ վախեցիր, պարզապես ճիշտ ապրիր»:[27]

Կնոջս հայրն ուսուցանում էր ԲՅՀ-ում և շատ էր սիրում ԲՅՀ-ի ֆուտբոլը, սակայն չէր կարողանում նայել նրանց խաղը, քանի որ շատ էր անհանգստանում արդյունքի համար: Հետո մի հրաշալի բան տեղի ունեցավ. ի հայտ եկան տեսաերիզային ձայնագրությունները, որոնք հնարավորություն տվեցին նրան տեսագրել խաղերը: Եթե ԲՅՀ-ն հաղթեր, նա կատարյալ վստահությամբ կնայեր տեսագրությունը՝ ամբողջովին վստահ լինելով ավարտի մասին: Եթե նրանց անարդարացիորեն տուգանեին, վնաս հասցնեին կամ խաղի վերջին րոպեներին թվար, որ պարտվում են, նա չէր լարվում, քանի որ գիտեր՝ հաղթելու են: Կարող եք ասել, որ նա «հույսի կատարյալ պայծառություն» ուներ:[28]

Այդպես է նաև մեզ հետ: Երբ հավատարիմ ենք, նույն կերպ կարող ենք վստահել, որ ի վերջո ամեն ինչ լավ է լինելու մեզ հետ: Տիրոջ խոստումները հավաստի են: Դա չի նշանակում, որ հեշտ է լինելու կամ առանց արցունքների,

այլ ինչպես Պողոսն է գրել. «Ինչ որ աչք չտեսավ և ականջ չլսեց և մարդի սիրտ չընկավ, այն պատրաստեց Աստուած իրան սիրողների համար»:[29]

Եղբայրնե՛ր ու քույրե՛ր, վաղը դեռ ոչ ոք մեղք չի գործել: Անհրաժեշտության դեպքում եկեք երթուղու վերահաշվարկ կատարենք և առաջ նայենք մեծ հույսով ու հավատով: Թող որ «ամուր լինենք ներքուստ»՝ լինելով քաջ ու «լիովին հանձն առած»:Եկեք լինենք մաքուր ու անվեհեր մեր Երկնային Հոր ծրագիրն ու Նրա Որդու՝ մեր Փրկիչի առաքելությունը պաշտպանելիս: Ես վկայում եմ, որ մեր Հայրն ապրում է, որ Հիսուսը Քրիստոսն է, և որ երջանկության հրաշալի ծրագիրն իրական է:Ես աղոթում եմ, որ Տիրոջ ամենաընտիր օրհնությունները ձեզ հետ լինեն, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Եզեկիել 18.21–22
2. Տես, օրինակ, Roy B. Zuck, comp., *The Speaker's Quote Book: Over 5,000 Illustrations and Quotations for All Occasions* (2009), 107–8.
3. Տես Վարդապետություն և Ուխտեր 64.34
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 21.6
5. Տես Հայտնություն 3.15–16
6. Վարդապետություն և Ուխտեր 84.43
7. Վարդապետություն և Ուխտեր 29.17
8. Տես Ալմա 41.11
9. Եսայիա 57.20–21
10. 3 Նեփի 9.22
11. Տես 3 Նեփի 11.37–38
12. Հոբ 17.9
13. Alfred Tennyson, "Sir Galahad," in *Poems of the English Race,* sel. Raymond MacDonald Alden (1921), 296.
14. Վարդապետություն և Ուխտեր 87.8
15. Տես Joseph B. Wirthlin, "Come What May, and Love It," *Liahona,* Nov. 2008, 26–28:
16. Տես Բ Կորնթացիս 12.7
17. Տես Եսայիա 5.20
18. Հելաման 7.5
19. Տես Փիլիպեցիս 4.7
20. Տես Հոբ 38.7
21. Տես 1 Նեփի 8.26
22. Jennifer Richards, letter to Marvin Sabin, July 5, 2009.
23. Տես 1 Նեփի 8.27, 33
24. Ա Տիմոթեոս 1.6
25. Տես 1 Նեփի 8.26–28
26. Հռովմեացիս 8.28
27. Տես Bangambiki Habyarinmana, *Inspirational Quotes for All Occasions* (2013);
28. 2 Նեփի 31.20
29. Ա Կորնթացիս 2.9



Երեց Վալերի Վ. Քորդոն
Յոթանասունի Քվորում

Ավետարանի լեզուն

Ավետարանը մեր ընտանիքում պահպանելու համար խորը ուսուցումն անչափ կարևոր է, որն էլ պահանջում է ջանասիրություն ու ջանքեր:

Երբ կանչվեցի բարձրագույն իշխանավոր, ընտանիքիս հետ Կոստա Ռիկայից տեղափոխվեցի Սոլթ Լեյք Սիթի՝ իմ առաջին հանձնարարությունը կատարելու համար: Այստեղ՝ Միացյալ Նահանգներում, ես օրհնվել եմ տարբեր էթնիկական ծագում ու մշակույթ ունեցող մարդկանց այցելելով: Նրանց մեջ կային շատերը, ովքեր ինձ նման ծնվել էին Լատինական Ամերիկայի երկրներում:

Նկատել եմ, որ իսպանական ծագում ունեցողների առաջին սերնդի մեծամասնությունը այստեղ խոսում է իրենց հիմնական լեզվով՝ իսպաներենով, և բավականաչափ անգլերեն գիտի ուրիշների հետ հաղորդակցվելու համար: Միացյալ Նահանգներում ծնված կամ են վաղ տարիքում եկած և այստեղ դպրոց հաճախած երկրորդ սերունդը շատ լավ անգլերենով է խոսում և ոչ սահուն իսպաներենով: Եվ հաճախ է հանդիպում, երբ երրորդ սերնդի մոտ իսպաներենը՝ իրենց նախնիների մայրենի լեզուն, արդեն գոյություն չունի:[1]

Լեզվաբանական տեսանկյունից սա պարզապես կոչվում է «լեզվի կորուստ»: Լեզվի կորուստը կարող է տեղի ունենալ, երբ ընտանիքները տեղափոխվում են օտար երկիր, որտեղ իրենց մայրենի լեզուն առաջնային չէ: Դա տեղի է ունենում ոչ միայն իսպանական ծագում ունեցողների հետ, այլև աշխարհի ողջ բնակչության հետ, երբ մայրենի լեզուն փոխարինվում է նոր լեզվով:[2] Նույնիսկ Նեփին՝ Մորմոնի Գրքի մարգարեներից մեկը, մտահոգված էր իր հայրերի լեզուն կորցնելու համար, երբ պատրաստվում էր գնալ դեպի խոստացված երկիր: Նեփին գրում է. «Եվ ահա, Աստծո իմաստությամբ է, որ մենք պետք է ձեռք բերենք այս հիշատակարանները, որպեսզի *մենք կարողանանք*



պահպանել մեր զավակների համար մեր հայրերի լեզուն»:[3]

Սակայն Նեփին մտահոգված էր նաև մեկ այլ լեզու կորցնելու մասին: Հաջորդ հատվածում նա շարունակում է. «Եվ նաև, որպեսզի *կարողանանք պահպանել նրանց համար այն խոսքերը, որոնք ասվել են բոլոր սուրբ մարգարեների բերանով,* որոնք տրվել են նրանց Աստծո Հոգով և զորությամբ, աշխարհի սկզբից ի վեր, նույնիսկ ընդհուպ մինչև այս ներկա ժամանակը»:[4]

Ես նմանություն նկատեցի մեր մայրենի լեզուն և Հիսուս Քրիստոսի ավետարանը մեր կյանքում պահպանելու միջև:

Այսօր իմ համանմանության մեջ ես կցանկանայի շեշտը դնել ոչ թե ինչ-որ ժամանակավոր լեզվի, այլ հավերժական լեզվի վրա, որը պետք է պահպանել մեր ընտանիքներում ու երբեք չկորցնել: Ես խոսում եմ[5] Հիսուս Քրիստոսի ավետարանի լեզվի մասին: «Ավետարանի լեզու» ասելով նկատի ունեմ մեր մարգարեների բոլոր ուսմունքները, մեր հնազանդությունն այդ ուսմունքներին և մեր արդար ավանդույթներին հետևելը:

Ես կքննարկեմ երեք եղանակ, որոնց միջոցով այս լեզուն կարելի է պահպանել:

Առաջին՝ ավելի ջանասեր ու մտահոգված լինել տան համար

Վարդապետություն և Ուխտերում Տերը Եկեղեցու շատ հայտնի անդամների, ներառյալ Նյուել Ք. Ուիթնիին, հրավիրել է կարգի բերել իրենց ընտանիքը: Տերն ասել է. «Իմ ծառա Նյուել Ք. Ուիթնին՝ իմ եկեղեցու եպիսկոպոսը ևս կարիք ունի խրատվելու և կարգի բերելու իր ընտանիքը, և հետևելու, որ *նրանք ավելի ջանասեր լինեն և մտահոգվեն տան համար,* և միշտ աղոթեն, թե չէ նրանք կհանվեն իրենց տեղից»:[6]

Մի գործոն, որն ազդում է լեզվի կորստի վրա, այն է, երբ ծնողները ժամանակ չեն հատկացնում իրենց երեխաներին մայրենի լեզուն սովորեցնելու համար: Բավական չէ պարզապես տանն այդ լեզվով *խոսել*: Եթե ծնողները ցանկանում են պահպանել իրենց լեզուն, այն պետք է *ուսուցանեն*: Ուսումնասիրությունները պարզել են, որ այն ծնողները, ովքեր գիտակցված ջանքեր են գործադրել իրենց մայրենի լեզուն պահպանելու համար, սովորաբար հասել են հաջողության:[7] Այսպիսով, որո՞նք են այն գիտակցված ջանքերը, որ կարող ենք գործադրել ավետարանի լեզուն պահպանելու համար:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը զգուշացրել է, որ «տանը ավետարանի թույլ ուսուցումը ու թերի օրինակ լինելը» Եկեղեցում բազմասերունդ ընտանիքների շղթայի ընդհատման հզոր պատճառ է հանդիսանում:[8]

Ավետարանը մեր ընտանիքում պահպանելու համար խորը ուսուցումն անչափ կարևոր է, որն էլ պահանջում է ջանասիրություն ու ջանքեր:

Մեզ բազմիցս սովորեցրել են սովորություն դարձնել սուրբ գրությունների ամենօրյա ընտանեկան ու անհատական ուսումնասիրությունը:[9] Այդպես վարվելով շատ ընտանիքներ ամեն օր օրհնվում են ավելի մեծ միասնականությամբ ու Տիրոջ հետ ավելի մտերիմ հարաբերությամբ:

Ե՞րբ է տեղի ունենում սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրությունը: Այն տեղի է ունենում, երբ ծնողները, սուրբ գրություններն իրենց ձեռքին, սիրով հրավիրում են ընտանիքի անդամներին ուսումնասիրել միասին: Այս ուսումնասիրությունն այլ կերպ չի կարող տեղի ունենալ:

Հայրեր ու մայրեր, բաց մի թողեք այս հրաշալի օրհնությունները: Մի սպասեք, մինչև որ շատ ուշ լինի:

Երկրորդ՝ տանը լինել լավ օրինակ

Լեզվաբանության մի փորձագետ գրել է, որ մայրենի լեզուն պահպանելու համար «դուք*պետք է լեզուն երեխաների համար գործող դարձնեք*»:[10] Մեր «լեզուն գործող է», երբ մեր ուսուցանածն ու օրինակը համահունչ են:

Երբ երիտասարդ էի, արձակուրդներին աշխատում էի հայրիկիս գործարանում: Առաջին հարցը, որ հայրս միշտ տալիս էր աշխատավարձը ստանալուց հետո, հետևյալն էր. «Ինչպե՞ս ես վարվելու գումարիդ հետ»:

Ես գիտեի պատասխանը և ասում էի. «Կվճարեմ տասանորդս ու կխնայեմ միսիայի համար»:

Մոտ ութ տարի նրա հետ աշխատելուց ու անընդհատ նույն հարցին պատասխանելուց հետո հորս թվում էր, որ նա սովորեցրել է ինձ տասանորդ վճարել: Նա չէր գիտակցում, որ ես այդ կարևոր սկզբունքը սովորեցի երկու օրվա ընթացքում: Թույլ տվեք պատմել ձեզ, թե ինչպես եմ սովորել այդ սկզբունքը:

Կենտրոնական Ամերիկայում տեղի ունեցող քաղաքացիական պատերազմի հետ կապված որոշ իրադարձությունների պատճառով հայրիկս սնանկացավ: Էրիվ դրույքով աշխատող նրա դերձակների թիվը նվազեց 200-ից մինչև հինգի, ովքեր, անհրաժեշտության դեպքում, աշխատում էին մեր տան ավտոտնակում: Դժվար ժամանակներ էին, և մի օր ես լսեցի, թե ծնողներս ինչպես էին քննարկում՝ արդյո՞ք պետք է տասանորդ վճարեն, թե՞ սնունդ գնեն երեխաների համար:

Կիրակի օրը ես հետևում էի հայրիկիս, որպեսզի տեսնեի, թե նա ինչպես էր վարվելու: Եկեղեցու ժողովներից հետո ես տեսա, որ նա վերցրեց ծրարն ու դրա մեջ դրեց իր տասանորդը: Դա միայն դասի մի մասն էր: Ինձ հուզող հարցն այս էր, թե ինչ էինք ուտելու:

Երկուշաբթի առավոտյան մի քանի հոգի թակեցին մեր դուռը: Երբ ես բացեցի այն, նրանք խնդրեցին հայրիկիս: Ես կանչեցի նրան, և երբ նա եկավ, այցելուները նրան կարի մի հրատապ պատվեր ներկայացրին: Նրանք ասացին, որ պատվերն այնքան հրատապ է, որ իրենք պատրաստ էին դրա համար նախապես վճարել: Այդ օրը ես սովորեցի տասանորդը վճարելու սկզբունքներն ու դրան հետևող օրհնությունները:

Նոր Կտակարանում Տերը խոսում է օրինակ լինելու մասին: Նա ասում է. «Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ

ձեզ, Որդին իրանից կարող չէ ոչինչ անել, թէ որ չտեսնէ Հօրն անելիս. Որովհետև ինչ որ նա անում է, հէնց Որդին էլ այն բանը նորա նման է անում»:[11]

Մեր երեխաների հետ տաճարային ամուսնության, ծոմապահության ու հանգստի օրը սուրբ պահելու կարևորության մասին պարզապես *խոսելը* բավարար չէ: Նրանք պետք է տեսնեն, թե մենք ինչպես ենք մեր օրակարգում հնարավորինս տեղ հատկացնումտաճարային այցելություններին: Նրանք պետք է տեսնեն պարբերաբար ծոմ պահելու մեր հանձնառությունը[12] և ողջ Հանգստության օրը սուրբ պահելը: Եթե մեր երիտասարդները չեն կարող ծոմ պահել՝ զերծ մնալով երկու կերակուրից, չեն կարող պարբերաբար ուսումնասիրել սուրբ գրությունները և չեն կարող անջատել հեռուստացույցը կիրակնօրյա կարևոր խաղի ընթացքում, արդյոք կունենա՞ն այն հոգևոր ինքնակառավարումը, որպեսզի դիմակայեն այսօրվա աշխարհի զորեղ գայթակղություններին՝ ներառյալ պոռնոգրաֆիայի գայթակղությանը:

Երրորդ՝ ավանդույթներ

Պատճառներից մեկը, երբ լեզուն ենթարկվում է փոփոխության, այն է, երբ այլ լեզուներն ու ավանդույթները խառնվում են մայրենի լեզվի հետ:[13]

Վերականգնված Եկեղեցու վաղ տարիների ընթացքում Տերը հորդորել է Եկեղեցու շատ հայտնի անդամների կարգի բերել իրենց տները: Նա սկսել է Իր հորդորը՝ նշելով երկու եղանակ, որոնց միջոցով մենք կորցնում ենք լույսն ու ճշմարտությունը մեր տներից. «Եվ այն չարագործը գալիս և *վերցնում է լույսն ու ճշմարտությունը* մարդկանց զավակներից, *անհնազանդության* միջոցով, և *նրանց հայրերի ավանդությունների պատճառով*»:[14]

Որպես ընտանիքներ, մենք պետք է խուսափենք ցանկացած ավանդույթներից, որոնք կխանգարեն մեզ Հանգստության օրը սուրբ պահել կամ սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրություն ու աղոթք անելուն: Մենք պետք է նախազգուշական միջոցներ ձեռք առնենք պոռնոգրաֆիայի և մյուս բոլոր չար ազդեցությունների դեմ՝ թույլ չտալով, որ դրանք մեր տուն թափանցեն տեխնիկայի միջոցով: Մեր օրերի աշխարհիկ ավանդույթների դեմ պայքարելու համար մենք պետք է կիրառենք սուրբ գրություններն ու ժամանակակից մարգարեների ձայնը, որպեսզի ուսուցանենք մեր երեխաներին իրենց աստվածային բնույթի, կյանքում իրենց նպատակի և Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելության մասին:

Եզրակացություն

Սուրբ գրություններում մենք հանդիպում ենք «լեզվի կորուստի» օրինակների հետ:[15] Օրինակ՝

«Արդ, եղավ այնպես, որ աճող սերնդից կային շատերը, ովքեր *չէին կարողանում հասկանալ Բենիամին թագավորի խոսքերը*՝ լինելով փոքր երեխաներ այն ժամանակ, երբ նա խոսել էի իր ժողովրդի հետ. և նրանք չէին հավատում իրենց հայրերի ավանդությանը: . . .

Եվ արդ, իրենց անհավատության պատճառով, *նրանք չէին հասկանում Աստծո խոսքը*. և նրանց սրտերը կարծրացած էին»:[16]

Աճող սերնդի համար ավետարանն անծանոթ լեզու էր դարձել: Եվ մինչ մայրենի լեզվի պահպանման օգտակար կողմերը երբեմն քննարկման են ենթարկվում, փրկության ծրագրի ենթատեքստում ավետարանի լեզուն մեր տնից կորցնելու հավերժական հետևանքները *քննարկմանենթակա չեն*:

Որպես Աստծո զավակներ, մենք անկատար մարդիկ ենք, ովքեր փորձում են սովորել կատարյալ լեզու:[17] Այնպես, ինչպես մայրն է կարեկցանքով լցված իր երեխաների նկատմամբ, մեր Երկնային Հայրը համբերատար է մեր անկատարությունների ու սխալների հանդեպ: Նրա համար անգին են մեր կմկմացող ձայնով ասված անկեղծ աղոթքները, որոնք նման են նուրբ պոեզիայի, Նա հրճվում է, երբ մենք արտասանում ենք ավետարանի առաջին խոսքերը, Նա մեզ ուսուցանում է կատարյալ սիրով:

Այս կյանքում ոչ մի նվաճում, որքան էլ որ այն կարևոր լինի, էական չէ, եթե մենք կորցնենք ավետարանի լեզուն մեր ընտանիքներում:[18] Ես վկայում եմ, որ Երկնային Հայրը կօրհնի մեզ, երբ մենք ձգտենք հարել Նրա լեզվին, նույնիսկ մինչև սահուն խոսել կարողանանք հաղորդակցման այս վերին աստիճանում, որը մեր մայրենի լեզուն էր: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Իսպանական ծագում ունեցողների երրորդ սերնդի մոտ «անգլերենը միակ լեզուն լինելը . . . կազմում է 72 տոկոս (Richard Alba, “Bilingualism Persists, but English Still Dominates,” Migration Policy Institute, Feb. 1, 2005, migrationpolicy.org/article/bilingualism-persists-english-still-dominates):

2. «Երրորդ սերնդի մոտ գերակշռում է միայն անգլերեն լեզուն» (Alba, “Bilingualism Persists, but English Still Dominates”):
3. 1 Նեփի 3.19, շեշտադրումն ավելացված է
4. 1 Նեփի 3.20, շեշտադրումն ավելացված է
5. Լեզուն կարող է սահմանվել որպես «հաղորդակցման համակարգ, որը կիրառվում է որոշակի երկրում կամ համայնքում» (Oxford Living Dictionaries, “language,” oxforddictionaries.com):
6. Վարդապետություն և Ուխտեր 93.50, շեշտադրումն ավելացված է
7. «[Հնարավոր է պահպանել մայրենի լեզուն], սակայն այն պահանջում է նվիրվածություն ու ծրագրավորում» (Eowyn Crisfield, “Heritage Languages: Fighting a Losing Battle?” onraisingbilingualchildren.com/2013/03/25/heritage-languages-fighting-a-losing-battle): «Օրինակ, գերմանախոսները Միջին-արևելքում հաջողություն ունեցան իրենց մայրենի լեզուն սերնդե-սերունդ պահպանելիս» (Alba, “Bilingualism Persists, but English Still Dominates”):
8. David A. Bednar, “Multigenerational Families,” in General Conference Leadership Meetings, Apr. 2015, broadcasts.lds.org.
9. Ժամանակակից մի օրինակ է հանդիսանում Առաջին Նախագահության ցուցումներից մեկը. «Մենք խորհուրդ ենք տալիս ծնողներին ու երեխաներին մեծագույն առաջնահերթություն տալ ընտանեկան աղոթքին, ընտանեկան երեկոյին, ավետարանի ուսումնասիրությանն ու ուսուցանմանը և ընտանեկան խելամիտ միջոցառումներին» (First Presidency letter, Feb. 11, 1999):
10. «Դուք պետք է *կենդանի պահեք լեզուն* ձեր երեխաների համար, որպեսզի նրանք կարողանան հասկանալ ու հաղորդակցվել ու իրենց այդ լեզվով խոսող ազգի մի մասը զգան» (Crisfield, “Heritage Languages: Fighting a Losing Battle?” շեշտադրումն ավելացված է):
11. Հովհաննես 5.19
12. «Ծոմապահության օրը սովորաբար իր մեջ ներառում է՝ 24 ժամվա ընթացքում չօգտվել երկու կերակուրից ու ըմպելիքից՝ հաճախելով ծոմապահության ու վկայության ժողովին և կարիքավորներին օգնելու համար կատարելով ծոմապահության առատ նվիրատվություն» (*Ձեռնարկ 2. Սպասավորել Եկեղեցում,* [2010], 21.1.17):
13. Տես Օմնի 1.17
14. Վարդապետություն և Ուխտեր 93.39, շեշտադրումն ավելացված է
15. Այս ելույթի ենթատեքստում «լեզվի կորուստը» վերաբերվում է նրան, թե ավետարանն ինչպես կարող է կորսվել (տես Դատավորաց 2.10, Օմնի 1.17, 3 Նեփի 1.30):
16. Մոսիա 26.1, 3, շեշտադրումն ավելացված է
17. Տես Մատթէոս 5.48, 3 Նեփի 12.48
18. Տես Մատթէոս 16.24–26

Երեց Նիլ Լ. Անդերսեն
Տասներկու Առաքյալների Քվորում

Հաղթել աշխարհին

Աշխարհին հաղթելը կյանքի վճռորոշ պահերից մեկը չէ, այլ կյանքն է, կազմված այնպիսի պահերից, որոնք սահմանում են հավերժությունը։

Շատ տարիներ առաջ Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը պատմեց մի հրաշալի փորձառության մասին, որը նա ունեցել էր, երբ նավարկում էր Սամոայի ուղղությամբ։ Երբ նա քուն մտավ, «տեսիլքում տեսավ անսահման վսեմ մի բան։ «Հեռվում, - ասաց նա,- ես տեսա մի գեղեցիկ սպիտակ քաղաք։ . . . Ամենուր քաղցրահամ մրգերով ծառեր էին և . . . անթերի ծաղկած բազում գեղեցիկ ծաղիկներ։ Մարդկանց անհամար բազմություններ էին մոտենում քաղաքին։ Նրանցից յուրաքանչյուրը կրում էր սպիտակ կոկիկ պատմուճան։ . . . Իմ ուշադրությունն . . . անմիջապես կենտրոնացավ նրանց առաջնորդի վրա և, չնայած, տեսնում էի միայն նրա արտաքին ուրվագիծը . . . , ես անմիջապես ճանաչեցի իմ Փրկիչին։ Նրա դեմքի լույսը փառահեղ էր։ Նա շրջապատված էր աստվածային խաղաղությամբ»։

Նախագահ Մակքեյը շարունակում է. «Այդ քաղաքը . . . նրա . . . Հավերժության Քաղաքն էր, և նրան հետևող մարդիկ ցանկանում էին ապրել այնտեղ խաղաղության և հավերժական երջանկության մեջ»։

Նախագահ Մակքեյը հետաքրքրվեց. «Ովքե՞ր [են] նրանք։ [Ովքե՞ր են այս մարդիկ]»։

Նա բացատրում է, թե ինչ պատահեց հետո.

«Կարծես, կարդալով իմ մտքերը, Փրկիչը պատասխանեց՝ մատնացույց անելով . . . [մարդկանց] գլխավերևում հայտնված ոսկեգույն տառերով . . . կամարաձև գրված բառերը։

«Այդ նրանք են, ովքեր հաղթել են աշխարհին,

«Ովքեր իսկապես վերստին են ծնվել»:[1]

Տարիներ շարունակ ես հիշում եմ այս բառերը. «Այդ նրանք են, ովքեր հաղթել են աշխարհին»:

Օրհնությունները, որոնք Տերը խոստացել է նրանց, ովքեր հաղթում են աշխարհին, ապշեցուցիչ են: Նրանք «սպիտակ հանդերձներ կ'հագնէ[ն]. Եւ նորա[նց] անունը կեանքի գրքիցը չեմ ջնջիլ»: Տերը «կ'դաւան[ի] նորա[նց] անուն[ներն] ի[ր] Հօր առաջին եւ նորա հրեշտակների առաջին»:[2] Նրանցից յուրաքանչյուրը «բաժին կունենա առաջին հարության ժամանակ»[3], կստանա հավերժական կյանք,[4] և «այլ եւս դուրս չի գնալ» Աստծո արքայությունից:[5]

Հնարավո՞ր է հաղթել աշխարհին և ստանալ այս օրհնությունները: Այո, հնարավոր է:

Սերը Փրկիչի հանդեպ

Նրանք, ովքեր հաղթում են աշխարհին, համապարփակ սեր են զարգացնում մեր Տիրոջ և Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ:

Նրա աստվածային ծնունդը, Նրա կատարյալ կյանքը, Նրա անսահման Քավությունը Գեթսեմանիում և Գողգոթայում Հարություն ապահովեցին յուրաքանչյուրիս համար: Մեր անկեղծ ապաշխարության միջոցով միայն Նա կարող է մաքրել մեզ մեղքից, ինչն էլ հնարավորություն կտա մեզ վերադառնալ Աստծո ներկայություն: «Մենք սիրենք նորան, որովհետեւ առաջ նա սիրեց մեզ»:[6]

Հիսուսն ասաց. «Քաջացէք, ես յաղթել եմ աշխարհքին»:[7]

Ավելի ուշ Նա ավելացրեց. «Ես կամենում եմ, որ դուք հաղթեք աշխարհին»:[8]

Աշխարհին հաղթելը կյանքի վճռորոշ պահերից մեկը չէ, այլ կյանքն է, որը կազմված է այնպիսի պահերից, որոնք սահմանում են հավերժությունը:

Այն կարող է սկսվել, երբ մի երեխա սովորում է աղոթել և ակնածանքով երգում է. «Ես փորձում եմ նմանվել Հիսուսին»:[9] Այն

շարունակվում է, երբ մի մարդ ուսումնասիրում է Փրկիչի կյանքը Նոր Կտակարանում և խորհում է Փրկիչի Քավության զորության շուրջ Մորմոնի Գրքում:

Աղոթելը, ապաշխարելը, Փրկիչին հետևելը և Նրա շնորհը ստանալը մեզ օգնում են ավելի լավ հասկանալ, թե մենք ինչու ենք այստեղ և ինչ պիտի դառնանք:

Ալման այսպես է նկարագրել այն. «Մի հզոր փոփոխություն գործվեց նրանց սրտերում ևս, և նրանք խոնարհեցրին իրենց և դրեցին իրենց վստահությունը ճշմարիտ ու կենդանի Աստծո վրա . . . հավատարիմ [մնալով] մինչև վերջ»:[10]

Նրանք, ովքեր հաղթում են աշխարհին, գիտեն, որ իրենք հաշվետու կլինեն իրենց Երկնային Հորը: Անկեղծ փոփոխությունը և մեղքերի ապաշխարությունը ոչ թե ետ են պահում, այլ ազատագրում են մեզ, քանի որ «մեղքերը կարմիրի պէս . . . ձիւնի պէս պիտի սպիտականան»:[11]

Հաշվետու լինել Աստծո առաջ

Աշխարհիկ մարդիկ, ովքեր դժվարություն ունեն Աստծո առաջ հաշվետու լինելու գործում, նման են մի երեխայի, ով աղմկոտ խնջույք է կազմակերպում իր ծնողների տանը, մինչ նրանք մեկնել են քաղաքից դուրս, չմտածելով սպասվող հետևանքների մասին, երբ ծնողները վերադառնան 24 ժամ անց:

Աշխարհը, մյուս կողմից, ավելի շատ հետաքրքրված է բնական մարդուն երես տալով, քան նրան հնազանդեցնելով:

Աշխարհին հաղթելը համընդհանուր արշավանք չէ, այլ մասնավոր, անհատական պայքար, որը պահանջում է անձնական պայքար մեր ներքին գայթակղությունների և հակվածությունների դեմ:

Աշխարհին հաղթելը նշանակում է արժեվորել մեծագույն պատվիրանը. «Եւ սիրիր քո Տէր Աստուծուն բոլոր սրտիցդ, եւ բոլոր անձիցդ, եւ բոլոր մտքիցդ, եւ բոլոր զօրութիւնիցդ»:[12]

Քրիստոնյա գրող Ք. Ս. Լեվիսը այսպես է նկարագրում այն. «Քրիստոսն ասում է. «Տվեք ինձ Ամբողջը: Ես չեմ ցանկանում ձեր ժամանակի մեծ մասը, ձեր փողի մեծ մասը և ձեր աշխատանքի մեծ մասը: Ես ցանկանում եմ Ձեզ»:[13]

Հաղթել աշխարհին նշանակում է՝ պահել Աստծուն տված մեր խոստումները՝ մեր մկրտության ու մեր տաճարային ուխտերը և մեր հավերժական զուգընկերոջը հավատարիմ մնալու երդումը: Հաղթելով աշխարհին, յուրաքանչյուր շաբաթ մենք ուղղորդվում ենք դեպի հաղորդության սեղանը, ներում խնդրում և խոստանում «միշտ հիշել նրան և պահել նրա պատվիրանները», որպեսզի մենք կարողանանք «նրա Հոգին միշտ [մեզ] հետ ունենա[լ]»:[14]

Մեր սերը Հանգստության օրվա հանդեպ չի վերջանում, երբ հավաքատան դռները փակվում են մեր ետևում, այլ փոխարենը բացվում են դռները դեպի հանգստի, ուսումնասիրության, աղոթքի հրաշալի օրը, երբ մենք հասնում ենք մեր ուշադրության կարիքն ունեցող ընտանիքին և ուրիշ մարդկանց: Փոխանակ եկեղեցու ավարտից հետո թեթևացած շունչ քաշելու և խելակորույս վազելու հեռուստացույց գտնելու հույսով, նախքան ֆուտբոլային խաղը կսկսվի, թող որ մեր կենտրոնացումը մնա Փրկիչի և Նրա սուրբ օրվա վրա:

Աշխարհը մշտապես գտնվում է գայթակղիչ և հրապուրիչ ազդեցությունների ներքո:[15]

Հաղթել աշխարհին նշանակում է վստահել այն ձայնին, որը նախազգուշացնում է, հանգստացնում է, լուսավորում է և խաղաղություն է բերում «ոչ թէ ինչպէս աշխարհքն է տալիս»:[16]

Այլասիրություն

Հաղթել աշխարհին նշանակում է՝ ավելի շատ կենտրոնանալ ուրիշների, քան մեզ վրա, հիշելով երկրորդ պատվիրանը.[17] «Եւ ձեզանից մեծը թող ձեր ծառան լինի»:[18] Մեր կողակցի երջանկությունն ավելի կարևոր է, քան մեր սեփական հաճույքները: Մեր գլխավոր առաջնահերթությունը պիտի լինի օգնել մեր զավակներին սիրել Աստծուն և պահել Նրա պատվիրանները: Մենք պատրաստակամ կիսվում ենք մեր նյութական օրհնություններով տասանորդի, ծոմի նվիրատվության և կարիքավորներին օգնելու միջոցով: Եվ երբ մեր սեփական ալեհավաքները ուղղված են դեպի երկինք, Աստված առաջնորդում է մեզ դեպի այն մարդիկ, ում մենք կարող ենք օգնել:

Աշխարհիկ մարդը իր աշխարհը կառուցում է իր շուրջը, հպարտ հայտարարելով. «Տե՛ս իմ ունեցվածքը հարևանի ունեցածի համեմատ: Տե՛ս, ինչե՞ր ունեմ ես: Տե՛ս, ի՞նչ կարևոր մարդ եմ ես»:

Աշխարհիկ մարդը բարկացկոտ է, անտարբեր է և պահանջկոտ, սիրում է, երբ ամբոխը հիանում է իրենով, մինչ աշխարհին հաղթելիս, մարդը ձեռք է բերում խոնարհություն, կարեկցանք, համբերություն և գթություն նրանց հանդեպ, ովքեր տարբեր են իրենից:

Ապահովություն Մարգարեների միջոցով

Հաղթահարել աշխարհին միշտ կնշանակի, որ մենք կունենանք որոշ համոզմունքներ, որոնք աշխարհը կծաղրի: Փրկիչն ասել է.

«Եթէ աշխարհքը ձեզ ատում է, գիտացէք, որ ինձ ձեզանից առաջ է ատել»:

«Եթէ այս աշխարհքիցը լինէիք, ապա աշխարհքն իրանը կ՚սիրէր»:[19]

Այս առավոտ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ասաց. «Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդները պատրաստ են առանձնանալ, բարձրաձայնել և տարբերվել աշխարհիկ մարդկանցից»:[21]

Քրիստոսի հետևորդը չի տագնապում, երբ իր համոզմունքները ֆեյսբուքյան էջում չեն արժանանում 10000 հավանության:

Աշխարհին հաղթել նշանակում է՝ քիչ մտահոգվել մեր առցանց կապերով և ավելի շատ մտահոգվել Աստծո հետ ունեցած մեր կապով:

Աշխարհին հաղթելու գործընթացում Աստված մեզ ապահովություն կշնորհի, երբ մենք ականջ դնենք Նրա ապրող մարգարեների և առաքյալների առաջնորդությանը:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Աշխարհը մեզ մարտահրավերներ է նետում . . . [Երբ մենք տաճար ենք գնում] . . . մենք ավելի ունակ ենք դառնում տանել ամեն մի փորձություն և հաղթահարել յուրաքանչյուր գայթակղություն: . . . Մենք նորոգվում և ամրանում ենք»:[21]

Գայթակղությունների, շեղումների և խեղաթյուրումների աճող քանակությամբ աշխարհը մոլորության մեջ է գցում հավատարիմներին, համոզելով նրանց անտեսել անցյալի հզոր հոգևոր փորձառությունը, վերաձևակերպելով դրանք որպես խենթ խաբկանք:

Աշխարհին հաղթելը, նույնիսկ, երբ մենք հուսահատ ենք, այն ժամանակի հիշեցումն է, երբ մենք ունեինք Փրկիչի սերն ու լույսը: Երեց Նիլ Ա. Մաքսվելը այսպես է մեկնաբանել այդպիսի փորձառություններից մեկը. «Ես օրհնված էի Աստծո կողմից, և ես գիտեի, որ Աստված գիտեր, որ ես գիտեի, որ օրհնված էի»:[22] Չնայած մենք ժամանակավորապես կարող ենք մոռացված զգալ Աստծո կողմից, մենք չենք մոռանում Աստծուն:

Աշխարհին հաղթելը չի նշանակում, որ մենք ապրում ենք մեկուսի կյանքով՝ պաշտպանված մահկանացու կյանքի անարդարություններից և դժվարություններից: Ավելի շուտ այն մեզ տալիս է հավատի ավելի ընդարձակ ըմբռնում, մեզ մոտեցնելով Փրկիչին և Նրա խոստումներին:

Չնայած կատարելագործումը չի ավարտվում այս կյանքում, աշխարհին հաղթահարելը գործուն է պահում մեր հավատը, հույս տալով, որ մի օր մենք «կկանգնե[նք] նրա առջև [և] այն ժամանակ կտեսնե[նք] ես նրա երեսը հաճույքով»[23] և կլսենք Նրա ձայնը. «Եկէք, ով իմ Հօր օրհնածները, ժառանգեցէք աշխարհքի սկզբից ձեզ համար պատրաստուած թագաւորութիւնը»:[24]

Երեց Բրյուս Դ. Փորթերի օրինակը

Անցյալ տարի դեկտեմբերի 28-ին մեր թանկագին ընկեր և սիրելի Բարձրագույն Իշխանավոր Երեց Բրյուս Դ. Փորթերը

ավարտեց իր մահկանացու կյանքը: Նա 64 տարեկան էր:

Առաջին անգամ ես հանդիպեցի Բրյուսին, երբ մենք ուսանող էինք Բրիգամ Յանգի Համալսարանում: Նա ամենալավ և ամենափայլուն ուսանողներից մեկն էր: Հարվարդի Համալսարանում Ռուսաստանի քաղաքականության և պատմություն թեմայով դոկտորի աստիճան ստանալուց հետո Բրյուսի մտածելակերպը և գրելու ունակությունը հռչակ բերեցին նրան, որը կարող էր շեղել նրան, բայց աշխարհիկ հարստությունն ու գովասանքը երբեք չմշուշապատեցին նրա տեսադաշտը: Նա հավատարիմ էր իր Փրկիչ Հիսուս Քրիստոսին, իր հավերժական կողակցին՝ Սյուզանին, իր երեխաներին և թոռներին:

Բրյուսը ծնվել էր երիկամի արատով: Նա վիրահատվեց, բայց ժամանակի ընթացքում նրա երիկամների վիճակը վատթարացավ:

1995-ին Բրյուսը կանչվեց որպես Բարձրագույն Իշխանավոր, որից հետո մենք ծառայեցինք Ֆրանկֆուրտում (Գերմանիա) մեր ընտանիքների հետ միասին, որտեղ Բրյուսի աշխատանքը կենտրոնացած էր Ռուսաստանում և Արևելյան Եվրոպայում:

Երեց և Քույր Փորթերները իրենց երիտասարդ ընտանիքի հետ:

Փորթերները, Ռուսաստանում ծառայելիս:

Երեց Փորթերի կյանքը կտրուկ փոխվեց 1997թ.-ին, երբ նրա երիկամի ֆունկցիան և առողջությունը սկսեցին վատթարանալ: Փորթերների ընտանիքը վերադարձավ Սոլթ Լեյք Սիթի:

Յոթանասունական ծառայելու 22 տարիների ընթացքում Բրյուսը բազմիզս հոսպիտալացվել է և տարել է 10 վիրահատություն: Երկու անգամ բժիշկներն ասել են Սյուզանին, որ Բրյուսը չի ապրի մինչև լույս, բայց նա ապրել է:

12 տարի որպես Բարձրագույն Իշխանավոր ծառայելու ընթացքում, Բրյուսի արյունը մաքրվել է դիալիզի օգնությամբ: Դիալիզը կատարվում էր շաբաթական հինգ անգամ չորս ժամով երեկոյան, որպեսզի նա կարողանար կատարել իր կոչման ծառայությունները օրվա ընթացքում և ընդուներ համաժողովի հանձնարարությունները հանգստյան օրերին: Երբ նրա առողջությունը չլավացավ մի քանի քահանայական օրհնություններից հետո, Բրյուսը շփոթված էր, բայց գիտեր ում էր ինքը վստահում:[26]

2010թ.-ին Բրյուսի որդին՝ Դեյվիդը, նրան տվեց իր երիկամը փոխպատվաստման համար: Այս անգամ նրա մարմինը չմերժեց փոխպատվաստումը: Դա հրաշք էր, որից հետո նրա առողջությունը սկսեց լավանալ և, ի վերջո, նրան և Սյուզանին թույլ տրվեց վերադառնալ նրանց սիրելի Ռուսաստան՝ նրա հետ ծառայելու Տարածքային Նախագահությունում:

Անցյալ տարվա դեկտեմբերի 26-ին Սոլթ Լեյք Սիթիի հիվանդանոցում մշտական վարակի դեմ պայքարելուց հետո նա բժիշկներին խնդրեց հեռանալ սենյակից: Բրյուսն ասաց Սյուզանին, «որ ինքը Հոգու միջոցով զգում էր, որ բժիշկներն այլևս ի զորու չեն փրկել իր կյանքը: Նա գիտեր, որ . . . Երկնային Հայրն իրեն տուն կտանի: Նա լցված էր խաղաղությամբ»:[27]

Դեկտեմբերի 28-ին Բրյուսը հիվանդանոցից տեղափոխվեց իր տուն: Մի քանի ժամ անց, շրջապատված իր ընտանիքով, նա խաղաղությամբ վերադարձավ իր երկնային տունը:

Տարիներ առաջ Բրյուս Փորթերը հետևյալ բառերն է գրել իր զավակներին.

«Վկայությունը, որ ես ունեմ Հիսուս Քրիստոսի ճշմարտության և սիրո մասին, եղել է իմ կյանքի կողմնացույցը: . . . Այն մաքուր, ուժգին վկայություն է Հոգուց այն մասին, որ Նա ապրում է, որ Նա իմ Փրկիչն է և Ընկերը կարիքի բոլոր պահերին»:[28]

«Մեր մարտահրավերն է . . . ճանաչել Փրկիչին և հաղթել աշխարհի փորձություններն ու գայթակղությունները Նրա հանդեպ ունեցած հավատով»:[29]

«Եկեք լինենք հավատարիմ և ճշմարիտ, վստահելով Նրան»:[30]

Բրյուս Դուգլաս Փորթերը հաղթեց աշխարհին:

Թող մեզանից յուրաքանչյուրն ավելի մեծ ջանքեր գործադրի հաղթելու աշխարհին, չանտեսելով լուրջ

մեղքերը, սակայն համբերատար լինելով փոքր սխալների ու շեղումների հանդեպ, մեծացնելով մեր հոգևոր առաջնթացի արագությունը և շռայլորեն օգնելով ուրիշներին: Երբ դուք լիովին վստահեք Փրկիչին, ես խոստանում եմ ավելի մեծ խաղաղություն այս կյանքում և ավելի մեծ հավաստիացում ձեր հավերժական ճակատագրում, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Teachings of Presidents of the Church: David O. McKay (2011), 1–2.*
2. Հայտնություն 3.5
3. Վարդապետություն և Ուխտեր 76.64
4. Տես Հայտնություն 2, գլխագիր
5. Հայտնություն 3.12
6. Ա Հովհաննես 4.19
7. Հովհաննես 16.33
8. Վարդապետություն և Ուխտեր 64.2
9. "I'm Trying to Be like Jesus," *Children's Songbook,* 78.
10. Ալմա 5.13
11. Եսայիա 1.18
12. Մարկոս 12.30
13. C. S. Lewis, *Mere Christianity.* (1960), 167
14. Վարդապետություն և Ուխտեր 20.77
15. Տես James E. Faust, "The Voice of the Spirit." (Brigham Young University fireside, Sept. 5, 1993), speeches.byu.edu
16. Հովհաննես 14.27
17 Տես Մարկոս 12.31
18. Մատթեոս 23.11
19. Հովհաննես 15.18–19
20. Ռասսել Մ. Նելսոն, «Մեր կյանք հրավիրենք Հիսուս Քրիստոսի զորությունը», *Լիահոնա,* մայիս 2017, 40
21. Թոմաս Ս. Մոնսոն, «Սուրբ Տաճար. Փարոս աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2011, 93
22. Personal conversation with Elder Neal A. Maxwell referring to a story shared in his April 2004 conference talk, "Remember How Merciful the Lord Hath Been" (see *Liahona,* May 2004, 44–46
23. Ենովս 1.27
24. Մատթեոս 25.34
23. Երեց Փորթերի մտավոր կարողության օրինակն է հանդիսանում նրա 400 էջանոց գիրքը *«Պատերազմը և Պետության առաջացումը»* վերնագրով, գրված 23 տարի առաջ: Այն դեռևս առկա է և լայն տարածում ունի քաղաքական գործիչներ շրջանում:
26. Սյուզան Փորթերի անձնական նամակագրությունը , թվագրված 2017թ.-ի մարտի 6-ին:
27. Սյուզան Փորթերի անձնական նամակագրությունը , թվագրված 2017թ.-ի մարտի 6-ին:
28. Bruce D. Porter, *The King of Kings* (2000), 14, 15.
29. Bruce D. Porter, *The King of Kings,* 7.
30. Bruce D. Porter, *The King of Kings,* 18.

Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորում

Վերադառնալ և ստանալ

Ամենակարևոր նպատակները, որոնք կարող ենք սահմանել՝ վերադառնալ Աստծո ներկայություն և ստանալ հավերժական օրհնություններ, տեղի կունենա ուխտեր կապելու և դրանք պահելու արդյունքում:

Իմ եղբայրնե՛ր և քույրե՛ր, ինձ հանձնարարված է այժմ ելույթ ունենալ ձեզ համար, իսկ ձեզ հանձնարարված է՝ լսել: Իմ նպատակն է ավարտել իմ հանձնարարությունն ավելի շուտ, քան դուք կավարտեք ձերը: Ես կաշխատեմ դա անել:

Տարիներ շարունակ ես նկատել եմ, որ մարդիկ, ովքեր ամենաշատ նվաճումներն ունեն այս աշխարհում, նրանք են, ովքեր ունեն իրենց կյանքի տեսլականը, ունեն նպատակներ, որոնք նրանց կենտրոնացնում են տեսլականի վրա, և ունեն մարտավարական ծրագրեր, թե ինչպես հասնել այդ նպատակներին: Իմանալով, թե ուր եք գնում և ինչպես եք պատրաստվում հայտնվել այնտեղ, կարող եք ձեր կյանքին տալ իմաստ, նպատակ և հաջողություն:

Ոմանք դժվարանում են տարբերել նպատակն ու ծրագիրը, մինչև

չեն սովորում, որ նպատակը նշանակման վայրն է կամ *վերջը*, մինչդեռ ծրագիրը երթուղին է, որով դուք հասնում եք այնտեղ: Օրինակ, մենք կարող ենք ունենալ նպատակ՝ մեքենան վարել դեպի մի անծանոթ վայր, և սիրելի քույրե՛ր, ինչպես ձեզանից ոմանք գիտեն, տղամարդիկ հաճախ կարծում են, թե գիտեն՝ ինչպես հասնել այնտեղ, որը հաճախ է հանգեցնում նրան, որ ասում են. «Ես գիտեմ, դա հենց հաջորդ խաչմերուկի մոտ է»: Կինս երևի ժպտում է: Նպատակը պարզ էր, սակայն նպատակակետին հասնելու համար չկար մի լավ ծրագիր:

Նպատակի սահմանումն իրականում սկսվում է, երբ մտքում արդեն ունենք ավարտը: Իսկ ծրագիր կազմելը՝ ավարտին հասնելու ուղի մշակելն է: Երջանկության բանալին իսկապես կարևոր նպատակակետերը հասկանալու մեջ է, որից հետո պետք է մեր ժամանակը, ջանքերը և ուշադրությունը կենտրոնացնենք այն բաների վրա, որոնք վստահ ճանապարհ կգցեն այնտեղ հասնելու համար:

Աստված՝ մեր Երկնային Հայրը, նպատակ սահմանելու և ծրագրելու հրաշալի օրինակ է տվել մեզ: Նրա նպատակն է «իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»[1] և այդ նպատակին հասնելու Նրա միջոցը փրկության ծրագիրն է:

Մեր սիրելի Երկնային Հոր ծրագիրը տալիս է մեզ աճելու, ձգտելու, սովորելու հնարավորություն, մահկանացու կյանք, որոնց միջոցով մենք կարող ենք ավելի նմանվել Նրան: Ծածկելով մեր հավերժական հոգիները ֆիզիկական մարմիններով, ապրելով Նրա Որդու՝ Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքներին և պատվիրաններին համաձայն, կազմելով հավերժական ընտանիքներ, ինչպես նաև Փրկիչի քավության շնորհիվ մեզ կհաջողվի իրականացնել Աստծո նպատակը՝ Նրա զավակների անմահությունն ու հավերժական կյանքը Նրա հետ սելեստիալ թագավորությունում:

Իմաստուն նպատակադրությունը ենթադրում է հասկանալ, որ կարճաժամկետ նպատակներն այն դեպքում են արդյունավետ, երբ դրանք հանգեցնում են հստակ հասկանալի երկարաժամկետ նպատակների: Ես կարծում եմ, որ երջանկության կարևոր բանալիներից մեկն է սովորել, թե ինչպես սահմանենք մեր սեփական նպատակները և ստեղծենք ծրագրեր մեր Երկնային Հոր հավերժական ծրագրի շրջանակներում: Եթե մենք կենտրոնանանք այս հավերժական ուղու վրա, մենք անպայման կարժանանանք Նրա ներկայություն վերադառնալուն:

Լավ է նպատակներ և ծրագրեր ունենալ մեր կարիերայի, կրթության, նույնիսկ գոլֆի խաղի համար: Կարևոր է նաև նպատակներ ունենալ մեր ամուսնության, ընտանիքի և Եկեղեցու մեր խորհուրդների ու կոչումների վերաբերյալ, սա հատկապես տեղին է միսիոներների դեպքում: Բայց մեր ամենամեծ և առավել գերիշխող նպատակները պետք է լինեն Երկնային Հոր հավերժական ծրագրի շուրջ:

Հիսուսն ասել է. «Բայց փնտրեք, նախ, Աստծո արքայությունը և նրա արդարությունը, և բոլոր այս բաները կտրվեն ձեզ»:[2]

Նպատակադրման հարցում փորձառու մարդիկ ասում են, որ որքան պարզ ու շիտակ է նպատակը, այնքան ավելի արդյունավետ է այն: Երբ կարող ենք ամփոփել նպատակը, վերածելով մի պարզ պատկերի կամ մեկ-երկու զորավոր ու սիմվոլիկ խոսքերի, նպատակն այդ ժամանակ կդառնա մեր անբաժանելի մասը և, ըստ էության, կառաջնորդի մեր մտածած ու կատարած ամեն մի քայլը: Իմ համոզմամբ, կա երկու բառ, որոնք այս համատեքստում խորհրդանշում են Աստծո նպատակները մեզ համար և մեր ամենակարևոր նպատակներն են մեր վերաբերյալ: Դրանք են *վերադառնալ* և *առանալ* բառերը:

Նրա ներկայություն *վերադառնալը* և հավերժական օրհնություններ *առանալը*, որոնք իրականացվում են ուխտեր կապելով և պահելով, ամենակարևոր նպատակներն են, որոնք մենք կարող ենք սահմանել:

Մենք *վերադառնում* և *ստանում* ենք՝ «անխախտ հավատքով [Տեր Հիսուս Քրիստոսի] հանդեպ, ամբողջովին ապավինելով նրա արժանիքներին, . . . առաջ մղվե[լով] Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ, ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր՝ Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ . . . սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերե[լով] մինչև վերջ»:[3]

Լյուցիֆերը չընդունեց մեր Հոր ծրագիրը, որը թույլ է տալիս մեզ *վերադառնալ* Նրա ներկայություն և *ստանալ* Նրա օրհնությունները: Ի դեպ, Լյուցիֆերն ապստամբեց և փորձեց ամբողջությամբ փոխել մեր Հոր ծրագիրը, ցանկանալով իրեն վերցնել Աստծո փառքը, պատիվը և զորությունը: Արդյունքում նա իր կողմնակիցների հետ վտարվեց Աստծո ներկայությունից և «դարձավ սատանա, այո, այսինքն՝ դևը, բոլոր ստերի հայրը, որ խաբի և կուրացնի մարդկանց, և գերության տանի նրանց իր կամքով, նույնիսկ բոլոր նրանց, ովքեր չեն կամենա ականջ դնել [Տիրոջ] ձայնին»:[4]

Իր նախաերկրային ընտրությունների պատճառով Սատանան չի կարող ո՛չ *վերադառնալ,* ո՛չ էլ՝ *ստանալ*: Միակ բանը, որ մնում է նրան՝ ընդդիմանալ Հոր ծրագրին,

օգտագործելով բոլոր հնարավոր հրապուրանքներն ու գայթակղությունները, մեզ տանելու ներքև և դարձնելու թշվառ, ինչպես ինքն է:[5] Սատանայի դիվային նպատակն իրականացնելու ծրագիրը վերաբերում է ցանկացած անհատի, սերնդի, մշակույթի և հասարակության: Նա օգտագործում է բարձր ձայներ՝ ձայներ, որոնք փորձում են խորտակել Սուրբ Հոգու մեղմ ու ցածր ձայնը, որը մեզ ցույց է տալիս «բոլոր բաները», որոնք մենք պետք է անենք, որպեսզի *վերադառնանք* և *ստանանք*:[6]

Այդ ձայները պատկանում են նրանց, ովքեր արհամարհում են ավետարանի ճշմարտությունը, ովքեր օգտագործում են համացանցը, սոցիալական և տպագիր լրատվամիջոցները, հեռուստատեսությունն ու ֆիլմերը, որպեսզի հրապուրիչ ձևով ներկայացնեն անբարոյականությունը, բռնությունը, տգեղ լեզուն, կեղտն ու գռեհկությունը. մի ձև, որը կշեղի մեզ հավերժությանն ուղղված մեր նպատակներից և ծրագրերից:

Այս ձայները կարող են ներառել նաև բարյացակամ անհատներին, ովքեր կուրացած են տղամարդկանց և կանանց աշխարհիկ փիլիսոփայություններով, ովքեր ձգտում են ոչնչացնել հավատքը և շեղել մարդկանց հավերժական կենտրոնացումը, ովքեր պարզապես փորձում են *վերադառնալ* Աստծո ներկայություն և *ստանալ* §այն ամենն, ինչ [մեր] Հայրն ունի¦:[7]

Ես պարզել եմ, որպեսզի կենտրոնացած մնամ *վերադառնալու* և *ստանալու* խոստացված օրհնությունների վրա, ես պետք է պարբերաբար ժամանակ գտնեմ հարցնելու ինքս ինձ. «Ինչպե՞ս են իմ գործերը»:

Դա նման է ինքդ քեզ հետ անհատական առանձնազրույց ունենալուն: Եթե դա տարօրինակ է թվում, մտածեք դրա մասին. այս աշխարհում ձեզանից լավ ո՞վ է ձեզ ճանաչում: Դուք գիտեք ձեր մտքերը, սեփական գործողությունները, ձեր ցանկությունները և երազանքները, նպատակներն ու ծրագրերը: Եվ դուք ավելի լավ գիտեք, քան ուրիշ որևէ մեկը, թե ինչպես եք առաջադիմում *վերադառնալու* և *ստանալու* ճանապարհին:

Այս անձնական առանձնազրույցի ժամանակ որպես ուղեցույց ես սիրում եմ կարդալ և խորհել ինքնավերլուծական խոսքերը, որոնք տրված են Ալմայի հինգերերդ գլխում, որտեղ Ալման հարցնում է. «Ծնվե՞լ եք դուք Աստծուց հոգևորապես: Ընդունե՞լ եք դուք նրա պատկերը ձեր դեմքին: Զգացե՞լ եք դուք այս հզոր փոփոխությունը ձեր սրտերում»:[8] Ալմայի հարցերը հիշեցնում են, թե մեր նպատակներն ու ծրագրերը ինչ պիտի պարունակեն, որպեսզի *վերադառնանք* և *ստանանք*:

Հիշեք Փրկիչի հրավերը. «Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ:

Ձեզ վրա առէք իմ լուծը և ինձանից սովորեցէք. որովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք»:[9]

Երբ մեծացնում ենք մեր հավատքը Տեր Հիսուս Քրիստոսի զորության հանդեպ, որը տալիս է հանգստություն մեր հոգիներին՝ ներելով մեր մեղքերը, փրկագնելով անկատար հարաբերությունները, բուժելով հոգևոր վերքերը, որոնք զսպում են աճը, մի զորության, որն ամրացնում է մեզ ու հնարավորություն տալիս, որ զարգացնենք քրիստոսանման հատկանիշներ, ապա մենք ավելի խորն ենք գնահատում Տեր Հիսուս Քրիստոսի Քավության մեծությունը:[10]

Գալիք շաբաթների ընթացքում ժամանակ գտեք վերանայելու ձեր կյանքի նպատակները և ծրագրերը, հավաստիացեք, որ դրանք համահունչ են մեր երջանկությանը նվիրված Երկնային Հոր մեծ ծրագրի հետ: Եթե կարիք ունեք ապաշխարելու և փոխվելու, ապա աշխատեք հիմա անել դա: Ժամանակ գտեք աղոթքով խորհել, թե ինչ փոփոխություններ են հարկավոր, որպեսզի լինեք «պարզ աչքով ուղղված Աստծո փառքին»:[11]

Վարդապետությունը և Հիսուս Քրիստոսի ավետարանը մենք պետք է պահենք մեր նպատակների և ծրագրերի կենտրոնում: Առանց

Նրա ոչ մի հավերժական նպատակ հնարավոր չէ և հավերժական նպատակներին հասնելու մեր ծրագրերն անկասկած կձախողվեն:

Լրացուցիչ օգնության աղբյուր կարող է հանդիսանալ «Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը»[12] նյութը, որը ներկայացվել է Եկեղեցուն 2000 թվականի հունվարի 1-ին: Այն դրեք տեսանելի մի տեղում և ժամանակ գտեք աչքի անցկացնել յուրաքանչյուր կետը, որ գրված է Քրիստոսի մասին ոգեշնչված այս վկայության մեջ Նրա հատուկ վկաների կողմից, ովքեր և ստորագրել են այն:

Ես կհորդորեի ձեզ կարդալ դա «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին» հռչակագրի հետ մեկտեղ: Մենք հաճախ ենք խոսում ընտանիքի հայտարարության մասին, սակայն խնդրում եմ հիշեք, որ կարդաք այն Կենդանի Քրիստոսի փրկող զորության լույսի ներքո: Առանց Կենդանի Քրիստոսի, մեր ամենաբաղձալի ակնկալիքներն անկատար կմնան: Ինչպես ասվում է ընտանիքի հայտարարության մեջ. «Երջանկության աստվածային ծրագիրը հնարավորություն է տալիս, որ ընտանեկան կապերը շարունակվեն մահից հետո: Սուրբ տաճարներում կատարվող սուրբ արարողություններն ու ուխտերը հնարավոր են դարձնում անհատների համար՝ վերադարձը դեպի Աստծո ներկայությունը, իսկ ընտանիքների համար՝ հավերժական միասնությունը»:[13]

Սա կարող է տեղի ունենալ միայն շնորհիվ նրա, որ Կենդանի Քրիստոսն է աշխարհին քավություն պարգևող Փրկիչն ու Քավիչը:

Այս կապակցությամբ դուք կարող եք նաև որոնումներ կատարել սուրբ գրություններում, որպեսզի ավելի խորը հասկանաք «Կենդանի Քրիստոս»-ում գտնվող հատուկ ճշմարտությունները:

«Կենդանի Քրիստոսը» աղոթքով կարդալը նման է Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի, ինչպես նաև Մորմոնի Գրքի մարգարեների վկայությունները կարդալուն: Դա կմեծացնի ձեր հավատքը Փրկիչի հանդեպ և կօգնի,

որ կենտրոնացած մնաք Նրա վրա, երբ ծրագրեր եք կազմում՝ ձեր հավերժական նպատակներին հասնելու համար:

Չնայած մեր սխալներին, թերություններին, շեղումներին և մեղքերին, Հիսուս Քրիստոսի քավությունը թույլ է տալիս մեզ ապաշխարել, պատրաստվել *վերադառնալու* և *ստանալու* Աստծո խոստացած անզուգական օրհնությունները, որպեսզի ընդմիշտ ապրենք Հոր և Որդու հետ սելեստիալ թագավորության ամենաբարձր փառքում:[14]

Այժմ, ինչպես բոլորդ գիտեք, ոչ ոք չի խուսափելու մահից, հետևաբար, մեր երկարաժամկետ նպատակն ու ծրագիրը պետք է լինի այն, որ երբ մենք *վերադառնանք* մեր Երկնային Հոր մոտ, *ստանանք* «այն ամենն, ինչ Հայրն ունի», նախատեսված մեզանից յուրաքանչյուրի համար:[15]

Ես վկայում եմ, որ մահկանացու կյանքում չկա ավելի մեծ նպատակ, քան մեր Երկնային Ծնողների և մեր սիրելի Փրկիչ՝ Տեր Հիսուս Քրիստոսի հետ հավերժ ապրելը: Սակայն դա ավելին է, քան *մեր* նպատակը, դա նաև *Նրանց* նպատակն է: Նրանք կատարյալ սեր ունեն մեր հանդեպ, ավելի զորավոր, քան մենք կարող ենք նույնիսկ ընկալել: Նրանք ամբողջությամբ, լիարժեք, հավերժ միավորված են մեզ հետ: Մենք նրանց աշխատանքն ենք: Մեր փառքը Նրանց փառքն է: Ամեն ինչից առավել Նրանք ցանկանում են, որ մենք տուն գնանք՝ *վերադառնանք* և *ստանանք* հավերժական երջանկություն Իրենց ներկայությունում:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մի շաբաթից մենք կտոնենք Արմավենյաց Կիրակին՝ հիշատակելով Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ: Երկու շաբաթից մենք կտոնենք Զատիկի Կիրակին, նշելով Փրկիչի հաղթանակը մահվան հանդեպ:

Կենտրոնացնելով մեր ուշադրությունը Փրկիչի վրա այս երկու հատուկ կիրակիների ընթացքում, եկեք հիշենք Նրան և թարմացնենք մեր կյանքի տևողությամբ պարտավորությունը՝ պահել Նրա պատվիրանները: Եկեք նայենք մեր սեփական կյանքի խորքերը, նպատակներ դնենք և կենտրոնանանք մեր ծրագրերի վրա, որոնք համահունչ կլինեն Աստծուն, այնպես, որ ի վերջո, կտանեն մեզ դեպի *վերադառնալու* և *ստանալու* մեր թանկագին արտոնությունը: Սա է իմ խոնարհ աղոթքը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մովսես 1.39
2. 3 Նեփի 13.33
3. 2 Նեփի 31.19–20
4. Մովսես 4.4
5. Տես 2 Նեփի 2.18
6. Տես 2 Նեփի 32.5
7. Վարդապետություն և Ուխտեր 84.38
8. Ալմա 5.14
9. Մատթեոս 11.28–29
10. See "Becoming Like God," Gospel Topics, topics.lds.org.
11. Վարդապետություն և Ուխտեր 4.5
12. Տեսե "The Living Christ: The Testimony of the Apostles," *Liahona,* Apr. 2000, 2–3:
13. Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին, *Լիահոնա,* նոյ. 2010, 129.
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 62; 70
15. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.38

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Բարություն, գթություն և սեր

Եկե՛ք քննենք մեր կյանքը և որոշենք հետևել Փրկիչի օրինակին՝ լինելով բարի, սիրող և գթառատ։

Իմ սիրելի՛ եղբայրներ, ինձ համար մեծ պատիվ ու արտոնություն է իմ խոսքն ուղղել ձեզ՝ աշխարհի տարբեր ծայրերից հավաքված Աստծո քահանայության հավատարիմ կրողներին։ Այս երեկո կխոսեմ մի թեմայի շուրջ, որի մասին ես նախկինում ելույթ եմ ունեցել։

Մարգարե Մորմոնը նշել է Փրկիչի կարևոր բնութագրերից մեկը, որը պիտի ընդօրինակեն Նրա աշակերտները։ Նա ասել է.

«Եվ եթե մարդ հեզ է ու սրտով խոնարհ, և խոստովանում է Սուրբ Հոգու զորությամբ, որ Հիսուսը Քրիստոսն է, նա անպայման պետք է ունենա գթություն. քանզի եթե նա չունի գթություն, նա ոչինչ է. ուստի, նա անպայման պետք է ունենա գթություն։

Եվ գթությունը երկայնամիտ է և բարի, չի նախանձում, փքված չէ, իրենը չի փնտրում, չի գրգռվում հեշտորեն։ . . .

Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ, եթե դուք չունեք գթություն, դուք ոչինչ եք, քանզի գթությունը երբեք չի խափանվում։ Ուստի, հարե՛ք գթությանը, որը բոլորից մեծ է, քանզի բոլոր բաները պիտի խափանվեն,

Բայց գթությունը Քրիստոսի մաքուր սերն է, և այն տևում է հավերժ. և ով որ օժտված լինի դրանով վերջին օրը, նրա համար լավ կլինի»։[1]

Եղբայրներ, մենք չենք պատվում Աստծո քահանայությունը, եթե մենք բարյացակամ չենք ուրիշների հանդեպ։

Իմ սիրելի ընկեր և գործընկեր Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինն իսկապես բարի մարդ էր։ Նա ասել է.

«Բարությունը սելեստիալ կյանքի հիմնական սկզբունքն է։ Քրիստոսանման անձը բարությամբ է վերաբերվում ուրիշներին։ Բարությունը պետք է ներթափանցի մեր խոսքերի ու գործերի մեջ՝ աշխատանքում, դպրոցում, եկեղեցում և, հատկապես, մեր տներում։

Հիսուսը, մեր Փրկիչը, բարության և կարեկցանքի մեծագույն օրինակ է ծառայել»։[2]

Սուրբ գրություններն ուսուցանում

են մեզ, որ քահանայության արդար կիրառումը կախված է բարության, գթության և սիրո սկզբունքների մեր ապրելակերպից:

Ոչ մի զորություն կամ ազդեցություն չի կարող և չպետք է պահպանվի քահանայության շնորհիվ. միայն համոզումով, . . . մեղմությամբ և հեզությամբ և անկեղծ սիրով.

Բարությամբ և մաքուր գիտելիքով, որոնք անչափ մեծացնում են հոգին՝ առանց կեղծավորության ու առանց նենգության»:[3]

Եղբայրնե՛ր, եկե՛ք քննենք մեր կյանքը և որոշենք հետևել Փրկիչի օրինակին՝ լինելով բարի, սիրող և գթառատ: Եվ եթե այդպես վարվենք, մենք կլինենք ավելի բարենպաստ դիրքում, որպեսզի կարողանանք իջեցնել երկնքի զորությունները՝ մեզ համար, մեր ընտանիքների և մեր ընկերակից ուղեկիցների համար՝ դեպի հետ մեր երկնային տուն տանող այս դժվարին ճանապարհին: Այդ մասին ես աղոթում եմ, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մորոնի 7.44–47
2. Ջոզեֆ Բ. Վիրթլին, «Բարության առաքինությունը,» *Լիահոնա,* մայիս 2005, 26:
3. Վարդապետություն և ուխտեր 121.41–42

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Տասներկու Առաքյալների Քվորում

Գործին կանչված

Հատուկ տարածքում աշխատելու համար նշանակումն անհրաժեշտ և կարևոր է, սակայն երկրորդական է գործին կանչվելու համեմատությամբ:

Նախագահ Մոնսոն, մենք ոգևորվում ենք ձեր ձայնը լսելուց և ձեզանից առաջնորդություն ստանալուց: Մենք սիրում ենք ձեզ, աջակցում ենք ձեզ ու միշտ աղոթում ենք ձեզ համար:

Ես աղոթում եմ, որ Սուրբ Հոգին մեզ օգնի, մինչ մենք միասին կքննարկենք ավետարանը ամեն ազգի,ցեղի,լեզվի և ժողովրդի[1] քարոզելու կարևոր աշխատանքին վերաբերող սկզբունքները:

Կանչված եք ծառայելու և նշանակված եք աշխատելու

Ամեն տարի տասնյակ հազարավոր երիտասարդ տղամարդիկ ու երիտասարդ կանայք և շատ տարեց զույգեր անհամբերությամբ սպասում են մի հատուկ նամակի Սոլթ Լեյք Սիթիից: Նամակի բովանդակությունը ընդմիշտ ներգործում է այն մարդու վրա, ում ուղղված է, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների ու շատ այլ մարդկանց վրա: Ծրարը ստանալուն պես այն բացում են զգուշորեն և համբերությամբ, կամ պատռում են հուզմունքով ու շտապողականությամբ: Այս հատուկ նամակի ընթերցումը մի անմոռանալի փորձառություն է:

Նամակը ստորագրված է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահի կողմից, և առաջին երկու նախադասություններն այսպես են հնչում. «Սույն նամակով դուք կանչված եք ծառայելու որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներ: Դուք նշանակված եք աշխատելու _____ միսիայում»:

Խնդրում եմ, ուշադրություն դարձրեք, որ առաջին նախադասությունը Տիրոջ վերականգնված Եկեղեցում որպես լիաժամկետ միսիոներ ծառայելու կանչն է: Երկրորդ նախադասությունը նշում է հատուկ վայրում և միսիայում աշխատելու հանձնարարությունը: Բոլորիս համար անհրաժեշտ է հասկանալ այս երկու նախադասություններում արտահայտված կարևոր հստակեցումը:

Եկեղեցու մշակույթում մենք հաճախ խոսում ենք որևէ երկիր, օրինակ՝ Արգենտինա, Լեհաստան, Կորեա կամ Միացյալ Նահանգներ ծառայելու կանչի մասին: Սակայն միսիոները չի կանչվում ինչ-որ վայր, այլ կանչվում է ծառայելու: Ինչպես Տերն է հայտնել 1829թ.-ին Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով, «Եթե դուք ցանկություն ունեք Աստծուն ծառայելու, ապա կանչված եք գործին»:[2]

Միսիայի յուրաքանչյուր կանչ և հանձնարարություն կամ հաջորդող վերահանձնարարություն հանդիսանում է Տիրոջ ծառաների միջոցով ստացված հայտնություն: Գործին կանչվելը գալիս է Աստծուց՝ Եկեղեցու Նախագահի միջոցով: Ներկայումս ողջ աշխարհում գործող 400-ից ավելի միսիաներից մեկում նշանակվելը գալիս է Աստծուց՝ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներից մեկի միջոցով, ով գործում է Տիրոջ կենդանի մարգարեի լիազորության ներքո: Մարգարեության և հայտնության հոգևոր պարգևներն ուղեկցում են միսիայի բոլոր կանչերն ու հանձնարարությունները կատարելիս:

Վարդապետություն և Ուխտերի 80-րդ բաժինը մի հիշատակարան է Ստեփան Բարնեթի միսիոներական կանչի մասին՝ տրված Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով 1832թ.-ին: Ուսումնասիրելով Եղբայր Բարնեթի կանչը կարող ենք (1) ավելի պարզ հասկանալ որպես միսիոներ «գործին կանչված» լինելու ու որոշակի տարածքում «աշխատելու համար նշանակված» լինելու տարբերությունը և (2) լիարժեք գնահատել ավետարանը քարոզելու մեր անհատական և աստվածայնորեն նշանակված պատասխանատվությունը:

Այս բաժնի 1-ին հատվածը ծառայելու կանչ է. «Ճշմարիտ, այսպես է ասում Տերը քեզ, իմ ծառա՛ Ստեփան Բարնեթ. գնա՛, գնա՛ աշխարհի մեջ և քարոզիր ավետարանն ամեն արարածի, ում հասանելի է քո ձայնի հնչումը»:[3]

Հետաքրքրական է, որ 2-րդ հատվածը Եղբայր Բարնեթին հայտնում է իր միսիոներական զուգընկերոջ մասին, ով նշանակված է ծառայել նրա հետ. «Եվ քանի որ դու գործընկեր ես ուզում, ես կտամ քեզ իմ ծառա Իդեն Սմիթին»:[4]

3-րդ հատվածը ցույց է տալիս, թե որտեղ են այս երկու միսիոներները ծառայելու. «Ուստի, գնացեք և քարոզեք իմ ավետարանը, թե՛ դեպի հյուսիս, թե՛ դեպի հարավ, թե՛ դեպի արևելք, թե՛ դեպի արևմուտք, նշանակություն չունի, քանզի հնարավոր չէ, որ դուք սխալ գնաք»:[5]

Չեմ կարծում, որ այս հատվածում Տիրոջ կողմից կիրառված «նշանակություն չունի» արտահայտությունը նշանակում է, որ Նրան չի հետաքրքրում, թե որտեղ են Իր ծառաներն աշխատում: Իրականում, Նրան խորապես մտահոգում է դա: Սակայն, քանի որ ավետարանը քարոզելու աշխատանքը Տիրոջ գործն է, Նա ոգեշնչում, ուղղորդում և առաջնորդում է Իր լիազորված ծառաներին: Երբ միսիոներները ձգտում են ավելի արժանի և ունակ գործիքներ լինել Նրա ձեռքում և իրենց հնարավորությունների չափ հավատարմությամբ կատարել իրենց պարտականությունները, ապա որտեղ էլ որ ծառայեն, Նրա օգնությամբ «հնարավոր չէ, որ [նրանք] սխալ [գնան]»: Գուցե այս հայտնությունում Փրկիչի ուսուցանած դասերից մեկն այն է, որ հատուկ տարածքում աշխատելու համար նշանակումն անհրաժեշտ և կարևոր է, սակայն երկրորդական է գործին կանչվելու համեմատությամբ:

Հաջորդ հատվածն ընդգծում է բոլոր միսիոներների համար կարևոր որակավորումները. «Հետևաբար, հայտարարեք այն բաները, որոնք դուք *լսել* եք, և արդարև *հավատացել* եք, և *գիտեք, որ ճշմարիտ են*»:[6]

Վերջին հատվածը Եղբայր Բարնեթին և մեզանից յուրաքանչյուրին հիշեցնում է, թե ծառայելու կանչն ումից է իրականում գալիս. «Ահա, սա է կամքը նրա, ով կանչել է ձեզ, ձեր Քավիչի, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի: Ամեն»:[7]

Հաղթահարել թյուրիմացությունը

Ձեզանից մի քանիսը հավանաբար մտածում են, թե ինչու եմ քահանայության գերագույն համաժողովին ընտրել խոսել գործին կանչվելու և աշխատանքին նշանակվելու միջև եղած ակնհայտ տարբերության մասին: Իմ պատասխանն այս հարցին շատ պարզ է. իմ փորձառությունն ինձ սովորեցրել է, որ Եկեղեցու շատ անդամներ լավ չեն հասկանում այս սկզբունքները:

Այս հարցի շուրջ խոսելու ամենամեծ պատճառն այն է, ինչը ես սովորել եմ ժամանակի ընթացքում շատ միսիոներների ունեցած մտահոգությունների, անհանգստության և նույնիսկ մեղքի զգացումի մասին, ովքեր զանազան պատճառներով իրենց ծառայության ընթացքում վերանշանակվել են աշխատելու այլ տարածքում: Ավետարանը քարոզելու աշխատանքի ընթացքում նման վերանշանակումները երբեմն անհրաժեշտ են որոշ իրադարձությունների և հանգամանքների պատճառով, օրինակ՝ վթարներն ու վնասվածքները, վիզա ձեռք բերելիս ուշացումներն ու խոչնդոտները, քաղաքական անկայունությունը, նոր միսիաների ստեղծումն ու համալրումը կամ աշխարհում մշտական ծավալվող ու փոփոխվող կարիքները:[8]

Երբ միսիոները վերանշանակվում է ծառայել այլ տարածքում, այդ և սկզբնական նշանակման գործընթացները միևնույնն են: Տասներկուսի Քվորումի անդամները բոլոր նման վերանշանակումները կատարելիս հետևում են աստվածային ոգեշնչմանն ու առաջնորդությանը:

Վերջերս ես խոսեցի մի հավատարիմ մարդու հետ, ով ինձ հետ կիսվեց իր սրտի խորքում եղած զգացումներով: Ժողովներից մեկի ընթացքում ես բացատրել էի գործին կանչվելու և աշխատանքին նշանակվելու միջև եղած տարբերությունը: Այս բարի եղբայրը սեղմեց ձեռքս և արցունքն աչքերին ասաց ինձ. «Այն ամենն, ինչ դուք օգնեցիք ինձ հասկանալ այսօր, թեթևացրեց բեռս, որը ես կրում էի ավելի քան 30 տարի: Որպես երիտասարդ միսիոներ, իմ սկզբնական հանձնարարությունը Հարավային Ամերիկայի տարածքում էր: Սակայն ես չկարողացա վիզա ձեռք բերել, և հետևաբար ինձ նշանակեցին Միացյալ Նահանգներ: Այս բոլոր տարիների ընթացքում մտածում էի, թե ինչու չկարողացա ծառայել այնտեղ, որտեղ կանչված էի: Այժմ գիտեմ, որ կանչված էի գործին, այլ ոչ թե ինչ-որ տարածք: Այս սկզբունքի ըմբռնումն ինձ օգնեց ավելի շատ, քան կարող եմ արտահայտել»:

Սրտիս խորքում կարեկցանք զգացի այս լավ մարդու հանդեպ: Աշխարհի տարբեր մասերում այս

հիմնական սկզբունքներն ուսուցանելիս շատ մարդիկ անհատապես մոտեցել են ինձ ու արտահայտել միևնույն զգացումներն, ինչ որ այս մարդն արտահայտեց: Այսօր ես խոսում եմ այս թեմայի շուրջ, որպեսզի այս Եկեղեցու ոչ մի անդամ չկրի թյուրիմացության, անորոշության, տանջանքի կամ մեղքի զգացումի ավելորդ բեռը աշխատանքին նշանակվելու հարցում:

«Ուստի, գնացեք և քարոզեք իմ ավետարանը, թե՛ դեպի հյուսիս, թե՛ դեպի հարավ, թե՛ դեպի արևելք, թե՛ դեպի արևմուտք, նշանակություն չունի, քանզի հնարավոր չէ, որ դուք սխալ գնաք»:[9] Երբ խորհեք այս հատվածի բառերի շուրջ և բացեք ձեր սրտերը, հույս ունեմ և աղոթում եմ, որ կհրավիրեք Սուրբ Հոգուն ձեր հոգու խորքը բերել այն ըմբռնումը, ապաքինումն ու վերականգնումը, որի կարիքը դուք ունեք:

Պատճառներից մեկը, որը ոգեշնչեց ինձ խոսել այս թեմայով, հանդիսանում է տարիներ շարունակ միսիոներներին իրենց տարածքներում նշանակելու իմ փորձառությունը: Ոչինչ այնպես հզոր չի հաստատում վերջին օրերի շարունակական հայտնության իրական լինելը, որքան Տասներկուսի Քվորումի համար Տիրոջ կամքի զգացողությունը, երբ մենք կատարում ենք մեր պարտականությունը՝ միսիոներներին իրենց համապատասխան տարածքներում նշանակելիս: Ես վկայում եմ, որ Փրկիչը ճանաչում է և հոգ է տանում մեզանից յուրաքանչյուրի մասին «մեկ առ մեկ» և անուն առ անուն:

Նախապատրաստվենք գործի կանչվել

Այժմ ես ցանկանում եմ համառոտ անդրադառնալ մի հիմնարար, սակայն երբեմն անտեսվող հարցի, որն առնչվում է գործին կանչվելու հետ:

Երեք փոխկապակցված բառեր բնութագրում են պատրաստված ու առաջընթաց ունեցող Աստծո որդիների օրինակը. *քահանայություն, տաճար, միսիա*: Երբեմն, որպես ծնողներ, ընկերներ ու Եկեղեցու անդամներ, մենք այնքան շատ ենք կենտրոնանում երիտասարդ տղամարդկանց միսիոներական նախապատրաստության վրա, որ ինչ-որ չափով կարող ենք անտեսել ուխտ կապելու ճանապարհին գտնվող մյուս էական քայլերը, որոնք անհրաժեշտ են իրականացնել լիաժամկետ միսիոներական աշխատանքը սկսելուց առաջ: Միսիոներ լինելն, անշուշտ, ողջ կյանքի հոգևոր աճի ու ծառայության համար ամուր հիմք զգելու գործընթացում հանդիսանում է էական տարրերից մեկը, սակայն ոչ միակը: Քահանայությունն ու տաճարային օրհնությունները, որոնք նախորդում են աշխատելու համար նշանակված տարածք հասնելուն, նույնպես անհրաժեշտ են մեր ողջ կյանքի ընթացքում մեզ հոգեպես ամրացնելու և զորացնելու համար:

Երիտասարդ տղամարդիկ, Ահարոնյան կամ փոքրագույն Քահանայության պարտականությունները կատարելիս դուք նախապատրաստվում եք ստանալ ու մեծարել Մելքիսեդեկյան կամ բարձրագույն Քահանայության երդումն ու ուխտը:[10] Անձնական արժանավորությունը միակ և ամենակարևոր պահանջմունքն է բարձրագույն քահանայությունը ստանալու համար: Ձեզ ողջ կյանքի ընթացքում սպասում է քահանայության ինքնամոռաց ծառայություն: Նախապատրաստվեք այժմ՝ հաճախակի մատուցելով իմաստալից ծառայություն: Խնդրում եմ, սովորեք սիրել արժանի լինել ու արժանի մնալ: Եղե՛ք արժանի: Մնացե՛ք արժանի:

Մելքիսեդեկյան Քահանայությունն ու ծառայելու կանչը ստանալուց հետո երիտասարդ տղամարդը կարող է սուրբ տաճարի ուխտերի ու արարողությունների միջոցով զինվել զորությամբ:[11] Տաճար գնալն ու տաճարի հոգին զգալը լիաժամկետ միսիոներին արդյունավետ ծառայություն են խոստանում: Երիտասարդ տղամարդիկ և Եկեղեցու անդամներ, ձեզ բոլորիդ համար անձնական արժանավորությունը միակ և ամենակարևոր պահանջմունքն է, որպեսզի ստանաք տաճարային օրհնությունները: Եթե ապրեք համաձայն ավետարանի չափանիշների, կարող եք մտնել Տիրոջ տունն ու մասնակցել սրբազան արարողություններին ձեր պատանեկության տարիներին: Ձեր սերը տաճարային

արարողությունների հանդեպ և դրանց ըմբռնումը կամրացնեն ու կօրհնեն ձեզ ձեր ողջ կյանքի ընթացքում: Խնդրում եմ, սովորեք սիրել արժանի լինել ու արժանի մնալ: Եղե՛ք արժանի: Մնացե՛ք արժանի:

Շատ երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք արդեն ունեն գործող սահմանափակ օգտագործման տաճարային երաշխավորագիր: Որպես Ահարոնյան Քահանայություն կրողներ, դուք փնտրում եք ձեր սեփական ընտանիքի անդամների անուններն ու տաճարում կատարում մկրտության ու հաստատման արարողություններ նրանց համար: Տաճարային երաշխավորագիր կրելը ցույց է տալիս ձեր արժանավորությունը, իսկ տաճարում ուրիշներին ծառայելը հանդիսանում է Մելքիսեդեկյան Քահանայությունը ստանալու համար կարևոր նախապատրաստում:

Երիտասարդ տղամարդիկ, ձեզանից յուրաքանչյուրն այժմ միսիոներ է: Ամեն օր դուք շրջապատված եք ընկերներով ու հարևաններով, «որոնք ճշմարտությունից հեռու են մնացել, միայն որովհետև չգիտեն որտեղ գտնեն այն»:[12] Սուրբ Հոգու առաջնորդությամբ կարող եք կիսվել մի մտքով, հրավերով, հաղորդագրությամբ, որը ձեր ընկերներին կներկայացնի վերականգնված ավետարանի ճշմարտությունները: Կարիք չկա, որ դուք սպասեք ձեր պաշտոնական կանչին, որպեսզի ջերմեռանդորեն ներգրավվեք միսիոներական աշխատանքի մեջ:

Երբ քահանայության, տաճարային և միսիոներական օրհնությունները միասին «բովանդակուի Քրիստոսումը»[13] և համատեղ կերպով փոխազդեն երիտասարդ միսիոների սրտում, մտքում և հոգում, ապա նա կարող է պատրաստ համարվել գործի համար:[14] Նրա կարողությունը մեծանում է Տեր Հիսուս Քրիստոսին լիազորությամբ ներկայացնելու իր պատասխանատվությունը կատարելիս: Քահանայությունն ու տաճարային ուխտերը պատվելու, «աստվածայնության զորությունը»[15] քահանայության արարողությունների միջոցով ստանալու[16], անվերապահորեն ծառայելու և հավիտենական ավետարանն Աստծո զավակներին քարոզելու հոգեպես զորեղ համակցությունը իրավունք է տալիս երիտասարդ տղամարդուն դառնալ «կայուն ու հաստատուն հավատքում»[17] և «արմատացած ու [Քրիստոսում] շինուած»:[18]

Մեր տներում և եկեղեցում մենք պետք է հավասարապես շեշտադրենք պատրաստված ու առաջընթաց ունեցող Աստծո հավատարիմ որդիների օրինակի բոլոր երեք բաղկացուցիչ մասերը. *քահանայություն, տաճար, միսիա:* Բոլոր երեքն էլ մեզանից պահանջում են սիրել արժանի լինել ու մնալ այդպիսին: Եղե՛ք արժանի: Մնացե՛ք արժանի:

Խոստում և վկայություն

Իմ սիրելի՛ եղբայրներ, ես խոստանում եմ, որ հայտնության հոգևոր պարգևը կուղեկցի ավետարանը քարոզելու ձեր կանչն ու հատուկ տարածքում աշխատելու համար ձեր նշանակումը կատարելուն: Եթե դուք այժմ ջանասիրաբար նախապատրաստվեք՝ անվերապահորեն կատարելով քահանայության ու տաճարային ծառայությունները, ձեր վկայությունը Տիրոջ կենդանի լինելու իրողության մասին կամրապնդվի: Նրա և Նրա աշխատանքի հանդեպ սերը կլցվի ձեր սրտում: Եթե սովորեք սիրել արժանի լինել, ապա դուք կդառնաք հզոր գործիք Տիրոջ ձեռքում շատ մարդկանց օրհնելու և ծառայելու համար:

Ես ուրախությամբ վկայում եմ, որ մեր Երկնային Հայրն ու Նրա Սիրելի Որդին՝ Հիսուս Քրիստոսը, ապրում են: Նրանց ծառայության մեջ ներգրավված լինելը մեծագույն օրհնություններից մեկն է, որ մենք կարող ենք ստանալ: Ես սա վկայում եմ Տեր Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 133.37
2. Վարդապետություն և Ուխտեր 4.3
3. Վարդապետություն և Ուխտեր 80.1
4. Վարդապետություն և Ուխտեր 80.2
5. Վարդապետություն և Ուխտեր 80.3
6. Վարդապետություն և Ուխտեր 80.4, շեշտադրումն ավելացված է
7. Վարդապետություն և Ուխտեր 80.5
8. Տես Վարդապետություն և Ուխտեր 124.49
9. Վարդապետություն և Ուխտեր 80.3
10. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.33–44
11. Տես Վարդապետություն և Ուխտեր 109.22
12. Վարդապետություն և Ուխտեր 123.12
13. Եփեսացիս 1.10
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 4.5
15. Վարդապետություն և Ուխտեր 84.20
16. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.19–21
17. Հելաման 15.8
18. Կողոսացիս 2.7

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորները և Բարձրագույն Պաշտոնյաները

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հենրի Բ. Այրինգ
Առաջին Խորհրդական

Թոմաս Ս. Մոնսոն
Նախագահ

Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Երկրորդ Խորհրդական

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄ

Ռասսել Մ. Նելսոն

Դալլին Հ. Օուքս

Մ. Ռասսել Բալլարդ

Ռոբերտ Դ. Հեյլս

Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Դեյվիդ Ա. Բեդնար

Քվենթին Լ. Քուք

Դ. Թոդ Քրիստոֆերսոն

Նիլ Լ. Անդերսեն

Ռոնալդ Ա. Ռասբենդ

Գարի Ի. Սթիվենսոն

Դեյլ Գ. Ռենլանդ

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Լ. Ուիթնի Քլեյթոն

Դոնալդ Լ. Հոլստրոմ

Ռիչարդ Ջ. Մեյնզ

Քրեյգ Ս. Քրիսչենսեն



Ուլիսես Սոարես

Լին Գ. Ռոբինս

Ջերիթ Վ. Գոնզ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԻԵԽԱՆԱՎՈՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԱԿԱՆՆԵՐ

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆ



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ



ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՅՔ



ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՈՒՄԲ



ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԻԿ

Եպիսկոպոս Ջերալդ Կոսե
Նախագահող եպիսկոպոս

Պատրաստեք ճանապարհը

Չնայած Սհարոնյան քահանայությունը և Մելքիսեդեկյան քահանայությունը ունեն տարբեր առաքելություն և իշխանություն, նրանք անբաժան գործընկերներ են փրկության աշխատանքում:

30 տարեկանում սկսեցի աշխատել Ֆրանսիայում գործող առևտրային կազմակերպությունում: Մի օր ընկերության նախագահը, ով այլ հավատքի մի բարի մարդ էր, ինձ կանչեց իր գրասենյակ: Նրա հարցը զարմացրեց ինձ. «Վերջերս տեղեկացա, որ դու քահանայի կոչում ունես քո եկեղեցում: Դա ճի՞շտ է»:

Ես պատասխանեցի. «Այո՛, դա ճիշտ է: Ես ունեմ քահանայություն»:

Չթաքցնելով իր հետաքրքրությունը, նա հարցրեց. «Բայց դու սովորե՞լ ես աստվածաբանական սեմինարիայում»:

«Իհարկե, 14–18 տարեկան հասակում ես գրեթե ամեն օր ուսումնասիրել եմ սեմինարիայի դասերը»: Նա գրեթե աթոռից ցած ընկավ:

Ի զարմանս ինձ, մի քանի շաբաթ հետո նա ինձ կանչեց իր գրասենյակ և առաջարկեց ղեկավար տնօրենի պաշտոն կազմակերպության ընկերություններից մեկում: Ես տարակուսեցի ու մտահոգությունս հայտնեցի, որ դեռ երիտասարդ ու անփորձ եմ նման պատասխանատու պաշտոնի համար: Բարյացակամ ժպիտով նա ասաց. «Միգուցե դա ճիշտ է, բայց կարևոր չէ: Ես գիտեմ քո սկզբունքները և գիտեմ, թե ինչ ես սովորել քո եկեղեցում: Ես քո կարիքն ունեմ»:

Եկեղեցում սովորածի մասին նա ճիշտ նկատեց: Հաջորդող տարիները դժվար էին և, հավանաբար, չէի կարող հաջողության հասնել առանց երիտասարդ տարիներին Եկեղեցում ձեռք բերած փորձառության:

Բարեբախտաբար, մանկությունս անցել է փոքր ճյուղում: Քանի որ ճյուղի անդամները փոքրաթիվ էին, երիտասարդներն ակտիվորեն ներգրավված էին ճյուղի բոլոր ոլորտներում: Ես շատ զբաղված էի և ուրախ, որ կարող էի օգտակար լինել մարդկանց: Կիրակի օրերին ես իմ պարտականությունն էի կատարում հաղորդության սեղանի մոտ, ծառայում էի քահանայության իմ կոչումներում և այլ կոչումներում: Շաբաթվա ընթացքում ես հաճախ ուղեկցում էի հայրիկիս և քահանայության այլ չափահաս անդամների, երբ մենք ուսուցանում էինք ընտանիքներին, մխիթարում էինք հիվանդներին և վշտահարներին և օգնում էինք նրանց, ովքեր դրա կարիքն ունեին: Ոչ մեկը չէր մտածում, որ ես շատ երիտասարդ էի ծառայելու և, նույնիսկ, առաջնորդելու համար:

Պատանեկության տարիներին իմ մատուցած ծառայության շնորհիվ ես կարողացա կառուցել իմ վկայությունը և կապել իմ կյանքը ավետարանին: Ես շրջապատված եմ եղել բարի ու կարեկից մարդկանցով, ովքեր իրենց քահանայության շնորհիվ

ձգտել են օրհնել մարդկանց կյանքը: Ես ձգտել եմ նմանվել նրանց: Ծառայելով նրանց, սովորել եմ, այդ ժամանակ նույնիսկ չգիտակցելով, թե ինչպես լինել ղեկավար և՛ Եկեղեցում և՛ աշխարհիկ կյանքում:

Այս երեկո ներկա են Ահարոնյան քահանայություն կրող շատ երիտասարդ տղաներ, ովքեր մասնակցում կամ դիտում են այս ժողովը: Այս լսարանին նայելով, տեսնում եմ, որ ձեզանից շատերը նստած են չափահաս տղամարդկանց կողքին, ովքեր միգուցե, ձեր հայրերը են, պապիկները, ավագ եղբայրները կամ քահանայության ձեր ղեկավարներն են, և Մելքիսեդեկյան քահանայություն կրողներ են: Նրանք սիրում են ձեզ և մեծ մասամբ նրանք այստեղ են, որպեսզի լինեն ձեզ հետ:

Սերունդների այս հավաքը միասնության և եղբայրության հրաշալի հեռանկար է խոստանում Աստծո այս երկու քահանայություն կրողների միջև: Չնայած այն բանին, որ նրանք ունեն տարբեր առաքելություն և իշխանություն, Ահարոնյան քահանայությունը և Մելքիսեդեկյան քահանայությունը անբաժան գործընկերներ են փրկության աշխատանքում: Նրանք քայլում են կողք-կողքի և միմյանց կարիքը շատ ունեն:

Երկու քահանայությունների միջև գոյություն ունեցող սերտ հարաբերությունների կատարյալ օրինակ է Հիսուսի և Հովհաննես Մկրտիչի միջև գոյություն ունեցող փոխգործակցությունը: Կարելի՞ է պատկերացնել Հովհաննես Մկրտիչին առանց Հիսուսի: Ինչի՞ նման կլիներ Փրկիչի առաքելությունն առանց Հովհաննեսի կատարած նախապատրաստական աշխատանքի:

Հովհաննես Մկրտիչին տրվել էին երբևէ գոյություն ունեցող ամենավեհ առաքելությունները. «պատրաստելու Տիրոջ ճանապարհը»,[1] մկրտելու Նրան ջրով և նախապատրաստելու մարդկանց ընդունել Նրան: Նա պարզապես «մի արդար և սուրբ [մարդ էր],"[2] ով կարգվել էր փոքրագույն քահանայության, լավ գիտեր իր առաքելության և իր իշխանության կարևորությունն ու սահմանափակումները:

Մարդիկ հավաքվեցին Հովհաննեսի մոտ, որպեսզի լսեն նրան և մկրտվեն նրա կողմից: Մարդիկ հարգում ու ընդունում էին նրան, որպես Աստծո ծառայի: Բայց, երբ Հիսուսը հայտնվեց, Հովհաննեսը խոնարհաբար զիջեց իրենից ավելի մեծին և ասաց. «Ես ջրով եմ մկրտում. բայց ձեր միջումը կայ մէկը, . . . Նա է ինձանից յետոյ եկողը, որ ինձանից առաջ եղաւ. Որ ես արժանի չեմ, նորա կօշիկների կապը արձակելու»:[3]

Իր հերթին Հիսուս Քրիստոսը՝ Հոր Միածինը, ով կրում էր ավելի բարձր քահանայություն, խոնարհաբար ճանաչեց Հովհաննեսի իշխանությունը: Նրա մասին Փրկիչն ասել է. «կանանց ծնածների մէջ չէ վեր կացել Յովհաննէս Մկրտչից մի մեծը»:[4]

Մտածեք, թե ինչ կկատարվեր քահանայության մեր քվորումներում, եթե երկու քահանայություն կրողների միջև հարաբերությունները ոգեշնչված լինեին Հիսուսի և Հովհաննես Մկրտիչի կողմից հաստատած օրինակով: Ահարոնյան քահանայության իմ փոքր եղբայրներ, ձեր դերը Մելքիսեդեկյան քահանայության մեծ աշխատանքի համար «ճանապարհը պատրաստելն» է:[5] Դուք դա անում եք տարբեր ձևերով: Դուք սպասավորում եք մկրտության և հաղորդության արարողությունները: Դուք նախապատրաստում եք մարդկանց Տիրոջ համար, երբ քարոզում եք ավետարանը, «[այցելում] յուրաքանչյուր անդամի տուն»[6] և «[հսկում] եկեղեցու վրա»:[7] Ծոմի նվիրատվությունները հավաքելով, դուք օգնություն եք մատուցում աղքատին ու կարիքավորին և հոգ եք տանում հավաքատների ու նյութական միջոցների մասին: Ձեր դերը կարևոր, պահանջված և սուրբ է:

Իմ չափահաս եղբայրներ, լինեք դուք հայրեր, եպիսկոպոսներ, երիտասարդ տղաների խորհրդականներ, թե պարզապես Մելքիսեդեկյան քահանայության կրողներ, դուք կարող եք հետևել Փրկիչի օրինակին, երբ հոգ տանեք փոքրագույն քահանայություն կրող ձեր եղբայրների մասին և հրավիրեք նրանց աշխատել ձեզ հետ: Իրականում,

այդ հրավերը գալիս է Տիրոջից: Նա ասել է. «Հետևաբար, վերցրեք ձեզ հետ նրանց, ովքեր կարգված են փոքրագույն քահանայությանը, և ուղարկեք նրանց ձեզանից առաջ, որ պայմանավորվածություններ ձեռք բերեն, և ճանապարհի պատրաստեն, և ներկա գտնվեն այդ պայմանավորվածություններին, որոնց ինքներդ չեք կարող ներկա գտնվել»:[8]

Երբ հրավիրում եք ձեր եղբայրներին «ճանապարհի պատրաստել», դուք օգնում եք նրանց հասկանալ և պատվել այն սուրբ իշխանությունը, որը նրանք կրում են: Այդպիսով դուք օգնում եք նրանց պատրաստել իրենց ճանապարհին այն օրվա համար, երբ նրանք կստանան ու կկիրառեն մեծագույն քահանայությունը:

Թույլ տվեք կիսվել մի իրական պատմությամբ Ալեքսի մասին, ով խոհուն ու զվարթ մի երիտասարդ քահանա էր: Կիրակի օրը, Ալեքսի եպիսկոպոսը նրան գտավ միայնակ և տխուր դասարանում նստած: Երիտասարդը բացատրեց, թե որքան դժվար է նրա համար եկեղեցի հաճախել առանց իր հայրիկի, ով անդամ չէր: Այնուհետև արցունքն աչքերին ասաց, որ, հավանաբար, ավելի լավ կլինի, եթե ինքը հեռանա Եկեղեցուց:

Անկեղծ մտահոգվելով այդ երիտասարդի համար եպիսկոպոսն անմիջապես ծխի խորհուրդ հրավիրեց, որպեսզի օգնեն Ալեքսին: Նրա ծրագիրը պարզ էր. որպեսզի Ալեքսը ակտիվ մնա եկեղեցում և ձեռք բերի ամուր վկայություն ավետարանի մասին, նրանք պետք է «շրջապատեն նրան լավ մարդկանցով և կարևոր առաջադրանքներ տան նրան»:

Քահանայության եղբայրները և ծխի բոլոր անդամները արագ կերպով միավորեցին իրենց ուժերը Ալեքսին օգնելու համար և իրենց ջերմությունն ու աջակցությունը հայտնեցին նրան: Քահանայապետերի խմբի ղեկավարը, մեծ հավատքի ու սիրո տեր մի մարդ, դարձավ նրա տնային ուսուցման զուգընկերը: Եպիսկոպոսության անդամները շրջապատեցին նրան հոգածությամբ

և սերտ ընկերություն հաստատեցին նրա հետ:

Եպիսկոպոսն ասել է. «Մենք Ալեքսին անընդհատ առաջադրանքներ էինք տալիս: Նա օգնում էր հարսանիքների և հուղարկավորությունների ժամանակ, օգնում էր ինձ գերեզմանների նվիրագործման ժամանակ, մկրտում էր որոշ անդամների, երիտասարդ տղաներին կարգում էր Ահարոնյան քահանայության, ուսուցանում էր երիտասարդների դասերը, ուսուցանում էր միսիոներների հետ, բացում էր շինությունը համաժողովների ժամանակ, իսկ համաժողովից հետո փակում էր շինությունն ուշ երեկոյան: Նա կատարում էր ծառայություններ, ինձ հետ միասին այցելում էր մեծահասակ հիվանդ անդամներին, ելույթ էր ունենում հաղորդությունների ժամանակ, հիվանդների համար սպասավորում էր հաղորդությունն իրենց տներում կամ հիվանդանոցներում և, ի վերջո, դարձավ այն եզակի մարդկանցից մեկը, ում, որպես եպիսկոպոս, ես կարող էի լիովին ապավինել»:

Կամաց-կամաց Ալեքսը փոխվեց: Նրա հավատքն առ Տերը մեծացավ: Վստահությունն իր և քահանայության զորության հանդեպ մեծացավ: Եպիսկոպոսը եզրափակել է. «Ալեքսը եղել է կմնա իմ ամենամեծ օրհնությունը եպիսկոպոս լինելու տարիներին: Մեծ պատիվ է եղել շփվել նրա հետ: Ես անկեղծորեն հավատում եմ, որ ոչ մի երիտասարդ երբևէ չի զնացել միսիա առավել պատրաստված իր քահանայության շնորհիվ»:[9]

Իմ սիրելի եպիսկոպոսներ, որպես ծխի եպիսկոպոս ձեր ձեռնադրման և կարգման պահից սկսած, դուք ունեք Ահարոնյան քահանայության և քահանաների քվորումի նախագահի սուրբ կոչումը: Ես գիտեմ, թե ինչ մեծ բեռ եք դուք կրում, սակայն ձեր կոչման մեջ պետք է առաջնորդությունը տաք այս երիտասարդ տղաներին ծառայելուն: Դուք չեք կարող անտեսել այն կամ այդ պատասխանատվության մեջ ունեցած ձեր դերը պատվիրակել ուրիշներին:

Կոչ եմ անում ձեզ մտածել ձեր ծխի Ահարոնյան քահանայություն կրողների մասին: Նրանցից ոչ մեկը չպետք է անտեսված կամ անօգտակար չգա իրեն: Կա արդյո՞ք երիտասարդ տղա, ում դուք կամ քահանայության եղբայրները կարող եք օգնել: Հրավիրեք նրանց ծառայել ձեզ հետ: Շատ հաճախ մենք զբաղեցնում ենք նրանց և թույլ տալիս մնալ դիտորդի դերում, մինչդեռ ավետարանի հանդեպ նրանց հավատքն

ու սերը լավագույնս կարող է աճել, երբ նրանք մեծարեն իրենց քահանայությունը: Ակտիվորեն մասնակցելով փրկության աշխատանքին, նրանք կապ կհաստատեն երկինքների հետ և կհասկանան իրենց աստվածային ներուժը:

Ահարոնյան քահանայությունն ավելին է, քան պարզապես տարիքային խումբ, ուսուցման և միջոցառման ծրագիր, կամ մի խումբ, ովքեր բնութագրում են Եկեղեցու երիտասարդ տղաներին: Դա զորություն ու իշխանություն է՝ մասնակցելու հոգիներ փրկելու մեծ աշխատանքին, այդ թվում այն երիտասարդ տղաների հոգիները, ովքեր կրում են այդ քահանայությունը և նրանց, ում նրանք ծառայում են: Եկեք Ահարոնյան քահանայությանը հանձնարարենք իր դերը, մի հատուկ դեր, որը ծառայության, նախապատրաստության և ձեռքբերումների դերն է Եկեղեցու բոլոր երիտասարդ տղաների համար:

Մելքիսեդեկյան քահանայության իմ սիրելի եղբայրներ, ես հրավիրում եմ ձեզ ամրացնել այն կապող օղակը, որը միավորում է Աստծո երկու քահանայություններին: Լիազորեք Ահարոնյան քահանայության երիտասարդներին պատրաստել ճանապարհը ձեր առաջ: Վստահությամբ ասացեք նրանց. «ես քո կարիքն ունեմ»: Ահարոնյան քահանայության երիտասարդ կրողներ, ձեզ համար աղոթում եմ, որ ձեր ավագ եղբայրների հետ ծառայելով, լսեք Տիրոջ ձայնը, որն ասում է. «Օրհնված ես դու, քանզի մեծ բաներ պիտի անես: Ահա դու առաջ էիր ուղարկվել, ճիշտ ինչպես Հովհաննեսը, ճանապարհի պատրաստելու իմ առաջ»:[10] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 1 Նեփի 10.7
2. Մարկոս 6.20
3. Հովհաննես 1.26–27
4. Մատթեոս 11.11
5. Վարդապետություն և Ուխտեր 35.4
6. Վարդապետություն և Ուխտեր 20.51
7. Վարդապետություն և Ուխտեր 20.53
8. Վարդապետություն և Ուխտեր 84.107
9. Անձնական նամակագրություն
10. Վարդապետություն և Ուխտեր 35.4

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության երկրորդ խորհրդական

Ձեզանից մեծը

Աստծո ամենամեծ պարգևը ստանում են նրանք, ովքեր ծառայում են առանց պարգև ակնկալելու:

Իմ սիրելի՛ եղբայրներ, սիրելի՛ ընկերներ, ես շատ երախտապարտ եմ լինել ձեզ հետ այս քահանայության ոգեշնչված համաշխարհային ժողովին: Նախագահ Մոնսոն, շնորհակալություն ձեր ուղերձի և օրհնության համար: Մենք միշտ մեր սրտին մոտ կընդունենք ձեր ուղղորդման, խորհրդի և իմաստության խոսքերը: Մենք սիրում ու աջակցում ենք ձեզ և միշտ աղոթում ենք ձեզ համար: Դուք իրոք Տիրոջ մարգարեն եք: Դուք մեր նախագահն եք: Մենք աջակցում և սիրում ենք Ձեզ:

Գրեթե երկու տասնամյակ առաջ նվիրագործվեց Մադրիդ Իսպանիա տաճարը և իր ծառայությունը սկսեց որպես Տիրոջ սուրբ տուն: Ես և Հարիեթը շատ լավ ենք հիշում դա, քանի որ այդ ժամանակ ես ծառայում էի Եվրոպայի տարածաշրջանի նախագահությունում: Շատերի հետ մենք էլ անհամար ժամեր անցկացրինք՝ մասնակցելով նվիրագործմանն ուղղված իրադարձությունների ծրագրման և կազմակերպման աշխատանքներին:

Երբ մոտեցավ նվիրագործման օրը, ես նկատեցի, որ դեռ չեմ

ստացել ներկա գտնվելու հրավերը: Սա մի փոքր անսպասելի էր: Ի վերջո, Տարածաշրջանի Նախագահի իմ պարտականությունից ելնելով, ես մեծապես ներգրավված էի տաճարի այս նախագծում և որոշ չափով պատասխանատվության զգացում ունեի դրա համար:

Ես հարցրեցի Հարիեթին, թե արդյոք նա չի՞ տեսել հրավերը: Պարզվեց, որ չէր տեսել:

Անցան օրեր և իմ անհանգստությունն ավելի աճեց: Ես մտածում էի, որ մեր հրավիրատոմսը կորել է՝ գուցե այն ընկել էր բազմոցի բարձերի արանքը: Գուցե շփոթել ենք անպետք նամակի հետ և դեն ենք նետել: Մեր հարևանները մի շատ հետաքրքրասեր կատու ունեին, և ես արդեն տարօրինակ կասկածանքով էի նայում այդ կատվին:

Վերջապես ես ստիպված էի ընդունել փաստը՝ ինձ չէին հրավիրել:

Բայց ինչպե՞ս էր դա հնարավոր: Ինչո՞վ էի նեղացրել: Գուցե մեկը մտածել էր, որ դժվա՞ր է մեզ համար ճամփորդել այդքան հեռու: Գուցե է ինձ մոռացե՞լ էին:

Ի վերջո, ես հասկացա, որ մտքերի այս շարանը տանում է ինձ մի տեղ, որտեղից դժվար է ելք գտնել:

Հարիեթն ու ես հիշեցնում էինք մեզ, որ տաճարի նվիրագործումը կապ չուներ *մեզ հետ:* Դա կապ չուներ նրա հետ, թե ով էր արժանի հրավիրվել, իսկ ով՝ ոչ: Դա կապ չուներ նաև մեր զգացմունքների կամ ներգրավվածության հետ:

Դա նվիրագործումն էր մի սուրբ ապարանքի, Բարձրյալ Աստծո տաճարի: Դա ցնծության օր էր Իսպանիայի Եկեղեցու անդամների համար:

Եթե ես հրավիրվեի ներկա գտնվել, ես դա հաճույքով կանեի: Սակայն եթե ես չհրավիրվեի, իմ ուրախությունը դրանից պակաս լիարժեք չէր լինի: Հարիեթն ու ես հեռվից կուրախանայինք մեր ընկերների, մեր սիրելի եղբայրների ու քույրերի հետ: Ֆրանկֆուրտի մեր տնից մենք նույն խանդավառությամբ կփառաբանեինք Աստծուն այս հրաշալի օրհնության համար, ինչպես դա կանեինք Մադրիդում գտնվելիս:

Որոտմունքի Որդիք

Տասներկուսի թվում, ում Հիսուսը կանչեց և կարգեց, կային երկու եղբայրներ՝ Հակոբն ու Հովհաննեսը: Հիշու՞մ եք ինչ մականունով Նա նրանց կոչեց:

Որոտմունքի Որդիք (Բաներեգէս)[1]

Այդպիսի մականուն չեն ստանում առանց հետաքրքրաշարժ նախապատմություն ունենալու: Ցավոք սրտի, սուրբ գրությունները շատ տեղեկություն չեն տալիս, թե ինչպես է առաջացել այս մականունը: Այնուամենայնիվ, մենք աչքի կանցկացնենք Հակոբի և Հովհաննեսի բնավորությունները: Սրանք այն նույն եղբայրներն էին, ովքեր Սամարիայի գյուղերից մեկում առաջարկեցին կրակ իջեցնել երկնքից իրենց չընդունելու համար:[2]

Հակոբն ու Հովհաննեսը ձկնորսներ էին, հավանաբար մի քիչ անտաշ էին, բայց իմ կարծիքով, նրանք շատ բան գիտեին բնության տարրերի մասին: Անշուշտ, նրանք գործի մարդիկ էին:

Մի առիթով, երբ Փրկիչն Իր վերջին ճամփորդությանն էր պատրաստվում դեպի Երուսաղեմ, Հակոբն ու Հովհաննեսը մոտեցան Նրան մի հատուկ խնդրանքով՝ մի խնդրանք, որը թերևս բնորոշ էր իրենց մականվանը:

«Ուզում ենք որ՝ ինչ որ քեզանից խնդրենք՝ մեզ անես», - ասացին նրանք:

Ես կարող եմ պատկերացնել, թե ինչպես էր ժպտում նրանց Հիսուսը, երբ պատասխանեց. «Ի՞նչ եք ուզում, որ ես ձեզ անեմ»:

«Տուր մեզ, որ մեկը աջ կողմդ և մյուսը ձախ կողմդ նստենք քո փառքումը»:

Ապա Փրկիչը հրավիրեց նրանց մի քիչ ավելի խորը մտածել իրենց խնդրանքի մասին և ասաց. «Իմ աջ և իմ ձախ կողմը նստելն իմս չէ, որ տամ, այլ նորանց, որ պատրաստված է»:[3]

Այլ կերպ ասած, հնարավոր չէ պատվի արժանանալ երկնքի արքայությունում՝ պահանջելով դա: Ոչ էլ կարող եք «բիզնես ճաշկերույթի» միջոցով հարթել ձեր ճանապարհը դեպի հավերժական փառք:

Երբ մյուս տասը Առաքյալները լսեցին Որոտմունքի Որդիքի խնդրանքը, նրանք ամենևին ուրախ չէին: Հիսուսը գիտեր, որ Իր ժամանակը կարճ է և, տեսնելով, որ վեճ է առաջանում նրանց մեջ, ովքեր շարունակելու են Իր գործը, հավանաբար անհանգստանում էր:

Նա խոսեց Տասներկուսի հետ իշխանության բնույթի մասին՝ ինչպես է դա անդրադառնում նրանց վրա, ովքեր ձգտում են դրան և ունեն դա: «Հեթանոսների իշխան համարվողները տիրում են նորանց վերայ, և նորանց մեծամեծները իշխում են նորանց վերայ»:

Ես կարող եմ գրեթե տեսնել Փրկիչին, որն անսահման սիրով նայում է այդ հավատարիմ և հավատացող աշակերտների դեմքերին:

Ես կարող եմ գրեթե լսել Նրա աղերսող ձայնը. «Այնպես պիտի չլինի ձեր միջումը. այլ ձեզանից ով որ կամենայ մեծ լինել՝ թող ձեզ ծառա լինի: Եւ ձեզանից ով որ կամենայ առաջին լինել, թող ամենի ծառա լինի»:[4]

Աստծո թագավորությունում մեծությունը և ղեկավարությունը նշանակում է տեսնել մյուսներին այնպես, ինչպիսին նրանք իրականում են, ինչպես Աստված է տեսնում նրանց, ապա օգնության ձեռք մեկնել և ծառայել նրանց: Դա նշանակում է ուրախանալ նրանց հետ, ովքեր ուրախ են, լացել նրանց հետ, ովքեր սգում են, ոգևորել նրանց, ովքեր ճնշված են և սիրել մեր մերձավորին, ինչպես Քրիստոսն է սիրում մեզ: Փրկիչը սիրում է Աստծո բոլոր զավակներին՝ անկախ նրանց սոցիալ-տնտեսական վիճակից, ռասայից, կրոնից, լեզվից, քաղաքական հայացքներից, ազգությունից կամ այլ առանձնահատկություններից: Այդպես էլ մենք պետք է անենք:

Աստծո մեծագույն պարգևը ստանում են նրանք, ովքեր ծառայում են առանց պարգև ակնկալելու: Այն ստանում են նրանք, ովքեր ծառայում են առանց թմբկահարելու, ովքեր հանգիստ շրջում են, փնտրելով ուրիշներին օգնելու ուղիներ, նրանք, ովքեր ծառայում են մյուսներին պարզապես այն պատճառով, որ սիրում են Աստծուն և Աստծո զավակներին:[5]

Չներշնչվեք

Գերագույն իշխանավորի իմ նոր կանչը ստանալուց կարճ ժամանակ հետո ես պատիվ ունեցա ընկերակցել Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստին մի ցցի վերակազմավորման ժամանակ: Երբ ես վարում էի մեքենան Հարավային Յուտայի գեղեցիկ ճանապարհով դեպի մեր նշանակման վայրը, Նախագահ Ֆաուստը մեծահոգաբար օգտագործեց այդ ժամանակը՝ ինձ հրահանգելու և ուսուցանելու համար: Մի դաս ես երբեք չեմ մոռանա: Նա ասաց. «Եկեղեցու անդամները սիրալիր են Բարձրագույն Իշխանավորների հետ: Նրանք սիրով կվերաբերվեն և կիաճոյախոսեն քեզ»: Հետո նա կարճ դադար առավ ու ասաց. «Դիտեր, *միշտ* շնորհակալ եղիր այս բանի համար, բայց երբեք չներշնչվես դրանից»:

Եկեղեցու ծառայության մասին այս կարևոր դասը վերաբերում է յուրաքանչյուր քահանայություն կրողին՝ Եկեղեցու ցանկացած քվորումից: Այն վերաբերում է յուրաքանչյուրիս, ով այս Եկեղեցում է:

Երբ Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերն ուսուցանում էր նրանց, ովքեր կանչվել էին իշխանության պաշտոնների Եկեղեցում, նա ասում էր, որ չմոռանան համար վեց կանոնը:

Անպայման կհարցնեին. «Ո՞րն է համար վեց կանոնը»:

«Ինքներդ ձեզ չափից ավելի լուրջ մի վերաբերվեք», - նա կասեր:

Անշուշտ, դա կհանգեցներ հերթական հարցին. «Իսկ որո՞նք են մյուս հինգ կանոնները»:

Փայլող աչքերով Նախագահ Քլարկը կասեր. «Ոչ մի կանոն էլ չկա»:[6]

Եկեղեցու արդյունավետ ղեկավարներ լինելու համար մենք պետք է սովորենք այս կարևոր դասը. ղեկավարությունը Եկեղեցում այնքան մյուսներին ղեկավարելը չէ, որքան մեր ցանկությունը՝ ղեկավարվել Աստծո կողմից:

Կոչումները՝ որպես ծառայության հնարավորություն

Որպես Բարձրյալ Աստծո սրբեր, մենք պետք է «հիշենք աղքատներին ու կարիքավորներին, հիվանդներին ու տառապյալներին, քանզի ով որ չի անում այս բաները, նա իմ աշակերտը չէ»:[7] Մարդկանց ծառայելու և բարիք գործելու հնարավորություններն անսահման են: Մենք կարող ենք գտնել դրանք մեր համայնքներում, ծխերում և ճյուղերում, և, իհարկե, մեր տներում:

Բացի այդ, Եկեղեցու յուրաքանչյուր անդամին տրվում են ծառայելու հատուկ պաշտոնական հնարավորություններ: Մենք այդ հնարավորությունները §կոչումներ¦ ենք անվանում, մի եզրույթ, որը պետք է հիշեցնի մեզ, թե ով է մեզ կանչում ծառայելու: Եթե Աստծուն ծառայելու և մարդկանց սպասավորելու մեր կոչումներին հավատքով ու հեզությամբ մոտենանք, ապա ծառայության յուրաքանչյուր գործողությունը մեզ մի քայլ առաջ կտանի աշակերտության ճանապարհին: Այս կերպ, Աստված ոչ միայն կառուցում է Իր Եկեղեցին, այլ նաև կառուցում է Իր ծառաներին: Եկեղեցին նպատակ ունի օգնելու մեզ, որ դառնանք Քրիստոսի ճշմարիտ ու հավատարիմ աշակերտները, բարի ու ազնիվ Աստծո որդիներն ու դուստրերը: Սա տեղի է ունենում ոչ միայն այն ժամանակ, երբ մենք ժողովների ենք մասնակցում և ելույթներ լսում, այլ նաև, երբ դուրս ենք գալիս և ծառայում: Ահա, թե ինչպես ենք §մեծ¦ դառնում Աստծո թագավորությունում:

Մենք ընդունում ենք կոչումները շնորհքով, խոնարհությամբ և երախտագիտությամբ: Երբ մենք ազատվում ենք կոչումներից, մենք ընդունում ենք այդ փոփոխությունը նույն շնորհքով, խոնարհությամբ և երախտագիտությամբ:

Թագավորությունում այդպիսի կոչում չկա, որ Աստծո աչքում ավելի կարևոր լինի, քան մյուսը: Մեր ծառայությունը՝ լինի դա փոքր, թե մեծ, զտում է մեր հոգին, բացում է երկնքի պատուհանները և բերում Աստծո օրհնությունները ոչ միայն նրանց վրա, ում մենք ծառայում ենք, այլ նաև անձամբ մեզ վրա: Երբ մենք օգնում ենք մյուսներին, խոնարհ վստահությամբ իմանում ենք, որ Աստված ընդունում է մեր ծառայությունը՝ հաստատելով և հավանություն տալով դրան: Նա ժպտում է մեզ, երբ մենք կատարում ենք կարեկցանքի այս սրտաբուխ գործողությունները, հատկապես այն գործերը, որոնք տեսանելի կամ նկատելի չեն մյուսներին:[8]

Ամեն անգամ նվիրվելով մյուսներին, մենք մի քայլ մոտենում ենք այն Մեկի բարի և ճշմարիտ աշակերտը լինելուն, Ով անմնացորդ նվիրվեց բոլորիս՝ մեր Փրկիչին:

Նախագահելուց մինչև շքերթի կամավորական

Սոլթ Լեյքի Հովիտ ռահվիրաների տեղափոխման 150-րդ տարեդարձի

ժամանակ եղբայր Մայրոն Ռիչինսը ծառայում էր որպես ցցի նախագահ Յուտայի Հենեֆեր քաղաքում: Տոնակատարությունն ընդգրկում էր այդ քաղաքի միջով ռահվիրաների ընթացքի կրկնօրինակումը:

Նախագահ Ռիչինսը մեծապես ներգրավված էր տոնակատարության ծրագրերի կազմակերպչական գործերում, և նա հանդիպել էր Բարձրագույն Իշխանավորների և շատ ուրիշների հետ՝ այդ իրադարձությունը քննարկելու նպատակով: Նա լիարժեք մասնակցություն ուներ:

Տոնակատարությունից առաջ Նախագահ Ռիչինսի ցիցը վերակազմավորվել էր, և նա ազատվել էր նախագահի պաշտոնից: Հերթական կիրակի օրը նա ներկա էր իր ծխի քահանայության ժողովին, երբ ղեկավարները խնդրեցին կամավորներին՝ օգնել իրադարձության անցկացման գործում: Մյուսների հետ մեկտեղ Նախագահ Ռիչինսը նույնպես իր ձեռքը բարձրացրեց և ցուցումներ ստացավ, որ բանվորական հագուստ պետք է հագնի և բերի բահ ու սայլակ:

Վերջապես բացվեց տոնական օրվա առավոտը և Նախագահ Ռիչինսը ներկայացավ կատարելու իր կամավորական պարտականությունը:

Միայն մի քանի շաբաթ առաջ նա զգալի ներդրում ուներ այս կարևոր իրադարձության ծրագրման և ղեկավարման գործընթացում: Այնուամենայնիվ, այդ օրը իր գործն էր ձիերի հետևից գնալ ու մաքրման աշխատանքներ կատարել:

Նախագահ Ռիչինսը հաճույքով և ուրախությամբ արեց դա:

Նա հասկանում էր, որ ծառայության ոչ մի տեսակ մյուսից բարձր չէ:

Նա գիտեր և կյանքի կոչեց Փրկիչի խոսքերը. «Եւ ձեզանից մեծը թող ձեր ծառան լինի»:[9]

Աշակերտության ճիշտ կատարում

Երբեմն, Որոտմունքի Որդիների պես, մենք նշանավոր պաշտոններ ենք ցանկանում: Մենք ձգտում ենք ճանաչում ունենալ, ղեկավարել և նշանակալից ներդրումներ անել:

Տիրոջը ծառայելու ցանկության մեջ ոչ մի սխալ բան չկա, սակայն երբ մենք ձգտում ենք Եկեղեցում ազդեցություն ձեռք բերել մեր սեփական շահերից ելնելով՝ ստանալու մարդկանց գովքն ու հիացմունքը, ապա մենք ունենք մեր պարգևը: Երբ մենք §ներշնչվում ենք¦ մարդկանց գովեստով, այդ գովեստը կլինի մեր փոխհատուցումը:

Ո՞րն է ամենակարևոր կոչումը Եկեղեցում: Դա այն է, որը դուք այս պահին ունեք: Նշանակություն չունի, թե որքան համեստ կամ նշանակալից կարող է դա լինել, կոչումը, որը դուք ունեք այս պահին, թույլ կտա ձեզ ոչ միայն բարձրացնել մյուսներին, այլ նաև դառնալ Աստծո այն մարդը, որը դառնալու համար դուք ստեղծվել եք:

Քահանայության իմ սիրելի ընկերներ և եղբայրներ, ջանք չխնայեք ծառայելիս:

Պողոսն ուսուցանել է փիլիպպեցիներին. «Ոչ մի բան չլինի գրգռումով, և ոչ էլ սնապարծությունով.այլ խոնարհությունով թող մեկը մյուսին իր անձից ավելի լավ համար»:[10]

Պատվով ծառայել

Ճիշտ ու խոնարհ կերպով ծառայելու փոխարեն Եկեղեցում փառք ու պատիվ փնտրելը՝ Եսավի առնտուր է:[11] Մենք կարող ենք ստանալ երկրային պարգև, բայց մեծ գին ենք վճարելու դրա համար, կորցնելով երկնային հավանությունը:

Եկեք հետևենք մեր Փրկիչի օրինակին, ով հեզ ու խոնարհ էր, ով չէր փնտրում մարդկանց փառքը, այլ Իր Հոր կամքն էր կատարում:[12]

Եկեք ծառայենք մյուսներին խոնարհաբար՝ խանդավառությամբ, երախտագիտությամբ և պատվով: Նույնիսկ, եթե մեր ծառայության գործերը հեզ ու համեստ կամ փոքրարժեք թվան, նրանք, ովքեր բարությամբ ու կարեկցանքով օգնում են մարդկանց, մի օր կիմանան իրենց ծառայության արժեքը Ամենակարող Աստծո հավերժական և օրհնյալ շնորհով:[13]

Իմ սիրելի՛ եղբայրներ, սիրելի՛ ընկերներ, եկեք խորհենք, հասկանանք Եկեղեցու ղեկավարության և քահանայության կառավարման առաջնային կարևորություն ունեցող այս դասը և ապրենք համաձայն դրա. §Եւ ձեզանից մեծը թող ձեր ծառան լինի¦: Սա է իմ աղոթքը և օրհնությունը, մեր Վարդապետի, մեր Քավիչի սուրբ անունով, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Մարկոս 3.17
2. Տես Ղուկաս 9.54
3. Տես Մարկոս 10.35–40, New International Version (2011) and King James Version.
4. Տես Մարկոս 10.42–44
5. Տես Մատթեոս 6.4
6. Տես John E. Lewis, “The Gospel and a Sense of Humor, Too,” *Ensign,* June 1974, 24
7. Վարդապետություն և Ուխտեր 52.40
8. Տես Մատթեոս 6.1–2
9. Մատթեոս 23.11
10. Փիլիպպեցիս 2.3, New English Translation (2005).
11. Տես Ծննդոց 25.33
12. Տես Հովհաննես 5.41, 6.38
13. Տես Մատթեոս 25.31–46

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության առաջին խորհրդական

«Քայլիր ինձ հետ»

Քահանայության մեր կարգումը հրավեր է Տիրոջից քայլել Իր հետ՝ անել այն, ինչ Նա է անում, ծառայել, ինչպես Նա է ծառայում։

Քահանայության իմ սիրելի՛ եղբայրներ, իմ նպատակն է այսօր հավաստիացման խոսքեր ասել և զորացնել ձեզ քահանայության ձեր ծառայության մեջ։ Որոշ առումներով, իմ պատկերացմամբ, Փրկիչը այդպիսի նպատակ ուներ այն ժամանակ, երբ հանդիպեց մի երիտասարդ ազնվականի, ով հարցրեց. «Ի՞նչ բարի գործ գործեմ որ յաւիտենական կեանքն ունենամ»։ (Մատթեոս 19.16)։ Գուցե դուք եկել եք այս համաժողովին, ինչպես այդ երիտասարդը գնաց Փրկիչի մոտ, մտահոգվելով, թե արդյոք ձեր ծառայությունը ընդունելի է։ Եվ միևնույն ժամանակ, դուք զգացողություն ունեք, որ բան կա անելու, գուցե շատ ավելին։ Ես աղոթում եմ, որ կարողանամ փոխանցել Տիրոջ սիրառատ հավաստիացումը ձեր արդեն իսկ արած գործերի համար, լույսի խրախուսող մի շող առաջարկելով, թե այսուհետ, Նրա օգնությամբ, ինչ կարող եք անել՝ որպես Նրա սուրբ քահանայության կրողներ։

Հարուստ ազնվականը պատվիրան ստացավ վաճառել ունեցվածքը ու նվիրել աղքատներին և հետևել Փրկիչին. ձեր ապագա առաջընթացի համար հնարավոր է չպահանջվի նույն բանը, սակայն, զոհաբերության որոշակի չափ կպահանջվի։ Ինչ էլ որ պահանջվի, հուսով եմ, իմ ուղերձը ձեզ չի ստիպի «տրտում հեռանալ», ինչպես արեց երիտասարդը։ (Տես Մատթեոս 19.20–22։) Փոխարենը, կարծում եմ, որ դուք «ուրախ կշարունակեք [ձեր] ճանապարհը» (ՎԿՈ 84.105), քանի որ բարելավելու ցանկություն ունեք և գտնում եք, որ կկարողանաք։

Ամեն դեպքում, երբ հաշվի ենք առնում այն, ինչ Տերը կանչել է մեզ անել, ինչ-որ չափով անհամարժեքություն զգալը բնական է։ Ի դեպ, եթե ինձ ասեք, որ կարծում եք, թե կատարելապես ունակ եք կատարել քահանայության ձեր պարտականությունները, հնարավոր է անհանգստանամ, որ դուք չեք հասկանում դրանք։ Մյուս կողմից, եթե ինձ ասեք, որ զգում եք, թե խնդիրը ձեր ունակություններից վեր է, ապա ինձ մոտ ցանկություն կառաջանա օգնել ձեզ հասկանալ, թե ինչպես է Տերը ուժ տալիս և ամրապնդում Իր քահանայություն կրողներին, որպեսզի անեն գործեր, որոնք երբեք չեն կարողացել միայնակ անել։

Սա նույնքան ճշմարիտ է ինձ համար՝ իմ կոչման մեջ, որքան ձեզ համար՝ ձեր կոչման մեջ։ Մեզանից ոչ ոք չի կարող անել քահանայության գործը, և լավ անել այն, հենվելով բացառապես մեր սեփական իմաստության ու տաղանդների վրա։ Դա այն պատճառով է, որ սա մեր աշխատանքը չէ, այլ Տիրոջ աշխատանքն է։ Այնպես որ, հաջողության հասնելու միակ ճանապարհը Նրան ապավինելն է՝ լինեք դուք նոր կանչված սարկավագ, որն իր չափով ձգտում է հոգևոր ուժ հաղորդել հաղորդության արարողությանը, թե լինեք անփորձ տնային ուսուցիչ, ում Տերը նշանակել է սիրել և ծառայել մի անծանոթ ընտանիքի, որը կարծես չի զգում ձեր սիրո, ոչ էլ ձեր ծառայության կարիքը, թե լինեք մի հայր, ով գիտի, որ պետք է արդարությամբ ղեկավարի իր տունը, բայց գուցե չգիտի ինչպես, իսկ ժամանակը, կարծես, թռչում է, քանի որ երեխաները արագ մեծանում են, իսկ աշխարհը թվում է շատ դաժան ու թշնամական։

Այնպես որ, եթե դուք մի քիչ ճնշված եք զգում, համարեք այն որպես լավ նշան։ Այն ցույց է տալիս, որ դուք զգում եք, որ Աստված մեծ վստահություն է դրել ձեզ վրա։ Նշանակում է, որ դուք մի փոքր պատկերացում ունեք, թե ինչ է քահանայությունը իրականում։

Շատ քիչ մարդիկ կան աշխարհում, ովքեր ունեն այդ ըմբռնումը։ Անգամ նրանք, ովքեր կարող են արտասանել քահանայության ողջամիտ սահմանումը, հնարավոր է իմաստը չհասկանան։ Մի քանի սուրբ գրություններ կան, որ իրենց կրած Հոգու զորությամբ, կարող են խորացնել պատկառանքի զգացումը սուրբ քահանայության վերաբերյալ։

Ահա այդ սուրբ գրություններից մի քանիսը.

«Մելքիսեդեկյան Քահանայության զորությունն ու իշխանությունն է՝ կրել եկեղեցու բոլոր հոգևոր օրհնությունների բանալիները,–

Ունենալ երկնքի արքայության խորհուրդները ստանալու առանձնաշնորհը, տեսնել երկինքներն իրենց համար բացված, հաղորդակցվել Անդրանիկի եկեղեցու և ընդհանուր ժողովի հետ ու վայելել հաղորդակցությունն ու ներկայությունը Հայր Աստծո և Հիսուսի՝ նոր ուխտի միջնորդի:

Ահարոնյան Քահանայության զորությունն ու իշխանությունն է՝ կրել հրեշտակների սպասավորման բանալիները» (ՎԿՈՒ 107:18–20):

«[Քահանայության] արարողություններում է բացահայտվում աստվածայնության զորությունը. . . .

Քանզի առանց դրա, ոչ ոք չի կարող տեսնել Աստծո, այսինքն՝ Հոր երեսը, և ապրել» (ՎԿՈՒ 84.20, 22):

«Այս բարձրագույն քահանայությունը, լինելով ըստ իր Որդու կարգի, կարգ, որը կար աշխարհի հիմնադրումից ի վեր. կամ, այլ խոսքով, լինելով առանց օրերի սկզբի կամ տարիների վերջի, նախապատրաստված լինելով հավերժությունից մինչև ողջ հավերժություն, համաձայն բոլոր բաների վերաբերյալ նրա կանխագիտության» (Ալմա 13.7):

«Ամեն ոք, ով կարգվում է այս կարգին ու կոչմանը, զորություն կունենա, հավատքով, սարերը փշրելու, ծովերը բաժանելու, ջրերը ցամաքեցնելու, դրանց հոսանքը փոխելու.

Ազգերի բանակներին դեմ կանգնելու, երկիրը բաժանելու, ամեն կապ արձակելու, Աստծո ներկայության մեջ կանգնելու. ամեն ինչ անելու՝ համաձայն նրա կամքի, համաձայն նրա հրամանի, իշխանություններն ու զորությունները հնազանդեցնելու. և դա՝ Աստծո Որդու կամքով, որը կար աշխարհի հիմնադրումից առաջ» (Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Ծննդոց 14.30–31 [Սուրբ գրությունների ուղեցույցում]):

Քահանայության զորության նման ակնածանք ներշնչող նկարագրություններին արձագանքելու

ուղիներից մեկը ենթադրում է, որ նրանք մեզ չեն վերաբերում: Արձագանքելու մյուս միջոցը մեր սրտում նման հոգեխույզ հարցեր տալն է. Ես երբևէ զգացե՞լ եմ, որ երկինքները բացվել են ինձ համար: Իմ քահանայության ծառայությունը նկարագրելիս որևէ մեկը կօգտագործի՞ «հրեշտակների սպասավորություն» արտահայտությունը: Ես բերո՞ւմ եմ «աստվածայնության զորությունը» նրանց կյանք, ում ծառայում եմ: Աստծո կամքը կատարելու նպատակով ես երբևէ փշրե՞լ եմ որևէ սար, կանգնել որևէ բանակի դեմ, քանդել ինչ-որ մեկի կապանքները կամ հնազանդեցրել աշխարհիկ զորություններ՝ անգամ փոխաբերական իմաստով:

Նման ինքնավերլուծությունը միշտ բերում է մի զգացում, որ մենք կարող ենք ավելին անել Տիրոջ ծառայության մեջ: Հուսով եմ, որ այն բերում է նաև Տիրոջ զարմանահրաշ աշխատանքում ավելին անելու մի *ցանկություն*, ավելի լիարժեք մասնակցելու մի փափագ: Նման զգացումը առաջին քայլն է, որ դառնանք այն տղամարդը, որի համար տրված է քահանայության ծառայությունը, որ դառնանք:

Հաջորդ քայլը նկարագրված է Եհովայի ու Ենովքի հաղորդակցության մեջ: Մենք գիտենք Ենովքին որպես հզոր մարգարեի, որը չնայած շրջապատի մեծ ամբարշտությանը, կարողացավ հաստատել Սիոնը: Բայց նախքան հզոր մարգարե դառնալը, Ենովքը իրեն տեսնում էր որպես «ընդամենը մի պատանի, . . . որը ծանրախոս էր», և որին բոլոր մարդիկ ատում էին (Մովսես 6.31): Լսեք խոսքերը, որոնցով Տերը քաջալերեց Ենովքին: Այս խոսքերն ուղղված են նաև ձեզ, որ կոչված եք որպես քահանայություն կրող՝ մարդկանց ծառայելու.

«Եվ Տերն ասաց Ենովքին. Առաջ գնա և վարվիր ինչպես պատվիրել եմ քեզ, և ոչ մի մարդ քեզ չի խոցի: Բացիր բերանդ, և այն կլցվի, և ես կտամ քեզ արտասանություն, քանզի բոլոր մարմիններն իմ ձեռքում են, քանզի ես կվարվեմ, ինչպես ինձ բարի է երևում. . . .

Ահա, իմ Հոգին քո վրա է, ուստի քո բոլոր խոսքերը ես կարդարացնեմ. և սարերը կփախչեն քո ներկայությունից, և գետերը կփոխեն իրենց հոսանքը. և դու կմնաս ինձ հետ, և ես՝ քեզ հետ. հետևաբար, քայլիր ինձ հետ» (Մովսես 6.32, 34):

Եղբայրներ, քահանայության մեր կարգումը հրավեր է Տիրոջից քայլել Իր հետ: Իսկ ի՞նչ է նշանակում քայլել Տիրոջ հետ:Անել է այն, ինչ Նա է անում, ծառայել, ինչպես Նա է ծառայում: Նա անձնական հարմարավետությունը զոհաբերեց, որպեսզի օրինի նրանց, ովքեր կարիքի մեջ

են, այնպես որ մենք էլ փորձում ենք դա անել: Նա կարծես որոշակիորեն նկատում էր մարդկանց, ում անտեսում ու նույնիսկ մերժում էր հասարակությունը. մենք ևս փորձում ենք նկատել նրանց: Նա համարձակորեն, բայց սիրով վկայում էր ճշմարիտ վարդապետության մասին, որը ստացել էր Իր Հոր կողմից, չնայած որ այն լայնորեն ընդունված չէր, և մենք ևս պետք է այդպես վկայենք: Նա ասաց բոլորին, «Եկեք ինձ մոտ» (Մատթեոս 11.28), իսկ մենք ասում ենք բոլորին. «Եկեք Նրա մոտ»: Որպես քահանայություն կրողներ, մենք Նրա ներկայացուցիչներն ենք: Մենք չենք գործում մեզ համար, այլ նրա համար: Մենք չենք խոսում մեր խոսքերը, այլ նրա խոսքերը: Մարդիկ, ում մենք ծառայում ենք, Նրան ավելի լավ են սկսում ճանաչել մեր ծառայության շնորհիվ:

Հենց որ ընդունում ենք «քայլիր Ինձ հետ» Տիրոջ հրավերը, մեր քահանայության ծառայության բնույթը փոխվում է: Այն միանգամից ավելի բարձր և ավելի ազնիվ, բայց նաև ավելի հասանելի է դառնում, քանի որ հասկանում ենք, որ միայնակ չենք: Ես զգացի այդ ամենայն զորությամբ, երբ ինը տարի առաջ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը դրեց իր ձեռքերն իմ գլխին և օրհնեց ինձ, երբ ես սկսեցի ծառայությունը իմ ներկայիս կոչման մեջ: Այդ օրհնության մեջ նա արտասանեց Փրկիչի այս խոսքերը. «Եվ որտեղ որ ձեզ ընդունեն, այնտեղ կլինեմ նաև ես, քանզի ես կգնամ ձեր առջևից: Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և իմ Հոգին կլինի ձեր սրտերում, և իմ հրեշտակները՝ ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ» (ՎԿՈ 84.88):

Ես ապավինել եմ այդ խոստմանը շատ անգամ և տեսել եմ դրա իրագործումը շատ առումներով իմ ողջ 72 տարիների քահանայության ծառայության ընթացքում: Դա տեղի ունեցավ այն ժամանակ, երբ ես նոր Ահարոնյան Քահանայություն կրող էի՝ հաղորդությունը բաժանելու հանձնարարությամբ: Սարսափելով, որ կարող էի սխալվել, նախքան հավաքի սկիզբը, ես ժողովարանից դուրս եկա և հուսահատ աղոթեցի, որ Աստված օգնի ինձ: Մի պատասխան եկավ: Ես զգացի, որ Տերը ինձ հետ է: Ես զգացի, որ Նա վստահում է ինձ, և այդպես, ես վստահություն զգացի Նրա աշխատանքի իմ մասը կատարելիս:

Դա տեղի է ունեցավ կրկին, երբ ես ծառայում էի որպես եպիսկոպոս: Ես հեռախոսազանգ ստացա մի կնոջից, ով լուրջ սխալ էր գործել և այժմ կանգնած էր կյանքի ընթացքը փոխող դժվարին որոշման առաջ: Հանդիպելով նրան, ես զգացի, որ գիտեի նրա հարցի պատասխանը, բայց նաև խիստ զգում էի, որ *ինքս* չպետք է ասեմ նրան պատասխանը՝ նա ինքը իր համար պետք է ստանար պատասխանը: Ես ասացի նրան. «Ես համոզված եմ, որ եթե հարցնես, Աստված կհուշի քեզ ինչ անել»: Ավելի ուշ կինն ասաց, որ հարցրել է Աստծուն ու ստացել է իր աղոթքի պատասխանը:

Մեկ այլ առիթով, մի հեռախոսազանգ եկավ, երբ ես եպիսկոպոս էի, այս անգամ ոստիկանությունից: Ինձ ասացին, որ հարբած մի վարորդ իր մեքենայով ապակե պատը փշրել ու մխրճվել էր բանկի նախասրահ: Տարակուսած վարորդը, տեսնելով անվտանգության աշխատակցին զենքով սպառնալիս, բացականչել էր. «Մի՛ կրակիր: Ես մորմոն եմ»:

Պարզվել էր, որ ոչ սթափ վարորդը վերջերս մկրտված իմ ծխի անդամ էր: Մինչ ես սպասում էի, որ խոսեմ նրա հետ եպիսկոպոսի գրասենյակում, ես ծրագրում էի, թե ինչ էի ասելու, որպեսզի նա զղջա, թե ինչպես է իր ուխտերը խախտել և Եկեղեցուն անհարմար վիճակի մեջ գցել: Բայց երբ նստած նայում էի նրան, ես իմ մտքում մի ձայն լսեցի, այնքան պարզ, կարծես մեկը ինձ հետ խոսեր և ասեր . «Ես պատրաստվում եմ ցույց տալ նրան այնպիսին, ինչպիսին ես եմ նրան տեսնում»: Եվ ապա մի կարճ պահ նրա ողջ կերպարանքը փոխվեց ինձ համար: Իմ առջև ոչ թե մի ապշած երիտասարդ էր, այլ մի պայծառ, ազնիվ Աստծո որդի: Ես հանկարծ զգացի Տիրոջ սերը նրա հանդեպ: Այդ տեսիլքը փոխեց մեր զրույցի ընթացքը: Այն փոխեց նաև ինձ:

Տիրոջ աշխատանքը կատարելիս ես Նրա հետ քայլելու կարևոր դասեր սովորեցի այդ փորձառություններից: Կցանկանայի ձեզ հետ կիսվել այդ դասերից երեքով: Առաջինն այն է, որ Աստված նկատում ու աջակցում է անգամ նոր կարգված ամենաերիտասարդ սարկավագին: Դուք երբեք չպետք է մտածեք, որ դուք շատ փոքր կամ չափազանց աննշան եք, որպեսզի Նա նկատի ձեզ և Նրա անունով մատուցած ձեր ծառայությունը:

Երկրորդ դասն այն է, որ Տիրոջ աշխատանքը պարզապես խնդիրներ լուծելը չէ, այլ մարդկանց ձևավորելը: Այնպես որ, երբ քայլում եք Նրա հետ քահանայության ծառայության ժամանակ, դուք հնարավոր է, նկատեք, որ երբեմն առավել արդյունավետ թվացող լուծումը Տիրոջ նախընտրելի լուծումը չէ, քանի որ թույլ չի տալիս, որ մարդիկ աճեն: Եթե լսեք, Նա ձեզ կսովորեցնի Իր ուղիները: Հիշեք, որ Աստծո գործն ու փառքը պարզապես արդյունավետ կազմակերպություն ղեկավարելը չէ. այդ աշխատանքը «մարդու անմահությունը և հավերժական կյանքը իրականացնելն է» (Մովսես 1.39): Սա, ի վերջո, այն պատճառն է, որի համար նա տալիս է Իր քահանայության իշխանությունը ձեզ և ինձ նման արատավոր մահկանացուներին և մեզ հրավիրում է մասնակցելու Իր աշխատանքին: Նրա աշխատանքը մեր առաջադիմությունն է:

Այժմ երրորդ դասը: Քահանայության ծառայության մեջ Փրկիչի հետ քայլելով կփոխվի այն, թե ինչպես եք դուք նայում մարդկանց: Նա կսովորեցնի ձեզ տեսնել նրանց Իր աչքերով, ինչը նշանակում է նայել սրտի մեջ՝ տեսնել ավելին, քան արտաքին տեսքն է (տես Ա Թագավորաց 16.7): Ահա թե ինչպես էր Փրկիչը կարողանում տեսնել Սիմոնին՝ ոչ թե որպես բռնկուն մի ձկնորս, այլ որպես Պետրոս՝ վեմի պես պինդ Իր Եկեղեցու ապագա առաջնորդ (տես Ղուկաս 5.1–11): Այդպես էր Նա նայում նաև Զաքէոսին՝ ոչ թե որպես կաշառակեր մաքսավորի, ինչպես մյուսներն էին տեսնում, այլ որպես Աբրահամի

ազնիվ, շիտակ որդու (տես Ղուկաս 19.1–9)։ Եթե բավական երկար քայլեք Փրկիչի հետ, դուք կսովորեք տեսնել բոլորին, որպես անսահման ներուժով Աստծո զավակ, անկախ նրանից, թե ինչպիսին է եղել նրա անցյալը։ Եվ եթե շարունակեք քայլել Փրկիչի հետ, դուք ևս մեկ պարգև կզարգացնեք, որ Նա ունի՝ մարդկանց օգնելու կարողություն, որ տեսնեն իրենց ներուժը և ապաշխարեն։

Քահանայության իմ սիրելի եղբայրներ, շատ առումներով մենք նման ենք այն երկու աշակերտներին, ովքեր առաջին Զատիկի կիրակի օրը քայլում էին Էմմաուսի ճանապարհով։ Հարության առավոտ էր, սակայն նրանք դեռ վստահ չէին, որ կար հարություն կամ նույնիսկ, թե ինչ էր նշանակում հարությունը։ Նրանք «յոյս ունէին թէ [Հիսուսն] է, որ Իսրայէլին փրկելու էր», սակայն «թուլասիրտ էին հաւատալու» հարության վերաբերյալ սուրբ գրությունների սովորեցրած բոլոր բաներին։ Մինչ նրանք քայլում էին ու փորձում էին միասին տրամաբանել, «ինքն Յիսուսը մօտեցաւ եւ գնում էր նորանց հետ։ Բայց նորանց աչքերը բռնուած էին, որ չճանաչեն նորան»։ (Տես Ղուկաս 24.13–32։)

Ես վկայում եմ, որ քահանայության ծառայության մեջ քայլելիս Փրկիչ Հիսուս Քրիստոսը քայլում է մեզ հետ, քանի որ այդ Նրա ուղին է՝ Նրա ճանապարհը։ Նրա լույսը գնում է մեր առջևից, իսկ Նրա հրեշտակները շուրջն են։ Հնարավոր է, մենք լիովին չենք ըմբռնում, թե ինչ է քահանայությունը կամ ինչպես պետք է Նրա նման գործածենք։ Բայց եթե ուշադիր լինենք այն պահերին, երբ մեր սրտերը «բորբոքվում էին մեզանում» (Ղուկաս 24.32), մեր աչքերը կարող են բացվել, և մենք կտեսնենք Նրա աջը մեր կյանքում և մեր ծառայության մեջ։ Վկայում եմ, որ լավ ենք ճանաչում Իրեն, գործակցելով Նրա հետ և ծառայելով Նրան Աստծո զավակներին փրկություն բերելու փառահեղ աշխատանքում։ «Քանզի ի՞նչպես է մարդ ճանաչում իր տիրոջը, որին նա չի ծառայել, և որն օտար է նրան

և հեռու է նրա սրտի մտքերից և խորհուրդներից» (Մոսիա 5.13)։ Հիսուս Քրիստոսը մեր Տերն է։ Մենք Նրա Եկեղեցում ենք։ Նրա քահանայությունն է, որ մենք կրում ենք։ Թող որ յուրաքանչյուրս ընտրենք քայլել Նրա հետ և ճանաչենք Նրան մեզ հետ քայլելիս։

Ես տալիս եմ իմ հանդիսավոր վկայությունը, որ Հիսուսը Քրիստոսն է՝ հարություն առած մեր Տերը։ Իմ վկայությունն եմ բերում, որ քահանայությունը, որ Նա վստահել է մեզ, Նրա անունով խոսելու և գործելու զորությունն է։ Մենք մեր սիրող Երկնային Հոր զավակներն ենք, ով պատասխանում է մեր աղոթքներին և ուղարկում է Սուրբ Հոգին, որպեսզի զորացնի քահանայության բոլոր պարտականություններում, որ մեզ տրվում է որպես օրհնություն։ Ջոզեֆ Սմիթը տեսել է Հորը և Որդուն։ Նա ստացել է քահանայության բանալիները, որոնք փոխանցվել են Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին, ով գործածում է դրանք այսօր։ Այդ մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով. ամեն։ ■

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Մորմոնի գրքի զորությունը

Ես քաջալերում եմ յուրաքանչյուրիս աղոթքով ուսումնասիրել և խորհել Մորմոնի Գրքի շուրջ ամեն օր։

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ջերմորեն ողջունում եմ ձեզ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու այս հրաշալի զերագույն համաժողովում կրկին հանդիպելու համար։ Նախքան այսօրվա իմ պաշտոնական ուղերձով կիսվելը, ես կցանկանայի հայտարարել հինգ նոր տաճարների մասին, որոնք կկառուցվեն հետևյալ բնակավայրերում՝ Բրազիլիայի Բրազիլիա քաղաքում, Ֆիլիպինների մեծ Մանիլա տարածքում, Քենիայի Նեյրոբի քաղաքում, ԱՄՆ-ի Պոկատելո քաղաքում (Այդահո) և ԱՄՆ-ի Սարատոգա Սպրինգս քաղաքում (Յուտա)։

Այս առավոտ իմ ուղերձը Մորմոնի Գրքի զորության և, որպես այս Եկեղեցու անդամներ, այն ուսումնասիրելու, խորհելու և դրա ուսմունքները մեր կյանքում կիրառելու խիստ անհրաժեշտության մասին է։ Մորմոնի Գրքի մասին ամուր վկայություն ունենալու կարևորությունը հնարավոր չէ գերագնահատել։

Մենք անհանգստությունների ու ամբարշտության մեծ ժամանակներ ենք ապրում։ Ի՞նչը կպաշտպանի մեզ մեղքից ու չարից, որ այնքան տարածված է աշխարհում այսօր։ Ես հաստատում եմ, որ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին ամուր վկայությունը կուղղորդի մեզ դեպի անվտանգություն։ Եթե դուք չեք կարդում Մորմոնի Գիրքը ամեն օր, խնդրում եմ կարդացեք։ Եթե կարդաք այն աղոթքով ու ճշմարտությունն իմանալու անկեղծ ցանկությամբ, Սուրբ Հոգին կհայտնի ձեզ նրա ճշմարտացիությունը։ Եթե այն ճշմարիտ է, իսկ ես հանդիսավորությամբ վկայում եմ, որ այն ճշմարիտ է, ուրեմն Ջոզեֆ Սմիթը մարգարե էր, որը տեսավ Հայր Աստծուն և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին։

Քանի որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, Հիսուս Քրիստոսի Վերջին



Օրերի Սրբերի Եկեղեցին Տիրոջ Եկեղեցին է երկրի վրա և Աստծո սուրբ քահանայությունը վերականգնվել է՝ ի նպաստ և ի օրհնություն Իր զավակների:

Եթե դուք չունեք ամուր վկայություն այս բաների վերաբերյալ, արեք՝ ինչ անհրաժեշտ է այն ձեռք բերելու համար: Այս դժվարին ժամանակներում կարևոր է, որ դուք ունենաք ձեր սեփական վկայությունը, որովհետև ուրիշների վկայությունը ձեզ չի տանի մինչև վերջ: Սակայն, վկայություն ձեռք բերելով, դուք պետք է այն կենսունակ և վառ պահեք, հնազանդվելով Աստծո պատվիրաններին, մշտապես աղոթելով և սուրբ գրություններն ուսումնասիրելով:

Տիրոջ աշխատանքի իմ սիրելի գործընկերներ, ես քաջալերում եմ յուրաքանչյուրիս աղոթքով ուսումնասիրել Մորմոնի Գիրքը և խորհել դրա մասին ամեն օր: Երբ կարդանք այն, մենք կկարողանանք լսել Հոգու ձայնը, կդիմակայենք գայթակղություններին, կհաղթահարենք կասկածն ու վախը և երկնային օգնություն կստանանք մեր կյանքում: Այդ մասին ես վկայում եմ իմ ողջ սրտով՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Զոյ Դ. Զոնս
Երեխաների խմբի գերագույն նախագահ

Մեղքին դիմակայող սերունդ

Երբ դուք ուսուցանեք, առաջնորդեք ու սիրեք երեխաներին, դուք կստանաք անձնական հայտնություն, որը կօգնի ձեզ մեծացնել ու զինել քաջ, մեղքին դիմակայող սերունդ:

Մեկ տարի առաջ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը խոսեց «մեղքին դիմակայող սերունդ ուսուցանելու և մեծացնելու» անհրաժեշտության մասին:[1] «Մեղքին դիմակայող սերունդ» արտահայտությունը խորը հոգևոր իմաստ ունեցավ ինձ համար:

Մենք պատվում ենք այն երեխաներին, ովքեր ձգտում են ապրել մաքուր ու հնազանդ կյանքով: Ես ականատես եմ եղել շատ երեխաների զորությանն ամբողջ աշխարհով մեկ: Նրանք դիմակայում են, «հաստատուն և անխախտ»[2] են զանազան դժվարին հանգամանքներում և միջավայրերում: Այս երեխաները հասկանում են իրենց աստվածային էությունը, զգում են Երկնային Հոր սերն իրենց հանդեպ և ձգտում են հնազանդվել Նրա կամքին:

Այնուամենայնիվ, կան երեխաներ, ովքեր «հաստատուն և անխախտ» կանգնելու համար ճիգեր են գործադրում, և ում նրբազգաց մտքերը խոցվում են:[3] «Հակառակորդի կրակոտ նետերը»[4] գրոհում են նրանց վրա ամեն կողմից, և նրանք ունեն զորացման ու աջակցության կարիք: Նրանք մեզ համար մեծ շարժառիթ են հանդիսանում, որպեսզի մենք ներգրավվենք մեր երեխաներին Քրիստոսի մոտ բերելու մեջ ու մեղքի դեմ պատերազմ մղենք:

Եկեք լսենք Երեց Բրյուս Ռ. ՄակՔոնկիի խոսքերը, որոնք նա ասել է 43 տարի առաջ.

«Որպես Եկեղեցու անդամներ, մենք ներգրավված ենք մի հզոր պայքարի մեջ: Մենք պատերազմի մեջ ենք: Մենք զինվորագրված ենք Քրիստոսի բանակում՝ Լյուցիֆերի դեմ կռվելու համար: . . .

Մեծ պատերազմը, որը մոլեգնում է ամենուր, և որը, դժբախտաբար, մեծ կորուստներ է տալիս, ընդհուպ մահացու, նորություն չէ: . . .

Այժմ այս պատերազմում չկան ու չեն էլ կարող լինել չեզոք գոտում գտնվողներ»:[5]

Այսօր պատերազմն ավելի ուժգին է շարունակվում: Այն ազդում է բոլորիս վրա, իսկ մեր երեխաներն առաջին գծում են կանգնած՝ դեմ առ դեմ հակազդող ուժերին: Այսպիսով, կարիքը դրդում է, որ մենք ամրացնենք մեր հոգևոր ռազմավարությունը:

Որպեսզի երեխաները դառնան մեղքին դիմակայող, նրանց պիտի ամրացնենք, որն էլ հանդիսանում է ծնողների, տատիկ-պապիկների, ընտանիքի անդամների, ուսուցիչների ու ղեկավարների պարտականությունն ու օրհնությունը: Մեզանից յուրաքանչյուրն օգնելու պատասխանատվություն է կրում: Այնուամենայնիվ, Տերը, հատկապես *ծնողներին* է պատվիրել ուսուցանել իրենց երեխաներին, որպեսզի նրանք «հասկանան վարդապետությունն ապաշխարության, հավատքի՝ առ Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, և մկրտության ու ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևի», և «[աղոթեն] և ուղիղ [քայլեն] Տիրոջ առաջ»:[6]

Այն հարցը, թե ինչպես «[մեծացնենք մեր] երեխաներին լույսի և ճշմարտության մեջ»,[7] կարող է դժվար լինել, քանի որ այն անհատականացված է յուրաքանչյուր ընտանիքի ու յուրաքանչյուր երեխայի համար, սակայն Երկնային Հայրը տվել է համընդհանուր ուղենիշներ, որոնք մեզ կօգնեն: Սուրբ Հոգին մեզ կոգեշնչի ամենաարդյունավետ ձևերով, որպեսզի մեր երեխաներին ապահովենք հոգևոր պաշտպանությամբ:

Առաջին հերթին անհրաժեշտ է հասկանալ այս պատասխանատվության կարևորությունը: Մենք պետք է հասկանանք մեր և նրանց աստվածային էությունն ու նպատակը, նախքան կկարողանանք օգնել մեր երեխաներին հասկանալ, թե *ովքեր* են իրենք և *ինչու* են այստեղ: Մենք, անկասկած, պետք է օգնենք նրանց հասկանալ, որ իրենք սիրառատ Երկնային Հոր որդիներն ու դուստրերն են, և որ Նա աստվածային ակնկալիքներ ունի իրենցից:

Երկրորդ՝ մեղքին դիմակայող դառնալու համար անհրաժեշտ է հասկանալ ապաշխարության վարդապետությունը: Մեղքին դիմակայող լինել չի նշանակում անմեղ լինել, այլ նշանակում է շարունակաբար ապաշխարող, զգոն ու անվեհեր լինել: Գուցե մեղքին դիմակայող լինելը օրհնություն է, որը գալիս է շարունակաբար մեղքին դիմակայելուց: Ինչպես ասել է Հակոբոսը. «Արդ հնազանդեցէք Աստուծուն, հակառակ կացէք սատանային, և նա կփախչի ձեզանից»:[8]

Պատանի մարտիկներն «անսահման անվեհեր էին խիզախության մեջ, . . . , բայց ահա, դա բոլորը չէր, նրանք . . . հավատարիմ էին բոլոր դեպքերում, ինչ էլ որ նրանց վստահվում էր: Այո, . . . նրանց սովորեցրել էին պահել Աստծո պատվիրանները և քայլել ուղիղ՝ նրա առաջ»:[9] Այս երիտասարդ տղամարդիկ պատերազմ գնացին՝ Քրիստոսանման արժանիքները որպես զենք կրելով իրենց հակառակորդի դեմ: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հիշեցրել է մեզ, որ «մենք բոլորս էլ պետք է մշտապես քաջություն դրսևորենք: Մեր ամենօրյա կյանքում քաջությունը պարտադիր է ոչ թե նշանակալից իրադարձությունների համար, այլ շատ հաճախ որոշումներ կայացնելիս կամ մեզ շրջապատող իրավիճակներին արձագանքելիս»:[10]

Մեր երեխաները կրում են հոգևոր զենք, երբ ամեն օր փորձում են լինել Քրիստոսի իսկական հետևորդ: Մենք գուցե թերագնահատում ենք երեխաների՝ ամեն օր Քրիստոսի հետևորդ լինելու կարողության գաղափարը: Նախագահ Հենրի Բ. Այրինգը մեզ խորհուրդ է տվել «սկսել վաղ տարիքում և հաստատուն կերպով շարունակել»:[11] Այսպիսով, երեխաներին օգնելու երրորդ բանալին, որպեսզի նրանք դառնան մեղքին դիմակայող, վաղ տարիքում նրանց ավետարանի հիմնական վարդապետությունն ու չափանիշները սիրով ուսուցանելն է սուրբ գրություններից, Հավատո հանգանակից, *«Երիտասարդներին զորացնելու համար»* գրքույկից, Երեխաների Խմբի երգերից, օրհներգերից և մեր անձնական վկայություններից, որոնք կառաջնորդեն երեխաներին դեպի Փրկիչը:

Աղոթքի, սուրբ գրությունների ուսումնասիրության, ընտանեկան երեկոյի և Հանգստության օրը երկրպագելու հետևողական սովորություններ ստեղծելը հանգեցնում է լիարժեքության զգացումի, ներքին կայունության և բարոյական բարձր արժեքների, այլ կերպ ասած՝ հոգևոր ուժի: Այսօրվա աշխարհում, որտեղ շիտակությունն անհետացել է, մեր երեխաներն արժանի են հասկանալ, թե ինչ է նշանակում իսկական շիտակությունը, և ինչու է այն այդքան կարևոր, հատկապես, երբ մկրտության ժամանակ և տաճարում պատրաստում ենք նրանց կապել ու պահել սրբազան ուխտերըԻնչպես ուսուցանում է *«Քարոզիր իմ ավետարանը»,* ձեռնարկը՝ «Պարտավորություններ պահելը մարդկանց [այդ թվում նաև տարիքով փոքր

երիտասարդներին] օգնում է կապել ու պահել սուրբ ուխտերը»:[12]

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանել է. «Երբ մենք խոսում ենք ուխտ պահելու մասին, խոսում ենք մահկանացու կյանքում մեր ամենակարևոր նպատակի մասին»:[13] Արտասովոր ուժ կա մեր Երկնային Հոր հետ ուխտեր կապելու և պահելու մեջ: Հակառակորդը գիտի դա, դրա համար նա մթագնում է ուխտ կապելու գաղափարը:[14] Երեխաներին օգնելը, որպեսզի նրանք հասկանան, կապեն ու պահեն սրբազան ուխտերը, հանդիսանում է ևս մեկ բանալի մեղքին դիմակայող սերունդ ձևավորելու համար:

Ինչպե՞ս ենք մեր երեխաներին նախապատրաստում կապել ու պահել սրբազան ուխտեր, երբ նրանք մտնեն ուխտի մեջ ու առաջ ընթանան այդ ճանապարհով: Փոքր հասակում երեխաներին ուսուցանելով պահել հասարակ խոստումները, կօգնենք նրանց հետագայում պահել սուրբ ուխտերը:

Թույլ տվեք ձեզ հետ կիսվել մի պարզ օրինակով. ընտանեկան երեկոյի ժամանակմի հայր հարցրեց. «Ինչպե՞ս են մեր հարաբերություններն ընտանիքում միմյանց հետ»: Հինգ տարեկան Լիզին բողոքեց, որ իր մեծ եղբայրը՝ Քեվինը, շատ էր կատակում իր հետ, և վիրավորում էր իր զգացմունքները: Քեվինը դժկամորեն ընդունեց, որ Լիզին ճիշտ է: Քեվինի մայրը հարցրեց նրան, թե նա ինչ կարող է անել, որպեսզի լավացնի իր հարաբերությունները քրոջ հետ: Քեվինը մտածեց ու որոշեց, որ նա կխոստանա Լիզիին, որ մի ամբողջ օր չի կատակի նրա հետ:

Հաջորդ օրվա վերջում, երբ բոլորը հավաքվեցին ընտանեկան աղոթքի համար, Քեվինի հայրը հարցրեց նրան, թե ինչպես է նա իրեն պահել: Քեվինը պատասխանեց. «Հայրի՛կ, ես խոստումս պահել եմ»: Լիզին ուրախությամբ համաձայնվեց և ընտանիքը շնորհավորեց Քեվինին:

Այնուհետև Քեվինի մայրն առաջարկեց, որ եթե նա իր խոստումը կարող է պահել մի օր, ապա ինչո՞ւ չպիտի փորձի պահել երկու օր:

Երկու օր անցավ, Քեվինին հաջողվում էր պահել իր խոստումը, իսկ Լիզին ավելի քան երախտապարտ էր: Երբ նրա հայրը հարցրեց, թե ինչու է նա պահում իր խոստումներն այդքան լավ, Քեվինն ասաց. «Ես պահեցի իմ խոստումը, որովհետև խոստացել էի»:

Փոքր, հաջողությամբ պահված խոստումների հաջորդականությունը տանում է դեպի շիտակություն: Խոստումը հետևողականորեն պահելը երեխաների համար հոգևոր նախապատրաստություն է, որպեսզի ստանան մկրտության իրենց առաջին ուխտը և Սուրբ Հոգու պարգևը, որտեղ նրանք Աստծուն ծառայելու և Նրա պատվիրանները պահելու ուխտ են կապում:[15] Խոստումներն ու ուխտերը միմյանցից անբաժան են:

Դանիելի գրքից մենք սովորում ենք, որ Սեդրաքը, Միսաքը ու Աբեդնագովը հրաժարվում են պաշտել Նաբուգոդոնոսոր թագավորի արձանը:[16] Թագավորը զգուշացնում է, որ նրանց կգցեն բորբոքված կրակով հնոցը, եթե չհնազանդվեն: Նրանք հրաժարվեցին ու ասացին:

«Ահա մեր Աստուածը որիմ մենք պաշտում ենք, կարող է մեզ ազատել կրակով բորբոքուած հնոցիցը: . . .

«Եվ եթէ ոչ, թող քեզ յայտնի լինի, ով թագաւոր, որ քո աստուծուն մենք չենք պաշտում»:[17]

«Եվ եթէ ոչ»: Խորհեք այս երեք բառերի նշանակության մասին, և ինչպես են դրանք առնչվում ուխտեր պահելու հետ: Այս երեք երիտասարդ տղամարդիկ չհնազանդվեցին պարզապես փրկվելու համար: Նույնիսկ, եթե չփրկվեին, նրանք կպահեին Տիրոջը տված իրենց խոստումը, որովհետև նրանք խոստացել էին: Անկախ նրանից, թե ինչպիսի իրավիճակում ենք, պետք է պահենք մեր ուխտերը: Այս երեք երիտասարդ տղամարդիկ, պատանի մարտիկների նման, մեր երեխաների համար հրաշալի օրինակներ են, ովքեր դիմակայում են մեղքին:

Ինչպե՞ս են այս օրինակները կիրառվում մեր տներում և ընտանիքներում: «Տող առ տող, ցուցում առ ցուցում»[18] մենք օգնում ենք մեր երեխաներին փոքր պատառներով ճաշակել հաջողության համը: Երբ նրանք պահում են իրենց խոստումները, զգում են Սուրբ Հոգին իրենց կյանքում: Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին ուսուցանել է, որ «Շիտակության ամենամեծ պարգևը Սուրբ Հոգու մշտական ուղեկցությունն ունենալն է»:[19] Այնուհետև մեր երեխաների «վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ»:[20] Շիտակության աղբյուրից բխում է զորեղ, մեղքին դիմակայող սերունդ:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ձեր փոքրիկների հանդեպ ուշադիր եղեք, այնքան ուշադիր, որ նրանք տեսնեն ձեր ամենօրյա կրոնասեր պահվածքն ու զննեն, թե ինչպես եք պահում ձեր խոստումներն ու ուխտերը: «Երեխաները հրաշալի ընդօրինակողներ են, այնպես որ, թող որ ձեզանից մի հրաշալի բան

ընդօրինակեն»:[21] Մենք իսկապես խոստում առ խոստում, ուխտ առ ուխտ օգնում ենք Տիրոջ համար ուսուցանել ու մեծացնել մեղքին դիմակայող սերունդ:

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսն առաջնորդում է այս Եկեղեցին: Երբ դուք ուսուցանեք, առաջնորդեք ու սիրեք երեխաներին, ինչպես Փրկիչն է սիրում, դուք կստանաք անձնական հայտնություն, որը կօգնի ձեզ մեծացնել ու զինել քաջ, մեղքին դիմակայող սերունդ: Ես աղոթում եմ, որ մեր երեխաները կրկնեն Նեփիի խոսքերը. «Կդարձնե՞ս դու ինձ այնպիսին, որ կարողանամ ցնցվել մեղքի տեսքից»:[22] Ես վկայում եմ, որ մեր Փրկիչը քավել է աշխարհի մեղքերը,[23] որովհետև Նա խոստացել էր, որ անելու է այդպես, որ Նա սիրում է մեզ ավելին, քան մենք՝ մահկանացուներս, կարող ենք նույնիսկ ըմբռնել,[24] որովհետև Նա ասել է, որ սիրելու է: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ռասսել Մ. Նելսոն, «Մի կարևոր խնդրանք իմ քույրերին,» *Լիահոնա,* նոյ. 2015:
2. Մոսիա 5.15
3. Տես Հակոբ 2.9
4. 1 Նեփի 15.24, տես նաև Հելաման 5.12
5. Տես Bruce R. McConkie, “Be Valiant in the Fight of Faith,” *Ensign,* Nov. 1974, 33, 34:
6. Վարդապետություն և Ուխտեր 68.25, 28
7. Վարդապետություն և Ուխտեր 93.40
8. Հակոբոս 4.7, տես նաև Ալմա 19.33
9. Ալմա 53.20–21
10. Թոմաս Ս. Մոնսոն, «Զորացիր և քաջ եղիր»,” *Լիահոնա,* Մայիս 2014, 67
11. Henry B. Eyring, “Spiritual Preparedness: Start Early and Be Steady,” *Liahona,* Nov. 2005, 37.
12. *«Քարոզիր իմ ավետարանը. Միսիոներական ծառայության ուղեցույց»* (2004), 196:
13. Jeffrey R. Holland, “Keeping Covenants: A Message for Those Who Will Serve a Mission,” *New Era,* Jan. 2012, 2.
14. Տես 1 Նեփի 13.26–28
15. Տես Մոսիա 18.10
16. Տես Դանիել 3
17. Դանիել 3.17–18
18. 2 Նեփի 28.30
19. Joseph B. Wirthlin, “Personal Integrity,” *Ensign,* May 1990, 33.
20. Վարդապետություն և Ուխտեր 121.45
21. Անանուն
22. 2 Նեփի 4.31
23. Տես 3 Նեփի 27.14–15
24. Տես Հովհաննես 15.13

Երեց Յուն Հվան Չոյ
Յոթանասունի Քվորում

Մի՛ նայիր շուրջդ, նայի՛ր վերև

Մեր նպատակն է մարդկանց հրավիրել դեպի Քրիստոսը, և մենք կարող ենք իրականացնել այն՝ նայելով վերև՝ Հիսուս Քրիստոսին:

Իմ նպատակն է՝ «հրավիրել մարդկանց գալ դեպի Քրիստոսը»:[1] Դա նաև ձեր նպատակն է: Մենք կարող ենք իրագործել այդ նպատակը՝ նայելով վերև՝ Հիսուս Քրիստոսին:

Ես մկրտվել եմ ծնողներիս հետ, երբ 16 տարեկան էի: Իմ փոքր եղբայրը՝ Կյանգ-Խուանը, 14 տարեկանում միացավ Եկեղեցուն քեռուս՝ Յանգ Ջիկ Լիի շնորհիվ, և մեզ հրավիրեց իր Եկեղեցին: Մեր ընտանիքի 10 անդամները հաճախում էին տարբեր եկեղեցիներ, այնպես որ մենք ուրախ էինք գտնել ճշմարտությունը և մեր մկրտվելուց հետո ցանկանում էինք կիսվել Հիսուս Քրիստոսի ավետարանում մեր գտած ուրախությամբ:

Ամենաշատը հայրս էր ոգևորված ճշմարտությունն իմանալու և դրանով կիսվելու համար: Նա առավոտյան վաղ էր վեր կենում և ամեն օր երկու ժամ ուսումնասիրում էր սուրբ գրությունները: Գրեթե ամեն օր աշխատանքից հետո նա միսիոներների հետ այցելում էր մեր ընտանիքի անդամներին, ընկերներին և հարևաններին: Մեր մկրտվելուց հետո յոթ ամսվա ընթացքում իմ ընտանիքից և հարազատներից 23 հոգի դարձել էին Եկեղեցու անդամներ: Դրան հետևեց հաջորդ հրաշքը՝ հաջորդ տարի 130 հոգի մկրտվեցին իմ հոր միսիոներական աշխատանքի շնորհիվ:

Ընտանեկան պատմությունը նույնպես կարևոր էր նրա համար և նա լրացրել էր մեր նախնիների ութ սերնդի տվյալները: Այդ ժամանակից ի վեր, մեր ընտանիքի դարձի գալու պտուղները, սկսած իմ 14-ամյա եղբորից, աճել են անթիվ անհամար ոչ միայն ապրողների, այլև մահացածների թվով: Իմ հոր և մյուսների աշխատանքի վրա կառուցված մեր տոհմածառն այժմ ընդգրկում է մինչև 32 սերունդ, և մենք այժմ կատարում ենք տաճարային աշխատանք շատ ճյուղերի համար: Այսօր ես զարմացած եմ և մեծ ուրախություն եմ ապրում՝ կապելով մեր նախնիներին և մեր ժառանգներին:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին նույն փորձառությունն էր արձանագրել Օհայոյի Կոլոմբուս տաճարում.

«Երբ նստած էի տաճարում, անդրադառնալով այս երեք մարդկանց կյանքին, մտածեցի իմ դստեր, իմ թոռնուհու և նրա երեխաների՝ իմ

ծոռների մասին: Ես հանկարծ հասկացա, որ ես կանգնած էի այս յոթ սերունդների հենց մեջտեղում՝ երեք սերունդ՝ ինձանից առաջ և երեք սերունդ՝ ինձանից հետո:

Այդ սրբազան և նվիրագործված տանը վիթխարի պատասխանատվության մի զգացում պատեց ինձ, որ ես պիտի փոխանցեի այն ամենը, ինչ ստացել էի որպես ժառանգություն իմ նախնիներից այն սերունդներին, ովքեր արդեն եկել էին ինձանից հետո»:[2]

Մենք բոլորս հավերժական ընտանիքի մեջտեղում ենք: Մեր դերը կարող է շրջադարձային կետ լինել, որտեղից նշանակալից փոփոխություններ տեղի կունենան դրական կամ բացասական առումով: Նախագահ Հինքլին շարունակել է. §Երբեք *թույլ չտաք ձեզ* թույլ օղակ դառնալ ձեր սերունդների շղթայում՝:[3] Ավետարանի հանդեպ ձեր հավատարմությունը կամրացնի ձեր ընտանիքը: Ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ մենք ամուր օղակ ենք մեր հավերժական ընտանիքում:

Մի օր, իմ մկրտությունից մի քանի ամիս անց, ես լսեցի, թե ինչպես էին Եկեղեցու որոշ անդամներ քննադատում միմյանց: Ես շատ հիասթափված էի: Գնալով տուն, ես ասացի հորս, որ միգուցե այլևս չգնամ Եկեղեցի: Դժվար էր տեսնել, թե ինչպես են անդամներն այդպես քննադատում մարդկանց: Լսելուց հետո հայրս սովորեցրեց ինձ, որ ավետարանը վերականգնվել է և այն կատարյալ է, բայց անդամները դեռ կատարյալ չեն, ոչ ինքը՝ հայրս, ոչ էլ՝ ես: Նա հստակ ասաց. §Մի կորցրու հավատքդ շրջապատի մարդկանց պատճառով, այլ ամուր հարաբերություններ կառուցիր Հիսուս Քրիստոսի հետ: Մի՛ նայիր շուրջդ, նայի՛ր վերև՝:

Հորս այս իմաստուն խորհուրդը՝ նայել վերև՝ Հիսուս Քրիստոսին, ամրացնում է հավատքս, երբ ես մարտահրավերների եմ հանդիպում կյանքում: Նա սովորեցրել է ինձ, թե ինչպես կիրառել Քրիստոսի այս ուսմունքները. «Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում. մի կասկածեք, մի վախեցեք»:[4]

Երբ ես Վաշինգտոն Սիթել միսիայի նախագահն էի, տարվա օրերի մեծամասնությունն անձրևային էին: Այնուամենայնիվ, մեր միսիոներներին հրահանգվել էր դուրս գալ և քարոզել անձրևի ժամանակ: Ես ասում էի նրանց. §Դուրս եկեք անձրևին, նայեք երկնքին, բացեք ձեր բերանը և խմեք: Երբ վերև նայեք, դուք ուժ կստանաք բացելու ձեր բերանը ամեն մեկի առաջ առանց վախենալու՝: Դա խորհրդանշական դաս էր նրանց համար՝ վերև նայել, երբ մարտահրավերների հանդիպեին նույնիսկ միսիայից հետո: Խնդրում եմ, չփորձեք դա անել աղտոտված վայրերում:

Դեռ Սիթելի միսիայում ծառայելիս մի հեռախոսազանգ ստացա իմ ավագ որդի՝ Սանբիմից, ով դաշնակահար է: Նա ասաց, որ պատիվ է ունենալու նվագել Նյու Յորքի Կարնեգի Հոլլում, քանի որ հաղթող է ճանաչվել միջազգային մրցույթում: Մենք այնքան ուրախ էինք և ցնծում էինք նրա համար: Այնուամենայնիվ, այդ երեկո երախտագիտությամբ աղոթելիս, կինս խոստովանեց, որ մենք չենք կարող միանալ նրան համերգի ժամանակ և ասաց Երկնային Հորը մոտավորապես հետևյալը. «Երկնային Հայր, ես շնորհակալ եմ օրհնության համար, որ շնորհել ես Սանբիմին: Թերևս, ես ափսոսում եմ, որ չեմ կարող գնալ այնտեղ: Կգնայի, եթե այս օրհնությունը մինչև այս միսիան լիներ կամ միսիայից հետո: Ես չեմ բողոքում, բայց ափսոսանքի մի փոքր զգացում ունեմ»:

Աղոթքն ավարտելուց անմիջապես հետո նա լսեց մի պարզ ձայն. «Ձեր տղային տրվել է այս հնարավորությունը, որովհետև դուք չեք կարող գնալ: Կցանկանայիք վիճարկե՞լ»:

Կինս զարմացած էր: Նա գիտեր, որ երեխաներն օրհնվում են Տիրոջ այգում իրենց ծնողների հավատարիմ աշխատանքի շնորհիվ, բայց առաջին անգամ էր այդքան հստակ հասկանում իր դերը: Նա

պատասխանեց Նրան իսկույն նեթ. «Ո՛չ, ո՛չ, ամեն ինչ լավ է, եթե ես չգնամ: Թող նա ունենա այդ պատիվը»:

Սիրելի՛ եղբայրներ և քույրեր, հեշտ չէ մեզ համար ճանաչել Երկնային Հոր սերը, երբ մեր շուրջն ենք նայում աշխարհիկ աչքերով, քանի որ առաջին հերթին մենք տեսնում ենք անհարմարությունը, կորուստը, բեռը կամ մենակությունը: Մյուս կողմից, մենք կարող ենք տեսնել օրհնությունները, երբ վերև նայենք: Տերը հայտնել է. «Եվ եթե մենք ինչ-որ օրհնություն ենք ստանում Աստծուց, դա այն օրենքին հնազանդվելով է, որի վրա հիմնված է այն»:[5] Բոլորդ, ովքեր մտնում եք Աստծո *ցանկացած* ծառայության մեջ, իմացեք, որ դուք ամուր կապ եք հանդիսանում հզոր օրհնությունների՝ նրանց համար, ովքեր ձեզանից առաջ էին և այն սերունդների միջև, որոնք ձեզանից հետո կլինեն:

Այսօր ես երախտապարտ եմ՝ տեսնելով, որ մեր ընտանիքի անդամներից շատերն են հավատարիմ ուխտի ճանապարհին և չեմ պատկերացնում, որ հանկարծ մեր կողքին դատարկ տեղեր տեսնեմ: Երեց Մ. Ռասսել Բալլարդն ասել է. «Եթե որոշել եք դառնալ ոչ ակտիվ կամ հեռանալ վերականգնված Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուց, ո՞ւր եք գնալու: Ի՞նչ եք անելու: Այլևս Եկեղեցու անդամների և Տիրոջ կողմից ընտրված ղեկավարների հետ չշարունակելու որոշումը երկարատև ազդեցություն կթողնի, որը միշտ չէ, որ անմիջապես կտեսնեք»:[6] Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը կոչ է արել մեզ. «Եկեք կայացնենք դժվարին թվացող ճիշտ ընտրություններ, այլ ոչ թե հեշտ թվացող սխալ ընտրություններ»:[7]

Երբեք ուշ չէ վերև նայել՝ Հիսուս Քրիստոսին: Նրա ձեռքերը միշտ բաց են մեզ համար: Մեզանից առաջ եղած և մեզանից հետո եկող սերունդները կախում ունեն մեզանից Քրիստոսին հետևելու հարցում, որպեսզի մենք հավերժական ընտանիք լինենք:

Երբ ես ազատվեցի ցցի նախագահի իմ կոչումից, որդիներս ուրախացել էին, որ ինձ հետ ավելի շատ ժամանակ են անցկացնելու: Երեք շաբաթ անց ես կանչվեցի որպես յոթանասունական: Սկզբում ես մտածեցի, որ նրանք տխրելու են, բայց իմ կրտսեր որդու հեզ արձագանքն էր. «Հայրիկ, մի անհանգստացիր: Մենք հավերժական ընտանիք ենք»: Դա հասարակ ու պարզ ճշմարտություն էր: Ես մի քիչ անհանգստացած էի, քանի որ նախ շուրջս էի նայում՝ այս մահկանացու կյանքին, իսկ իմ որդին երջանիկ էր, քանի որ շուրջը չէր նայում, այլ՝ վերև, աչքերն ուղղելով դեպի հավերժությունը և Տիրոջ նպատակները:

Երբեմն հեշտ չէ վերև նայել, երբ ձեր ծնողները դեմ են ավետարանին, երբ դուք Եկեղեցու փոքրիկ միավորի անդամ եք, երբ ձեր ամուսինը կամ կինը անդամ չէ, երբ դուք դեռ միայնակ եք, չնայած ամուսնանալուն ուղղված ձեր բոլոր ջանքերին, երբ ձեր երեխան մոլորության մեջ է, երբ հանկարծ դարձել եք միայնակ ծնող, երբ դուք ֆիզիկապես կամ հուզականորեն վնասվել եք, երբ դուք աղետի զոհ եք դարձել և այլն: Այդ դժվարին ժամանակներում ամուր կառչեք ձեր հավատքից: Վեր նայեք Քրիստոսին՝ զորության, հավասարակշռության և բուժման համար: Հիսուս Քրիստոսի Քավության զորության շնորհիվ «բոլոր բաները միաժամանակ կգործեն [ձեր] բարիքի համար»:[8]

Ես բերում եմ իմ վկայությունը Հիսուս Քրիստոսի մասին, որ Նա մեր Փրկիչն ու Քավիչն է: Երբ մենք հետևում ենք մեր ապրող մարգարեին՝ Թոմաս Ս. Մոնսոնին, մենք նայում ենք Հիսուս Քրիստոսին: Երբ մենք ամեն օր աղոթում և ուսումնասիրում ենք սուրբ գրությունները, ամեն շաբաթ անկեղծ ընդունում ենք հաղորդությունը, մենք ուժ ենք ստանում *միշտ* վերև՝ Նրան նայելու: Ես երջանիկ եմ լինել այս Եկեղեցու անդամը և հավերժական ընտանիքի մի մասը: Ես սիրում եմ կիսվել այս հրաշալի ավետարանով մյուսների հետ: Մեր նպատակն է մարդկանց հրավիրել դեպի Քրիստոսը, և մենք կարող ենք իրականացնել այն՝ նայելով վերև՝ Հիսուս Քրիստոսին: Ես խոնարհաբար վկայում եմ այս բաների մասին Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Preach My Gospel: A Guide to Missionary Service* (2004), 1.
2. *Եկեղեցու նախագահների ուսմունքները, Գորդոն Բ. Հինքլի* (2016), 82
3. Gordon B. Hinckley, “Keep the Chain Unbroken” (Brigham Young University devotional, Nov. 30, 1999), 3, speeches.byu.edu; emphasis added.
4. Վարդապետություն և Ուխտեր 6.36
5. Վարդապետություն և Ուխտեր 130.21
6. Մ. Ռասսել Բալլարդ, «Ո՞ւմ մոտ գնանք» *Լիահոնա,* նոյ. 2016, 91
7. Թոմաս Ս.Մոնսոն, «Ընտրություններ», *Լիահոնա,* մայիս 2016, 86
8. Վարդապետություն և Ուխտեր 100.15

Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ
Տասներկու Առաքյալների Քվորում

Թող Սուրբ Հոգին առաջնորդի

Աստվածային հանձնարարությամբ, Սուրբ Հոգին ոգեշնչում է, վկայում, ուսուցանում և հուշում մեզ քայլել Տիրոջ լույսի մեջ։

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ես բոլորիդ համակրում եմ, ընդունում եմ, որ տեսնում ենք Տիրոջ աշխատանքի արագացումը Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի և նրա ուղերձի միջոցով այս առավոտ։ Նախագա՛հ Մոնսոն, մենք սիրում ենք ձեզ, աջակցում ենք ձեզ և միշտ աղոթում ձեզ համար, «մեր մարգարե սիրելի»։[1]

Մենք Հոգու զեղում զգացինք այս հանգստյան օրերին։ Լինեք դուք այստեղ՝ այս մեծ դահլիճում, դիտեք տնից, թե հավաքված ժողովատներում աշխարհի հեռավոր մասերում, դուք ունեցել եք հնարավորություն զգալու Տիրոջ Հոգին։ Այդ Հոգին հաստատում է ձեր սրտերին և մտքերին այս համաժողովում ուսուցանվող ճշմարտությունները։

Մտածեք այս ծանոթ օրհներգի խոսքերի մասին.

Թող Սուրբ Հոգին առաջնորդի,
Թող նա ուսուցանի
ճշմարտությունը.
Նա կվկայի Քրիստոսի մասին,
Կլուսավորի մեր մտքերը երկնային
տեսիլքով։[2]

Վերջին օրերի հայտնությունից մենք գիտենք, որ Աստվածագլուխը կազմված է երեք հստակ և առանձին էակներից՝ մեր Երկնային Հայրը, Նրա Միածին Որդին՝ Հիսուս Քրիստոսը և Սուրբ Հոգին։ Մենք գիտենք որ «Հայրը մսից և ոսկորից մարմին ունի, բայց Սուրբ Հոգին չունի մսից և ոսկորից մարմին, այլ Ոգեղեն անձնավորություն է։ Եթե այդպես չլիներ, Սուրբ Հոգին չէր կարող բնակվել մեր մեջ»։[3]

Այսօր իմ ուղերձը կենտրոնացած է մեր կյանքում Սուրբ Հոգու կարևորության վրա։ Մեր Հայրը երկնքում գիտի, որ մահկանացու կյանքում մենք հանդիպելու էինք մարտահրավերների, չարչարանքների և խառնաշփոթի։ Նա գիտեր, որ մենք գոտամարտելու ենք հարցերի, հուսահատությունների, գայթակղությունների և թուլությունների հետ։ Մեզ մահկանացու ուժ և աստվածային առաջնորդություն տալու համար Նա տվել է Սուրբ Հոգին, մեկ այլ անուն Հոգու համար։

Սուրբ Հոգին կապում է մեզ Տիրոջ հետ։ Աստվածային նշանակմամբ, Նա ոգեշնչում է, վկայում, ուսուցանում և հուշում մեզ քայլել Տիրոջ լույսով։ Մենք ունենք սրբազան պատասխանատվություն՝ սովորել ճանաչել Նրա ազդեցությունը մեր կյանքում և արձագանքել։

Հիշեք Տիրոջ խոստումը. «Ես քեզ բաժին պիտի հանեմ իմ Հոգուց, որը կլուսավորի քո միտքը, որն ուրախությունով կլցնի քո հոգին»։[4] Ես սիրում եմ այդ հավաստիացումը։ Ուրախությունը, որը լցնում է մեր հոգիները, բերում է իր հետ հավերժական հեռանկար՝ ի հակադրություն ամենօրյա կյանքի։ Այդ ուրախությունը զալիս է որպես խաղաղություն՝ դժվարության կամ սրտնեղության պահին։ Այն տալիս է հանգստություն և քաջություն, բացում է ավետարանի ճշմարտությունները և մեծացնում մեր սերը Տիրոջ հանդեպ և բոլոր Աստծո զավակների հանդեպ։ Չնայած այդպիսի օրհնությունների կարիքն այդքան մեծ է, շատ դեպքերում աշխարհը մոռացել է և թողել դրանք։

Ամեն շաբաթ երբ մենք ճաշակում ենք սուրբ հաղորդությունից, մենք ուխտ ենք կապում «միշտ հիշել նրան», Տեր Հիսուս Քրիստոսին և Նրա քավիչ զոհաբերությունը: Երբ մենք պահում ենք այդ սրբազան ուխտը, խոստում է տրված, որ մենք «նրա Հոգին միշտ [մեզ] հետ [կ] ունենանք»:[5]

Ինչպե՞ս ենք մենք դա անում:

Առաջինը, մենք ձգտում ենք Հոգուն արժանի ապրել:

Սուրբ Հոգին ուղեկցում է նրանց, ովքեր «ճշգրիտ են Տիրոջը՝ իրենց Աստծուն օրեցօր հիշելիս»:[6] Ինչպես Տերն է խորհուրդ տվել, մենք պետք է «մի կողմ դնենք այս աշխարհի բաները և ավելի լավ բաների ձգտենք»,[7] քանի որ «Տիրոջ Հոգին չի բնակվում անսուրբ տաճարներում»:[8] Մենք պետք է միշտ փորձենք հնազանդվել Աստծո օրենքներին, ուսումնասիրենք սուրբ գրությունները, աղոթենք, հաճախենք տաճար և ապրենք հավատարիմ հավատո հանգանակի տասներեքերորդ կետին. «ազնիվ, ճշմարիտ, մաքրաբարո, բարյացակամ, առաքինի լինել, և . . . բոլոր մարդկանց բարիք անել»:

Երկրորդը, մենք պետք է պատրաստակամ լինենք ստանալ Հոգին:

Տերը խոստացել է. «Ես կասեմ քեզ քո մտքում և քո սրտում, Սուրբ Հոգով, որը կիջնի քո վրա և որը կմնա քո սրտում:»[9] Ես սկսեցի հասկանալ սա որպես երիտասարդ միսիոներ Սքոչ Փլեյնզում (Նոր Ջերսի): Մի շոգ հուլիսյան առավոտ ես և իմ զուգընկերը հուշում զգացինք անուն որոնել Տաճարային Հրապարակի տեղեկատուի մեջ: Մենք թակեցինք Էդվուդ Շաֆերի տան դուռը: Տիկին Շաֆերը քաղաքավարի ձևով մեզ մերժեց:

Երբ նա սկսեց փակել դուռը, ես զգացի, որ պետք է անեի մի բան, որը երբեք չէի արել նախկինում և երբեք չեմ արել այդ ժամանակից ի վեր: Ես ոտքս դրեցի դռան տակ և ես հարցրի. «Կա մեկ ուրիշը, ով կարող է հետաքրքրվել մեր ուղերձով»: Նրա 16-ամյա դուստրը՝ Մարթին, իսկապես հետաքրքրված էր և ջերմեռանդորեն աղոթել էր առաջնորդության համար մի օր առաջ: Մարթին հանդիպեց մեզ հետ, և ժամանակի ընթացքում նրա մայրը մասնակցեց զրույցներին: Նրանք երկուսով միացան Եկեղեցուն:

Մարթիի մկրտության շնորհիվ 136 մարդ, ներառյալ նրա ընտանիքից շատերը, մկրտվեցին և կապեցին ավետարանի ուխտեր: Որքան երախտապարտ եմ, որ ես լսեցի Հոգուն և ոտքս դրեցի դռան տակ հուլիսյան այդ շոգ օրը: Մարթին և նրա սիրելի ընտանիքի մի շարք անդամներ այսօր այստեղ են:

Երրորդ, մենք պետք է ճանաչենք Հոգուն, երբ նա գալիս է:

Ըստ իմ փորձառության, Հոգին ամենից հաճախ հաղորդակցվում է որպես զգացողություն: Դուք զգում եք այն խոսքերում, որոնք ծանոթ են ձեզ, որոնք իմաստալից են ձեզ համար, որոնք «հուշում են ձեզ»: Մտածեք Նեփիացիների արձագանքի մասին, երբ նրանք լսում էին Տիրոջը իրենց համար աղոթելիս. «Եվ բազմությունը լսեց և վկայեց, և նրանց սրտերը բաց էին, և նրանք իրենց սրտերում հասկացան այն խոսքերը, որոնք նա աղոթեց»:[10] Նրանք զգացին իրենց սրտերում Նրա աղոթքի խոսքերը: Սուրբ Հոգու ձայնը մեղմ և բարակ է:

Հին Կտակարանի Եղիան վիճեց Բահաղի քահանաների հետ: Քահանաները սպասում էին, որ Բահաղի «ձայնը» կգար որպես որոտ և կվառեր իրենց զոհը կրակով: Բայց ձայնը չկար և կրակ էլ չկար:[11]

Մեկ ուրիշ առիթով Եղիան աղոթեց. «Եւ ահա Տերը անց էր կենում. Եւ մի մեծ եւ զորաւոր հողմ պատառեց սարերը եւ կոտրատեց ապառաժները Տիրոջ առաջին. բայց Տերն այն հողմի մեջ չէր: Եւ հողմից յետոյ երկրաշարժ եղաւ, բայց Տէրը երկրաշարժի մէջ չէր,

Եւ երկրաշարժից յետոյ կրակ, բայց Տէրը կրակի մէջ չէր եւ կրակից յետոյ մի մեղմ ու բարակ ձայն»:[12]

Դուք ճանաչո՞ւմ եք այդ ձայնը:

Նախագահ Մոնսոնն ուսուցանել է. «Երբ շարունակում ենք կյանքի ճանապարհը, եկեք սովորենք Հոգու

լեզուն»[13] Հոգին ասում է խոսքեր, որոնք մենք «զգում ենք»: Այդ զգացումները մեղմ են՝ մղում են գործելու, անելու ինչ-որ բան, ասելու ինչ-որ բան, պատասխանելու ինչ-որ ձևով: Եթե մենք անփույթ ենք և ինքնագոհ մեր երկրպագությունից, տարված և անզգայացած աշխարհիկ զբաղմունքներով, մեր զգալու ունակությունը թուլանում է: Նեփին ասաց Լամանին և Լեմուելին. «Դուք լսել եք նրա ձայնը, ժամանակ առ ժամանակ, և նա խոսել է ձեզ հետ մեղմ, հանդարտ ձայնով, բայց դուք անզգայացած էիք, որպեսզի կարողանայիք զգալ նրա խոսքերը»:[14]

Անցած հունիսին ես հանձնարարությամբ գտնվում էի Հարավային Ամերիկայում: Մեր գրաֆիկը խիստ զբաղված էր՝ 10 օրում մենք այցելելու էինք Կոլումբիա,Պերու և Էկվադոր: Մի սարսափելի երկրաշարժ սպանել էր հարյուրավորների, վիրավորել տասնյակ հազարավորների, վնասել և կործանել տներ ու համայնքներ Էկվադորի Պորտովիեջո և Մանթա քաղաքներում: Ես հուշում զգացի ավելացնել մեր գրաֆիկում՝ այցելություն անդամներին, ովքեր ապրում էին այդ քաղաքներում: Ճանապարհներին հասցված վնասի պատճառով մենք համոզված չէինք թե կհասնենք այնտեղ: Փաստորեն մեզ ասվեց, մենք չէինք կարող հասնել այնտեղ, բայց հուշումը չէր հեռանում: Հետևաբար, մենք օրհնվեցինք և երկու քաղաքներն էլ կարողացանք այցելել:

Այդպիսի կարճ ծանուցմամբ, ես ակնկալում էի, որ միայն մի քանի տեղական քահանայության ղեկավարներ կմասնակցեին հապշտապ կազմակերպված հավաքներին: Սակայն, ժամանելով յուրաքանչյուր ցցի կենտրոն, մենք գտնում էինք ժողովատները լեփլեցուն: Մասնակիցներից ոմանք շրջանի կայուն անդամներ էին, պիոներներ, ովքեր ծոմ էին պահել Եկեղեցու համար, քաջալերելով մյուսներին միանալ իրենց՝ երկրպագությամբ և զգալու Հոգին իրենց կյանքում: Դիմացի շարքերում նստած էին անդամներ, ովքեր երկրաշարժից կորցրել էին սիրելիների և հարևանների: Ես հուշում զգացի առաքելական օրհնություն տալ նրանց բոլորին, ովքեր ներկա էին, որն իմ տված օրհնություններից առաջիններից մեկն էր: Չնայած ես կանգնած էի այդ սենյակի դիմաց, թվում էր,իմ ձեռքերը նրանց գլուխներից յուրաքանչյուրի վրա էր, և ես զգում էի, թե ինչպես էին Տիրոջ խոսքերը դուրս հորդում:

Դա չավարտվեց այդքանով: Ես հուշում զգացի խոսել նրանց հետ՝ ինչպես Հիսուս Քրիստոսն էր արել, երբ այցելել էր ժողովրդին Ամերիկայում: «Նա վերցրեց նրանց փոքր երեխաներին, մեկ առ մեկ, և օրհնեց նրանց, և նրանց համար աղոթեց Հորը:»[15] Մենք Էկվադորում էինք, մենք մեր Հոր գործով էինք, և նրանք Նրա զավակներն էին:

Չորրորդ, մենք պետք է գործենք *առաջին* հուշումով:

Հիշեք Նեփիի խոսքերը. «Եվ ես առաջնորդվում էի Հոգու կողմից նախապես չիմանալով բաները, որոնք պետք է անեի»: «Այնուամենայնիվ,- ասաց նա,- ես առաջ գնացի»:[16]

Եվ այդպես էլ մենք պետք է անենք: Մենք պետք է վստահ լինենք մեր առաջին հուշումների վրա: Երբեմն մենք փորձում ենք հիմնավորել, կասկածում ենք, թե արդյոք հոգևոր տպավորություն ենք զգում, թե դրանք ուղղակի մեր մտքերն են: Երբ մենք սկսում ենք երկրորդ ենթադրությունից, նույնիսկ երրորդ ենթադրությունից, ապա մեր զգացումներից, մենք բաց ենք թողնում Հոգին, մենք կասկածի տակ ենք դնում աստվածային խորհուրդը: Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ եթե դուք կամենաք լսել առաջին հուշումներին, տասից ուղիղ ինների դեպքում դուք կստանաք այն:[17]

Այժմ մի զգուշացում. մի սպասեք հրավառությունների, որովհետև դուք արձագանքեցիք Սուրբ Հոգուն: Դուք կատարում եք մեղմ ու բարակ ձայնի աշխատանքը:

Երբ ծառայում էի որպես միսիայի նախագահ Նյու Յորք քաղաքում, մի անգամ մեր միսիոներներից մի քանիսի հետ Բրոնքսի մի ռեստորանում էինք: Ներս մտավ մի երիտասարդ ընտանիք և նստեց մեզ մոտիկ: Նրանք կատարյալ էին թվում ավետարանի համար: Ես հետևում էի մեր միսիոներներին, մինչ նրանք շարունակում էին հանդիպումը ինձ հետ, ապա նկատեցի, թե ինչպես ընտանիքը վերջացրեց ճաշը և դուրս եկավ դռնից: Ես ասացի.«Երեցներ, այսօր մի դաս կա այստեղ: Դուք տեսաք մի հիանալի ընտանիք ներս մտավ այս ռեստորանը: Ի՞նչ պետք է մենք անեինք»:

Երեցներից մեկն արագ պատասխանեց. «Ես մտածեցի վեր կենալ և գնալ նրանց հետ խոսելու: Ես զգացի մղումը, բայց չարձագանքեցի»:

«Երեցներ,- ասացի ես,- մենք պետք է միշտ գործենք առաջին հուշման վրա հենվելով: Այդ մղումը, որ դուք զգացիք, Սուրբ Հոգին էր»:

Առաջին հուշումները մաքուր ոգեշնչում են երկնքից: Երբ դրանք հաստատում են կամ վկայում մեզ, մենք պետք է ճանաչենք թե ինչի համար են դրանք և երբեք թույլ չտանք, որ դրանք վրիպելով կողքով անցնեն: Այնքան հաճախ Հոգին ոգեշնչում է մեզ օգնության հասնել կարիքի մեջ գտնվող ինչ-որ մեկին, հատկապես ընտանիքին և ընկերներին: «Այսպիսով . . . մեղմ բարակ ձայնը, որը շշնջում է և ներթափանցում բոլոր բաներով»,[18] մատնանշում է մեզ ավետարանն ուսուցանելու հնարավորություններ, բերել վկայություն Վերականգնման և Հիսուս Քրիստոսի մասին, առաջարկել օգնություն և մտահոգություն և փրկել Աստծո թանկագին զավակներից մեկին:

Մտածեք այդ մասին, լինել որպես այսպես կոչված «առաջին արձագանքող»: Համայնքներից շատերում առաջին արձագանքողները ողբերգության, աղետի կամ արհավիրքի ժամանակ հրշեջներն են, ոստիկանության սպաները և բուժանձնակազմը: Նրանք ժամանում են թարթող լույսերով և եթե կարելի է ավելացնեմ, մենք անչափ շնորհակալ ենք նրանց համար: Տիրոջ ուղին ավելի քիչ նկատելի է, բայց պահանջում է ճիշտ այդպիսի անմիջական արձագանք: Տերը գիտի բոլոր Իր զավակների կարիքները, և Նա գիտի, թե ով է պատրաստ օգնելու համար: Եթե մենք թույլ տանք, որ Տերն իմանա մեր առավոտյան աղոթքներում, որ մենք պատրաստ ենք, Նա կրկին կդիմի մեզ ժամանակ առ ժամանակ, և մենք կգտնենք մեզ, ինչպես Նախագահ Մոնսոնն է կոչում, «Տիրոջ հանձնակատար»:[19] Մենք կդառնանք հոգևոր առաջին արձագանքողները՝ օգնություն բերելով վերևից:

Եթե մենք ուշադրություն դարձնենք այն հուշումներին, որոնք գալիս են մեզ, մենք կաճենք հայտնության ոգով և կստանանք ավելի ու ավելի շատ ոգեշնչումներ և ուղղորդում Հոգուց: Տերն ասել է. «Ապավինիր այն Հոգուն, որն առաջնորդում է բարիք գործել»:[20]

Եկեք լրջորեն ընդունենք Տիրոջ կանչը՝ «ուրախ եղեք, քանզի ես ձեր ուղեկիցը կլինեմ»:[21] Նա առաջնորդում է մեզ Սուրբ Հոգու միջոցով: Եկեք ապրենք Հոգուն մոտիկ, գործելով արագ՝ հիմնվելով մեր առաջին հուշումների վրա, գիտենալով, որ դրանք գալիս են Աստծուց: Ես բերում եմ վկայություն մեզ առաջնորդելու, ուղեկցելու և միշտ մեզ հետ լինելու Սուրբ Հոգու զորության մասին, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. “God Bless Our Prophet Dear,” *Hymns,* no. 24.
2. “Let the Holy Spirit Guide,” *Hymns,* no. 143.
3. Վարդապետություն և Ուխտեր 130.22
4. Վարդապետություն և Ուխտեր 11.13
5. Վարդապետություն և Ուխտեր 20.77
6. Ալմա 58.40
7. Վարդապետություն և Ուխտեր 25.10
8. Հելաման 4:24
9. Վարդապետություն և Ուխտեր 8.2
10. 3 Նեփի 19.33
11. Տես 1 Թագավորաց 18.17–29
12. Ա Թագավորաց 19.11–12
13. Թոմաս Ս. Մոնսոն, «Հոգին կյանք է տալիս», *Ensign,* May 1985, 70
14. 1 Նեփի 17.45
15. 3 Նեփի 17.21
16. 1 Նեփի 4.6–7
17. Տես Truman G. Madsen, *Joseph Smith the Prophet* (1989), 103
18. Վարդապետություն և Ուխտեր 85.6
19. Թոմաս Ս. Մոնսոն, «Սովորել, կատարել, լինել», *Լիահոնա,* նոյ. 2008, 62:
20. Վարդապետություն և Ուխտեր 11.12
21. Վարդապետություն և Ուխտեր 78.18

Երեց Լ. Ուիթնի Քլեյթոն
Յոթանասունի Նախագահություն

Ինչ որ ասէ ձեզ, արէք

Երբ մենք որոշում ենք անել «ինչ որ Աստուած ասում» է մեզ, մենք ջերմեռանդորեն պարտավորվում ենք համապատասխանեցնել մեր ամենօրյա վարքագիծը Աստծո կամքին։

Փրկիչն իրականացրեց Իր առաջին արձանագրված հրաշքը Գալիլեայի Կանա քաղաքի հարսանեկան խնջույքի ժամանակ։ Մարիամը՝ Նրա մայրը, և Նրա աշակերտները նույնպես այնտեղ էին։ Ըստ էության, Մարիամը որոշակի պատասխանատվություն էր զգում խնջույքի հաջողության համար։ Տոնախմբության ընթացքում խնդիր առաջացավ.հարսանիքի տանտերերի գինին վերջացավ։ Մարիամը մտահոգվեց ու գնաց Հիսուսի մոտ։ Նրանք մի կարճ խոսակցություն ունեցան.հետո Մարիամը դարձավ ծառաներին և ասաց.

«Ինչ որ ասէ ձեզ, արէք։

Այնտեղ վեց քարէ կարասներ կային։ . . . [Այս կարասները չէին օգտագործվում խմելու ջուր պահելու համար, այլ օգտագործվում էին լվացման արարողակարգերի համար՝ ըստ Մովսեսի օրենքի։]

Յիսուսը [ծառաներին] ասեց. Այդ կարասները ջրով լցրէք. եւ նորանց լցրին մինչեւ վերը։

Եւ նորանց ասեց. Հիմա առէք եւ տարէք սեղանապետին. եւ նորանք տարան։

[Ապա] վերակացուն այն գինի դառած ջուրը ճաշակեց և իր զարմանքն արտահայտեց, որ լավագույն գինին այսքան ուշ էր մատուցվում խնջույքում»։[1]

Մենք սովորաբար հիշում ենք այս իրադարձությունը, քանի որ Աստծո զորության դրսևորումն էր ջուրը գինու փոխակերպելը. դա հրաշք էր։ Դա կարևոր ուղերձ է, սակայն մեկ այլ կարևոր ուղերձ կա Հովհաննեսի պատմության մեջ։ Մարիամը «արժանավոր և ընտրյալ անոթ» էր՝[2] կանչված Աստծո կողմից, ծնունդ տալու, դաստիարակելու և մեծացնելու հենց Աստծո Որդուն։ Նա ավելի շատ բան գիտեր Նրա մասին, քան որևէ մեկն աշխարհում։ Նա գիտեր ճշմարտությունը Նրա հրաշք ծննդյան մասին։ Նա գիտեր, որ Նա անմեղ էր, և Նա «չէր խոսում ուրիշ մարդկանց պես, ոչ էլ նրան հնարավոր էր ուսուցանել. քանզի նա կարիք չուներ, որ որևէ մարդ ուսուցաներ իրեն»։[3] Մարիամը գիտեր խնդիրները լուծելու Նրա արտասովոր ունակության մասին, ներառյալ այս մի անձնական օրինակը՝ հարսանեկան խնջույքը գինով ապահովելը։ Նա անսասան վստահություն ուներ Նրա և Նրա աստվածային զորության հանդեպ։ Ծառաներին տված նրա պարզ հրահանգը չէր ներառում նախազգուշացումներ, պայմաններ, սահմանափակումներ.«Ինչ որ ասէ ձեզ, արէք»։

Մարիամը երիտասարդ կին էր, երբ Գաբրիել հրեշտակը հայտնվեց նրան։ Սկզբում նա «շփոթուեցաւ», երբ կոչվեց «շնորհընկալ» և «օրհնեալ . . . կանանց մէջ . . . եւ իր մտքումը մտածում էր, թէ ինչպիսի բան պիտի լինի այս ողջոյնը»։ Գաբրիելը վստահեցրեց նրան, որ կարիք չկար վախենալու.լուրը, որը նա բերել էր, բարի էր։ Նա կհղիանար ու իր արգանդում կկրեր Բարձրյալի Որդուն և կծներ որդի, ով «յաւիտեան կթագաւորէ Յակոբի տան վերայ»։

Մարիամը սկսեց բարձրաձայն խորհել. «Սա ի՞նչպէս կլինի. ըստ որում ես այր չգիտեմ»։

Հրեշտակը բացատրեց, բայց շատ հակիրճ, հաստատելով նրան, որ «Աստուծոյ առաջին ոչ մի բան անկարելի չէ»։

Մարիամը խոնարհաբար պատասխանեց, որ կաներ այն, ինչ Աստված կասեր, առանց մանրամասներ պահանջելու, սակայն, անկասկած, անհամար հարցեր ուներ՝ կապված իր կյանքում առաջ եկող հետևանքների վերաբերյալ։ Նա պարտավորություն վերցրեց իր վրա՝ առանց ստույգ հասկանալու, թե ինչու էր Նա խնդրում դա իրենից կամ ինչպես պիտի դասավորվեր ամեն բան։ Նա ընդունեց Աստծո խոսքն անվերապահորեն,[4] շատ քիչ բան իմանալով այն մասին, թե ինչ է սպասվում ապագայում։ Պարզ վստահություն ունենալով առ Աստված՝ Մարիամն ասաց.«Ահա Տիրոջ աղախինն եմ. թող քո խոսքի պես լինի ինձ»։[5]

Երբ մենք որոշում ենք անել «ինչ որ Աստուած ասում» է մեզ, մենք ջերմեռանդորեն պարտավորվում ենք համապատասխանեցնել մեր ամենօրյա վարքագիծը Աստծո կամքի հետ։ Հավատի հասարակ արարքները, ինչպիսին են սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրությունը, պարբերաբար ծոմ պահելը և անկեղծ միտումով աղոթելը, մեծացնում են մեր հոգևոր ունակությունները՝ հանդիպելու մահկանացու կյանքի պահանջներին։ Ժամանակի ընթացքում

հավատի պարզ սովորությունները հանգեցնում են հրաշալի արդյունքների: Դրանք վերափոխում են մեր հավատի ծիլերը և դարձնում մեծացող զորություն՝ բարիք բերելով մեր կյանք: Ապա, երբ մեր ճանապարհին հանդիպում ենք մարտահրավերների, մեր արմատները Քրիստոսում տոկունություն են ապահովում մեր հոգիների համար: Աստված մեր թուլությունները դարձնում է ուժեղ կողմեր՝ մեծացնելով մեր ուրախությունը և այնպես անելով, որ «բոլոր բաները միաժամանակ գործեն [մեր] բարիքի համար»:[6]

Մի քանի տարի առաջ ես խոսել եմ մի երիտասարդ եպիսկոպոսի հետ, ով ամեն շաբաթ ժամեր էր անցկացնում՝ խորհրդակցելով իր ծխի անդամների հետ: Նա հանգեց մի նշանակալի հետևության: Նա ասաց, որ խնդիրները, որոնց հանդիպում էին իր ծխի անդամները, նույնն էին, որոնց հանդիպում էին Եկեղեցու անդամներն ամենուրեք՝ ինչպե՞ս ունենալ երջանիկ ամուսնություն, ջանալ հավասարակշռություն մտցնել աշխատանքի, ընտանիքի և Եկեղեցու պարտականությունների միջև, մարտահրավերներ Իմաստության Խոսքի, աշխատանքի կամ պոռնոգրաֆիայի հետ կապված, դժվարություններ կապված այն բանի հետ, թե ինչպես ձեռք բերել խաղաղություն Եկեղեցու քաղաքականության կամ պատմական հարցի շուրջ, որն անհասկանալի է իրենց համար:

Ծխի անդամներին տված նրա խորհուրդը շատ հաճախ ընդգրկում էր՝ վերադարձը հավատի հասարակ կիրառումներին,ինչպես օրինակ՝ Մորմոնի Գիքի ուսումնասիրումը, ինչը մեզ խորհուրդ է տվել անել Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, տասանորդի վճարումը և նվիրումով ծառայությունը Եկեղեցում: Հաճախ նրանք պատասխանում էին նրան թերահավատությամբ.«Ես համամիտ չեմ ձեզ հետ, Եպիսկոպոս: Մենք *բոլորս* գիտենք, որ դրանք լավ բաներ են: Մենք Եկեղեցում *անընդհատ*խոսում ենք այդ բաների մասին: Սակայն, ես վստահ չեմ, որ դուք հասկանում եք ինձ: *Սրանից*

որևէ մեկի կատարումը ի՞նչ կապ ունի այն խնդրի հետ, որը *ես* ունեմ»:

Դա խելամիտ հարց է: Ժամանակի ընթացքում այդ երիտասարդ եպիսկոպոսը և ես նկատել ենք, որ նրանք, ովքեր նպատակ են դնում անել «փոքր և հասարակ բաները»[7], հնազանդվելով փոքր թվացող բաներում, օրհնվում են հավատով և ուժով, որը ավելին է, քան հնազանդորեն կատարված գործողությունները և փաստորեն կարող են թվալ դրանց հետ կապ չունեցող: Թվում է, դժվար է կապ ստեղծել հնազանդության ամենօրյա հասարակ գործողությունների և մեծ ու բարդ խնդիրների լուծումների միջև, որոնց մենք հանդիպում ենք: Սակայն դրանք իրար հետ կապված *են*: Ելնելով իմ փորձառությունից, հավատի փոքրիկ ամենօրյա սովորությունների ճիշտ դրսևորումը միակ լավագույն ուղին է զորացնելու մեզ կյանքի դժվարությունների դեմ, ինչպիսին էլ որ դրանք լինեն: Հավատի փոքրիկ գործերը, նույնիսկ, երբ դրանք թվում են անկարևոր կամ մեզ անհանգստացնող, որոշակի խնդիրների հետ բացարձակապես առնչություն չունեցող, օրհնում են մեզ *ամեն ինչում*, որ մենք անում ենք:

Խորհեք Նեեմանի մասին, ով «Ասորիների զօրագլուխն էր . . . քաջ զօրաւոր էր» և բորոտ էր: Մի ծառա աղջիկ պատմեց Իսրայելի մի մարգարեի մասին, ով կարող էր բժշկել Նեեմանին, ուստի, նա ծառաների, զինվորների ուղեկցությամբ նվերներով ճամփորդեց դեպի Իսրայել և վերջապես հասավ Եղիսեի տան մոտ: Եղիսեի ծառան, այլ ոչ թե ինքը՝ Եղիսեն, տեղեկացրեց Նեեմանին, որ Տերը պատվիրում էր՝ «Գնա եւ եօթն անգամ լուացուիր Յորդանանումը»: Հասարակ մի բան: Թերևս այս հասարակ հրահանգը քաջ զորավարի համար այնքան անտրամաբանական, հասարակ կամ նրա արժանապատվությունից ցածր էր, որ նա այդ խորհուրդը պարզապես վիրավորական համարեց: Եղիասի հրահանգն այնքան անհասկանալի էր Նեեմանի համար, որ «նա ետ դառաւ գնաց բարկութեամբ»:

Սակայն Նեեմանի ծառաները զգուշությամբ մոտեցան նրան և ասացին, որ նա կաներ «մի մեծ բան», եթե Եղիասը խնդրեր դա նրանից: Նրանք նշեցին, որ քանի որ նրան ընդամենը խնդրել էին կատարել մի փոքր առաջադրանք, արդյո՞ք նա չպիտի աներ դա, եթե նույնիսկ չէր հասկանում, թե ինչու: Նեեմանը գիտակցեց իր արձագանքը և, միգուցե թերահավատորեն, սակայն հնազանդորեն «վայր իջաւ եւ եօթն անգամ թաղուեցաւ Յորդանանի մէջ» և հրաշքով բժշկվեց:[8]

Հնազանդության որոշ պարգևներ գալիս են արագ. մյուսներն էլ գալիս են միայն մեր փորձվելուց հետո: «Թանկագին Մարգարիտ»-ում մենք կարդում ենք զոհաբերության մատուցման պատվիրանը պահելու Ադամի անխոնջ ջանասիրության մասին: Երբ հրեշտակը հարցրեց Ադամին, թե ինչու է զոհ մատուցում, նա պատասխանեց.«Ես չգիտեմ, գիտեմ միայն, որ Տերն է պատվիրել ինձ»: Հրեշտակը բացատրեց, որ նրա զոհաբերությունները «Հոր Միածնի զոհաբերության նմանությունն է»:

Սակայն այդ բացատրությունն ըստ երևույթին եկավ միայն այն բանից հետո, երբ Ադամը ցուցաբերեց նվիրվածություն, «շատ օրեր» Տիրոջը հնազանդվելով, առանց իմանալու, թե *ինչու*, նա պետք է մատուցեր այդ զոհաբերությունները:[9]

Աստված միշտ կօրհնի մեզ Իր ավետարանի հանդեպ մեր անսասան հնազանդության և Իր Եկեղեցու հանդեպ հավատարմության համար, սակայն Աստված հազվադեպ մեզ ցույց կտա Իր ժամանակացույցը նախապես: Նա մեզ ցույց չի տալիս ամբողջ նկարն ի սկզբանե: Ահա, թե որտեղից է գալիս հավատը, հույսը և վստահությունը Տիրոջ հանդեպ:

Աստված խնդրում է մեզ համբերել Իր հետ՝ վստահել և հետևել Իրեն: Նա խնդրում է մեզ. «Մի վիճեք, եթե դուք չէք տեսնում»: Նա զգուշացնում է մեզ, որ մենք երկնքից չպետք է ակնկալենք հեշտ պատասխաններ կամ արագ շտկումներ: Հարցերը լուծում են գտնում, երբ մենք անսասան կանգնում ենք «հավատքի փորձության» ընթացքում, որքան էլ դժվար լինի դիմանալ այդ խնդրին կամ դանդաղ գա պատասխանը:[10] Ես չեմ խոսում «կույր հնազանդության»[11] մասին, այլ խոհուն վստահության մասին՝ Տիրոջ կատարյալ սիրո և ժամանակի համաձայն:

Մեր հավատքի փորձությունը *միշտ* կներառի հավատարիմ մնալ հավատի պարզ, ամենօրյա կիրառումներին: Այդ ժամանակ, և միայն այդ ժամանակ է Նա խոստանում, որ մենք կստանանք աստվածային պատասխան, որը մենք փափագում էինք: Միայն մեկ անգամ ենք մենք ապացուցել, որ պատրաստ ենք անելու այն, ինչ Նա է խնդրում, առանց պահանջելու, որ իմանանք, թե երբ, ինչու և ինչպես է մեզ թույլ տրվելու «հնձել [մեր] հավատքի, [մեր] ջանասիրության, և համբերության և երկայնամտության վարձքը»:[12] Իրական հնազանդությունն ընդունում է Աստծո պատվիրաններն անվերապահորեն և նախապես:[13]

Ամեն օր, գիտակցաբար կամ այլ կերպ, մենք բոլորս ընտրում ենք, թե «ո՞րն [ենք մենք] պաշտելու»:[14] Տիրոջը ծառայելու գործում մենք վճռականություն ենք ցուցաբերում, երբ հավատարմությամբ զբաղվում ենք ամենօրյա նվիրյալ գործերով: Տերը խոստանում է ուղղել մեր ճանապարհները[15], սակայն, որպեսզի Նա անի դա, մենք պետք է քայլենք, վստահելով, որ Նա գիտի ճանապարհը, քանի որ Նա *է* «ճանապարհը»:[16] Մենք պետք է լցնենք մեր սեփական կարասները մինչև պռունկը: Երբ մենք վստահում և հետևում ենք Նրան, մեր կյանքը փոխվում է, ինչպես ջուրը՝ գինու: Մենք դառնում ենք ավելի լավը, քան երբևէ կարող էինք դառնալ: Վստահեք Տիրոջը և «ինչ որ ասէ ձեզ, արէք»: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հովհաննես 2.5–9, տես նաև Հովհաննես 2.10
2. Ալմա 7.10
3. Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Մատթեոս 3.25 (Աստվածաշնչի հավելվածում):
4. Տես Jeffrey R. Holland, *Christ and the New Covenant: The Messianic Message of the Book of Mormon* (1997), 18.
5. Տես Ղուկաս 1.26–38
6. Հռովմայեցիս 8.28, Վարդապետություն և Ուխտեր 90.24
7. Ալմա 37.6
8. Տես Դ Թագավորաց 5.1–14
9. Տես Մովսես 5.5–11
10. Տես Եթեր 12.6
11. Տես Boyd K. Packer, “Agency and Control,” *Ensign,* May 1983, 66–68; Robert C. Oaks, “Believe All Things,” *Ensign,* July 2005, 30–33
12. Ալմա 32.43
13. Տես Jeffrey R. Holland, *Christ and the New Covenant,* 18
14. Հեսու 24.15
15. Տես Առակաց 3.6
16. Հովհաննես 14.6

Երեց Դալլին Հ. Օուքս
Տասներկու Առաքյալների Քվորում

Աստվածագլուխը և փրկության ծրագիրը

Քանի որ մենք ունենք Աստվածագլխի և Նրանց հետ մեր հարաբերության, կյանքի նպատակի, մեր հավերժական ճակատագրի բնույթի մասին ճշմարտությունը, մենք ունենք լավագույն ճանապարհի քարտեզը և հավաստիացում՝ այս մահկանացու կյանքում մեր ուղևորության համար։

I.

Մեր առաջին հավատո հանգանակում ասվում է. «Մենք հավատում ենք Աստծուն՝ Հավերժական Հորը, և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, և Սուրբ Հոգուն»։ Մենք միանում ենք ուրիշ քրիստոնյաներին, ովքեր հավատում են Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն, բայց ինչին մենք հավատում ենք Նրանց վերաբերյալ, տարբեր է ուրիշների համոզմունքներից։ Մենք չենք հավատում Սուրբ Երրորդությանը, ինչպես քրիստոնյա աշխարհն է հավատում։ Իր Առաջին Տեսիլքում Ջոզեֆ Սմիթը տեսել է երկու տարբեր անձնավորությունների, երկու էակների, այսպիսով հստակեցնելով, որ այն ժամանակ գերիշխող հավատալիքները Աստծո և Աստվածագլխի մասին սխալ էին։

Ի տարբերություն այն համոզմունքի, որ Աստված անհասկանալի, անիմանալի առեղծված է, ճշմարտությունն այն է, որ Աստծո բնույթը և մեր հարաբերությունը Նրա հետ ճանաչելի են և այն մեր մյուս վարդապետությունների բանալին է։ Աստվածաշնչում տրված Հիսուսի մեծ Միջնորդական Աղոթքը, որտեղ նա հայտարարեց, որ «Եւ սա է յաւիտենական կեանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստուած. Եւ նորան, որ ուղարկեցիր՝ Յիսուսին Քրիստոսին» (Հովհաննես 17.3)։

Աստծուն ճանաչելու և Նրա աշխատանքի մասին իմանալու ջանքերը սկսվել են մահկանացու կյանքից առաջ և չեն վերջանալու այստեղ։ Մարգարե Ջոսեֆ Սմիթն ուսուցանել է. «Երկար ժամանակ կանցնի վարագույրի ձեր մյուս կողմն անցնելուց, երբ դուք կսովորեք [վեհացման բոլոր սկզբունքները]»։[1] Մենք կառուցում ենք այն գիտելիքի վրա, որը մենք ստացել ենք նախաերկրային հոգևոր աշխարհում։ Ուստի, փորձելով Իսրայելացիներին սովորեցնել Աստծո բնույթի և Նրա զավակների հետ ունեցած Նրա հարաբերության մասին, Եսայիա մարգարեն ասել է.

«Ուրեմն ո՞ւմ եք նմանեցնում Աստուծուն, եւ ի՞նչ նմանութիւն՝ հաւասարացնում նորան։ . . .

«Մի՞թէ չգիտէք, մի՞թէ չլսեցիք, մի՞թէ չպատմուեցաւ ձեզ առաջուց. Մի՞թէ չէք հասկացել երկրի հիմնադրութիւնից» (Եսայիա 40:18, 21)։

Մենք գիտենք, որ Աստվածագլխի երեք անդամները առանձին և տարբեր էակներ են։ Մենք գիտենք սրա մասին Մարգարե Ջոզեֆ Սմիթի ուսմունքներից. «Հայրն ունի մսից ու ոսկորից մարմին, այնպես շոշափելի, ինչպես մարդունը. Որդին՝ նույնպես. բայց Սուրբ Հոգին չունի մսից ու ոսկորից մարմին, այլ Հոգեղեն անձնավորություն է։ Եթե այդպես չլիներ, Սուրբ Հոգին չէր կարող բնակվել մեզանում» (ՎևՈ 130.22)։

Ինչ վերաբերում է Աստվածագլխում Հայր Աստծո գերագույն

դիրքին, ինչպես նաև յուրաքանչյուր անձնավորության կատարած համապատասխան դերին, Մարգարե Ջոզեֆ Սմիթը բացատրել է.

«Բոլոր նրանք, ովքեր տեսել են բացված երկինքը, գիտեն, որ կան երեք անձնավորություններ երկնքում, ովքեր կրում են զորության բանալիները և մեկը ղեկավարում է բոլորին։ . . .

« . . . Այդ անձնավորությունները . . . կոչվում են Աստված առաջինը՝ Արարիչը. Աստված երկրորդը՝ Քավիչը. և Աստված երրորդը՝ Վկայողը կամ Կտակարարը։

«Հոր իրավասությունն է նախագահել որպես Գլխավոր կամ Նախագահ, Հիսուսը որպես Հաշտարար, և Սուրբ Հոգին որպես Կտակարար կամ Վկա»։[2]



II. Ծրագիրը

Մենք հասկանում ենք մեր հարաբերությունը Աստվածագլխի անդամների հետ ինչպես մեզ հայտնվում է փրկության ծրագրից։

Օրինակ՝ «Ո՞րտեղից ենք մենք», «Ի՞նչու ենք մենք այստեղ» և «Ու՞ր ենք մենք գնում» հարցերի պատասխանները գալիս են սուրբ գրություններից, որտեղ այն կոչվում է «փրկության ծրագիր», «երջանկության մեծ ծրագիր», կամ «փրկագնման ծրագիր» (Ալմա 42.5, 8, 11)։ Հիսուս Քրիստոսի ավետարանը այս ծրագրի կենտրոնն է։

Որպես Աստծո հոգևոր զավակներ, մահկանացու կյանքից առաջ մեր գոյը բաղձում էր մեր ճակատագիրը՝ հավերժական կյանքը, բայց մեր ֆիզիկական մարմնում մենք զարգացել էինք՝ որքան կարողացել էինք, առանց մահկանացու փորձառությունների։ Որպեսզի մեզ տրամադրի այդ հնարավորությունը, մեր Երկնային Հայրը նախագահեց այս աշխարհի Արարումը, զրկեց մեզ նախքան մահկանացու ծնունդն ունեցած մեր հիշողությունից, որպեսզի մենք կարողանանք ապացուցել Նրա պատվիրանները պահելու մեր պատրաստակամությունը և փորձառություններ ունենանք ու աճենք մահկանացու կյանքի մյուս դժվարությունների միջոցով։ Բայց մահկանացու փորձառության ժամանակ և մեր առաջին ծնողների Անկման արդյունքում, մենք կկրեինք հոգևոր մահ, կտրված լինելով Աստծու ներկայությունից, կեղտոտված լինելով մեղքով, և կդառնայինք ֆիզիկական մահվան ենթակա։ Հոր ծրագիրը նախատեսել էր և տրամադրել էր ճանապարհներ՝ հաղթահարելու այդ բոլոր խոչնդոտները։

III. Աստվածագլուխը

Իմանալով Աստծո մեծ ծրագրի նպատակը, մենք հիմա նկատի ենք առնում այդ ծրագրում Աստվածագլխի երեք անդամների համապատասխան դերերը։

Մենք սկսում ենք Աստվածաշնչի մի ուսմունքից։ Կորնթացիներին ուղղված իր երկրորդ նամակի վերջում Պողոս Առաքյալը համարյա բացահայտ վկայակոչում է Աստվածագլխի՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու մասին. «Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, եւ Աստուծոյ սէրը, եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը [կամ «ընկերակցությունը»[3]] ձեր ամենի հետ» (Բ Կորնթացիս 13:14)։

Այս աստվածաշնչյան հատվածը ներկայացնում է Աստվածագլխին և Աստծո անսահման և քաջալերող սերը, Հիսուս Քրիստոսի ողորմածությունը և փրկող առաքելությունը և Սուրբ Հոգու ընկերակցությունը։

Հայր Աստվածը

Ամեն բան սկսվում է Հայր Աստծուց։ Թեև մենք համեմատաբար քիչ գիտենք Նրա մասին, ինչ որ գիտենք, որոշիչ է՝ հասկանալու Նրա զերագույն դիրքը, մեր հարաբերությունները Նրա հետ, Նրա ղեկավար դերը փրկության ծրագրում, Արարումը և դրան հաջորդող ամեն բան։

Ինչպես Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին է գրել անմիջապես իր մահից առաջ. «Բառիս բուն և վերջնական իմաստով, կա միայն մեկ ճշմարիտ և կենդանի Աստված։ Նա է Հայրը, Ամենազոր Էլոհիմը, Գերագույն Էակը, Տիեզերքի Արարիչը և Կառավարիչը»։[4] Նա է Աստվածը, Հիսուս Քրիստոսի, ինչպես նաև մեր բոլորի Հայրը»։ Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյն ուսուցանել է, որ «առաջին հիմնարար ճշմարտությունը, որ Հիսուս Քրիստոսը պաշտպանել է, հենց սա էր՝ որ ետևում, վերևում ու ամենուրեք կա Հայր Աստվածը՝ երկնքի ու երկրի Տերը»։[5]

Ինչ մենք գիտենք Հայր Աստծո բնույթի մասին, հիմնականում

այն է, ինչ մենք կարող ենք սովորել Նրա Միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի ծառայությունից և ուսմունքներից: Ինչպես ուսուցանել է Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը, Հիսուսի ծառայության կարևորագույն նպատակներից մեկը մահկանացուների համար բացահայտելն է, թե «ինչպիսին է մեր Հավերժական Հայր Աստվածը, . . . բացահայտել և մեզ համար անհատականացնել Իր Հոր, մեր Երկնային Հոր ճշմարիտ էությունը»:[6] Աստվածաշունչը պարունակում է մարգարեական վկայություն, որ Հիսուսը Իր Հոր անձի «էութեան նկարագիրն» էր (Եբրայեցիս 1.3), որը պարզապես ներկայացնում է Հիսուսի ուսմունքը, որ «ինձ տեսնողը Հօրը տեսաւ» (Հովհաննես 14.9):

Հայր Աստվածը մեր հոգիների Աստվածն է: Մենք Նրա զավակներն ենք: Նա սիրում է մեզ և այն ամենն, ինչ Նա անում է, մեր հավերժական օգտի համար է: Նա է հավերժական ծրագրի ստեղծողը և Նրա զորությամբ է, որ Նրա ծրագիրն իրականացնում է Նրա նպատակները Նրա զավակների հավերժական փառքի համար:

Որդին

Մահկանացուների համար Աստվածագլխի ամենատեսանելի անդամը Հիսուս Քրիստոսն է: 1909թ.-ին Առաջին Նախագահության մի հրաշալի հայտարարությամբ Նա հռչակվեց որպես՝ «անդրանիկը Աստծո բոլոր որդիների մեջ, առաջին միածինը հոգով և միածինը մարմնով»:[7] Որդին՝ բոլորից մեծագույնը, ընտրվեց Հոր կողմից իրականացնելու Հոր ծրագիրը՝ գործադրելու Հոր զորությունը, որպեսզի ստեղծի անթիվ աշխարհներ (տես Մովսես 1.33), Իր Հարությամբ փրկի Աստծո զավակներին մահից և Իր Քավությամբ՝ մեղքից: Այս աստվածային զոհաբերությունը իրավամբ կոչվում է «ողջ մարդկային պատմության առանցքային իրադարձություն»:[8]

Այն եզակի և սուրբ դեպքերում, երբ Հայր Աստվածն անձամբ է ներկայացրել Որդուն, Նա ասել է. «Դա է իմ սիրելի Որդին. Դորան լսեցէք»: (Մարկոս 9:7,Ղուկաս 9.35, տես նաև 3 Նեփի 11.7, Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.17): Այսպիսով, Նա Հիսուս Քրիստոսն է, Եհովան, Իսրայելի Տեր Աստվածը, ով խոսում է մարգարեների հետ և նրանց միջոցով:[9] Ահա ինչու, երբ Հիսուսը հայտնվեց Նեփիացիներին իր Հարությունից հետո, Իրեն ներկայացրեց որպես՝ «ամբողջ երկրագնդի Աստվածը» (3 Նեփի 11.14): Ահա ինչու էր Հիսուսը հաճախ խոսում Մորմոնի Գրքի մարգարեների և Վերջին Օրերի Սրբերի հետ որպես «Հայրն ու Որդին». մի վերնագիր, որը մեկնաբանվել է Տասներկու Առաքյալների Առաջին Նախագահության ոգեշնչված վարդապետական մեկնաբանության մեջ մոտ 100 տարի առաջ:[10]

Սուրբ Հոգին

Աստվածագլխի երրորդ անդամը Սուրբ Հոգին է, նաև Տիրոջ Հոգին և Մխիթարիչը: Նա Աստվածագլխի այն անդամն է, ով անձնական հայտնության միջնորդն է: Որպես հոգեղեն անձնավորություն (տես ՎԿՈ 130.22), Նա կարող է բնակվել մեզանում և միջնորդի դեր կատարել Հոր և Որդու և Աստծո զավակների միջև երկրի վրա: Շատ սուրբ գրություններ ուսուցանում են, որ Նրա առաքելությունն է վկայել Հոր և Որդու մասին (տես Հովհաննես 15.26, 3 Նեփի 28.11, ՎԿՈ 42.17): Փրկիչը խոստացել է, որ Մխիթարիչը կուսուցանի բոլոր բաները, կհիշեցնի ամեն բան և կառաջնորդի դեպի ճշմարտություն (տես Հովհաննես 14.26, 16.13): Այսպիսով, Սուրբ Հոգին օգնում է մեզ տարբերել ճշմարտությունը կեղծիքից, առաջնորդում է մեզ մեր կարևոր որոշումներում և օգնում է մեզ մահկանացու կյանքի դժվարությունների ժամանակ:[11] Նա նաև միջոց է, որով մենք սրբագործվում ենք, այսինքն մաքրվում և զտվում մեղքից (տես 2 Նեփի 31.17, 3 Նեփի 27.20, Մորոնի 6.4):

IV.

Ուրեմն, Աստվածագլխի և փրկության ծրագրի մասին աստվածայնորեն տրված այս վարդապետության ըմբռնումն ինչպե՞ս կարող է օգնել մեզ մեր այսօրվա մարտահրավերներին հանդիպելիս:

Քանի որ մենք ունենք Աստվածագլխի և Նրանց հետ մեր հարաբերության, կյանքի նպատակի, մեր հավերժական ճակատագրի բնույթի

մասին ճշմարտությունը, մենք ունենք լավագույն ճանապարհի քարտեզը և հավաստիացում՝ այս մահկանացու կյանքում մեր ուղևորության համար: Մենք գիտենք՝ ում և ինչու ենք երկրպագում: Մենք գիտենք՝ ովքեր ենք մենք և ինչ կարող ենք դառնալ (տես ՎևՈւ 93.19): Մենք գիտենք՝ ով է այդ ամենը հնարավոր դարձնում և գիտենք, թե ինչ պիտի անենք, որպեսզի վայելենք հրաշալի օրհնությունները, որոնք գալիս են Աստծո փրկության ծրագրի միջոցով: Որտեղի՞ց մենք գիտենք այս ամենը: Մենք գիտենք դրանք Աստծո կողմից Իր մարգարեներին և մեզանից յուրաքանչյուրին տրված հայտնություններից:

Ձեռք բերել այն, ինչը Պողոս Առաքյալը նկարագրել է որպես «Քրիստոսի կատարեալ հասակի չափովը» (Եփեսացիս 4.13), պահանջում է ավելին, քան գիտելիքի ձեռքբերումը: Նույնիսկ սա բավական չէ մեզ համար *համոզված* լինել ավետարանում, մենք պիտի գործենք և մտածենք, որպեսզի *դարձի գանք* դրանով: Ի տարբերություն աշխարհիկ հաստատությունների, որոնք մեզ սովորեցնում են ինչ-որ բան *իմանալ*, փրկության ծրագիրը և Հիսուս Քրիստոսի ավետարանը հրավիրում են մեզ *դառնալ* ինչ-որ բան:

Ինչպես Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն է ուսուցանել վերջին գերագույն համաժողովի ժամանակ.

«Մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսը Փրկության ծրագրի կարևոր մասն է: Առանց Նրա քավիչ զոհաբերության ամեն ինչ կկորսվեր: Սակայն բավարար չէ պարզապես հավատալ Նրան և նրա առաքելությանը: Մենք պիտի աշխատենք և սովորենք, փնտրենք և աղոթենք, ապաշխարենք և կատարելագործվենք: Մենք պիտի իմանանք Աստծո օրենքները և ապրենք դրանցով: Մենք պիտի ընդունենք Նրա փրկարար արարողությունները: Միայն այդպես վարվելով, մենք ձեռք կբերենք ճշմարիտ, հավերժական երջանկություն»: . . .

«Իմ հոգու խորքից և իմ ողջ խոնարհությամբ, - հայտարարել է Թոմաս Ս. Մոնսոնը,- ես վկայում եմ

այն մեծ պարգևի մասին, որը մեր Հոր ծրագիրն է մեզ համար: Սա այն միակ կատարյալ ուղին է, որը տանում է դեպի խաղաղություն և երջանկություն և՛ այստեղ, և՛ գալիք աշխարհում»:[12]

Ես ավելացնում եմ իմ վկայությունը սիրելի մարգարե-նախագահի վկայությանը: Ես վկայում եմ, որ մենք ունենք Երկնային Հայր, ով սիրում է մեզ: Ես վկայում եմ, որ մենք ունենք Սուրբ Հոգի, ով ուղղորդում է մեզ: Եվ ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի՝ մեր Փրկիչի մասին, ով հնարավոր է դարձնում այդ ամենը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 268
2. *Ուսմունքներ. Ջոզեֆ Սմիթ* ,42
3. This was a common meaning of *communion* when that word was chosen by the King James translators (see *The Oxford Universal Dictionary* 3rd ed., rev. [1955], 352)
4. Bruce R. McConkie, *A New Witness for the Articles of Faith* (1985), 51.
5. David O. McKay, in Conference Report, Oct. 1935, 100.
6. Jeffrey R. Holland, “The Grandeur of God,” *Liahona,* Nov. 2003, 70
7. First Presidency, “The Origin of Man,” *Ensign,* Feb. 2002, 26, 29.
8. Տես օրինակ՝ Ռասսել Մ. Մ. Նելսոն, «Հրավիրել Հիսուս Քրիստոսի զորությունը մեր կյանք», *Լիահոնա,* մայիս 2017, The Living Christ: The Testimony of the Apostles,” *Liahona,* Apr. 2000, 2:
9. Տես Joseph Fielding Smith, *Doctrines of Salvation,* comp. Bruce R. McConkie (1954), 1:27:
10. Տես First Presidency and Quorum of the Twelve Apostles, “The Father and the Son,” *Ensign,* Apr. 2002, 13–18:
11. Տես Ռոբերտ Դ. Հեյլս, «Սուրբ Հոգին», *Լիահոնա,* Մայիս 2016, 105–7:
12. Թոմաս Ս. Մոնսոն, «Երջանկություն տանող կատարյալ ուղին», *Լիահոնա,* նոյ. 2016, 80–81:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Կատարյալ սերը դուրս է մղում վախը

Եկեք մի կողմ դնենք մեր երկյուղները և դրա փոխարեն ապրենք ուրախությամբ, համեստությամբ, հույսով և համարձակ վստահությամբ, որ Տերը մեզ հետ է։

Սիրելի եղբայրներ և քույրեր, սիրելի ընկերներ, ինչպիսի արտոնություն և ուրախություն է հանդիպել որպես աշխարհասփյուռ Եկեղեցի՝ միավորված մեր հավատքով և սիրով առ Աստված և Նրա զավակները։

Ես հատկապես երախտապարտ եմ մեր սիրելի մարգարե Թոմաս Ս. Մոնսոնի ներկայության համար։ Նախագահ, մենք միշտ մեր սրտին մոտ կընդունենք ուղղորդման, խորհրդի և իմաստության ձեր խոսքերը։ Մենք սիրում ենք ձեզ Նախագահ Մոնսոն, և մենք միշտ աղոթում ենք ձեզ համար։

Տարիներ առաջ, երբ ես ծառայում էի որպես ցցի նախագահ Ֆրանկֆուրտում (Գերմանիա), մի սիրելի, բայց դժբախտ քույր մոտեցավ ինձ մեր ցցի ժողովուրդներից մեկի վերջում։

«Միթե՞ սոսկալի չէ, ասաց նա,- չորս կամ հինգ մարդ խորը քնած էին ձեր ելույթի ընթացքում»։

Ես մի պահ մտածեցի և պատասխանեցի. «Ես համոզված եմ, որ քունը եկեղեցում ամենաառողջարարն է»։

Իմ սքանչելի կինը՝ Հարիեթը, լսելով խոսքերի այդ պատահական փոխանակումը, հետո նշեց, որ այդ պատասխանը ամենահրաշալի պատասխաններից մեկն էր, որ ես երբևէ տվել էի։

Մեծ արթնացում

Մի քանի հարյուր տարի առաջ ամբողջ Հյուսիսային Ամերիկայում տարածվեց մի շարժում, որը կոչվեց «Մեծ արթնացում»։ Հիմնական նպատակներից մեկը այն մարդկանց արթնացնելն էր, որոնց մոտ հոգևոր հարցերը, կարծես, քնած լինեին։

Երիտասարդ Ջոզեֆ Սմիթի վրա ազդեց այն, ինչը նա լսում էր քարոզիչներից որոնք այդ կրոնական արթնացման մասն էին կազմում։ Դա էր պատճառներից մեկը, որ նա որոշեց լրջորեն որոնել Տիրոջ կամքը անձնական աղոթքով։

Այդ քարոզիչներն ունեին դրամատիկ, զգացմունքային քարոզելու ոճ և հայտնի էին դժոխքի կրակոտ ահաբեկչության իրենց քարոզներով, խիստ շեշտադրումով, որը սպասվում էր մեղավորին։[1] Նրանց ելույթները ոչ թե քնեցնում էին մարդկանց, այլ հավանաբար մի քանի մղձավանջներ էին առաջացնում նրանց մեջ։ Թվում է, նրանց նպատակն ու օրինակն էր՝ ժողովրդին վախեցնելով բերել եկեղեցի։

Վախը որպես մեքենայության գործիք

Պատմականորեն վախը հաճախ օգտագործվել է որպես մարդկանց գործողության մղելու միջոց։ Ծնողները դա օգտագործել են իրենց երեխաների հետ, գործատուները իրենց աշխատողների, իսկ քաղաքական գործիչներն՝ իրենց ընտրողների հետ։

Շուկայագիտության փորձագետները հասկանում են վախի ուժը և հաճախ են կիրառում այն։ Ահա թե ինչու որոշ գովազդներ, թվում է, կրում են անվերապահ ուղերձ, որ եթե մենք չգնենք նախաճաշի համար իրենց մանրաձավարը, բաց թողնենք նորագույն տեսախաղը կամ բջջային հեռախոսը, մենք վտանգի ենք ենթարկում մեզ՝ ապրել թշվառ կյանքով, մահանալ միայնակ և դժբախտ։

Մենք ժպտում ենք դա լսելիս և մտածում, որ երբեք այդպիսի կեղծիքի զոհ չենք դառնա, բայց երբեմն մենք էլ ենք դա անում։ Ավելի վատ, մենք երբեմն օգտագործում ենք համանման մեթոդներ, ստիպելով ուրիշներին անել այն, ինչ մենք ենք կամենում։

Այսօր իմ ուղերձը երկու նպատակ ունի. առաջինը՝ հորդորում եմ ձեզ մտածել և հաշվի առնել այն չափը, թե *մենք* որքանով ենք օգտագործում վախը՝ խթանելով մեզ և ուրիշներին։ Երկրորդը՝ ավելի լավ ուղի առաջարկելն է։

Վախի հետ կապված խնդիրը

Առաջինը՝ եկեք անդրադառնանք վախի խնդրին։ Ի վերջո, ով մեր մեջ երբեք հարկադրված չի եղել վախից ավելի լավ ուտել, կրել նստատեղի գոտի, ավելի շատ վարժություններ կատարել, փող խնայել կամ նույնիսկ, մեղքը ապաշխարել։

Ճշմարիտ է, որ վախը կարող է հզոր ազդեցություն ունենալ մեր գործողությունների և վարքագծի վրա։ Բայց այդ ազդեցությունը միտում ունի ժամանակավոր և մակերեսային լինել։

Վախը հազվադեպ զորություն ունի փոխելու մեր սրտերը և այն երբեք չի փոխակերպի մեզ՝ դարձնելով այնպիսի մարդիկ, ովքեր սիրում են այն, ինչ ճիշտ է, և ովքեր կամենում են հնազանդվել Երկնային Հորը:

Մարդիկ, ովքեր վախկոտ են, կարող են *ասել* և անել ճիշտ բաներ, բայց նրանք չեն *զգում* ճիշտ բաները: Նրանք հաճախ զգում են անօգնական,զայրացած են և նույնիսկ՝ բարկացած: Ժամանակի ընթացքում այս զգացմունքներն առաջնորդում են դեպի անվստահություն, մրցահրավեր, նույնիսկ՝ ապստամբություն:

Դժբախտաբար, կյանքի հանդեպ այս մոլորեցնող մոտեցումն ու առաջնորդությունը սահմանափակված չէ աշխարհիկ մարդկանցով: Ես վշտանում եմ, երբ լսում եմ Եկեղեցու անդամների մասին, ովքեր անարդար իշխանություն են գործադրում, լինի իրենց տներում, Եկեղեցու կոչումներում, աշխատանքում, թե մյուսների հետ իրենց ամենօրյա փոխհարաբերություններում:

Հաճախ մարդիկ կարող են դատապարտել ուրիշներին մարդկանց ահաբեկելու համար, սակայն իրենց մեջ նրանք չեն տեսնում դա: Նրանք պահանջում են ուրիշներից ենթարկվել իրենց բռնապետական կանոններին, բայց երբ վերջիններս չեն հետևում այդ պատահական կանոններին, նրանց պատժում են խոսքով, հոգեպես, երբեմն էլ ֆիզիկապես:

Տերն ասել է, որ «երբ մենք . . . իշխանություն, տիրապետություն կամ էլ հարկադրանք ենք գործադրում մարդկանց զավակների հոգիների վրա, անիրավության որևէ աստիճանով, . . . երկինքները ետ են քաշվում, [և]Տիրոջ Հոգին տրտմում է»:[2]

Կարող են լինել պահեր, երբ մենք գայթակղվում ենք արդարացնել մեր գործողությունները՝ հավատալով, որ արդյունքը արդարացնում է միջոցները: Մենք կարող ենք նույնիսկ մտածել, որ վերահսկող, օգտագործող և կոպիտ լինելը ուրիշների բարիքի համար է: Այդպես չէ, քանզի Տերը հստակ է դարձրել, որ «հոգու պտուղն է՝ սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, երկայնամտութիւն, քաղցութիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն, [և] ժուժկալութիւն»:[3]

Ավելի լավ ուղի

Որքան շատ եմ ճանաչում իմ Երկնային Հորը, այնքան ավելի եմ տեսնում, թե ինչպես է Նա ոգեշնչում և առաջնորդում Իր զավակներին: Նա բարկացկոտ չէ, հիշաչար կամ հակընդդեմ չէ:[4] Նրա բուն նպատակն է՝ դաստիարակել մեզ, վեհացնել մեզ և առաջնորդել մեզ դեպի Իր լիությունը: Նրա գործը և փառքն է՝ դաստիարակել, վեհացնել և դեպի Իր լիությունը տանել մեզ:[5]

Աստված ներկայացել է Մովսեսին որպես՝ «ողորմած եւ գթած՝ երկայնամիտ և առատ ողորմութիւնով եւ ճշմարտութիւնով»:[6]

Մեզ՝ Իր զավակների հանդեպ մեր Երկնային Հոր սերը, վեր է մեր ըմբռնելու կարողությունից:[7]

Արդյո՞ք սա նշանակում է, որ Աստված թողտվության է մատնում կամ անտեսում է այն վարքագիծը, որը հակասում է իր հրամաններին. Ոչ, հաստատ ոչ:

Բայց Նա կամենում է փոխել ավելին, քան մեր վարքագիծը: Նա կամենում է փոխել մեր բուն էությունը: Նա կամենում է փոխել մեր սիրտը:

Նա կամենում է, որ մենք հասնենք և ամուր բռնենք երկաթյա ձողից, դիմակայենք մեր վախերին և քաջաբար քայլ կատարենք դեպի առաջ և վեր՝ նեղ և անձուկ արահետով: Նա սա է կամենում մեզ համար, որովհետև Նա սիրում է մեզ և որովհետև սա է դեպի երջանկություն տանող ուղին:

Այսպիսով, ինչպե՞ս է Աստված մղում Իր զավակներին հետևել Իրեն մեր օրերում:

Նա ուղարկեց Իր Որդուն:

Աստված ուղարկեց Իր Միածին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, ցույց տալու մեզ ճիշտ ճանապարհը:

Աստված առաջ է մղում համոզելու, երկայնամտության, մեղմության, հեզության և անկեղծ սիրո միջոցով:[8] Աստված մեր կողմից է: Նա սիրում է մեզ, և երբ մենք սայթաքում ենք, Նա ուզում է, որ մենք ոտքի կանգնենք, նորից փորձենք և դառնանք ավելի ուժեղ:

Նա մեր դաստիարակն է:

Նա մեր մեծ և փայփայած հույսն է:

Նա ցանկանում է խրախուսել մեզ հավատքով:

Նա համոզված է, որ մենք կսովորենք մեր սխալ քայլերից և կկատարենք ճիշտ ընտրություններ:

Սա է ավելի լավ ուղին:[9]

Իսկ ի՞նչ կասեք աշխարհի չարիքների մասին:

Եղանակներից մեկը, որով մենք պիտի օգտագործենք մյուսներին, ըստ սատանայի, խիստ կենտրոնացումը և աշխարհում չարի չափազանցումն է:

Իհարկե, մեր աշխարհը միշտ էլ եղել է և կշարունակի լինել անկատար: Չափազանց մեծ թվով անմեղ մարդիկ են տառապում, բնության ստեղծած իրավիճակների, ինչպես

նաև մարդու անմարդասիրության պատճառով: Անբարոյականությունն ու ամբարշտությունը մեր օրերում առանձնահատուկ են և տագնապալի:

Բայց չնայած այդ բոլորին, ես չէի ցանկանա ապրել պատմական որևէ այլ ժամանակաշրջանում: Մենք օրհնված ենք չափից շատ՝ ապրելով անզուգական բարգավաճման, լուսավորության և արտոնության ժամանակներում: Ամենից առավել մենք օրհնված ենք՝ ունենալով Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը, որը տալիս է մեզ բացառիկ հեռանկար աշխարհի վտանգների վերաբերյալ և ցույց է տալիս մեզ, թե ինչպես խուսափել այդ վտանգներից կամ գործ ունենալ դրանց հետ:

Երբ ես մտածում եմ այս օրհնությունների մասին, ես ուզում եմ ծնկի իջնել և գովասանքներ հղել առ մեր Երկնային Հայրը Իր բոլոր զավակների հանդեպ Նրա երբեք չվերջացող սիրո համար:

Ես չեմ հավատում, որ Աստված ուզում է, որ Իր զավակները վախկոտ լինեն կամ կենտրոնանան աշխարհի չարիքների վրա: «Որովհետեւ, Աստուած չտուաւ մեզ երկչոտութեան հոգի, այլ զորութեան եւ սէրի եւ զգաստութեան»:[10]

Նա մեզ տվել է ուրախանալու բազմաթիվ պատճառներ: Մենք ուղղակի պետք է գտնենք և ճանաչենք դրանք: Տերը հաճախ է հիշեցնում մեզ՝ «չվախենալ», «ուրախ եղեք»,[11] «մի վախենար փոքրիկ հոտ»:[12]

Տերը կառաջնորդի մեր ճակատամարտերը

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մենք Տիրոջ «փոքրիկ հոտն ենք»: Մենք վերջին օրերի Սրբերն ենք: Մեր անվանը բնորոշ պարտավորվածությունն է՝ անհամբեր սպասել Փրկիչի վերադարձին և մեզ ու աշխարհին նախապատրաստել ընդունելու Նրան: Եկեք ծառայենք Աստծուն և և սիրենք մեր մերձավորին: Եկեք անենք այդ բնական վստահությամբ, համեստությամբ, երբեք վերևից չնայելով որևէ այլ կրոնի կամ մարդկանց խմբի վրա: Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մեզ հանձնարարված է ուսումնասիրել Աստծո խոսքը և ականջ դնել Հոգու ձայնին, որպեսզի կարողանանք «իմանալ նշանները ժամանակների, և նշանները Մարդու Որդու գալստյան»:[13]

Ուստի, մենք անտեղյակ չենք աշխարհի մարտահրավերներին, ոչ էլ անիրազեկ՝ մեր ժամանակների դժվարություններին: Բայց սա չի նշանակում, որ մենք պետք է ծանրաբեռնենք մեզ կամ ուրիշներին մշտական վախով: Մեր մարտահրավերների մեծության վրա կենտրոնանալու փոխարեն, ավելի լավ չէ՞ր լինի կենտրոնանալ մեր Աստծո անսահման մեծության, բարության և բացարձակ իշխանության վրա՝ վստահելով Նրան և ուրախ սրտով պատրաստվել Հիսուս Քրիստոսի վերադարձին:

Որպես Նրա ուխտի ժողովուրդ, մենք չպետք է կաթվածահար լինենք վախից, որովհետև կարող են վատ բաներ պատահել: Փոխարենը մենք կարող ենք առաջ շարժվել հավատքով, քաջությամբ, վճռականությամբ և վստահությամբ առ Աստված, երբ մոտենում ենք ապագայի մարտահրավերներին և հնարավորություններին:[14]

Մենք միայնակ չենք քայլում աշակերտության արահետում: «Քո Եհովայ Աստուածն . . . է քեզ հետ գնում, նա քեզ չի թողիլ եւ քեզ չի ձգիլ»:[15]

«Եհովան ձեզ համար պիտի պատերազմէ, եւ դուք լուռ կացէք»:[16]

Վախի հանդիպելիս եկեք մեր մեջ քաջություն գտնենք, լցվենք հավատքով և վստահենք խոստումին, որ «Բոլոր քեզ դէմ շինած գործիքը պիտի չհաջողուի»:[17]

Արդյո՞ք մենք ապրում ենք վտանգի և իրարանցման մի ժամանակաշրջանում: Իհարկե ապրում ենք:

Աստված Ինքն է ասել. «Աշխարհքումը նեղութիւն կունենաք, բայց քաջացեք ես հաղթել եմ աշխարհքին»:[18]

Կարո՞ղ ենք արդյոք գործադրել հավատք, որպեսզի վստահենք և գործենք համապատասխանաբար: Կարո՞ղ ենք ապրել ըստ մեր պարտավորությունների և սրբազան ուխտերի: Կարո՞ղ ենք պահել Աստծո պատվիրանները, նույնիսկ, դժվարին հանգամանքներում: Իհարկե, կարող ենք:

Մենք կարող ենք, Աստված է խոստացել. «Բոլոր բաները միաժամանակ կգործեն ձեր բարիքի համար, եթե դուք ուղիղ քայլեք»:[19] Ուստի եկեք մի կողմ թողնենք մեր վախերը և դրա փոխարեն ապրենք ուրախությամբ, համեստությամբ, հույսով և համարձակ վստահությամբ, որ Տերը մեզ հետ է:

Կատարյալ սերը դուրս է մղում վախը

Իմ սիրելի՛ ընկերներ, իմ սիրելի եղբայրներ և քույրեր Քրիստոսում,

եթե մենք երբևէ հայտնվենք վախի կամ տագնապի մեջ կամ եթե երբևէ պարզենք, որ մեր սեփական խոսքերը, վերաբերմունքը կամ գործերը վախ են առաջացնում ուրիշների մեջ, այդ ժամանակ ես կաղոթեմ իմ հոգու ողջ ուժով, որ մենք ազատվենք այս վախից աստվածայնորեն նշանակված այս հակաթույնի՝ Քրիստոսի մաքուր սիրո միջոցով, քանզի «կատարյալ սերը դուրս է մղում վախը»:[20]

Քրիստոսի մաքուր սերը հաղթահարում է վնասելու, բռնադատելու, կռվելու կամ ճնշելու գայթակղությունները:

Քրիստոսի կատարյալ սերը թույլ է տալիս մեզ քայլել համեստությամբ, արժանապատվությամբ և համաձակ վստահությամբ, որպես մեր սիրելի Փրկիչի հետևորդներ: Քրիստոսի կատարյալ սերը տալիս է մեզ վստահություն՝ առաջ մղվելու մեր վախերի միջով և մեր կատարյալ վստահությունը դնել մեր Երկնային Հոր և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի բարության վրա:

Մեր տներում, մեր աշխատատեղերում, մեր Եկեղեցու կոչումներում, մեր սրտերում եկեք փոխարինենք վախը Քրիստոսի կատարյալ սիրով: Քրիստոսի սերը կփոխարինի վախը հավատքով:

Նրա սերը հնարավորություն կտա մեզ ճանաչել, վստահել և ունենալ հավատք մեր Երկնային Հոր բարության, Նրա աստվածային ծրագրի, Նրա ավետարանի և Նրա պատվիրանների հանդեպ:[21] Սիրելով Աստծուն և մեր մերձավորներին, Աստծո պատվիրաններին մեր հնազանդությունը ավելի շուտ կփոխակերպվի օրհնության, քան բեռ կդառնա: Քրիստոսի սերը կօգնի մեզ դառնալ մի փոքր ավելի բարի, ավելի ներող, ավելի հոգատար և ավելի նվիրված Նրա աշխատանքին:

Երբ մենք լցնենք մեր սրտերը Քրիստոսի սիրով, մենք կարթնանանք վերականգնված հոգևոր թարմությամբ և կքայլենք ուրախությամբ, վստահությամբ արթուն և առույգ՝ մեր սիրելի Փրկիչ Հիսուս Քրիստոսի լույսով և փառքով:

Ես վկայում եմ Հովհաննես Առաքյալի հետ. «Վախ չկայ [Քրիստոսի] սէրի մէջ»:[22] Եղբայրնե՛ր և քոյրե՛ր, սիրելի՛ ընկերներ, Աստված ճանաչում է ձեզ կատարելապես: Նա սիրում է ձեզ կատարելապես: Նա գիտի ինչ է պահված ձեր ապագայում: Նա կամենում է, որ դուք «չվախենաք, բայց միայն հավատաք»[23] և «կենաք իր [կատարյալ] սէրի մէջ»:[24] Սա է իմ աղոթքը և օրհնությունը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ջորջ Ուայթհեդն ու Ջոնաթան Էդվարդսը այդպիսի քարոզիչների երկու ականավոր օրինակներ են:
2. Վարդապետություն և Ուխտեր 121.37
3. Գաղատացիս 5.22–23
4. Մի առիթով Փրկիչը կամենում էր մտնել Սամարացիների մի գյուղ, բայց մարդիկ մերժեցին Հիսուսին և չկամեցան ընդունել Նրան իրենց գյուղում: Նրա երկու աշակերտները խորապես վիրավորվեցին սրանից և հարցրին. «Տէր՝ կամենո՞ւմ ես ասենք, կրակ իջնէ երկնքիցը եւ նորանց սատկեցնէ»: Հիսուսը պատասխանեց զգուշորեն. «Դուք չգիտէք թէ որ հոգու էք դուք: Որովհետեւ մարդի Որդին չեկաւ՝ մարդկանց հոգիները կորցնելու, այլ ապրեցնելու» (տես Ղուկաս 9.51–56, Հակոբոս թագավորի նոր տարբերակ [1982]):
5. Տես Մովսես 1.39, տես նաև Եփեսացիս 3.19
6. Ելից 34.6
7. Տես Եփեսացիս 3.19
8. Տես Վարդապետություն և Ուխտեր 121,41: Անշուշտ, եթե Աստված ակնկալում է մեզանից՝ Իր մահկանացու զավակներից, այսպես վարվել միմյանց հանդեպ, Նա՝ լինելով օժտված ամեն արժանիքով, օրինակ կլինի այդպիսի վարքի համար:
9. Երկնքում նախամահկանացու Խորհուրդը գերազանց օրինակ է ուսումնասիրման համար, որը ցույց է տալիս Աստծո բնավորությունը: Այնտեղ մեր Այնտեղ մեր Երկնային Հայրը մեր հավերժական առաջընթացի համար ներկայացրեց Իր ծրագիրը: Այդ ծրագրի կարևոր մասերն ընդգրում էին ազատ կամքը, հնազանդությունը և փրկությունը Քրիստոսի Քավության միջոցով: Սակայն Լյուցիֆերն առաջարկեց տարբեր մոտեցում: Նա երաշխավորեց, որ բոլորը կհնազանդվեն, ոչ մեկը չի կորչի: Դրա իրականացման միակ ուղին կլիներ բռնության և ուժի միջոցով: Բայց մեր սիրառատ Երկնային Հայրը չկամեցավ թույլ տալ այդպիսի մոտեցում: Նա գնահատում էր Իր զավակների ազատ կամքը: Նա գիտեր, որ մենք պետք է սխալներ կատարեինք այդ ճանապարհին, եթե մենք իսկապես պիտի սովորեինք: Եվ այդ պատճառով Նա տվեց Փրկիչ, որի հավերժական զոհաբերությունը կարող էր մաքրել մեզ մեղքից և թույլ տալ մեր մուտքը դեպի Աստծո արքայություն:

   Երբ մեր Հայրը Երկնքում տեսավ, որ Իր սիրելի զավակներից շատերը գայթակղվեցին Լյուցիֆերի կողմից, Նա արդյոք հարկադրե՞ց նրանց հետևել Իր ծրագրին: Նա արդյո՞ք վախեցրեց կամ սպառնաց նրանց, ովքեր կատարում էին այդպիսի սոսկալի ընտրություն: Ոչ: Մեր ամենազոր Աստվածը կարող էր անշուշտ դադարեցնել այդ ապստամբությունը: Նա կարող էր պարտադրել Իր կամքը այլադավանների վրա և ստիպել նրանց ենթարկվել: Բայց դրա փոխարեն Նա թույլ տվեց Իր զավակներին ինքնուրույն ընտրել:
10. Բ Տիմոթեոս 1.7
11. Տես, օրինակ, Յեսու 1.9, Եսայիա 41.13, Ղուկաս 12.32, Հովհաննես 16.33, 1 Պետրոս 3.14, Վարդապետություն և Ուխտեր 6.36, 50.41, 61.36, 78.18:
12. Ղուկաս 12.32
13. Վարդապետություն և Ուխտեր 68.11
14. Իր օրերում ժողովրդին տված Մովսեսի խորհուրդը դեռ կիրառելի է. «Մի վախիք, . . . տեսէք Եհովայի փրկութիւնը՝ որ այսօր կանէ ձեզ համար:» (Ելից 14.13, Հակոբոս թագավորի նոր տարբերակ):
15. Երկրորդ Օրինաց 31.6
16. Ելից 14.14, Հակոբոս թագավորի նոր տարբերակ
17. Եսայիա 54.17
18. Հովհաննես 16.33
19. Վարդապետություն և Ուխտեր 90.24, տես նաև 2 Կորնթացիս 2.14, Վարդապետություն և Ուխտեր 105.14
20. Ա Հովհաննես 4.18
21. Եկեք հիշենք, որ Փրկիչը չեկավ «աշխարհք, որ աշխարհքին դատէ, այլ որ աշխարհքը նորանով փրկուի» (Հովհաննես 3.17): Փաստորեն, «Նա չի անում որևէ բան, բացի դա լինի ի օգուտ աշխարհի, քանզի նա սիրում է աշխարհն այնքան, որ նա վայր է դնում իր սեփական կյանքը, որպեսզի կարողանա ձգել բոլոր մարդկանց իր մոտ» (2 Նեփի 26.24):
22. 1 Հովհաննես 4.18, տես նաև 1 Հովհաննես 4.16
23. Մարկոս 5.36
24. Հովհաննես 15.10

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Քվորում

Նախազգուշացնող ձայնը

Չնայած նախազգուշացնելու պարտականությունը վերաբերում է հատկապես մարգարեներին, այդ պարտավորությամբ ուրիշները ևս կիսվում են։

Լեքիի և նրա ընտանիքի կողմից Երուսաղեմը լքելուց մոտ երկու դար առաջ է ծնվել Մարգարե Եզեկիէլը։ 597թ.-ին Ք.ծ.ա. 25 տարեկանում Եզեկիէլը շատերի հետ գերվեց Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագավորի կողմից և իր կյանքի մնացած մասը այնտեղ անցկացրեց։[1] Նա Ահարոնյան քահանայության տոհմագիծ ուներ և երբ 30 տարեկան էր, նա դարձավ մարգարե։[2]

Լիազորելով Եզեկիէլին, Եհովան օգտագործեց պահակի [դէտի] այլաբանությունը։

«Երբ [դէտը] տեսնէ այն սուրը գալիս երկրի վերայ, եւ փողը հնչեցնէ եւ ժողովրդին զգուշացնէ.

Բայց մէկը փողի ձայնը որոշ լսէ եւ չզգուշանայ եւ սուրը գայ եւ նորան վեր առնէ. նորա արիւնը նորա գլուխը պիտի լինի»։[3]

Մյուս կողմից «եթե դէտը տեսնէ սուրը գալիս եւ փողը չհնչեցնէ, եւ ժողովուրդը չզգուշանայ, եւ սուրը գայ եւ նորանցից մի հոգի վեր առնէ, . . . նորա արիւնը ես դէտի ձեռքիցն եմ պահանջելու»։[4]

Ապա ուղղակիորեն խոսելով Եզեկիէլի հետ, Եհովան հայտարարեց. «Եւ դու, մարդի որդի, ես քեզ դէտ դրի Իսրայէլի տան վերայ, եւ դու պիտի իմ բերանից խօսքը լսես եւ նորանց զգուշացնես իմ կողմանէ։»[5] Դա նախազգուշացում էր՝ մեղքից հեռու մնալ։

«Ես ամբարշտին ասելիս, ով ամբարիշտ, դու անպատճառ պիտի մեռնես, եւ դու եթէ չխոսես ամբարշտին՝ իր ճանապարհիցն զգուշացնելու համար. այն ամբարիշտը մեռնէ իր անօրենութեան համար, բայց նորա արիւնը քո ձեռքիցն ես կպահանջեմ։

Իսկ եթէ դու զգուշացնես ամբարշտին իր ճանապարհիցը, որ նորանից ետ դառնայ, բայց նա ետ չդառնայ, նա իր անօրենութեան համար կմեռնէ, բայց դու ազատած կլինես քո անձը։ . . .

Բայց երբոր ամբարշտին ասեմ. Դու անպատճառ պիտի մեռնես, եւ նա ետ դառնայ իր մեղքիցը եւ իրաւունք ու արդարութիւն գործէ, . . .

Այն ամեն մեղքերը, որ նա արել էր, պիտի չյիշուին, նա իրաւունք ու արդարութիւն գործեց. Նա անշուշտ պիտի ապրէ։»[6]

Ուշագրավ է, որ այս նախազգուշացումը վերաբերում է նաև արդարին. «Երբոր ես արդարին ասեմ՝ թե նա անպատճառ պիտի ապրէ, եւ նա վստահանայ իր արդարութեան վերայ եւ անօրէնութիւն անէ. նորա բոլոր արդարութիւնը պիտի չյիշուի, եւ այն իր արած անօրէնութիւնովը պիտի մեռնէ։»[7]

Աղերսելով իր զավակներին, Աստված ասում է Եզեկիէլին. «Նորանց ասիր. Կենդանի եմ ես, ասում է Տէր Եհովան, որ ես ամբարշտի մեռնելը չեմ ուզում, այլ որ ամբարիշտը դարձի գայ իր ճանապարհիցը եւ ապրէ։ Դարձէք, դարձէք ձեր չար ճանապարհներիցը, եւ ինչո՞ւ համար դուք մեռնէք, ով Իսրայէլի տուն»։[8]

Հեռու մնալով դատապարտելու ցանկությունից, մեր Երկնային Հայրը և մեր Փրկիչը ձգտում են մեր երջանկությանը և աղերսում են մեզ ապաշխարել, հաստատ իմանալով, որ «ամբարշտությունը երբեք չի եղել [և երբեք չի լինի] երջանկություն»։[9] Այսպիսով, Եզեկիէլը և յուրաքանչյուր մարգարե նախկինում և այնուհետև, խոսելով Աստծո խոսքը՝ ի սրտե նախազգուշացրել են բոլորին, ովքեր կկամենան երես թեքել սատանայից՝ իրենց հոգիների թշնամուց, և «ընտրել ազատություն և հավերժական կյանք բոլոր մարդկանց մեծ Միջնորդի միջոցով»։[10]

Չնայած նախազգուշացնելու պարտականությունը վերաբերում է հատկապես մարգարեներին, բայց այդ պարտավորությամբ ուրիշները ևս կիսվում են: Փաստորեն «դա դառնում է յուրաքանչյուր մարդ, ով նախազգուշացվել է, նախազգուշացնում է իր մերձավորին»[11] Մենք, որ ստացել ենք երջանկության մեծ ծրագիրը և դրա իրականացման պատվիրանները, պետք է ցանկություն զգանք կիսվելու այդ գիտելիքով, քանի որ դա է տարբերություն ստեղծում այստեղ և հավերժության մեջ: Եվ եթե մենք հարցնում ենք. «Ո՞վ է իմ մերձավորը, որին պետք է զգուշացնեմ», անշուշտ պատասխանը կգտնենք մի առակում, որը սկսվում է. «Մի մարդ Երուսաղէմից իջնում էր Երիքով, եւ ավազակների ձեռքն ընկավ,[12] և այլն»:

Քննարկելով բարի Սամարացու առակը այս համատեքստում, մենք հասկանում ենք, որ «Ո՞վ է իմ մերձավորը» հարցը կապված է երկու մեծ պատվիրանների հետ. «Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտիցը, քո բոլոր անձիցը, քո բոլոր զորութիւնիցը, եւ քո բոլոր մտքիցը. Եւ քո ընկերին քո անձի պէս»:[13] Նախազգուշացնող ձայն բարձրացնելու մղումը սերն է՝ Աստծո սերը և սերը ընկերոջ հանդեպ: Նախազգուշացնել՝ նշանակում է հոգ տանել: Տերը հրահանգում է, որ դա պետք է արվի «մեղմությամբ և հեզությամբ»[14] և «միայն համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ . . . , և անկեղծ սիրով»:[15] Դա կարող է լինել հրատապ, ինչպես, երբ զգուշացնում ենք երեխային ձեռքը կրակի մեջ չմտցնել: Այն պետք է լինի հստակ, իսկ երբեմն՝ վճռական: Երբեմն, նախազգուշացումը կարող է ընդունել հանդիմանության ձև, «երբ ներշնչվում եք Սուրբ Հոգով»,[16] բայց այն միշտ արմատացած է սիրով: Ապացույցը սերն է, որը դրդապատճառ է հանդիսանում մեր միսիոներների ծառայության և զոհաբերության համար:

Իհարկե, սերը կստիպի ծնողներին նախազգուշացնել ամենամոտիկ «մերձավորներին»՝ իրենց սեփական երեխաներին: Սա նշանակում է ուսուցանել և վկայել ավետարանի ճշմարտությունների մասին: Սա նշանակում է երեխաներին ուսուցանել Քրիստոսի վարդապետությունը՝ հավատք, ապաշխարություն, մկրտություն և Սուրբ Հոգու պարգևը:[17] Տերը հիշեցնում է ծնողներին. «Ես պատվիրել եմ ձեզ մեծացնել ձեր երեխաներին լույսի և ճշմարտության մեջ»:[18]

Ծնողական պարտականության ամենաէական տարրը նախազգուշացնելն է, պատկերելով ոչ միայն մեղքի այլասերող հետևանքները, այլև պատվիրաններին հնազանդ հետևելու ուրախությունը: Հիշեք Ենովսի խոսքերն այն մասին, թե ինչն առաջնորդեց նրան որոնել Աստծուն, ստանալ մեղքերի թողություն և դարձի գալ.

«Ահա, ես գնացել էի գազաններ որսալու անտառներում, և խոսքերը, որոնք ես հաճախ լսել էի իմ հորն ասելիս, հավերժական կյանքի և *արքերի ուրախության* մասին, խորը ընկղմվել էին իմ սրտում:

Եվ իմ հոգին քաղցում էր. և ես ծնկի իջա իմ արարչի առջև, և ես աղաղակեցի առ նա զորեղ աղոթքով և աղաչանքով»:[19]

Ուրիշների երջանկության համար Իր անզուգական սիրո և մտահոգության շնորհիվ Հիսուսը չտատանվեց նախազգուշացնել: Իր ծառայության սկզբից ի վեր. «Հիսուսն սկսեց քարոզել եւ ասել. Ապաշխարեցէք, որովհետեւ մոտեցել է երկնքի թագավորութիւնը»:[20] Որովհետև Նա ուղղակի գիտի, որ ամեն ճանապարհ չէ, որ տանում է դեպի երկինք, Նա պատվիրեց.

«Նեղ դռնովը ներս մտէք, որովհետեւ լայն է դուռը եւ ընդարձակ ճանապարհը՝ որ կորուստն է տանում. Եւ շատեր են նորանով գնացողները.

Քանի նեղ է դուռը՝ եւ նեղուածք է ճանապարհը, որ տանում է կեանքը. և քիչ են նորան գտնողները:[21]

Նա ժամանակ էր տրամադրում մեղավորներին, ասելով. «Ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղաւորներին՝ ապաշխարութեան»:[22]

Ինչ վերաբերում է դպիրներին, փարիսեցիներին ու սադուկեցիներին, Հիսուսն անզիջում էր նրանց երեսպաշտությունը դատապարտելիս: Նրա նախազգուշացումները և պատվիրանները ուղղակի էին. «Վայ ձեզ, դպիրներ եւ Փարիսեցիներ՝ կեղծաւորներ, որ անանուխի եւ սամիթի եւ չամանի տասանորդը տալիս էք, եւ թողնում էք օրէնքի ծանր ծանր բաները՝ դատաստանը եւ ողորմութիւնը եւ հաւատքը. սա պէտք էր անել՝ եւ այն չթողել».[23] Ի վերջո, անշուշտ ոչ մեկը չէր մեղադրի Փրկիչին այդ դպիրներին և փարիսեցիներին չսիրելու համար. Նա տանջվեց և մահացավ՝ նրանց նույնպես փրկելու համար: Բայց սիրելով նրանց, Նա չէր կարող թույլ տալ նրանց շարունակել մեղքի մեջ՝ առանց հստակորեն ուղղելու նրանց: Մի դիտորդ նշել է. «Հիսուսն ուսուցանեց Իր հետևորդներին անել ինչպես ինքն արեց՝ ողջունել ամենքին, բայց նաև ուսուցանել մեղքի մասին, քանի որ սերը պահանջում

էր նախազգուշացնել մարդկանց, թե ինչը կարող էր նրանց ցավ պատճառել»:[24]

Երբեմն նրանք, ովքեր նախազգուշացնող ձայն են բարձրացնում, մերժվում են որպես դատապարտող: Այնուամենայնիվ, նրանք ովքեր համարում են, որ ճշմարտությունը հարաբերական է և բարոյական չափանիշները անձնական նախընտրության հարց է, հաճախ նույն մարդիկ են, ովքեր, հակասելով առողջ բանականությանը, ամենայն խստությամբ քննադատում են մարդկանց, ովքեր չեն ընդունում «ճշմարիտ մտածողության» ներկայիս նորմերը: Մի գրող անդրադարձել է սրան որպես «ամոթի մշակույթ»:

«Հանցանքի մշակույթում ձեր լավ կամ վատ լինելը դուք որոշում եք նրանով, թե ինչ է զգում ձեր խիղճը: Ամոթի մշակույթում ձեր լավ կամ վատ լինելը դուք որոշում եք նրանով, թե ինչ է ասում համայնքը ձեր մասին՝ արդյոք այն մեծարում է ձեզ, թե բացառում: . . . [Նույն մշակույթում] բարոյական կյանքը չի կառուցվում ճիշտ կամ սխալ կարծիքի վրա, այն կառուցվում է ներառման կամ բացառման կարծիքի վրա: . . .

. . . Ներառման և բացառման վրա հիմնված բարոյական համակարգում ոչ մեկը հավերժ ապահովագրված չէ: Չկան մնայուն չափանիշներ, կա ուղղակի ամբոխի փոփոխական կարծիքը: Սա գերզգայունության, անհանդուրժողական արձագանքի և հաճախակի բարոյական խուճապի մի մշակույթ է, որում բոլորը հարկադրված են զգում միասին ընթանալ: . . .

Հանցանքի մշակույթը կարող է անգութ լինել, բայց դուք, առնվազն, կարող եք ատել մեղքը և այնուամենայնիվ սիրել մեղավորին: Ժամանակակից ամոթի մշակույթը պարտավորված գնահատում է ներառումը և հանդուրժողականությունը, բայց այն կարող է տարօրինակ կերպով անողորմ լինել նրանց հանդեպ, ովքեր չեն համաձայնվում և նրանց հանդեպ, ովքեր չեն համապատասխանում:[25]

Սրա հակառակն է «մեր Քավիչի վեմը»,[26] արդարության և առաքինության հաստատուն և հարատև մի հիմք: Ավելի լավ է ունենալ Աստծո անփոփոխ օրենքը, որի միջոցով մենք կարող ենք գործել՝ ավելի շուտ ընտրելու մեր ճակատագիրը, քան լինել հասարակական լրատվամիջոցների ամբոխի անկանխատեսելի կանոնների և ցասման պատանդ: Ավելի լավ է իմանալ ճշմարտությունը, քան լինել «երերուած ու տատանուած վարդապետութեան ամեն քամուցը»:[27] Ավելի լավ է ապաշխարել և բարձրանալ դեպի ավետարանի չափանիշը, քան ձևացնել, թե չկա ճիշտ և սխալ ու տանջվել մեղքի և զղջումի մեջ:

Տերը հռչակել է. «Նախազգուշացնող ձայնը պիտի գնա բոլոր ժողովուրդներին, իմ աշակերտների բերանով, որոնց ես ընտրել եմ այս վերջին օրերին»:[28] Որպես պահակներ և աշակերտներ, մենք չենք կարող չեզոք լինել այս «ավելի գերազանց ուղու» նկատմամբ:[29] Ինչպես Եզեկիէլը, մենք չենք կարող տեսնել երկրի վրա եկող սուրը «և փողը չհնչեցնել»:[30] Սա չի նշանակում, որ մենք պետք է բախենք մեր հարևանի դուռը կամ կանգնենք հասարակական հրապարակում, աղաղակելով. «Ապաշխարե՛ք»: Իրականում, երբ դուք մտածում եք այդ մասին, մենք ունենք վերականգնված ավետարանում այն, ինչ մարդիկ սրտի խորքում իսկապես ցանկանում են: Այսպիսով, նախազգուշացնող ձայնն ընդհանրապես ոչ միայն քաղաքավարի է, այլև Աղոմոսողի արտահայտությամբ՝ «ցնծության աղաղակ է»:[31]

Deseret News-ի կարծիքների գծով խմբագիր Հալ Բոյդը մեջբերել է մի օրինակ արջի ծառայության մասին, որը բնորոշ է լուռ մնալուն: Նա նշել է, որ չնայած ամուսնության գաղափարը դեռևս «ինտելեկտուալ բանավեճի» հարց է ամերիկյան հասարակության էլիտայի համար, ամուսնությունը գործնականում, ինքնին, բանավեճի հարց չէ նրանց համար»: «Էլիտայի [ներկայացուցիչները] ամուսնանում են և մնում ամուսնացած և հոգում են, որ իրենց երեխաները վայելեն կայուն ամուսնության օգուտները: . . . Սակայն խնդիրը կայանում է նրանում, որ [նրանք] միտում ունեն չքարոզել այն, ինչ իրենք գործնականում անում են»: Նրանք չեն ուզում «հարկադրել» դա նրանց, ովքեր իսկապես կարող են օգտագործել իրենց բարոյական ղեկավարությունը, բայց «հավանաբար ժամանակն է նրանց համար, ովքեր կրթություն ունեն և ուժեղ ընտանիքներ են, դադարեն չեզոք ձևանալը և սկսեն քարոզել այն, ինչ իրենք գործնականում անում են ամուսնության և ծնող լինելու առնչությամբ . . . [և] օգնեն

իրենց ընկեր ամերիկացիներին ընդունել դա»:[32]

Մենք վստահ ենք, որ աճող սերնդից հատկապես դուք՝, երիտասարդությունը և երիտասարդ չափահասները, ում վրա Տերը պետք է հենվի Իր աշխատանքի հաջողության համար ապագա տարիներին, կհաստատի ավետարանի ուսմունքները և Եկեղեցու չափանիշները ինչպես հանրության, այնպես էլ մասնավոր ոլորտում: Մի լքեք նրանց, ովքեր կցանկանան ողջունել ճշմարտությունը, որ սայթաքեն և ընկնեն տգիտության մեջ: Մի ենթարկվեք կեղծ հանդուրժողականության կամ վախի կեղծ հասկացություններին՝ անհարմարավետության, անհավանության կամ նույնիսկ տառապանքի վախին: Հիշեք Փրկիչի խոստումը.

«Երանի է ձեզ, երբոր կնախատեն ձեզ եւ կհալածեն եւ ամեն չար բան սուտ տեղը կասեն ձեր վերայ իմ պատճառովը:

Ուրախացէք եւ ցնծացէք, որ ձեր վարձքը շատ է երկնքումը. որովհետեւ այսպէս հալածեցին մարգարէներին, որ ձեզանից առաջ կային»:[33]

Ի վերջո, մենք հաշվետու ենք Աստծուն մեր ընտրությունների և մեր ապրած կյանքի համար: Փրկիչը հայտարարեց. «Իմ Հայրն ուղարկեց ինձ, որպեսզի ես խաչի վրա բարձրացվեմ. իսկ հետո, երբ խաչի վրա էի բարձրացվել, որպեսզի ես կարողանայի բոլոր մարդկանց ձգել դեպի ինձ, որպեսզի ինչպես ես բարձրացվեցի մարդկանց կողմից, ճիշտ նույնպես մարդիկ բարձրացվեն Հոր կողմից կանգնելու իմ առջև, դատվելու ըստ իրենց գործերի՝ լինեն դրանք բարի, թե լինեն դրանք չար»:[34]

Ընդունելով Տիրոջ գերիշխանությունը, ես աղերսում եմ Ալմայի խոսքերով.

«Եվ արդ, իմ եղբայրնե՛ր, ես ցանկանում եմ իմ սրտի ամենախորքից, այո, մեծ տագնապով, մինչև անգամ՝ ցավով, որ դուք ականջ դնեք իմ խոսքերին, և դեն ձգեք . . . ձեր մեղքերն ու չհետաձգեք ձեր ապաշխարության օրը.

Այլ, որ դուք խոնարհեցնեք ձեզ Տիրոջ առաջ, և կանչեք նրա սուրբ անունը, և արթուն կենաք ու

շարունակ աղոթեք, որպեսզի դուք չլինի թե փորձվեք ավելի, քան դուք կարող եք դիմանալ, և այսպես առաջնորդվեք Սուրբ Հոգուց . . . ,

Ունենալով հավատք առ Տերը. ունենալով մի հույս, որ դուք պիտի ստանաք հավերժական կյանք. ունենալով Աստծո սերը միշտ ձեր սրտերում, որպեսզի դուք կարողանաք բարձրացվել վերջին օրը և մտնել նրա հանգիստը»:[35]

Եկեք ասենք Տիրոջը Դավիթի հետ. «Քո արդարութիւնը չեմ թաքցնում սրտիս մէջ. քո ճշմարտութիւնն ու փրկութիւնը պատմեցի, քո ողորմութիւնն ու հաւատարմութիւնը չեմ ծածկում մեծ ժողովքի առաջին: Բայց դու, Տէր, մի հեռացնիր ինձանից քո գթութիւնը»:[36] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Richard Neitzel Holzapfel, Dana M. Pike, and David Rolph Seely, *Jehovah and the World of the Old Testament* (2009), 344
2. Տես Եզեկիէլ 1–3, Holzapfel, *Jehovah and the World of the Old Testament*, 344
3. Եզեկիէլ 33.3–4
4. Եզեկիէլ 33.6
5. Եզեկիէլ 33.7
6. Եզեկիէլ 33.8–9, 14, 16
7. Եզեկիէլ 33.13
8. Եզեկիէլ 33.11
9. Ալմա 41.10
10. 2 Նեփի 2.27
11. Վարդապետություն և Ուխտեր 88.81
12. Ղուկաս 10.30
13. Ղուկաս 10.27
14. Վարդապետություն և Ուխտեր 38.41
15. Վարդապետություն և Ուխտեր 121.41
16. Վարդապետություն և Ուխտեր 121.43
17. See Վարդապետություն և Ուխտեր 68.25
18. Վարդապետություն և Ուխտեր 93.40
19. Ենովս 1.3–4, շեշտադրումն ավելացված է. Ինչպես Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն է արտահայտել դա գերագույն համաժողովում վեց ամիս առաջ.«Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, այն ուրախությունը, որ մենք զգում ենք, քիչ է կապված մեր կյանքի հանգամանքների հետ և լիովին կապված է մեր կյանքի կիզակետի հետ: . . . Ուրախությունը գալիս է [Հիսուս Քրիստոսից] և Նրա շնորհիվ: Նա է ամեն ուրախության աղբյուրը» («Ուրախություն և հոգևոր գոյատևում», *Լիահոնի*, նոյ. 2016, 82):
20. Մատթեոս 4.17
21. Մատթեոս 7.13–14
22. Ղուկաս 5.32
23. Մատթեոս 23.23
24. Տես Chris Stefanick, *Absolute Relativism: The New Dictatorship and What to Do about It* (2011), 33:
25. David Brooks, "The Shame Culture," *New York Times,* Mar. 15, 2016, A29.
26. Հելաման 5.12
27. Եփեսացիս 4.14: Մենք պետք է հիշենք, որ ոմանք, ում մենք ձգտում ենք նախազգուշացնել, գուցե չհասկանան իրենց վիճակը: Տերը խոսում է շատերի մասին մեր օրերում, երբ Նա ասում է.

    «Ասում ես, թէ ես հարուստ եմ եւ մեծացայ, եւ ոչ մի բանի կարօտ չեմ, բայց չգիտես թէ դու թշուառ, եւ մերկ ես:

    Ես խրատ եմ տալիս քեզ, ինձանից կրակում փորձուած ոսկի առ, որ հարստանաս, եւ սպիտակ հանդերձներ՝ որ հագնիս, որ քո մերկութեան ամօթը չերեւի. եւ դեղ դիր աչքերիդ որ [ճշմարտապես] տեսնես» (Հայտնություն 3.17–18):
28. Վարդապետություն և Ուխտեր 1.4, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 1.5
29. Ա Կորնթացիս 12.31
30. Եզեկիէլ 33.6
31. Սաղմոս 66.1, 98.4
32. Hal Boyd, "Hey Progressive Elites! It's Time to Preach What You Practice," *Deseret News,* Oct. 20, 2016, deseretnews.com. He is also quoting University of Virginia sociologist W. Bradford Wilcox.
33. Մատթեոս 5.11–12
34. 3 Նեփի 27.14
35. Ալմա 13.27–29
36. Սաղմոս 40.10–11

Երեց Յոքին Ի. Կոստա
Յոթանասունի Քվորում

Եկեղեցու ընկերներին և լսողներին

Եթե դուք վճարեք հայտնության գինը՝ խոնարհեցնեք ձեզ, կարդաք, աղոթեք և ապաշխարեք, երկինքները կբացվեն և դուք կիմանաք, որ Հիսուսը Քրիստոսն է։

Ուրբաթ երեկոյան, 1988 թվականի սեպտեմբերի 16-ին, Արգենտինայի Բուենոս Այրես քաղաքի Վիսենտե Լոպեզ ծխի հավաքատանը ես մկրտվեցի, դառնալով Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ։ Իմ լավ ընկերը՝ Ալին Սպաննաուսը, մկրտեց ինձ այդ օրը, և ես ինձ երջանիկ զգացի, թեթևացած, ավելին իմանալու ձգտումով։

Այսօր կցանկանայի կիսվել որոշ դասերով, որոնք ես սովորել եմ իմ մկրտվելու ճանապարհին, դասեր, որոնք, հուսամ, կօգնեն այն լսողներին, ովքեր դեռ Եկեղեցու անդամ չեն։ Ես աղոթում եմ, որ Հոգին դիպչի ձեր սրտերին այնպես, ինչպես իմ սրտին դիպավ։

Առաջինը՝ հանդիպել միսիոներներին

Առանց համոզիչ մարտահրավերների, կարիքների կամ հարցերի, ինչո՞ւ պետք է մարդը հետաքրքրված լինի միսիոներներին հանդիպելու և նրանց զրույցները լսելու հարցով։ Դե, իմ դեպքում, դա սերն էր մի աղջկա հանդեպ, որի անունն էր Ռենե։ Ես սիրահարվել էի նրան և ուզում էի ամուսնանալ նրա հետ։ Նա տարբերվում էր և այլ չափանիշներ ուներ, քան ինձ ծանոթ երիտասարդ աղջիկներից շատերը։ Բայց ես սիրահարվեցի նրան և խնդրեցի նրան ամուսնանալ ինձ հետ, իսկ նա ասաց՝ §ո՛չ¦։

Ես շփոթված էի։ Ես կարծում էի, որ ինձ հետ ամուսնանալը երջանկություն կլիներ ինչ-որ մեկի համար։ Ես բարետես էի, 24 տարեկան, ավարտել էի քոլեջը և շատ լավ աշխատանք ունեի։ Նա խոսեց իր նպատակների մասին. ամուսնանալ միայն այն մարդու հետ, ով իրեն տաճար կտաներ, խոսեց հավերժական ընտանիք ունենալու մասին և մերժեց իմ առաջարկը։ Ես ցանկանում էի շարունակել մեր շփումը, այնպես որ ես համաձայնեցի լսել միսիոներներին։ Արդյոք լավ պատճառ չէ՞ միսիոներներին հանդիպելու համար։ Ինձ համար այդպես էր։

Երբ ես առաջին անգամ հանդիպեցի միսիոներներին, նրանց ասածից շատ բաներ չէի հասկանում և, ճիշտն ասած, գուցե և շատ ուշադրություն չէի դարձնում նրանց վրա։ Իմ սիրտը փակ էր նոր կրոնի համար։ Ես միայն ուզում էի ապացուցել, որ նրանք սխալ են և ժամանակ շահեի՝ Ռենեին համոզելու, որ ամեն դեպքում ամուսնանա ինձ հետ։

Այսօր իմ երեխաներից ոմանք ծառայում են, իսկ մյուսներն արդեն ծառայել են միսիաներում, և ես հասկանում եմ այն զոհաբերությունները, որ այս երիտասարդ աղջիկներն ու տղաները կատարում են Հիսուս Քրիստոսի ավետարանն ուսուցանելու համար։ Երանի՜ թե ավելի մեծ ուշադրություն դարձնեի երեց Ռիչարդսոնին, երեց Ֆարելին և երեց Հայլենդին՝ այն հրաշալի միսիոներներին, ովքեր ինձ ուսուցանում էին։

Այսպիսով, իմ առաջին դասից ելնելով, դիմում եմ ձեզ՝ Եկեղեցու ընկերներ և լսողներ, *երբ հանդիպեք միսիոներներին, խնդրում եմ լուրջ վերաբերվեք նրանց, հանուն ձեզ նրանք հրաժարվում են իրենց կյանքի կարևոր տարիներից։*

Երկրորդը՝ գնալ Եկեղեցի

Երբ ես առաջին անգամ մասնակցեցի Եկեղեցու ժողովին, լսեցի շատ բառեր, որոնք ինձ անիմաստ թվացին։ Ովքե՞ր էին Փեթակները, ի՞նչ էր Ահարոնյան Քահանայությունը, Սփոփող Միությունը։

Եթե սա առաջին անգամն է, որ դուք մասնակցում եք Եկեղեցու ժողովին և շփոթված եք, որ ինչ-որ բան չեք հասկանում, մի՛ մտահոգվեք։ Ես նույնպես գաղափար

չունեի: Սակայն մինչև հիմա ես հիշում եմ տպավորություններս, հանգստության և ուրախության նոր զգացումները, որոնք ունեցա: Ես այն ժամանակ չգիտեի, բայց Սուրբ Հոգին էր շշնջում իմ ականջներին և իմ սրտին. §Սա ճշմարիտ է¦:

Եվ այսպես, թույլ տվեք այս դասը ձևակերպել մեկ նախադասությամբ. *եթե շփոթված եք, մի՛ մտահոգվեք, հիշեք ձեր ունեցած զգացմունքները՝ դրանք Աստծուց են:*

Երրորդը՝ կարդալ Մորմոնի Գիրքը

Միսիոներների հետ մի քանի հանդիպումներ ունենալուց հետո ես չէի առաջադիմում: Ես զգում էի, որ չեմ ստացել հաստատում ավետարանի ճշմարտացիության մասին:

Մի օր Ռենեն հարցրեց ինձ. «Դու կարդո՞ւմ ես Մորմոնի Գիրքը»:

Ես պատասխանեցի. «Ո՛չ: Ես լսել եմ միսիոներներին, դա բավական չէ՞»:

Արցունքոտ աչքերով Ռենեն վստահեցրեց ինձ, որ նա գիտի, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է և բացատրեց, որ եթե ուզում եմ իմանալ, թե արդյոք այն ճշմարիտ է, միակ ճանապարհը (կռահեք ո՞րն է)՝ կարդալն է: Դրանից հետո հարցրեք:

Կարդացեք, խորհեք ձեր սրտում և «հարց[րեք] Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով . . . մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս» (Մորոնի 10.4)՝ թե արդյո՞ք Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, արդյո՞ք սա ճշմարիտ Եկեղեցի է:

Այսպես՝ երրորդ դասը մի նախադասությամբ. *երբ ստանաք այս բաները՝ Մորմոնի Գիրքը, և ձեզ կոչ արվի կարդալ և հարցնել Աստծուն, թե արդյո՞ք դրանք ճշմարիտ են, ապա խնդրում եմ արե՛ք դա:*

Վերջինը՝ ապաշխարել

Վերջին փորձառությունը, որի մասին կցանկանայի խոսել, ապաշխարությունն է: Երբ ես մասնակցեցի միսիոներական բոլոր զրույցներին, ես դեռ համոզված չէի, որ կարիք կա փոխելու ինչ-որ բան իմ կյանքում: Երեց Քաթլերը՝ երիտասարդ, վստահ մի միսիոներ, ով այդքան էլ լավ չէր խոսում իսպաներեն, մի օր ասաց ինձ. «Յոքին, արի միասին կարդանք Ալմա 42 գլուխը, և կարդալիս տեղադրենք այնտեղ քո անունը»:

Ես կարծում էի, որ հիմարություն է այդպես անելը, բայց արեցի ինչպես երեց Քաթլերը խնդրեց և կարդացի հատված 1-ը. «Եվ այժմ, որդի՛ս, [Յոքին], ես զգում եմ, որոշ բան էլ կա, որը հուզում է քո միտքը, որը դու չես կարողանում հասկանալ»: Սա ի՞նչ բան էր, գիրքը խոսում էր ինձ հետ:

Եվ մենք կարդացինք հատված 2-ը. «Արդ, ահա, որդի՛ս, [Յոքին], ես կբացատրեմ այս բանը քեզ» և ապա նկարագրվում էր Ադամի անկումը:

Հետո, հատված 4-ը. «Եվ այսպիսով մենք տեսնում ենք, որ կար մի ժամանակահատված շնորհված [Յոքինին] ապաշխարելու համար»:

Մենք շարունակեցինք հատված առ հատված դանդաղ կարդալ, մինչև հասանք վերջին երեք հատվածներին: Դրանից հետո ինձ մի հզոր ուժ հարվածեց: Գիրքը խոսեց *ուղիղ* ինձ հետ և ես սկսեցի լացել, երբ կարդացի. «Եվ այժմ, [Յոքին], որդի՛ս, ես փափագում եմ, որ դու այլևս չթողնես, որ այս բաները խռովեն քեզ, և թող միայն քո մեղքերը խռովեն քեզ այնպիսի մի խռովքով, որը կբերի քեզ վար՝ դեպի ապաշխարություն» (հատված 29-ը):

Հիմա հասկանում եմ, որ ես ակնկալում էի հայտնություն ստանալ, առանց դրա դիմաց որևէ գին վճարելու: Դրանից առաջ ես երբեք չէի խոսել Աստծո հետ և մեկի հետ խոսելու գաղափարը, ով ներկա չէր, ինձ հիմարություն էր թվում: Ես պետք է խոնարհեցնեի ինձ և անեի այն, ինչ ինձ խնդրել էին, նույնիսկ եթե իմ աշխարհիկ մտքին դա հիմարություն էր թվում:

Այդ օրը ես բացեցի իմ սիրտը Հոգու համար, ցանկացա ապաշխարել, և ցանկացա մկրտվել: Մինչև այդ պահը ես մտածում էի ապաշխարության մասին որպես բացասական մի երևույթի, որը կապակցված էր մեղքի և սխալմունքի հետ, բայց հանկարծ ես տեսա այն մի ուրիշ լույսով՝ որպես դրական մի բան, որը մաքրում էր ճանապարհը դեպի աճ և երջանկություն:

Երեց Քաթլերն այստեղ է այսօր և ես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել նրան աչքերս բացելու համար: Այդ օրվանից ի վեր կյանքում իմ կատարած ամեն մի որոշումն այդ պահի ազդեցությամբ է կատարվում, երբ ես խոնարհեցրի ինձ ու աղոթեցի ներման համար, և Հիսուս Քրիստոսի քավությունը իմ կյանքի մի մասը դարձավ ինձ համար:

Այսպես՝ վերջին դասը մեկ նախադասությամբ. *գործի դրեք ապաշխարությունը, ոչինչ այդպես չի մոտեցնի ձեզ Տեր Հիսուս Քրիստոսին, ինչպես փոխվելու ցանկությունը:*

Իմ սիրելի լսող, Եկեղեցու ընկեր, եթե այսօր լսում եք, դուք շատ մոտ եք ամենամեծ ուրախությանը հասնելուն: Դուք մոտ եք:

Թույլ տվեք հրավիրել ձեզ սրտիս ողջ կորովով և հոգուս խորքից. գնացե՛ք և մկրտվե՛ք: Դա ամենալավ բանն է, որ դուք երբևէ կանեք: Դա կփոխի ոչ միայն ձեր կյանքը, այլև՝ ձեր երեխաների ու թոռների կյանքը:

Տերն օրհնել է ինձ ընտանիքով: Ես ամուսնացել եմ Ռենեի հետ, և մենք չորս գեղեցիկ երեխաներ ունենք: Եվ իմ մկրտության շնորհիվ, ես կարող եմ, ինչպես Լեքին հնում, հրավիրել նրանց ճաշակելու կյանքի ծառի պտղից, որն Աստծո սերն է (տես 1 Նեփի 8.15, 11:25): Ես կարող եմ օգնել նրանց գալ դեպի Քրիստոսը:

Խնդրում եմ, հաշվի առեք իմ փոքրաքանակությունները և (1) միսիոներներին շատ լուրջ վերաբերվեք, (2) գնացեք եկեղեցի և հիշեք հոգևոր զգացմունքները, (3) կարդացեք Մորմոնի Գիրքը և հարցրեք Տիրոջը, թե արդյո՞ք այն ճշմարիտ է, (4) գործի դրեք ապաշխարությունը և մկրտվեք:

Ես վկայում եմ ձեզ, որ եթե դուք վճարեք հայտնության գինը, խոնարհեցնեք ինքներդ ձեզ, կարդաք, աղոթեք և ապաշխարեք, երկինքները կբացվեն և դուք կիմանաք, ինչպես ես գիտեմ, որ Հիսուսը Քրիստոսն է, Նա իմ և ձեր Փրկիչն է: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Ս. Մարկ Փալմեր
Յոթանասուն

Հիսուսն էլ նորան մտիկ տվավ՝ նորան սիրեց

Ամեն անգամ, երբ զգում եք, որ ձեզ խնդրում են դժվար բան անել, մտածեք Տիրոջ մասին, Ով նայում է ձեզ, սիրում է ձեզ, և հրավիրում է հետևել Իրեն:

Մի քանի տարի առաջ կնոջս՝ Զաքիի հետ ես կանչվել էի նախագահելու Վաշինգտոն Սպոքեն միսիան: Մենք ժամանեցինք միսիայի վայր վախի և հուզմունքի խառը զգացումով, այդքան շատ հրաշալի երիտասարդ միսիոներների հետ աշխատելու պատասխանատվությամբ: Նրանք շատ տարբեր միջավայրերից էին եկել և շուտով հարազատ որդիների ու դուստրերի պես դարձան:

Թեև շատերը հրաշալի աշխատանք էին կատարում, մի քանիսը դժվարանում էին համապատասխանել իրենց կոչման բարձր պահանջներին: Հիշում եմ միսիոներներից մեկն ինձ ասաց. §Նախագահ, ես չեմ սիրում մարդկանց: Մի քանիսն ինձ ասացին, որ այդքան էլ ցանկություն չունեն հետևելու միսիոներական խիստ կանոններին: Ես անհանգստացած էի և մտածում էի, թե ինչ կարող ենք անել, որ փոխենք այն մի քանի միսիոներների սրտերը, ովքեր դեռ չէին ընկալել հնազանդ լինելու ուրախությունը:

Մի օր, երբ մեքենայով անցնում էի Վաշինգտոն-Այդահո սահմանի երկայնքով, զառիվայր իջնող գեղեցիկ ցորենի դաշտերի մոտով, լսում էի Նոր Կտակարանի ձայնագրությունը:

Երբ լսեցի հարուստ երիտասարդի ծանոթ պատմությունը, ով գալիս է Փրկիչի մոտ, որ հարցնի, թե ինչ կարող է անել, որպեսզի հավերժական կյանք ունենա, ես մի անսպասելի, բայց շատ խորը անձնական հայտնություն ստացա, որն այժմ սրբազան հիշողություն է:

Երբ ես լսեցի, թե ինչպես է Հիսուսն արտասանում պատվիրանները և երիտասարդը պատասխանում է, որ ինքն այդ ամենը դեռ երեխա հասակից պահել է, ես լսեցի Փրկիչի նրբանկատ ուղղումը. §Մեկ բան պակաս է քեզ, գնա, ինչ որ ունիս ծախիր . . . և . . . եկ ինձ հետևիր:[1] Սակայն, ի զարմանս ինձ, հատվածի այդ մասից առաջ ես լսեցի վեց բառ, որոնք, կարծես, երբեք չէի լսել կամ կարդացել: Կարծես դրանք ավելացվել էին սուրբ գրություններին: Ես զմայլվեցի ի հայտ եկած ոգեշնչված ըմբռնումով:

Որո՞նք էին այն վեց բառերը, որ այդպիսի խորը ազդեցություն ունեցան: Լսեք, արդյոք ծանո՞թ են սովորական թվացող այս բառերը, որոնք չկան մյուս ավետարաններում, բայց կան Մարկոսի ավետարանում.

«Մէկը վազելով եկավ . . . նորան հարցնում էր և ասում. Բարի վարդապետ, ի՞նչ գործեմ, որ հավիտենական կյանք ժառանգեմ:

Հիսուսն էլ ասեց նորան. . . .

Պատվիրանքները գիտես՝ Մի շնար, Մի սպանիր, Մի գողանար, Մի սուտ վկայիր, Մի զրկիր, Քո հորը և մորը պատվիր:

Նա էլ պատասխանեց. . . . Վարդապետ, այդ ամենն իմ երեխայությունից պահել եմ:

Հիսուսն էլ նորան մտիկ տվավ՝ նորան սիրեց, և ասեց նորան. Մեկ բան պակաս է քեզ, գնա, ինչ որ ունիս ծախիր և աղքատներին տուր. և գանձ կունենաս երկնքումը. և խաչն առած՝ եկ ինձ հետևիր»:[2]

«Հիսուսն էլ նորան մտիկ տվավ՝ նորան սիրեց:»

Երբ լսեցի այս խոսքերը, Տիրոջ պարզ պատկերը լցրեց միտքս՝ երբ դադար է առնում, *մտիկ է տալիս* այս երիտասարդին: *Մտիկ տալիս՝* այսինքն, խորաթափանցությամբ նայում է նրա հոգու խորքը, հասկանալով նրա մեծահոգությունը և ներուժը, ինչպես նաև հայտնաբերելով նրա ամենամեծ կարիքը:

Այնուհետև պարզ խոսքեր՝ Հիսուսը *նրան սիրեց:* Նա զգաց անսահման սեր ու կարեկցանք այս բարի երիտասարդի նկատմամբ և այդ սիրո *պատճառով* ու այդ սիրո *զգացումով* Հիսուսը նույնիսկ ավելին խնդրեց նրանից: Ես պատկերացրի, թե ինչպիսի զգացում պիտի ունենար այդ երիտասարդը, պարուրված լինելով նման սիրով, նույնիսկ երբ նրան խնդրում էին անել ծայրահեղ դժվար մի բան, վաճառել իր ամբողջ ունեցվածքը և տալ աղքատներին:

Այդ պահին ես հասկացա, որ միայն մեր որոշ միսիոներների սրտերը չէ, որ կարիք ունեին փոխվելու: Իմ սիրտը նույնպես դրա կարիքն ուներ: Հարցն այլևս այսպիսին չէր. «Ինչպե՞ս պետք է միսիայի հիասթափված նախագահը սովորեցնի դժվարացող միսիոներին իրեն ավելի լավ պահել: Փոխարենը, հարցն այսպիսին էր. §Ինչպե՞ս ես կարող եմ լցված լինել Քրիստոսի սիրով, որպեսզի միսիոները կարողանա զգալ Աստծո սերը իմ միջոցով և ցանկանա փոխվել»: Ինչպե՞ս կարող եմ *նայել* նրան նույն կերպ, ինչպես Տերը նայեց հարուստ երիտասարդին, տեսնելով, թե նրանք իրականում ովքեր են և ինչպիսին կարող են դառնալ, այլ ոչ թե՝ նրանք ինչ են անում կամ չեն անում: Ինչպե՞ս կարող եմ ես ավելի նման լինել Փրկիչին:

»Հիսուսն էլ նորան մտիկ տվավ՝ նորան սիրեց»:

Այդ ժամանակից ի վեր ես ծունկ ծնկի տված նստել եմ ցանկացած երիտասարդ միսիոների հետ, ով դժվարություններ է ունեցել հնազանդության որևէ դրսևորման հետ: Իմ սրտում ես արդեն տեսնում էի երիտասարդ տղայի կամ աղջկա, ով իր ցանկությամբ էր առաջնորդվել՝ գալով միսիա: Ապա ես կարող էի հոգատար ծնողի զգացմունքով ասել.[3] «Երեց կամ քույր, եթե ես չսիրեի քեզ, ես չէի մտահոգվի, թե ինչ է տեղի ունենում քո միսիայի ընթացքում: Բայց ես քեզ սիրում եմ, և քանի որ սիրում եմ, ինձ համար միևնույնը չէ, թե դու ով կդառնաս: Այսպիսով, ես հրավիրում եմ քեզ փոխել այն բաները, որոնք դժվար են քեզ համար և դառնալ այնպիսին, ինչպիսին Տերն է ուզում քեզ տեսնել»:

Ամեն անգամ զնալով միսիոներների հետ հարցազրույցի, ես նախ աղոթում էի գթության պարգևի համար և այն բանի համար, որ կարողանայի տեսնել յուրաքանչյուր երեցին և քրոջն այնպես, ինչպես Տերն է տեսնում նրանց:

Մինչև մարզային համաժողովները, երբ քույր Փալմերը և ես մեկ առ մեկ ողջունում էինք միսիոներներին, ես դադար էի առնում և նայում խորը նրանց աչքերի մեջ՝ *մտիկ տալով* նրանց, ինչն առանց խոսքերի հարցազրույց էր, որից հետո առանց ձախողվելու ես լցվում էի մեծ *սիրով* Աստծո այս թանկագին որդիների ու դուստրերի հանդեպ։

Կյանք փոխող շատ դասեր ես սովորեցի Մարկոսի 10-րդ գլխի հետ կապված այս խորը անձնական փորձառությունից։ Ահա այդ դասերից չորսը, որոնք իմ համոզմամբ կօգնեն յուրաքանչյուրիս.

1. **Երբ սովորենք նայել մարդկանց այնպես, ինչպես Տերն է նայում նրանց, այլ ոչ մեր սեփական աչքերով, մեր սերը նրանց հանդեպ կաճի, ինչպես նաև կաճի նրանց օգնելու մեր ցանկությունը:** Մենք ներուժ կտեսնենք նրանց մեջ, որն իրենք իրենց մեջ գուցե չեն տեսնում։ Քրիստոսանման սիրով մենք չենք վախենա խիզախ խոսել, քանի որ «կատարյալ սերը հեռացնում է վախը»։[4] Եվ մենք երբեք չենք դադարի սիրել, հիշելով, որ նրանք, ում դժվար է սիրել, ամենաշատը դրա կարիքն ունեն։
2. **Ոչ մի իսկական ուսուցում կամ ուսումնառություն երբևէ տեղի չի ունենա, եթե կատարվում է հիասթափությամբ ու զայրույթով և սրտերը չեն փոխվի, եթե չկա սեր:** Կարևոր չէ, թե մենք ում դերում ենք՝ ծնողների, ուսուցիչների, թե ղեկավարների, իսկական ուսուցումը տեղի է ունենում միայն վստահություն ներշնչող, ոչ թե դատապարտող մթնոլորտում։ Մեր տները պետք է միշտ լինեն անվտանգ ապաստարաններ մեր երեխաների համար, և ոչ թե թշնամական միջավայրեր։
3. **Մերը երբեք չպետք է հեռանա մեր սրտից, երբ երեխան, ընկերը կամ ընտանիքի անդամը չի կարողանում ապրել համաձայն մեր սպասելիքների:** Մենք չգիտենք, թե ինչ պատահեց հարուստ երիտասարդի հետ նրանից հետո, երբ նա տխուր հեռացավ, բայց վստահ եմ, որ Հիսուսը շարունակում է սիրել նրան կատարյալ սիրով, նույնիսկ եթե նա ընտրած լիներ հեշտ ճանապարհը։ Գուցե ավելի ուշ իր կյանքում, երբ նա հասկանար, որ իր մեծ ունեցվածքը փուչ բան է, նա կհիշեր իր ունեցած եզակի փորձառությունը, երբ Տերը մտիկ էր տվել նրան, սիրել էր և հրավիրել հետևել Իրեն։
4. **Տերը շատ բան է ակնկալում մեզանից, քանի որ սիրում է մեզ:** Եթե մենք խոնարհ ենք, ապա կընդունենք Տիրոջ հրավերը՝ ապաշխարելու, զոհաբերելու և ծառայելու որպես մեր հանդեպ Նրա կատարյալ սիրո ապացույց։ Ի վերջո, ապաշխարելու հրավերը նաև հրավեր է ներման և խաղաղության հրաշալի պարգևը ստանալու։ Հետևաբար, «մի անարգիր Տիրոջ խրատը. և ոչ էլ վհատվիր, նորանից հանդիմանված ժամանակդ։ Որովհետև Տերը իրան սիրածին խրատում է»։[5]

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ցանկացած ժամանակ, երբ դուք զգաք, որ ձեզանից դժվար բան է պահանջվում անել, հրաժարվեք վատ սովորությունից կամ կախվածությունից, մի կողմ դրեք աշխարհիկ զբաղմունքները, զոհաբերեք ձեր սիրած միջոցառումը Հանգստության օրվա համար, ներեք մեկին, ով սխալ է վարվել ձեզ հետ, մտածեք Տիրոջ մասին, որ *նայում է* ձեզ, *սիրում է* ձեզ և հրավիրում է չանհանգստանալ ու *հետևել Իրեն:* Շնորհակալ եղեք Նրան, քանի որ այնքան է սիրում ձեզ, որ հրավիրում է ավելին անել։

Ես վկայում եմ մեր Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի մասին և անհամբեր սպասում եմ այն օրվան, երբ Նա Իր ձեռքերով կգրկի յուրաքանչյուրիս, *մտիկ տալով* մեզ և շրջապատելով մեզ Իր կատարյալ *սիրով:* Հիսուս Քրիստոսի անունով, ամեն։ ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մարկոս 10.21
2. Մարկոս 10.17–21, շեղագիրն ավելացված է
3. Տես 1 Նեփի 8.37
4. Ա Հովհաննես 4.18
5. Եբրայեցիս 12.5–6

Երեց Գարի Ի. Սթիվենսոն
Տասներկու Առաքյալների Քվորում

Ինչպե՞ս է Սուրբ Հոգին օգնում ձեզ

Սուրբ Հոգին զգուշացնում է, Սուրբ Հոգին մխիթարում է, Սուրբ Հոգին վկայում է։

Վերջերս ես ու կինս մի երկուշաբթի երեկոյան այցելեցինք մեր մոտակայքում ապրող մի երիտասարդ ընտանիքի։ Մինչ այնտեղ էինք՝ այդ ընտանիքը մեզ հրավիրեց մնալ ընտանեկան երեկոյին՝ ասելով, որ դասը պատրաստել է իրենց ինը տարեկան որդին։ Իհարկե մենք մնացինք։

Բացման օրհներգից, աղոթքից ու ընտանեկան հայտարարություններից հետո, ինը տարեկան երեխան սկսեց՝ կարդալով իր ձեռքով գրված դասից խորիմաստ մի հարց. «Ինչպե՞ս է Սուրբ Հոգին օգնում ձեզ»։ Այս հարցն առաջացրեց ընտանեկան իմաստալից քննարկում, որտեղ ամեն ոք կիսվում էր իր մտքերով ու կարծիքով։ Ես տպավորված էի մեր ուսուցչի պատրաստած դասից և նրա շատ լավ հարցից, որի մասին անընդհատ մտածում էի։

Դրանից հետո շարունակ հարցնում էի ինքս ինձ. «Ինչպե՞ս է Սուրբ Հոգին օգնում ձեզ». մի հարց, որը հատկապես ունենում են երեխաների խմբի անդամները, ովքեր դառնում են ութ տարեկան ու պատրաստվում են մկրտության և այն երեխաները, ովքեր նոր են մկրտվել ու ստացել են Սուրբ Հոգու պարգևը։ Այս հարցն ունենում են նաև հազարավոր նորադարձներ։

Ես հրավիրում եմ բոլորին, հատկապես Երեխաների խմբի անդամներին, խորհել, թե «Ինչպե՞ս է Սուրբ Հոգին օգնում ձեզ»։ Երբ ես մտածում էի այս հարցի շուրջ, անմիջապես հիշեցի մի փորձառություն, որն ունեցել եմ երիտասարդ տարիքում։ Սա մի պատմություն է, որը ես պատմեցի Երեց Ռոբերտ Դ. Հեյլսին՝ Տասներկու Առաքյալների Քվորում իմ կանչից որոշ ժամանակ անց, և նա այն ընդգրկեց Եկեղեցու ամսագրային հոդվածներից մեկում, որը նա գրել էր իմ կյանքի մասին։[1] Ձեզանից մի քանիսը գուցե լսել են այս պատմությունը, սակայն շատերը հավանաբար դեռ ոչ։

Երբ մոտ 11 տարեկան էի, հայրս և ես մի շոգ ամառային օր բարձրացանք մեր տան մերձակայքում գտնվող սարերը։ Մինչ հայրս զառիվեր բարձրանում էր բլուրը, ես արահետի եզրերին գտնվող մի մեծ քարից մյուսն էի թռչում։ Երբ ուզում էի բարձրանալ մեծ քարերից մեկի վրա, սկսեցի մագլցել։ Ու մինչ մագլցում էի, զարմացա, երբ հայրս բռնեց գոտուցս ու արագ վայր իջեցրեց ինձ՝ ասելով. «Մի՛ մագլցիր այդ քարի վրա։ Եկ շարունակենք քայլել արահետով»։

Որպեսզի անց, երբ արահետի ավելի բարձր հատվածից վայր նայեցինք, մենք ապշեցինք, քանի որ տեսանք մի մեծ բոժոժավոր օձ՝ պառկած արևի տակ հենց այն քարի վրա, որը ես փորձում էի մագլցել։

Ավելի ուշ, երբ մեքենայով տուն էինք վերադառնում, գիտեի, որ հայրս ակնկալում էր, որ ես կհարցնեմ. «Ինչպե՞ս իմացար, որ օձն այդտեղ էր»։ Ուստի ես հարցրի, և իմ հարցն առաջացրեց Սուրբ Հոգու մասին մի քննարկում՝ ինչպես կարող է Սուրբ Հոգին մեզ օգնել։ Ես երբեք չեմ մոռացել այն, ինչ սովորեցի այդ օրը։

Տեսնո՞ւմ եք, թե Սուրբ Հոգին ինչպես օգնեց ինձ։ Ես հավերժ երախտապարտ կլինեմ, որ հայրս լսեց Սուրբ Հոգու մեղմ, հանդարտ ձայնը, որը գուցե փրկեց իմ կյանքը։

Ի՞նչ գիտենք Սուրբ Հոգու մասին

Նախքան կշարունակենք խորհել այն հարցի շուրջ, թե «Ինչպե՞ս է Սուրբ Հոգին օգնում ձեզ», եկեք վերանայենք, թե Տերն ինչ է հայտնել Սուրբ Հոգու մասին: Շատ հավերժական ճշմարտություններ կան, որոնք մենք կարող ենք ուսումնասիրել, սակայն այսօր ես կկենտրոնանամ միայն երեքի վրա:

Առաջին հերթին, Սուրբ Հոգին Աստվածագլխի երրորդ անդամն է: Այս մասին մենք սովորում ենք հավատո առաջին հանգանակում. «Մենք հավատում ենք Աստծուն՝ Հավերժական Հորը, և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, և Սուրբ Հոգուն»:[2]

Երկրորդ, Սուրբ Հոգին հոգեղեն անձնավորություն է, ինչպես նկարագրված է ժամանակակից սուրբ գրություններում. «Հայրն ունի մսից ու ոսկորից մարմին, այնպես շոշափելի, ինչպես մարդունը. Որդին՝ նույնպես. բայց Սուրբ Հոգին չունի մսից ու ոսկորից մարմին, այլ Հոգեղեն անձնավորություն է: Եթե այդպես չլիներ, Սուրբ Հոգին չէր կարող բնակվել մեզանում»:[3] Սա նշանակում է, որ ի տարբերություն Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի, ովքեր ունեն ֆիզիկական մարմին, Սուրբ Հոգին ունի հոգեղեն մարմին: Այս ճշմարտությունը հստակեցնում է Սուրբ Հոգուն տրված ու մեզ ծանոթ մյուս անունները, ներառյալ Սուրբ Հոգի, Աստծո Հոգի, Տիրոջ Հոգի, Խոստումի Սուրբ Հոգի և Մխիթարիչ:[4]

Երրորդ, Սուրբ Հոգու պարգևը տրվում է ձեռնադրման միջոցով: Այս արարողությունը, որը հետևում է մկրտությանը, իրավունք է տալիս մեզ, որ միշտ ունենանք Սուրբ Հոգու ընկերակցությունը:[5] Այս արարողությունը կատարելու համար արժանի Մելքիսեդեկյան Քահանայություն կրողներն իրենց ձեռքերը դնում են անձնավորության գլխին,[6] կոչում են նրան անունով, նշում են իրենց քահանայության լիազորությունը և Հիսուս Քրիստոսի անունով հաստատում են նրան որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ, և արտասանում են այս կարևոր արտահայտությունը. «Ստացի՛ր Սուրբ Հոգին»:

Ինչպե՞ս է Սուրբ Հոգին օգնում ձեզ:

Սուրբ Հոգու մասին այս երեք հիմնարար ճշմարտությունները վերանայելուց հետո վերադառնանք մեր առաջին հարցին. «Ինչպե՞ս է Սուրբ Հոգին օգնում ձեզ»:

Սուրբ Հոգին զգուշացնում է

Ինչպես նկարագրեցի իմ մանկության փորձառության մեջ, Սուրբ Հոգին կարող է օգնել ձեզ՝ նախապես զգուշացնելով ֆիզիկական ու հոգևոր վտանգների մասին: Ես ևս մի անգամ սովորեցի Սուրբ Հոգու զգուշացնող կարևոր դերի մասին, երբ ծառայում էի Ճապոնիայի տարածքային նախագահությունում:

Այդ ժամանակ ես սերտորեն աշխատում էի Ճապոնիա Սենդայ Միսիայի Նախագահ Ռեյդ Թեյթոկայի հետ: Որպես իր միսիոներական օրակարգի սովորական մաս՝ Նախագահ Թեյթոկան միսիոներական առաջնորդների համար իր միսիայի հարավային հատվածում հանդիպում էր ծրագրել: Հանդիպումից մի քանի օր առաջ Նախագահ Թեյթոկան տպավորություն էր ստացել, իր սրտում զգացում էր ունեցել, որ երեց և քույր առաջնորդ նշանակված փոքր թվով միսիոներներից բացի առաջնորդների հետ հանդիպմանը պետք է հրավիրեր այդ գոտու *բոլոր* միսիոներներին:

Երբ նա հայտնեց իր մտադրությունը, նրան հիշեցրին, որ այդ հանդիպումը բոլոր միսիոներների համար չէր նախատեսված, այլ միայն առաջնորդների համար էր: Այնուամենայնիվ, իր ստացած հուշումներին հետևելու համար մի կողմ դնելով կազմված ծրագիրը, նա այդ հանդիպմանը հրավիրեց բոլոր միսիոներներին, ովքեր ծառայում էին որոշ ծովափնյա քաղաքներում, այդ թվում նաև Ֆուկուշիմա քաղաքում: Նշանակված օրը՝ 2011թ.-ի մարտի 11-ին, միսիոներները միասին հավաքվեցին Քորիյամա ոչ ծովափնյա քաղաքում ծավալված միսիոներական հանդիպմանը:

Այդ հանդիպման ընթացքում Ճապոնիայի այն տարածքում, որտեղ տարածվում է Ճապոնիա Սենդայ միսիան, տեղի ունեցավ 9.0 բալ ուժգնությամբ երկրաշարժ ու ցունամի: Դժբախտաբար, շատ ծովափնյա քաղաքներ, այդ թվում նաև այն քաղաքները, որտեղից հավաքվել էին միսիոներները,

ավերվել էին ու մարդկային կյանքի մեծ կորուստներ էին ունեցել: Իսկ Ֆուկուշիմա քաղաքն ավելի ուշ տուժել էր ատոմակայանի հետ առնչվող պատահարից:

Չնայած այն ժողովատունը, որտեղ միսիոներներն այդ օրը հավաքվել էին, տուժել էր երկրաշարժի պատճառով, սակայն Սուրբ Հոգու հուշումներին հետևելու շնորհիվ Նախագահ ու Քույր Թեյթոկան և բոլոր միսիոներները միասին ապահով էին: Նրանք անվտանգ վայրում էին՝ մի քանի մղոն հեռու ցունամիի ու միջուկային աղտոտման պատճառած ավերածությունից:

Երբ հետևեք Սուրբ Հոգու հուշումներին, որոնք հաճախ մեղմ ու հանդարտ տպավորություններ են, հոգևոր և ֆիզիկական վտանգները կհեռացվեն ձեզանից առանց ձեր իմանալու:

Եղբայրնե՛ր ու քույրե՛ր, Սուրբ Հոգին ձեզ կօգնի զգուշացնելով, ինչպես որ Նա զգուշացրեց հայրիկիս ու Նախագահ Թեյթոկային:

Սուրբ Հոգին մխիթարում է

Շարունակելով պատասխանել այն հարցին, թե «Ինչպե՞ս է Սուրբ Հոգին օգնում ձեզ», եկեք այժմ ուսումնասիրենք Նրա դերը որպես Մխիթարիչ: Մեր բոլորի կյանքում անսպասելի իրադարձություններն առաջացնում են տխրություն, ցավ և հիասթափություն: Մինչդեռ, երբ գտնվում ենք այս փորձությունների մեջ, Սուրբ Հոգին ծառայում է մեզ՝ կատարելով Իր կարևոր դերերից մեկը՝ որպես Մխիթարիչ, որն իրականում Նրա անուններից մեկն է: Հիսուս Քրիստոսի այս խաղաղ, հուսադրող խոսքերը նկարագրում են այդ սրբազան դերը. «Եւ ես Հօրը կաղաչեմ և ուրիշ Մխիթարիչ կտայ ձեզ, որ մնայ ձեզ հետ յաւիտեան»:[7]

Այս սկզբունքն ավելի լիարժեք բացատրելու համար ես կկիսվեմ հինգ որդի ունեցող մի ընտանիքի իրական պատմությամբ, ովքեր մի քանի տարի առաջ ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի Լոս Անջելոս քաղաքից տեղափոխվեցին մի փոքր համայնք: Երկու ավագ որդիները սկսեցին մասնակցել ավագ դպրոցի

սպորտային խաղերին ու առնչվել ընկերների, ղեկավարների ու մարզիչների հետ, որոնցից շատերը Եկեղեցու հավատարիմ անդամներ էին: Այս հարաբերությունները հանգեցրին Ֆերնանդոյի ու նրա կրտսեր եղբոր մկրտությանը:

Ֆերնանդոն ավելի ուշ տեղափոխվեց տնից այլ վայր, որտեղ նա շարունակեց իր կրթությունն ու խաղաց իր ուսումնական հաստատության ֆուտբոլի թիմում: Նա տաճարում ամուսնացավ իր ավագ դպրոցի սիրելիի՝ Բեյլիի հետ: Երբ Ֆերնանդոն ու Բեյլին վերջացրին իրենց ուսումը, անհամբեր սպասում էին իրենց առաջին երեխայի՝ դստեր ծնվելուն: Սակայն մինչ Ֆերնանդոյի ու Բեյլիի ընտանիքներն օգնում էին նրանց ետ վերադառնալ տուն, Բեյլին ու իր քույրը մեքենա էին վարում մայրուղու վրա և ենթարկվեցին ողբերգական ավտովթարի, որի մեջ ներգրավված էին մի քանի մեքենաներ: Բեյլին ու նրա դեռ չծնված դուստրը մահացան:

Որքան էլ որ խորն էր Ֆերնանդոյի, ինչպես նաև Բեյլիի ծնողների, քույր ու եղբայրների ցավը, նույնքան խորն էր խաղաղության ու մխիթարության զգացումը, որը նրանք կարծես անմիջապես զգացին՝ ի հակադրություն ցավի: Սուրբ Հոգին, որպես Մխիթարիչ, իսկապես ուժ տվեց Ֆերնանդոյին այս անըմբռնելի տանջանքի մեջ: Հոգին տևական խաղաղություն հաղորդեց, որը Ֆերնանդոյի մեջ առաջացրեց ներման ու սիրո վերաբերմունք նրանց նկատմամբ, ովքեր ներգրավված էին այդ ողբերգական ավտովթարի մեջ:

Բեյլիի ծնողները զանգեցին նրա եղբորը, ով վթարի ժամանակ ծառայում էր որպես միսիոներ: Նա իր զգացումները նկարագրել էր նամակի մեջ, որոնք ունեցել էր իր սիրելի քրոջ մասին այդ ծանր լուրն իմանալով. «Զարմանալի էր փոթորիկի միջից ձեր հանդարտ ձայնը լսելը: Ես չգիտեի ինչ ասեմ: . . . Ես մտածում էի այն մասին, որ քույրս այլևս տանը չի լինի, երբ տուն գամ: . . . Ես մխիթարվեցի Փրկիչի ու Նրա ծրագրի մասին ունեցած ձեր ամուր վկայությունով: Այդ նույն հաճելի հոգին, որն աչքերս է արցունքով լցնում, երբ ուսումնասիրում ու ուսուցանում եմ, լցրեց իմ սիրտը: Այնուհետև ես մխիթարվեցի ու հիշեցի այն բաները, որոնք գիտեմ»:[8]

Սուրբ Հոգին կօգնի ձեզ մխիթարելով, ինչպես Նա մխիթարեց Ֆերնանդոյի ու Բեյլիի ընտանիքին:

Սուրբ Հոգին վկայում է

Սուրբ Հոգին նաև վկայում և հաստատում է Հոր և Որդու և բոլոր բաների ճշմարտացիության մասին:[9] Տերն Իր առաքյալների հետ խոսելիս, ասել է. «Բայց երբոր Մխիթարիչը կգայ, որ ես Հօրիցը կուղարկեն ձեզ, . . . նա կվկայէ ինձ համար»:[10]

Սուրբ Հոգու թանկագին դերը որպես վկայող նկարագրելու համար ես կշարունակեմ Ֆերնանդոյի ու Բեյլիի պատմությունը: Եթե հիշում եք, ես ասացի, որ Ֆերնանդոն ու իր եղբայրը մկրտվեցին, սակայն նրա ծնողներն ու երեք կրտսեր եղբայրները՝ ոչ: Ու չնայած տարիների ընթացքում միսիոներների հետ հանդիպելու բազմաթիվ հրավերներ ստացան , ամեն անգամ ընտանիքը մերժում էր:

Բեյլիի ու նրա փոքրիկ դստեր ցավալի մահվան պատճառով Ֆերնանդոյի ընտանիքն անմխիթար վիճակում էր: Ի տարբերություն Ֆերնանդոյի ու Բեյլիի ընտանիքի, նրանք չէին կարողանում մխիթարանք կամ խաղաղություն գտնել:

Նրանք չէին հասկանում, թե ինչպես իրենց սեփական որդին, Բեյլիի ընտանիքի հետ միասին, կարողանում էին կրել իրենց ծանր բեռը:

Ի վերջո նրանք հասկացան, որ այն, ինչ իրենց որդին ուներ, իսկ իրենք չունեին, Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանն էր, և պետք է դա լիներ նրա խաղաղության ու մխիթարության աղբյուրը: Սա հասկանալուց հետո նրանք միսիոներներին հրավիրեցին, որպեսզի ավետարանն ուսուցանեն իրենց ընտանիքին: Արդյունքում երջանկության ծրագրի մասին իրենք ստացան իրենց վկայությունն ու հաստատումը, որը հաճելի խաղաղություն ու հանգստացնող սփոփանք բերեց, որը նրանք հուսահատորեն փնտրում էին:

Բեյլիի ու իրենց դեռ չծնված թոռնուհու մահից երկու ամիս անց Ֆերնանդոյի ծնողները, ինչպես նաև նրա երկու կրտսեր եղբայրները մկրտվեցին, հաստատվեցին ու ստացան Սուրբ Հոգու պարգևը: Ֆերնանդոյի կրտսեր եղբայրն անհամբերությամբ սպասում է իր մկրտությանը, երբ դառնա ութ տարեկան: Նրանք ամենքը վկայում են, որ Սուրբ Հոգին վկայություն բերեց ավետարանի ճշմարտացիության մասին՝ առաջնորդելով նրանց մկրտվելու և Սուրբ Հոգու պարգևը ստանալու ցանկությանը:

Եղբայրնե՛ր ու քույրե՛ր, Սուրբ Հոգին կօգնի ձեզ՝ վկայություն բերելով, ինչպես որ Նա օգնեց Ֆերնանդոյի ընտանիքին:

Ամփոփում

Այժմ եկեք ամփոփենք: Մենք նշեցինք երեք հայտնի դարձած ճշմարտություն, որոնք մեզ օգնում են ճանաչել Սուրբ Հոգուն: Դրանք են՝ Սուրբ Հոգին Աստվածազլխի երրորդ անդամն է, Սուրբ Հոգին հոգեղեն անձնավորություն է, և Սուրբ Հոգու պարգևը տրվում է ձեռնադրման միջոցով: Մենք նաև երեք պատասխան տվեցինք «Ինչպե՞ս է Սուրբ Հոգին օգնում ձեզ» հարցին: Սուրբ Հոգին զգուշացնում է, Սուրբ Հոգին մխիթարում է, և Սուրբ Հոգին վկայում է:

Պարգևը պահելու արժանավորություն

Նրանց համար, ովքեր պատրաստվում են մկրտվել ու հաստատվել, նրանց համար, ովքեր վերջերս են մկրտվել ու հաստատվել կամ նրանց համար, ովքեր շատ վաղուց են մկրտվել, մեր ֆիզիկական ու հոգևոր ապահովության համար կարևոր է, որ ունենանք Սուրբ Հոգու պարգևը: Մենք սկսում ենք այդպես վարվել՝ ձգտելով պահել պատվիրանները, ունենալով անձնական ու ընտանեկան աղոթք, կարդալով սուրբ գրությունները և ձգտելով ներել ընտանիքին ու սիրելիներին, սիրել նրանց հետ ունեցած մեր հարաբերությունները: Մենք պետք է մեր մտքերը, գործողությունները և խոսքերը առաքինի պահենք: Մենք պետք է երկրպագենք մեր Երկնային Հորը մեր տանը, եկեղեցում և, հնարավորության դեպքում, սուրբ տաճարում: Մոտ մնացեք Սուրբ Հոգուն, և Սուրբ Հոգին ձեզ մոտ կմնա:

Վկայություն

Այժմ ես ավարտում եմ մի հրավերով ու իմ հաստատուն վկայությամբ: Ես ձեզ հրավիրում եմ լիարժեք ապրել այնքան հաճախ Երեխաների խմբի կողմից երգված երգի բառերին համաձայն, բառեր, որոնք վստահ եմ, նրանք կճանաչեն. «Լսի՛ր, լսի՛ր: Սուրբ Հոգին կշշնջա: Լսի՛ր, լսի՛ր մեղմ ու հանդարտ ձայնը»:[11]

Սիրելի՛ եղբայրներ ու քույրեր, տարիքով և երիտասարդ, ես իմ վկայությունն են բերում աստվածային էակների փառավոր գոյության մասին, ովքեր կազմում են Աստվածազլուխը՝ Հայր Աստվածը, Հիսուս Քրիստոսը և Սուրբ Հոգին: Ես վկայում եմ, որ այն արտոնություններից մեկը, որ մենք՝ որպես վերջին օրերի սրբեր, վայելում ենք ժամանակների լրության տնտեսությունում, Սուրբ Հոգու պարգևն ունենալն է: Ես գիտեմ, որ Սուրբ Հոգին *օգնում է և կօգնի* ձեզ: Ես նաև ավելացնում եմ Հիսուս Քրիստոսի ու որպես մեր Փրկիչ ու Քավիչ Նրա դերի մասին իմ հատուկ վկայությունը, ինչպես նաև իմ հատուկ վկայությունը Աստծո մասին՝ որպես մեր Երկնային Հայր: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Robert D. Hales, “Elder Gary E. Stevenson: An Understanding Heart,” *Liahona,* June 2015, 14:
2. Հավատո հանգանակներ 1.1
3. Վարդապետություն և Ուխտեր 130.22
4. Տես Մոսիա 18.13, Ալմա 5.46, 9.21, Վարդապետություն և Ուխտեր 88.3:
5. Տես 1 Նեփի 13.37, 2 Նեփի 31.12, Վարդապետություն և Ուխտեր 121.46:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 138.33
7. Հովհաննես 14.16
8. Անձնական նամակագրություն, դեկ. 18, 2016
9. Տես Եբրայեցիս 10.15, 2 Նեփի 31.18, Հակոբ 4.13:
10. Հովհաննես 15.26
11. “The Still Small Voice,” *Children’s Songbook,* 107.

Երեց Ք. Սքոթ Գրոու
Յոթանասունի Քվորում

Եվ սա է հավիտենական կյանքը

Աստված ճանաչում է ձեզ և հրավիրում է ձեզ ճանաչել Իրեն։

Ես դիմում եմ ձեզ՝ աճող սերունդ, երիտասարդներ և չափահաս երիտասարդներ, ամուրի և ամուսնացած, ձեզ՝ Տիրոջ այս Եկեղեցու ապագա ղեկավարներ։ Այսօրվա աշխարհի ողջ ամբարշտության, քաոսի, վախի և շփոթմունքի հետ միասին ես պարզ խոսում եմ ձեզ հետ Աստծուն ճանաչելու վսեմության և օրհնության մասին։

Հիսուս Քրիստոսը շատ ճշմարտություններ է ուսուցանել, որոնք լուսաբանում են Երկնային Հոր երջանկության ծրագիրը և ձեր տեղը դրանում։ Ես կդիտարկեմ դրանցից երկուսը, որոնք կօգնեն ձեզ հասկանալ ձեր *ինքնությունը* որպես Աստծո զավակ և իմանալ ձեր *նպատակը* կյանքում։

Առաջինը՝ «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհքը որ իր միածին Որդին տուավ. որ ամեն նորան հավատացողը չկորչի,այլ հավիտենական կյանքն ունենայ»։[1]

Երկրորդը՝ «Եվ սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստված. եւ նորան, որ ուղարկեցիր՝ Հիսուսին Քրիստոսին»։[2]

Խնդրում եմ մտապահեք այս ճշմարտությունները, դրանք ուսուցանում են *ինչուն, այն ժամանակ,* երբ ես կփորձեմ նկարագրել, թե *ինչպես* դուք և մենք բոլորս կարող ենք ճանաչել Աստծուն։

Ճանաչեք Նրան աղոթքի միջոցով

Իմ երիտասարդ բարեկամներ, մենք կարող ենք սկսել ճանաչել Աստծուն աղոթքի միջոցով։

1829 թվականի ապրիլի 7-ին 22-ամյա Օլիվեր Քաուդերին սկսում է իր աշխատանքը որպես դպիր 23-ամյա Ջոզեֆ Սմիթի համար։ Նրանք ձեզ նման երիտասարդ էին։ Օլիվերն Աստծուց հաստատում խնդրեց Վերականգնման և դրանում իր աշխատանքի վերաբերյալ։ Ի պատասխան, նա ստացավ հետևյալ հայտնությունը.

«Ահա, դու գիտես, որ հարցրել ես ինձ, և ես լուսավորել եմ քո միտքը։ . . .

Այո, ես ասում եմ քեզ, որ կարողանաս իմանալ, որ չկա ուրիշ ոչ մեկը, բացի Աստծուց, որ իմանա քոմտքերը և մտադրությունները քո սրտի։ . . .

. . . Եթե դու լրացուցիչ վկայություն ես փափագում, ուղղիր միտքդ դեպի այն գիշերը, երբ դու ինձ էիր կանչում քո սրտում, . . .

Խաղաղություն չխոսեցի՞ ես քո մտքին . . . : Ավելի մեծ ի՞նչ վկայություն կարող ես դու ունենալ, քան Աստծուց»։[3]

Երբ *դուք* աղոթեք հավատքով, կզգաք Աստծո սերը, երբ Նրա Հոգին խոսում է *ձեր* հոգու հետ։ Անկախ նրանից, թե որքան մենակ կամ անվստահ կարող եք զգալ երբեմն, դուք մենակ չեք այս աշխարհում։ Աստված գիտի *ձեզ* անհատապես։ Աղոթելով դուք կսկսեք ճանաչել *Նրան։*

Ճանաչեք Նրան սուրբ գրություններն ուսումնասիրելու միջոցով

Ուսումնասիրելով սուրբ գրությունները, դուք ոչ միայն սովորում

եք Փրկիչի *մասին*, այլ փաստացի սկսում եք *ճանաչել* Փրկիչին:

1985 թվականի ապրիլին երեց Բրյուս Ռ. Մակ-Քոնկիին ելույթ ունեցավ զերագույն համաժողովին՝ իր մահից 13 օր առաջ: Նա եզրափակեց հետևյալ վկայությամբ.

«Ես Նրա վկաներից մեկն եմ և գալիք օրը ես կշոշափեմ բևեռների տեղերը Նրա ձեռքերի ու ոտքերի վրա և կթրջեմ Նրա ոտքերն իմ արցունքներով:

Սակայն ես ավելի լավ չեմ *ճանաչի* Նրան այդ ժամանակ, քան հիմա եմ *ճանաչում*, որ Նա է Աստծո Ամենակարող Որդին, որ Նա մեր Փրկիչն ու Քավիչն է, և որ փրկությունը գալիս է Նրա քավող արյամբ ու դրա միջոցով և ոչ մի ուրիշ ձևով»:[4]

Նրանք, ովքեր լսեցին երեց Մակ-Քոնկիի ելույթը, երբեք չեն մոռանա այն, ինչ զգացին այդ օրը: Սկսելով իր ելույթը, նա բացահայտեց, թե *ինչու* էր իր վկայությունն այդքան զորավոր: Նա ասաց.

«Այս հրաշալի բաների մասին ես կարտահայտվեմ իմ բառերով, թեև հնարավոր է դուք մտածեք, որ դրանք սուրբ գրությունների խոսքեր են: . . .

Ճշմարիտ է այն, որ սկզբում դրանք մյուսների կողմից են քարոզվել, բայց *այժմ դրանք իմն են,* քանի որ Աստծո Սուրբ Հոգին վկայություն է տվել ինձ, որ դրանք ճշմարիտ են, և այժմ, կարծես Տերն ի սկզբանե ինձ է բացահայտել դրանք: Հետևաբար, ես *լսել եմ* Նրա ձայնը և *գիտեմ* Նրա խոսքը»:[5]

Երբ դուք ուսումնասիրեք սուրբ գրությունները և խորհեք դրանց շուրջ, դուք նույնպես կլսեք Աստծո ձայնը, կիմանաք Նրա խոսքերը և կսկսեք ճանաչել Նրան: Աստված կհայտնի ձեզ անհատապես Իր հավերժական ճշմարտությունները: Այս վարդապետություններն ու սկզբունքները կդառնան ձեր ինքնության մի մասը և կբխեն հենց ձեր հոգուց:

Անհատական ուսումնասիրությունից բացի, ընտանիքով սուրբ գրությունների ուսումնասիրումը նույնպես կարևոր է:

Մենք ցանկանում էինք, որ մեր տանը երեխաները սովորեին

ճանաչել Հոգու ձայնը: Կարծում ենք, որ դա տեղի է ունեցել, քանի որ ամեն օր մենք ընտանիքով ուսումնասիրում էինք Մորմոնի Գիրքը: Մեր վկայություններն ամրանում էին, երբ մենք խոսում էինք սուրբ ճշմարտությունների մասին:

Սուրբ գրությունների ուսումնասիրությունը Հոգու համար միջոց է դառնում, որպեսզի յուրաքանչյուրիս հետ անհատական ուսուցում անցկացնի: Ուսումնասիրելով սուրբ գրություններն ամեն օր անհատապես և ձեր ընտանիքով, *դուք* կսովորեք ճանաչել Հոգու ձայնը և կսկսեք ճանաչել Աստծուն:

Ճանաչեք Նրան՝ կատարելով Նրա կամքը

Աղոթելուց և սուրբ գրություններն ուսումնասիրելուց բացի մենք պետք է կատարենք Աստծո կամքը:

Փրկիչը մեր կատարյալ օրինակն է: Նա ասել է. «Որովհետև ես իջա երկնքից, որ ոչ թէ իմ կամքն անեմ, այլ ինձ ուղարկողի կամքը»:[6]

Երբ հարություն առած Փրկիչը հայտնվեց նեփիացիներին, Նա ասաց. «Եվ ահա, ես եմ լույսն ու կյանքն աշխարհի. և ես խմեցի այն դառը բաժակից, որը Հայրը տվեց ինձ, և փառավորեցի Հորը՝ վերցնելով ինձ վրա աշխարհի մեղքերը, որով ես ենթարկվեցի Հոր *կամքին, բոլոր բաներում,* ի սկզբանե»:[7]

Դուք և ես կատարում ենք Հոր կամքը՝ պատվելով մեր ուխտերը, պահելով պատվիրանները և ծառայելով Աստծուն ու մեր մերձավորներին:

Կինս՝ Ռոնդան և ես ծնողներ ունենք, որոնք սովորական մարդիկ են, հավանաբար շատ նման ձեր ծնողներին: Սակայն մի բան կա, որ ես սիրում եմ մեր ծնողների մեջ, դա այն է, որ նրանք նվիրել են իրենց կյանքն Աստծո ծառայությանը և մեզ ուսուցանել են նույնն անել:

Երբ Ռոնդայի ծնողները մի քանի տարի ամուսնացած էին, նրա 23-ամյա հայրը կանչվեց ծառայելու լիաժամկետ միսիայում: Նա տանը թողեց իր երիտասարդ կնոջը և իրենց երկու տարեկան դստերը: Այնուհետև նրա կինը ևս կանչվեց ծառայելու ամուսնու հետ միսիայի վերջին յոթ ամիսների ընթացքում, և կինը գնաց՝ հանձնելով իրենց դստերը բարեկամների խնամքին:

Մի քանի տարի անց այս անգամ *չորս* երեխաների հետ, նրանք տեղափոխվեցին Միսսուլա (Մոնտանա), որպեսզի Ռոնդայի հայրը հաճախի համալսարան: Սակայն, նրանք ընդամենը մի քանի ամիս այնտեղ մնացին, քանի որ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը և երեց Մարկ Ի. Փիթերսենը կանչեցին աներոջս՝ դառնալ նորաստեղծ Միսսուլա ցցի առաջին նախագահը: Նա ընդամենը 34 տարեկան էր: Համալսարանի մասին մտքերը մի կողմ դրվեցին, քանի որ նա ձգտեց կատարել *Տիրոջ* կամքը, ոչ թե՝ իրենը:

Իմ ծնողները 30 տարուց ավել ծառայել են տաճարում: Հայրս որպես կնքող, մայրս՝ արարողությունների աշխատակցուհի: Նրանք միասինծառայել են նաև հինգ լիաժամկետ միսիա՝ Ռիվերսայդում (Կալիֆորնիա), Ուլան Բատորում (Մոնղոլիա), Նաիրոբիում (Քենիա), Նավու Իլինոյս Տաճարում և Մոնտերեյ Մեքսիկա Տաճարում: Մեքսիկայում նրանք մեծ ջանքեր են գործադրել, որպեսզի սովորեն նոր լեզուն, ինչը հեշտ չէր 80 տարեկան հասակում: Սակայն կյանքում իրենց սեփական նպատակների փոխարեն նրանք ջանացել են կատարել Տիրոջ կամքը:

Նրանց և աշխարհի բոլոր այդպիսի նվիրված վերջին օրերի սրբերի համար ես կրկնում եմ Տիրոջ խոսքերը, որոնք Նա ասել է Նեփի մարգարեին՝ Հելամանի որդուն. «Օրհնված ես դու, . . . այն բաների համար, որ դու արել ես . . . անխոնջությամբ . . . , [քանի որ] չես փնտրել քո սեփական կյանքը, այլ փնտրել ես իմ կամքը և իմ պատվիրանները պահելը»:[8]

Երբ *մենք* փնտրում ենք Աստծո կամքը՝ հավատարիմ ծառայելով Նրան և մեր մերձավորներին, մենք զգում ենք Նրա հաստատումը և իսկապես սկսում ենք ճանաչել Նրան:

Ճանաչեք Նրան՝ դառնալով Նրա նման

Փրկիչն ասում է մեզ, որ Աստծուն ճանաչելու լավագույն ուղին Նրա *նման* դառնալն է: Նա ուսուցանել է. «Հետևաբար, ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել: Ճշմարիտ եմ ասում ձեզ՝ ճիշտ ինչպես ես եմ»:[9]

Արժանավորությունը կարևոր է Նրա նման դառնալու հարցում: Նա պատվիրել է. «Սրբագործեք ձեզ. այո, մաքրագործեք ձեր սրտերը, և մաքրեք ձեր ձեռքերն, . . . որ ես կարողանամ ձեզ մաքուր դարձնել»:[10] Կանգնելով Նրան նմանվելու ճանապարհին, մենք ապաշխարում ենք, ստանում Նրա ներումը, և Նա մաքրում է մեր հոգիները:

Տերը տվել է մեզ այս խոստումը, որպեսզի օգնի մեզ դեպի մեր Հայրն առաջադիմելիս. «Ամեն հոգի, որ թողնում է իր մեղքերը և գալիս է ինձ մոտ, և կանչում է իմ անունը, և հնազանդվում է իմ ձայնին, և պահում է իմ պատվիրանները, պիտի տեսնի իմ երեսը և *իմանա*, որ ես եմ»:[11]

Նրա քավիչ զոհաբերության հանդեպ մեր հավատքի շնորհիվ Փրկիչը մաքրում է մեզ, բուժում է և թույլ է տալիս *ճանաչել* Իրեն՝ օգնելով մեզ դառնալ Ի*նման*: Մորմոնն ուսուցանել է. «Աղոթեք Հորը, սրտի ողջ կորովով, . . . որ դուք կարողանաք դառնալ Աստծո որդիները [և դուստրերը]. որպեսզի երբ նա հայտնվի, մենք լինենք նրա *նման*»:[12] Երբ ձգտենք դառնալ Աստծո նման, Նա կնպաստի, որ մենք ավելին ձեռք բերենք, քան կարող ենք մեր սեփական ուժերով:

Ճանաչեք Նրան՝ հետևելով ուսուցիչներին

Օգնելով մեզ մեր ձգտումներում, Աստված տվել է մեզ օրինակելի մարդկանց և ուսուցիչներ: Ես ցանկանում եմ իմ զգացմունքներով կիսվել իմ ուսուցչի՝ Երեց Նիլ Ա. Մաքսվելի մասին: Նա մշտապես ձգտել է ենթարկել իր կամքը Հոր կամքին՝ Աստծուն նմանվելու իր ջանքերում:

Ավելի քան 20 տարի առաջ նա կիսվել էր ինձ հետ իր զգացմունքներով, անմիջապես այն բանից հետո, երբ նրա մոտ քաղցկեղ էր ախտորոշվել: Նա ասաց ինձ. «Ես ցանկանում եմ թիմում լինել, այս կողմում [վարագույրի], թե՝ այն կողմում: Ես չեմ ուզում նստել եզրագծերի վրա: Ես ուզում եմ խաղի մեջ լինել»:[13]

Հաջորդ մի քանի շաբաթների ընթացքում նա հակված չէր խնդրելու Աստծուց բուժել իրեն, նա միայն ցանկանում էր Աստծո կամքն անել: Նրա կինը՝ Քոլինը, հիշեցրեց, որ Հիսուսի առաջին աղաչանքը Գեթսեմանի այգում այս էր. «Եթե կարելի է, թող այս բաժակն ինձանից անցնի»: Դրանից հետո միայն Փրկիչն ասաց. «Սակայն ոչ թե ինչպես ես եմ կամենում, այլ ինչպես *դու*»:[14] Նա քաջալերեց երեց Մաքսվելին հետևել Փրկիչի օրինակին՝ թեթևացում խնդրել, և *ապա* ենթարկել իր կամքը Աստծո կամքին, ինչը և նա արեց:[15]

Այն բանից հետո, երբ համարյա մեկ տարվա ընթացքում նա դիմացավ շատ ծավալուն, ուժասպառ անող բուժումներին, նա լիովին ու ամբողջությամբ վերադարձավ «խաղի մեջ»: Նա ծառայեց ևս յոթ տարի:

Ես մի քանի ընդհանուր հանձնարարություններ ունեի նրա հետ հաջորդ տարիների ընթացքում: Ես զգացի նրա բարությունը, կարեկցանքն ու սերը: Ես տեսել եմ նրա հոգևոր զտվածության աճը նրա շարունակվող տանջանքների և անդադար ծառայության մեջ, երբ նա ձգտում էր դառնալ Փրկիչի նման:

Մեր *մեծագույն* օրինակը և ուսուցիչը մեր Տեր և Փրկիչ Հիսուս

Քրիստոսն է, ով ասել է. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը. ոչ ով չի գալիս Հոր մոտ, եթե ոչ ինձանով»:[16] «Եկ, հետևիր ինձ»:[17]

Իմ երիտասարդ եղբայրնե՛ր և քույրե՛ր, Աստծուն ճանաչելը կյանքի որոնման հարց է: «Եվ սա *է* հավիտենական կյանքը, որ *[մենք]* ճանաչենք քեզ միայն ճշմարիտ Աստված. եւ նորան, որ ուղարկեցիր՝ Հիսուսին Քրիստոսին»:[18]

«Արդյոք չպե՞տք է մենք շարունակենք այս մեծ գործը: . . . Քաջությո՛ւն, [իմ երիտասարդ ընկերնե՛ր], և առա՛ջ, առաջ դեպի հաղթանակ»:[19]

Աստված գիտի *ձեզ,* և հրավիրում է *ձեզ* ճանաչել *Իրեն:* Աղոթեք Հորը, ուսումնասիրեք սուրբ գրությունները, ջանացեք կատարել Աստծո կամքը, ձգտեք դառնալ Փրկիչի նման և հետևեք առաքինի ուսուցիչներին: Վարվելով այդպես, *դուք* կսկսեք *ճանաչել* Աստծուն և Հիսուս Քրիստոսին և կժառանգեք հավերժական կյանքը: Սա է իմ հրավերը ձեզ, որպես Նրանց կարգված հատուկ վկա: Նրանք ապրում են: Նրանք սիրում են ձեզ: Ես վկայում եմ սա Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հովհաննես 3.16
2. Հովհաննես 17.3
3. Վարդապետություն և Ուխտեր 6.15–16, 22–23
4. Bruce R. McConkie, “The Purifying Power of Gethsemane,” *Ensign,* May 1985, 11; շեշտադրումն ավելացված է:
5. Bruce R. McConkie, “The Purifying Power of Gethsemane,” 9; emphasis added.
6. Հովհաննես 6.38
7. 3 Նեփի 11.11, շեղագիրն ավելացված է
8. Հելաման 10.4
9. 3 Նեփի 27.27
10. Վարդապետություն և Ուխտեր 88.74
11. Վարդապետություն և Ուխտեր 93.1, շեղագիրն ավելացված է
12. Մորոնի 7.48, շեղագիրն ավելացված է
13. Տես similar statements in Bruce C. Hafen, *A Disciple’s Life: The Biography of Neal A. Maxwell* (2002), 19:
14. Մատթեոս 26.39, շեղագիրն ավելացված է
15. Տես Bruce C. Hafen, *A Disciple’s Life,* 15:
16. Հովհաննես 14.6
17. Մատթեոս 19.21
18. Հովհաննես 17.3, շեղագիրն ավելացված է
19. Վարդապետություն և Ուխտեր 128.22

Բենջամին դե Հոյոս
Յոթանասունի Քվորում

Որպեսզի ձեր լույսը չափանիշ լինի բոլոր ազգերի համար

Փրկիչի ավետարանը և Նրա վերականգնված Եկեղեցին մեզ բազում հնարավորություններ են տալիս, որպեսզի մեր լույսը ազգերի համար դառնա մեծ չափանիշի մի մասը:

Տարիներ առաջ, երբ ես ծառայում էի որպես սեմինարիայի ուսուցիչ, լսեցի, թե ինչպես իմ գործընկերներից մեկը խնդրեց իր ուսանողներին խորհել հետևյալ հարցի շուրջ. «Եթե դուք ապրեիք Փրկիչի ժամանակ, ինչո՞ւ եք կարծում, որ կհետևեիք Նրան՝ որպես Նրա աշակերտներից մեկը»: Նրանք եկան այն եզրահանգման, որ նրանք, ովքեր հետևում են Փրկիչին ներկայումս և ջանում են լինել Նրա աշակերտը, հավանաբար կանեին այդ նույնը այն ժամանակ:

Այդ պահից սկսած, ես խորհել եմ այդ հարցի և նրանց եզրահանգման շուրջ: Ես հաճախ եմ մտորում, թե ինչ կզգայի, երբ լսեի, թե ինչպես է Փրկիչն անձամբ ասում հետևյալը Լեռան Քարոզի ժամանակ.

«Դուք աշխարհի լույսն էք. մի քաղաք, որ կենում է սարի վերայ, կարող չէ թաքչուիլ:

Եւ ճրագը չեն վառիլ եւ դնիլ գրուանի տակ, այլ ճրագակալի վերայ, եւ նա լոյս կտալ ամենին՝ որ տան մէջ են։

Այսպէս լուսաւորէ ձեր լոյսը մարդկանց առաջին, որ ձեր բարի գործերը տեսնեն, եւ փառաւորեն ձեր Հօրը որ երկնքումն է»։ (Մատթեոս 5.14–16)։

Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչ կզգայիք՝ լսելով Փրկիչի ձայնը։ Ըստ էության, պատկերացնելու հարկ չկա։ Մեզ համար մշտական փորձառություն է դարձել Փրկիչի ձայնին ականջալուր լինելը, քանի որ երբ մենք լսում ենք Նրա ծառաների ձայնը, դա նույնն է։

1838թ.-ի ուղերձում, որը նման է Լեռան Քարոզին, Տերը հետևյալը հայտարարեց Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով.

«Քանզի այսպես պիտի կոչվի իմ եկեղեցին վերջին օրերին, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի։

Ճշմարիտ ասում եմ ձեզ բոլորիդ. Վեր կացեք և շողացեք, որպեսզի ձեր լույսը չափանիշ լինի բոլոր ազգերի համար» (ՎԿՈ 115.4–5)։

Մեր օրերն այնքան արտասովոր են, որ դրանք նույնիսկ տեսիլքում ցույց են տրվել Եսայիա մարգարեին.նա նույնպես տեսել և մարգարեացել է Հիսուս Քրիստոսի Եկեղեցու այսօրվա Վերականգնման և դրա նպատակի մասին՝ ասելով. «Եւ նա դրօշակ կբարձրացնէ ազգերի համար, եւ կժողովէ Իսրայէլի տարագրեալներին, եւ Յուդայի ցրուեալներին կհաւաքէ երկրի չորս անկիւններիցը» (Եսայիա 11.12)։

Սուրբ գրքերում դրոշակը կամ չափանիշը դրոշն է, որի շուրջ մարդիկ կհավաքվեն մի նպատակի համար։ Հին ժամանակներում պատերազմի ժամանակ զինվորների համար դրոշը ծառայում էր որպես հավաքման կետ։ Այլ կերպ ասած՝ Մորմոնի Գիրքը և Հիսուս Քրիստոսի Վերականգնված Եկեղեցին չափանիշներ են բոլոր ազգերի համար։ (Տես Սուրբ գրությունների Ուղեցույց, «Դրոշ», scriptures.lds.org։)

Անկասկած, այս վերջին օրերի մեծ չափանիշներից մեկն այս

հոյակապ գերագույն համաժողովն է, որտեղ շարունակ քարոզվում է մեր Երկնային Հոր մեծ աշխատանքն ու ծրագիրը՝ «իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39)։

Գերագույն համաժողովների մշտական անցկացումը այն փաստի մեծագույն վկայություններից մեկն է, որ մենք, որպես Վերջին Օրերի Սրբեր, «հավատում ենք այն ամենին, ինչ Աստված հայտնել է, այն ամենին, ինչ Նա այժմ հայտնում է, և հավատում ենք, որ Նա դեռ շատ մեծ ու կարևոր բաներ է հայտնելու Աստծո Արքայության վերաբերյալ» (Հավատո Հանգանակ 1.9)։

Այսպիսով, ի՞նչ է Տերը հայտնել Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի միջոցով, որ մենք պետք է շարունակենք անել, որպեսզի մեր լույսը չափանիշ լինի ազգերի համար։ Որո՞նք են այն կարևոր բաները, որ պիտի արվեն Սիոնի կառուցման և Իսրայելի հավաքման այս լուսավոր պահին։

Տերը միշտ հայտնել է մեզ Իր կամքը «տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղ և մի քիչ այնտեղ» (2 Նեփի 28.30)։ Ուստի, մեզ չպիտի զարմացնեն իրենց պարզ ու կրկնվող բնույթի համար փոքր թվացող բաները, քանի որ Տերն արդեն իսկ խորհուրդ է տվել մեզ, ասելով, որ «օրհնված են նրանք, ովքեր ականջ են դնում իմ ցուցումներին և ունկդրում իմ խորհրդին, քանզի նրանք իմաստություն կստանան. քանզի նրան, ով ընդունում է, ես կտամ ավելին» (2 Նեփի 28.30)։

Ես վկայում եմ, որ սովորելով «տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղ և մի քիչ այնտեղ» և մեր ղեկավարների խորհրդին ականջ դնելով, մենք յուղ կունենանք մեր լապտերներում, որը մեզ հնարավորություն կտա լույս տալ ուրիշներին՝ ինչպես պատվիրել է մեզ Տերը։

Մինչ շատ բաներ կան, որ մենք կարող ենք անել ուրիշների համար լույս և դրոշ լինելու համար, ես կցանկանայի կենտրոնանալ հետևյալ երեք բաների վրա. պահել Հանգստության օրը, արագացնել փրկության աշխատանքը վարագույրի երկու կողմերում և ուսուցանել Փրկիչի ձևով։

Լույսը, որի մասին մենք խոսում ենք, գալիս է նվիրումից, որը մենք ունենք ինչպես Եկեղեցում, այնպես էլ տանը Հանգստյան օրը պահելու հանդեպ. դա այն լույսն է, որը մեծանում է, մինչ մենք անբիծ ենք պահում մեզ աշխարհից. դա

այն լույսն է, որը գալիս է Նրա սուրբ օրը մեր հաղորդությունները մատուցելուց և Բարձրյալին մեր տուրքը մատուցելուց, հենց այս ամենն էլ հնարավոր է դարձնում, որ մենք Նրա Հոգին միշտ մեզ հետ ունենանք: Դա այն լույսն է, որը մեծանում և տեսանելի է դառնում, երբ մենք տուն ենք վերադառնում ներման զգացումով, որի մասին խոսեց Նախագահ Հենրի Բ. Այրինգը անցած հոկտեմբերի գերագույն համաժողովի ժամանակ, երբ ասաց. «Բոլոր օրհնություններից ամենամեծը, անշուշտ, ներման զգացումն է, որը համակում է մեզ, երբ ընդունում ենք հաղորդությունը: Մենք ավելի մեծ սեր ու գնահատանք կզգանք Փրկիչի հանդեպ, ում անսահման զոհաբերությունը հնարավոր դարձրեց, որ մենք մաքրվենք մեղքից» («Հանգստության օրը երախտագիտության օր է” *Լիահոնա,* նոյ. 2016, 100):

Երբ մենք Հանգստության օրը սուրբ ենք պահում և ճաշակում ենք հաղորդությունը, մենք ոչ միայն մաքրվում ենք, այլ նաև մեր լույսն ավելի է պայծառանում:

Մեր լույսը նաև մեծանում է, երբ մենք նվիրագործում և սրբագործում ենք մեր ժամանակը՝ մեր նախնիների անունները գտնելու, նրանց անունները տաճար տանելու և մեր ընտանիքներին ու ուրիշներին այդ նույնի կատարումն ուսուցանելու համար:

Տաճարային և ընտանեկան այս սուրբ աշխատանքը, որը մենք կիսում ենք վարագույրի երկու կողմերում գտնվող Սրբերի հետ, ավելի արագ է առաջ ընթանում, քան երբևէ, մինչ կառուցվում են Տիրոջ տաճարները: Այժմ, երբ տաճարները հատուկ օրակարգ ունեն ընտանեկան խմբերի համար, ովքեր գալիս են իրենց իսկ ընտանեկան անունների քարտերով, ես և կինս սքանչելի փորձառություններ ունեցանք, մինչ ծառայում էինք մեր երեխաների ու թոռների հետ միասին:

Երբ մենք գտնում և տաճար ենք տանում անուններ ու նաև սովորեցնում ենք ուրիշներին, թե ինչպես անել դա, միասին մենք շողում ենք որպես դրոշ կամ չափանիշ:

Տիրոջ ձևով ուսուցանել սովորելը մեկ այլ ուղի է, որով մենք կարող ենք վեր կենալ ու շողալ: Ես ուրախանում եմ յուրաքանչյուրի հետ միասին, ով սովորում է, թե ինչպես ուսուցանել Փրկիչի ձևով: Թույլ տվեք կարդալ ուսուցման նոր ձեռնարկի կազմից. «Ավետարանի յուրաքանչյուր ուսուցչի, յուրաքանչյուր ծնողի, պաշտոնապես կանչված ուսուցչի, տնային և այցելող ուսուցչի, ինչպես նաև Քրիստոսի յուրաքանչյուր հետևորդի նպատակն է՝ սովորեցնել ավետարանի մաքուր վարդապետությունը Հոգով, օգնելով Աստծո զավակներին կառուցել իրենց հավատքն առ Փրկիչը և ավելի նմանվել Նրան» (*Ուսուցանել Փրկչի ձևով* [2016]):

Այժմ, մեր հազարավոր հավատարիմ ուսուցիչները բարձր են պահում լույսը, մինչ սովորում են, թե ինչպես ուսուցանել Փրկիչի ձևով: Այս համատեքստում նոր ուսուցիչների խորհրդի ժողովը ուղի է հանդիսանում վեր կենալու և շողալու, մինչ ուսանողները հավաքվում են Քրիստոսի վարդապետության չափանիշի շուրջ, քանի որ «Փրկիչի ձևով ուսուցանելու բանալին ապրելն է այնպես, ինչպես Փրկիչն էր ապրում» (*Ուսուցանել Փրկիչի ձևով,* 4):

Մինչ մենք բոլորս ուսուցանում և սովորում ենք Նրա ձևով և ավելի ենք նմանվում Նրան, մեր լույսն ավելի պայծառ է շողում և չենք թաքցնում այն և դառնում է չափանիշ նրանց համար, ովքեր փնտրում են Փրկիչի լույսը:

Իմ թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, պետք չէ, որ մենք թաքցնենք մեր լույսը: Մեր Փրկիչը պատվիրել է մեզ, որ թույլ տանք մեր լույսը շողա, ինչպես սարի վրա գտնվող մի քաղաք կամ ինչպես ճրագակալի վրա դրված ճրագ: Եթե մենք դա անենք, մենք կփառաբանենք մեր Երկնային Հորը: Փրկիչի ավետարանը և Նրա վերականգնված Եկեղեցին մեզ բազում հնարավորություններ են տալիս, որպեսզի մեր լույսը լինի ազգերի համար մեծ չափանիշի մի մասը:

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսն այն լույսն է, որը մենք պետք է արտացոլենք, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Քվենթին Լ. Քուք
Տասներկու Առաքյալների Քվորում

Հավատի հիմքերը

Ես խնդրում եմ, որ մենք զոհաբերություն կատարենք և խոնարհություն ունենանք, ինչն անհրաժեշտ է Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատի հիմքերի ամրացման համար:

Շոյակապ գերագույն համաժողով է: Մենք իսկապես ուսուցանվեցինք: Գերագույն համաժողովն ունի մի շատ կարևոր նպատակ. կառուցել հավատը Հայր Աստծո և մեր Փրկիչ Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ:

Իմ դատողությունները վերաբերում են այդ հավատի հիմքերին:

Անձնական հավատի հիմքերը, ինչպես արժեքավոր շատ գործեր, սովորաբար դանդաղ են կառուցվում. մեկական շերտ փորձություն, դժվարություն, անհաջողություն և հաջողություն: Ամենահաճելի ֆիզիկական փորձառությունը մանկան առաջին քայլերն են: Հաճելի է դրան նայելը: Նրա դեմքի թանկագին արտահայտությունը, որը վճռականության, ուրախության, զարմանքի և ձեռքբերման համակցումն է, հիրավի շատ կարևոր իրադարձություն է:

Իմ ընտանիքում կա նման բնույթի մի իրադարձություն, որն առանձնանում է մյուսներից: Երբ մեր կրտսեր որդին մոտ չորս տարեկան էր, մի օր տուն մտավ և հրճվանքով ու մեծ հպարտությամբ հայտարարեց ընտանիքին. «Հիմա ես կարող եմ ամեն բան անել: Ես կարող եմ կապել, ես կարող եմ քշել, ես կարող եմ փակել»: Մենք հասկացանք, որ նա մեզ ասում էր, որ կարող է կապել իր կոշիկների քուղերը, կարող է վարել մեծ եռանիվ հեծանիվը և փակել իր վերարկուի ճարմանդը»: Մենք բոլորս ծիծաղեցինք, բայց հասկացանք, որ նրա համար դրանք մեծ ձեռքբերումներ էին: Նա կարծում էր, որ արդեն մեծացել ու դարձել է լրիվ կայացած մարդ:

Ֆիզիկական, մտավոր և հոգևոր զարգացումները շատ ընդհանուր բաներ ունեն: Ֆիզիկական զարգացումը բավականին հեշտ է տեսնել: Մենք սկսում ենք մանկական քայլերով, առաջադիմում ամեն օր, ամեն տարի և, աճելով ու զարգանալով, ձեռք բերում մեր վերջնական ֆիզիկական վիճակը: Զարգացումը տարբեր է յուրաքանչյուր մարդու համար:

Երբ մենք դիտում ենք որևէ հրաշալի սպորտային կամ երաժշտական կատարում, հաճախ ասում ենք, որ այդ մարդը շատ շնորհալի է, ինչը սովորաբար ճիշտ է: Բայց կատարումը հիմնված է տարիների պատրաստության և վարժվածության վրա: Հայտնի գրող Մալկոլմ Գլադուելը սա անվանել է 10000 ժամի կանոն: Հետազոտողները սահմանել են, որ պատրաստվածության այսքան ժամաքանակ է անհրաժեշտ սպորտում, երաժշտական կատարման, գիտական փորձառության, մասնագիտական աշխատանքի հմտության, բժշկական կամ իրավական փորձագիտության և այլ ոլորտներում: Այս հետազոտող-փորձագետներից մեկը պնդում է, որ «տասը հազար ժամվա պատրաստվածություն է պահանջվում, որպեսզի մարդը հասնի վարպետության մակարդակի և դառնա

լավագույն մասնագետներից մեկն աշխարհում. սա վերաբերում է բոլոր ոլորտներին»:[1]

Մարդկանց մեծամասնությունը հասկանում է, որ այդպիսի ֆիզիկական և մտավոր կատարելության հասնելու համար անհրաժեշտ է այսպիսի պատրաստություն ու վարժվածություն:

Ցավոք, ավելի ու ավելի աշխարհիկ դարձող մեր աշխարհում ավելի քիչ է շեշտադրվում հոգևոր աճի այն քանակը, որն անհրաժեշտ է ավելի Քրիստոսանման դառնալու և այնպիսի հիմքեր ստեղծելու համար, որոնք կհանգեցնեն հաստատուն հավատի: Մենք հակված ենք շեշտադրելու բարձր հոգևոր հասկացողության պահերը միայն: Սրանք անգին օրինակներ են, երբ մենք գիտենք, որ Սուրբ Հոգին մեր սրտերում և մտքերում վկայել է հատուկ հոգևոր ըմբռնման մասին: Մենք հրճվում ենք այդ պահերին, դրանք չպիտի նվազեն ոչ մի դեպքում: Բայց հաստատուն հավատի և Հոգու մշտական ընկերակցության համար չկա անհատական կրոնական պահպանման այնպիսի փոխարինող, որը համեմատելի կլինի ֆիզիկական և մտավոր զարգացման հետ: Սակայն մենք պիտի կառուցենք այն փորձառությունների վրա, որոնք երբեմն նմանվում են մանկան սկզբնական քայլերին: Մենք կատարում ենք դա հաղորդության ժողովների հանդեպ սրբազան հանձնառությամբ, սուրբ գրությունների ուսումնասիրությամբ, աղոթքով և մեր կոչումներում ծառայելով: Վերջերս 13 զավակ ունեցող մի հոր մահախոսականում ասվում էր, որ «նա հավատարմորեն աղոթում և ուսումնասիրում էր սուրբ գրություններն ամեն օր, ինչն էլ խորապես ազդել էր նրա զավակների վրա, տալով նրանց անսասան հավատի հիմք Հիսուս Քրիստոսի հանդեպ»:[2]

Երբ 15 տարեկան էի, ես մի հիմնարար փորձառություն ունեցա: Իմ հավատարիմ մայրիկը արիաբար փորձում էր օգնել ինձ հավատի հիմքեր ստեղծել իմ կյանքում: Ես մասնակցում էի հաղորդության ժողովներին, Երեխաների խմբին, ապա Երիտասարդ տղամարդկանց դասերին և սեմինարիային: Ես կարդացել էի Մորմոնի Գիրքը և միշտ աղոթում էի անհատապես: Այդ ժամանակ իմ կյանքում մի կարևոր ընտանեկան իրադարձություն տեղի ունեցավ, երբ իմ սիրելի ավագ եղբայրը քննարկում էր հնարավոր միսիայի կանչը: Իմ հրաշալի հայրը, ով Եկեղեցու ոչ ակտիվ անդամ էր, ցանկանում էր, որ եղբայրս շարունակեր իր ուսումը և չծառայեր միսիայում: Սա դարձել էր հակառակության պատճառ:

Եղբորս հետ, ով ինձանից հինգ տարով մեծ էր, մի ուշագրավ քննարկումից հետո մենք եզրակացրինք, որ միսիայում ծառայելու նրա որոշումը կախված էր երեք հարցերից. (1) Արդյո՞ք Հիսուս Քրիստոսը աստվածային էություն ունի: (2) Արդյո՞ք Մորմոնի Գիրքը ճիշտ է: (3) Արդյո՞ք Ջոզեֆ Սմիթը Վերականգնման մարգարե էր:

Երբ այդ երեկո ես անկեղծորեն աղոթեցի, Հոգին հաստատեց այս երեք հարցերի ճշմարտացիությունը: Ես նաև հասկացա, որ գրեթե բոլոր որոշումները, որոնք ես կկայացնեմ իմ հետագա կյանքում, կհիմնվեն այդ երեք հարցերի պատասխանների վրա: Ես հասկացա, որ

հատկապես կարևոր է հավատը Հիսուս Քրիստոսի հանդեպ: Ետ նայելով իմ կյանքի վաղ շրջանին, ես հասկանում եմ, որ հիմնականում իմ մայրիկի շնորհիվ հիմքերը պատրաստ էին, որպեսզի ես այդ երեկո ընդունեի հոգևոր հաստատումը: Իմ եղբայրը, ով արդեն ուներ վկայություն, որոշում կայացրեց ծառայել միսիայում և, ի վերջո, ստացավ մեր հոր աջակցությունը:

Հոգևոր առաջնորդությունը ստացվում է, երբ կարիքը կա, ստացվում է Տիրոջ ժամանակին և Նրա կամքին համաձայն:[3] «Մորմոնի Գիրքը: Եվս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին» գիրքը դրա գերազանց օրինակն է: Վերջերս ես զննում էի Մորմոնի Գրքի առաջին հրատարակությունը: Ջոզեֆ Սմիթն ավարտեց թարգմանությունը, երբ 23 տարեկան էր: Մենք որոշ բաներ գիտենք այն գործընթացի և գործիքների մասին, որոնք նա օգտագործել է այդ թարգմանության մեջ: Այդ առաջին 1830 թվականի տպագրության մեջ Ջոզեֆը ներառել է կարճ նախաբան և պարզ ու հստակ հայտարարել է, որ այն թարգմանվել է «Աստծո զորությամբ ու պարգևով»:[4] Ինչ վերաբերում է թարգմանության օժանդակ նյութերին՝ Ուրիմին ու Թումիմին՝ տեսանողի քարերին, արդյո՞ք դրանք կարևոր էին, թե՞ դրանք նման էին հեծանիվի ուսուցողական անիվներին, մինչև Ջոզեֆը կկարողանար հավատ գործադրել, որն անհրաժեշտ էր ավելի ուղիղ հայտնություն ստանալու համար:[5]

Ինչպես փորձ և մշտական ջանքեր են պահանջվում ֆիզիկական ու մտավոր կարողություն ձեռք բերելու համար, հոգևոր հարցերի դեպքում ևս, ջանքեր են պահանջվում: Հիշեք, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթն ընդունեց նույն այցելուին՝ Մորոնիին, չորս անգամ նույն ուղերձով, որպեսզի պատրաստվեր ընդունել թիթեղները: Ես կարծում եմ, որ ամեն շաբաթ մասնակցությունը հաղորդության ժողովներին ունի հոգևոր արդյունքներ, որոնք մենք լիովին չենք հասկանում: Կանոնավոր խորհելով սուրբ գրությունների

շուրջ, դրանք երբեմն կարդալու փոխարեն, մակերեսային հասկացողությունը կարող է փոխարինվել մեր հավատի վսեմ, կյանք փոխող կատարելագործմամբ:

Հավատը զորության սկզբունք է: Թույլ տվեք պարզաբանել օրինակով: Երբ ես երիտասարդ միսիոներ էի, միսիայի մի հրաշալի նախագահ[6] խորհիմաստ ձևով ինձ ներկայացրեց մի սուրբ գրային հատված Ղուկասի 8-րդ գլխից: Հատվածը պատմում է մի կնոջ մասին, ով 12 տարի արյան հետ կապված խնդիր էր ունեցել և իր ողջ ունեցածը ծախսել էր բժիշկների վրա, ովքեր չէին կարողացել բուժել նրան: Սա իմ սիրելի սուրբ գրային հատվածներից մեկն է առ այսօր:

Դուք կհիշեք, որ նա հավատում էր, որ եթե ինքը միայն կարողանար դիպչել Փրկիչի հանդերձի ծայրին, ապա կբուժվեր: Երբ նա այդպես վարվեց, անմիջապես բուժվեց: Փրկիչը, ով քայլում էր Իր առաքյալների հետ, ասաց. «Ո՞վ էր որ ինձ դիպավ»:

Պետրոսը պատասխանեց, որ նրանք բոլորը քայլում են միասին, սեղմում են և նեղում Նրան:

«Եւ Յիսուսը ասեց. Մէկը դպաւ ինձ. որովհետեւ ես իմացայ՝ որ զօրութիւն դուրս եկաւ ինձանից»:

«Ուժ» բառարմատը հեշտությամբ կարող է թարգմանվել որպես՝ «զորություն»: Իսպաներենով և պորտուգալերենով այն թարգմանվում է «զորություն»: Քանի որ Փրկիչը չէր տեսել կնոջը, Նա չէր կենտրոնացել նրա կարիքի վրա: Բայց կնոջ հավատն այնպիսին էր, որ հանդերձի փեշին դիպչելով, օգտագործեց Աստծո Որդու բժշկող զորությունը:

Ինչպես Փրկիչն ասաց նրան. «Քաջացիր, դուստր, քո հաւատքը բժշկեց քեզ, գնա խաղաղութիւնով»:[7]

Այս պատմության շուրջ ես խորհել եմ իմ ողջ հասուն կյանքում: Ես հասկացել եմ, որ մեր անձնական աղոթքներն ու աղերսները՝ ուղղված մեր սիրելի Երկնային Հորը Հիսուս Քրիստոսի անունով, կարող են այնպիսի օրհնություններ բերել մեր

կյանք, որոնք մենք անկարող ենք ըմբռնել: Հավատի հիմքերը, հավատի այն տեսակը, որը դրսևորվեց այս կնոջ կողմից, պիտի լինի մեր սրտերի մեծագույն բաղձանքը:

Սակայն հավատի սկզբնական հիմքերը, նույնիսկ հոգևոր հաստատումով, չեն երաշխավորում, որ մենք չենք բախվի դժվարությունների: Դարձը դեպի ավետարան չի նշանակում, որ մեր բոլոր խնդիրները կլուծվեն:

Եկեղեցու վաղ պատմությունը և Վարդապետություն և Ուխտերում գրանցված հայտնությունները պարունակում են հավատի հիմքերի հիմնադրման գերազանց օրինակներ և առնչվում են անկանխատեսելի փոփոխությունների ու դժվարությունների հետ, որոնց բախվում են բոլորը:

Կիրթլենդի տաճարի ավարտումը հիմնարար էր ողջ Եկեղեցու համար: Այն ուղեկցվում էր հոգևոր զեղումներով, վարդապետական հայտնություններով և Եկեղեցու հիմնադրումը շարունակելու համար անհրաժեշտ բանալիների վերականգնումով: Ինչպես Պենտեկոստեի օրվա հին Առաքյալները, շատ անդամներ սքանչելի հոգևոր փորձառություններ ունեցան Կիրթլենդի Տաճարի նվիրագործման հետ կապված:[8] Բայց, ինչպես մեր սեփական կյանքում, սա չէր նշանակում, որ նրանք ապագայում չէին առնչվի մարտահրավերների ու դժվարությունների հետ: Այս վաղ շրջանի անդամները շատ քիչ բան գիտեին այն մասին, թե ինչ դժվարությունների կբախվեին իրենք Միացյալ Նահանգների ֆինանսական ճգնաժամի՝ 1837թ.-ի խուճապի պատճառով, որը կփորձարկեր հենց նրանց հոգիները:[9]

Այս ֆինանսական ճգնաժամի դժվարությունների հետ առնչվող մեկ օրինակ կապված է Երեց Փարլի Պ. Պրատի հետ, ով Վերականգնման առաջնորդներից էր: Նա Տասներկու Առաքյալների Քվորումի իսկական անդամ էր: 1837 թվականի սկզբում նրա սիրելի կինը՝ Թանքֆուլը, մահացավ նրանց առաջին երեխայի ծննդաբերության ժամանակ: Փարլին և Թանքֆուլը ամուսնացած էին մոտ 10 տարի և կնոջ մահը հուսահատության հասցրեց նրան:

Մի քանի ամիս անց Երեց Պրատը հայտնվեց Եկեղեցու համար ամենադժվարին ժամանակներից մեկում: Ազգային ճգնաժամի ընթացքում տեղական տնտեսական խնդիրները, ներառյալ հողի առք ու վաճառքի հետ կապված խնդիրները և জոզեֆ Սմիթի ու Եկեղեցու այլ անդամների կողմից հիմնված ֆինանսական հաստատության դժվարությունները, Կիրթլենդում անհամաձայնություն և հակառակություն ստեղծեցին: Եկեղեցու ղեկավարները միշտ չէ, որ իմաստուն աշխարհիկ որոշումներ էին կայացնում իրենց սեփական կյանքի համար: Փարլին նշանակալի ֆինանսական կորուստներ կրեց և որոշ ժամանակ դժգոհ էր Մարգարե জոզեֆից:[10] Նա խիստ քննադատական նամակ գրեց জոզեֆին և ի ընդդիմություն նրան ելույթ ունեցավ ամբիոնից: Միաժամանակ, Փարլին ասաց, որ ինքը շարունակում է հավատալ Մորմոնի Գրքին ու Վարդապետություն և Ուխտերին:[11]

Երեց Պրատը կորցրել էր իր կնոջը, իր հողը և իր տունը: Առանց জոզեֆին նախազգուշացնելու, Փարլին մեկնեց Միսսուրի: Ճանապարհին նա անսպասելի հանդիպեց Առաքյալ Թոմաս Բ. Մարշին և Դեյվիդ Փաթենին, ովքեր վերադառնում էին Կիրթլենդ: Նրանք զգում էին, որ անհրաժեշտ էր վերականգնել ներդաշնակությունը Քվորումում, ուստի համոզեցին Փարլիին վերադառնալ իրենց հետ: Նա գիտակցեց, որ ոչ-ոք ավելի շատ չէր կորցրել, քան জոզեֆ Սմիթի ընտանիքը:

Փարլին գտավ Մարգարեին, արտասվեց և խոստովանեց, որ ինքը սխալ էր վարվել: Իր կնոջ՝ Թանքֆուլի մահվանը հաջորդած ամիսներին Փարլին բացասական ազդեցության տակ էր ընկել և վախն ու հուսահատությունը համակել էին նրան:[12] জոզեֆը, ով գիտեր, թե ինչ էր նշանակում պայքարել ընդդիմության և գայթակղության դեմ, «շնորհեց» Փարլիին, աղոթելով նրա համար և օրհնելով նրան:[13] Փարլին և մյուսները, ովքեր հավատարիմ մնացին, օգուտ քաղեցին Կիրթլենդի մարտահրավերներից: Նրանց իմաստությունն աճեց, նրանք դարձան ավելի վեհանձն ու ողջախոհ: Այս փորձառությունը դարձավ նրանց հավատի հիմքերի մասը:

Անհաջողությունը չպիտի դիտարկվի որպես շնորհազրկություն Տիրոջ կողմից կամ հեռացում Նրա օրհնություններից: Հակադրությունը բոլոր բաներում զտիչի կրակի մասն է, որպեսզի պատրաստի մեզ հավերժական սելեստիալ ճակատագրին:[14] Երբ Մարգարե জոզեֆը Լիբերթի բանտում էր, Նրան ուղղված Տիրոջ խոսքերը նկարագրում էին դժվարությունների բոլոր ձևերը, ներառյալ՝ ձախորդություններն ու կեղծ մեղադրանքները, ապա եզրակացնում.

«Եթե դժոխքի ծնոտները լայն բացեն երախը, որպեսզի քեզ կուլ տան, իմացիր, որդի՛ս, որ այս բոլոր բաները փորձառություն կտան քեզ և կլինեն քո օգտի համար»:

«Մարդու Որդին իջել է այդ ամենից ցած: Մի՞թե դու ավելի մեծ ես, քան նա»:[15]

জոզեֆ Սմիթին ուղղված այս հրահանգի մեջ Տերը նաև հստակեցրել է, որ նրա օրերը հայտնի էին և չէին կրճատվի: Տերը եզրափակել է. «Մի վախեցիր նրանից, ինչ կարող է անել մարդը, քանզի Աստված քեզ հետ կլինի հավիտյանս հավիտենից»[16]:

Այդ դեպքում, որո՞նք են հավատի օրհնությունները: Ի՞նչ է անում հավատը: Ցուցակը համարյա անվերջ է.

Մեր մեղքերը կարող են մոռացվել Քրիստոսի հանդեպ հավատի շնորհիվ:[17]

Որքան մեծ է մեր հավատը, այնքան ամուր է մեր կապը Սուրբ Հոգու հետ:[18]

Փրկությունը գալիս է Քրիստոսի հանդեպ ունեցած հավատի միջոցով:[19]

Մենք զորություն ենք ստանում՝ համաձայն Քրիստոսի հանդեպ ունեցած մեր հավատի:[20]

Ոչ-ոք չի մտնում նրա հանգիստը, բացի նրանցից, ովքեր լվացել են իրենց հանդերձները Քրիստոսի արյունով՝ իրենց հավատի շնորհիվ:[21]

Աղոթքների պատասխանը տրվում է համաձայն հավատի:[22]

Երբ մարդիկ հավատ չունեն, Աստված չի կարող հրաշքներ գործել նրանց համար:[23]

Ի վերջո, մեր հավատը Հիսուս Քրիստոսի հանդեպ անհրաժեշտ հիմքն է մեր հավերժական փրկության և վեհացման համար: Ինչպես Հելամանն էր ուսուցանում իր որդիներին. «Եվ, այժմ, իմ որդինե՛ր, հիշեք, հիշեք, որ դա մեր Քավչի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը . . . , որը հաստատուն հիմք է, հիմք, որի վրա, եթե մարդիկ կառուցեն, նրանք չեն ընկնի»:[24]

Ես երախտապարտ եմ հավատի հիմքերի ամրացման համար, որը մենք ստացանք այս համաժողովում: Ես խնդրում եմ, որ մենք զոհաբերություն կատարենք և ունենանք խոնարհություն, ինչն անհրաժեշտ է Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատի հիմքերի ամրացման համար: Նրա մասին ես բերում եմ իմ ամուր վկայությունը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Malcolm Gladwell, *Outliers: The Story of Success* (2008), 40. He is quoting neurologist Daniel Levitin:
2. Բրայանթ Հինքլի Վոդսուորթի մահախոսականը, *Deseret News,* Jan. 15, 2017, legacy.com/obituaries/deseretnews:
3. Տես2 Նեփի 28.30: Մենք միանգամից չենք ստանում տվյալ խնդրին վերաբերող բոլոր գիտելիքները կամ դրան առնչվող բոլոր սկզբունքները: Դրանք գալիս են, երբ անհրաժեշտ են՝ տող առ տող, ցուցում առ ցուցում:
4. 1830թ.-ի Մորմոնի Գրքի առաջին հրատարակությունը հանդիսանում է Եկեղեցու Պատմության Բաժնի սեփականությունը: Մորմոնի Գրքի 2013թ.-ի հրատարակություն, նմանատիպ տեղեկությունը ներառված է երկրորդ "About this edition» պարբերության մեջ, "A Brief Explanation about the Book of Mormon," խորագրի տակ և նախորդում է «Նեփիի առաջին գիրքը» բաժնին:
5. Օրսոն Փրատը հիշում է, որ ինքը ներկա է եղել շատ առիթների, երբ Ջոզեֆ Սմիթը թարգմանում էր Նոր Կտակարանը և հարցրել է, թե ինչու վերջինս չէր օգտագործում որևէ գործիք այդ գործընթացում: «Ջոզեֆը, կարծես, կարդալով իմ մտքերը, վեր նայեց և բացատրեց, որ Տերը տվել էր իրեն Ուրիմն ու Թումիմը, երբ ինքն անփորձ էր Հոգու ներշնչանքի մեջ: Բայց այժմ նա այնպիսի առաջխաղացում ուներ, որ հասկանում էր Հոգու ներգործությունը և այդ գործիքի աջակցության կարիքը չուներ»: ("Two Days' Meeting at Brigham City, June 27 and 28, 1874," *Millennial Star,* Aug. 11, 1874, 499; see also Richard E. Turley Jr., Robin S. Jensen, and Mark Ashurst-McGee, "Joseph the Seer," *Liahona,* Oct. 2015, 10–17)
6. Միսիայի Նախագահը Երեց Մարիոն Դ. Հենքսն է, ով նաև Բարձրագույն Իշխանավոր էր:
7. Տես Դուկաս 8.43–48
8. Տես Գործք 2
9. Տես Մոսիա 2.36–37, տես նաև Հենրի Բ. Այրինգ, «Հոգևոր պատրաստվածություն. վաղ սկսիր և կայուն եղիր», *Լիահոնա,* Nov. 2005: «Ուստի, կյանքի մեծագույն փորձությունն է՝ արդյոք մենք ականջալուր կլինենք և կհնազանդվենք Աստծո պատվիրաններին կյանքի փոթորիկների ժամանակ: Կարևորը ոչ թե փոթորիկների ժամանակ տոկալն է, այլ ճիշտը ընտրել, մինչ դրանք մոլեգնում են: Եվ կյանքի ողբերգությունը այս փորձառության ձախողումն է և այնպիսի ձախողումը, որը մեզ իրավունք կտա փառքով վերադառնալ մեր երկնային տունը»:
10. Տես Terryl L. Givens and Matthew J. Grow, *Parley P. Pratt: The Apostle Paul of Mormonism* (2011), 91–98; volume introduction and introduction to part 5, *The Joseph Smith Papers, Documents, Volume 5: October 1835–January 1838* ed. Brent M. Rogers and others (2017), xxviii–xxxi, 285–93:
11. Տես "Letter from Parley P. Pratt, 23 May 1837," in *The Joseph Smith Papers, Documents, Volume 5: October 1835–January 1838* 386–91:
12. Տես "History of John Taylor by Himself," 15, in Histories of the Twelve, 1856–1858, 1861, Church History Library; Givens and Grow, *Parley P. Pratt,* 101–2:
13. Տես *The Autobiography of Parley P. Pratt,* ed. Parley P. Pratt Jr. (1874), 183–84:
14. Տես 2 Նեփի 2.11
15. Վարդապետություն և Ուխտեր 122.7–8
16. Վարդապետություն և Ուխտեր 122.9
17. Տես Ենովս 1.5–8
18. Տես Հարամ 1.4
19. Տես Մորոնի 7.26, 38
20. Տես Ալմա 14.26
21. Տես 3 Նեփի 27.19
22. Տես Մորոնի 7.26
23. Տես Եթեր 12.12
24. Հելաման 5.12

Համաժողովը դարձնել մեր կյանքի մասը

Այս վարժությունները և հարցերը կարող եք օգտագործել ընտանեկան կամ անհատապես ուսումնասիրության համար։

Երեխաների համար

- Էջ 86. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հրավիրել է մեզ կարդալ Մորմոնի Գիրքը ամեն օր, խոստանալով. «Եվ Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ»։ Ի լրումն ձեր ինքնուրույն ուսումնասիրությանը, կարող եք սովորություն դարձնել ամեն օր ձեր ընտանիքի հետ ուսումնասիրել Մորմոնի Գիրքը։ Կարող եք նաև բեմադրել տեսարաններ կամ խաղալ խաղեր, որպեսզի օգնեք հիշել կարևոր հատվածներ և պատմություններ։ Այցելեք friend.lds.org կայքը և 2016թ.-ի *Լիահոնա* ամսագրերում փնտրեք Մորմոնի Գրքի պատմությունների շարքը, ընթերցանության աղյուսակներ և այլն։
- Էջ 117. Երեց Գարի Ի. Սթիվենսոնը պատմում է, թե իր հայրն ինչպես լսեց Սուրբ Հոգուն և փրկեց նրան օձից։ Հարցրեք ձեր ծնողներին, արդյոք կարող եք ընտանիքով քննարկել այս հարցը. «Ինչպե՞ս է Սուրբ Հոգին օգնում ձեզ»։ Պատմեք այն ժամանակների մասին, երբ Սուրբ Հոգին զգուշացրել է, սփոփել է և վկայություն է բերել ձեզ։ Կարող եք նաև գրի առնել դրանք և գիրք կազմել։
- Էջ 87. Քույր Ջոյ Դ. Ջոնսն ուսուցանում է, որ դուք կարող եք պատրաստվել սուրբ ուխտեր կնքել, այժմ սովորելով պահել խոստումները։ Նպատակ դրեք և խոստացեք հետևել դրան։ Խնդրեք ձեր ընկերոջը ստուգել ձեզ և համոզվեք, որ դուք պահում եք ձեր խոստումը։
- Էջ 90. Երեց Յուն Հվան Չոյը կիսվել է իր հոր տված մի խորհրդով. «Մի՛ նայիր շուրջդ, նայիր վե՛ր»։ Երբեմն մենք շեղվում ենք և մոռանում ենք կենտրոնանալ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի վրա։ Ուստի հիշեցրեք ինքներդ ձեզ՝ վերև նայել։ Կարող եք Հիսուս Քրիստոսի նկարը կախել ձեր սենյակում։ Դուրս գնացեք և նայեք երկնքին։ Ամեն օր մի հանգիստ պահի մտածեք Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին և զգացեք Հոգին։

Երիտասարդների համար

- Էջ 93 և 117. Հարցրե՞լ եք ինքներդ ձեզ. Ինչպե՞ս կարող եմ Սուրբ Հոգին միշտ ինձ հետ ունենալ։ Ինչպե՞ս կարող եմ ճանաչել Սուրբ Հոգուն։ Ինչպե՞ս է Սուրբ Հոգին օգնում ինձ։ Երեցներ Ռոնալդ Ա. Ռազբենդը և Գարի Ի. Սթիվենսոնը պատասխանեցին այս և շատ ուրիշ հարցերի։ «Մենք սուրբ պարտականություն ունենք սովորելու ճանաչել Նրա ազդեցությունը մեր կյանքում և արձագանքելու», - ասել է Երեց Ռազբենդը։ Ինչպե՞ս կարող եք իրականացնել այդ պարտականությունը։
- Էջ 33. Երեց Ուլիսես Սոարեսը մեջբերել է միացյալ ժամի թեմայի սուրբ գրությունը. «Հաւատքով խնդրէ առանց երկմտելու, որովհետև երկմտողը նման է ծովի հողմակոծուած և տատանուած ալիքին» (Հակոբոս 1.6)։ Ինչպե՞ս եք դուք հեռու մնում տատանվելուց։ Սկսեք, ամրացնելով ձեր հավատը Հիսուս Քրիստոսի հանդեպ։ Ավելի շատ սովորեք Նրա մասին։ Հիշեք այն ժամանակները, երբ զգացել եք Նրա սերն ու խաղաղությունը։
- Էջ 86 և 9. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հրավիրել է մեզ. «Եթե դուք չեք կարդում Մորմոնի Գիրքն ամեն օր, խնդրում եմ կարդացեք»։ Իսկ Քույր Քերոլ Ֆ. Մակքոնկին հարցրել է. «Արդյո՞ք մենք մի կողմ ենք դնում հեռախոսը, երբեք չվերջացող անելիքների ցուցակը և աշխարհիկ հոգսերը։ Աղոթե՛ք, ուսումնասիրե՛ք և լսելով Աստծո խոսքը, մեր հոգիները հրավիրեք Նրա մաքրագործող ու բժշկող սերը»։ Ամեն օր ժամանակ հատկացրեք Մորմոնի Գրքի ընթերցանությանը և ձեր օրակարգում կամ հեռախոսի մեջ հիշեցում տեղադրեք։

Չափահաս երիտասարդների համար

- Էջ 62. Ի՞նչ նպատակներ ունեք ձեր կյանքի համար։ Նպատակներ մասնագիտական կարիերայի, ընտանիքի, նույնիսկ սպորտի և հոբիների համար, բայց «մեր

մեծագույն և կարևորագույն նպատակները պիտի համընկնեն Երկնային Հոր հավերժական ծրագրի հետ», - ուսուցանել է Երեց Մ. Ռասսել Բալլարդը: Որքանո՞վ են ձեր ծրագրերը համընկնում ձեզ համար նախատեսած Երկնային Հոր ծրագրի հետ: Ինչպե՞ս կարող եք ավելի շատ կենտրոնանալ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ հավերժ ապրելու նպատակի վրա:

- էջ 39. Այս տարվա սկզբում Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հրավիրեց չափահաս երիտասարդներին «ամեն շաբաթ [իրենց] ժամանակի մի մասը տրամադրել ուսումնասիրելուն *այն ամենը,* ինչ Հիսուսն ասել կամ արել է, ինչպես գրանցված է [կանոնիկ գրքերում]» («Մարգարեներ, ղեկավարություն և Աստվածային օրենք» [համաշխարհային հոգևոր հավաք չափահաս երիտասարդների համար, հունվարի 8, 2017], broadcasts.lds.org): Նա կրկնեց այս հրավերը գերագույն համաժողովի ժամանակ՝ որպես չորս հիմնական տարրերից մեկը Փրկիչի զորությունը մեր կյանք հրավիրելու գործում: Ուսումնասիրեք Նախագահ Նելսոնի ելույթը՝ իմանալու, թե ինչպես կարող եք ձեռք բերել «անհրաժեշտ զորությունը, որպեսզի դիմակայեք ներկայիս խոչընդոտներին, բեռներին և գայթակղություններին»:
- էջ 100 և 26. Ցանկանու՞մ եք ունենալ ձեր կյանքի ճանապարհի քարտեզը: Երեց Դալլին Հ. Օուքսն ուսուցանել է. «Քանի որ մենք ունենք ճշմարտությունը Աստվածագլխի և Նրանց հետ մեր հարաբերության, կյանքի նպատակի, մեր հավերժական ճակատագրի բնույթի մասին, մենք ունենք լավագույն ճանապարհի քարտեզը և հավաստիացում՝ այս մահկանացու կյանքում մեր ուղևորության համար»: Ե՛վ Երեց Օուքսը, և՛ Երեց Երեց Վեթերֆորդ Թ. Քլեյթոնն ուսուցանեցին, որ փրկության ծրագրի մասին գիտելիքը կարող է օգնել դիմակայել մեր ժամանակների մարտահրավերներին: Ուսումնասիրեք նրանց ուղերձները և հարցրեք Երկնային Հորը, թե հավերժական ճշմարտություններն ինչպե՞ս կարող են ապահովել ձեր կյանքի ճանապարհի քարտեզը:
- էջ 104. Վախը կարող է առաջ մղել, բայց Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆն ուսուցանել է, որ վախը «երբեք չի կարող դարձնել մեզ այն մարդը, ով սիրում է այն ամենը, ինչն արդար է և ցանկանում է հնազանդվել Երկնային Հորը»: Ինչպե՞ս կարող է Քրիստոսի մաքուր սերը լինել ձեր վախերի «աստվածայնորեն նշանակված հակաթույնը»:

Մեծահասակների համար

- էջ 86. Երբ մենք ամեն օր աղոթքով ուսումնասիրենք Մորմոնի Գիրքը և խորհենք դրա շուրջ, մենք կկարողանանք լսել Հոգու ձայնը, կդիմակայենք գայթակղություններին, կհաղթահարենք կասկածն ու վախը և երկնային օգնություն կստանանք մեր կյանքում»: Հատապես և ընտանիքով նպատակ դրեք՝ ամեն օր կարդալ Մորմոնի Գիրքը:
- էջ 39. Մասնակցեք այն մարտահրավերին, որը Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը նետեց չափահաս երիտասարդներին (տես վերևում «Չափահաս երիտասարդների համար»): Ինչպե՞ս կարող եք հարմարեցնել այս մարտահրավերը ձեզ և ձեր ընտանիքին: Քննարկեք օրհնությունները, որոնք գալիս են Փրկիչի մասին ավելի շատ սովորելու արդյունքում:
- էջ 93 և 117. Երբ կարդաք Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդի և Երեց Գարի Ի. Սթիվենսոնի ելույթները, ուղիներ փնտրեք, որոնցով Հոգին կարող է միշտ ձեզ հետ լինել և ձեզ օգնել: Փնտրեք ուղիներ Նրա ազդեցությունը ձեր կյանքում մեծացնելու համար:
- էջ 39 և 62. Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը և Երեց Մ. Ռասսել Բալլարդը խրախուսում են անդամներին ուսումնասիրել «Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը» փաստաթուղթը (տես ամսագրի շապիկի դարձերեսին): Երեց Բալլարդն ասել է. «Մի օրինակ դրեք այնտեղ, որտեղ կարող եք միշտ տեսնել, այն և ժամանակ տրամադրեք վերանայելու յուրաքանչյուր պնդումը, որ կգտնեք Քրիստոսի մասին այս ոգեշնչված վկայության մեջ»: Ընտանիքով կարդացեք «Կենդանի Քրիստոսը» փաստաթուղթը և քննարկեք ձեր սովորածը:
- էջ 127 և 97. Երեց Քվենթին Լ. Քուքն ուսուցանել է, որ մեր հավատի հիմքերը «դանդաղ են կառուցվում. մեկական շերտ փորձություն, դժվարություն, անհաջողություն և հաջողություն»: Երեց Լ. Ուիթնի Քլեյթոնն ասել է. «Հավատի փոքրիկ ամենօրյա սովորությունների ճիշտ դրսևորումը միակ լավագույն ուղին է զորացնելու մեզ կյանքի դժվարությունների դեմ, ինչպիսին էլ որ դրանք լինեն»: Ի՞նչ կարող եք անել ամեն օր ձեր հավատի հիմքերն ամրացնելու համար: ■

Ստորև տրվում է գերագույն համաժողովի ելույթներից ընտրված փորձառությունների մի ցանկ, որը կարելի է օգտագործել անձնական ուսումնասիրության, ընտանեկան երեկոների և ուսուցման այլ հնարավորությունների ժամանակ: Նշված համարները ցույց են տալիս ելույթի առաջին էջը:

Խոսնակ	Պատմություն
Նիլ Լ. Անդերսեն	(58) Դեյվիդ Օ. Մակքեյը տեսիլքում տեսնում է Փրկիչին և նրանց, «ովքեր հաղթեցին աշխարհին»: Երեց Բրյուս Դ. Փորտերը տառապում է երիկամային խնդիրներից, բայց հաղթում է աշխարհին՝ Փրկիչի հանդեպ ունեցած իր սիրով:
Դեյվիդ Ա. Բեդնար	(67) Դեյվիդ Ա. Բեդնարն օգնում է մի հիասթափված վերադարձած միսիոների:
Մարկ Ա. Բրեգ	(36) Հրշեջները փրկում են Հիսուս Քրիստոսի նկարները հրդեհով բռնկված ցցի կենտրոնից:
Մ. Ջոզեֆ Բրոու	(23) Մ. Ջոզեֆ Բրոու հայրը լսում է իր մոր իմաստուն խորհուրդը: Երիտասարդ Մ. Ջոզեֆ Բրոուն փնտրում է Երկնային Հոր կամքը, երբ պատրաստվում է ազատ արձակել իր շանը: Տաճարում Մ. Ջոզեֆ Բրոուն իմանում է, որ Երկնային Հայրը հոգ է տանում իր մասին:
Լինդա Ք. Բըրթն	(12) Երբ Դրուսիլլա Հենդրիքսի ամուսինը անդամալույծ է դառնում, նա հոգ է տանում իր ընտանիքի մասին: Սփոփող Միության նախագահը ծառայում է մյուսներին, մինչ մաքառում է քաղցկեղի դեմ:
Ջերալդ Կոսե	(75) Սեմինարիայի շնորհիվ 30-ամյա Ջերալդ Կոսեն կոչում է ստանում: Ծխի անդամները ուղիներ են փնտրում երիտասարդ տղային ծառայության կանչելու համար:
Յուն Հվան Չոյ	(90) Յուն Հվան Չոյի հայրն ուսուցանում է նրան. «Մի՛ նայիր շուրջդ, նայիր վե՛ր»: Սանբիմ Չոյը օրհնված էր, մինչ նրա ծնողները ծառայում էին միսիայում: Յուն Հվան Չոյի կանչը Յոթանասունի Քվորում ենթադրում էր, որ նա ավելի քիչ ժամանակ կունենար իր ընտանիքի համար, բայց նրա որդին երջանիկ է, քանի որ նրանք «հավերժական ընտանիք են»:
Լ. Ուիթնի Քլեյթոն	(97) Մի երիտասարդ եպիսկոպոս ծխի անհանգստացած անդամներին խորհուրդ է տալիս կիրառել հավատի հիմնարար գործելակերպը:
Վեթերֆորդ Թ. Քլեյթոն	(26) Վեթերֆորդ Թ. Քլեյթոնը տեսնում է այն ուրախությունը, որը նորածին մանուկը պարգևում է մորը: Իրենց մոր մահից հետո երկու դուստրերը սփոփանք են գտնում Փրկիչի հանդեպ ունեցած իրենց հավատի մեջ:
Քվենթին Լ. Քուք	(127) Քվենթին Լ. Քուքի չորս տարեկան որդին «այժմ կարող է ամեն ինչ անել»: Պատանի Քվենթին Լ. Քուքը հոգևոր հաստատում է ստանում վերականգնված ավետարանի վերաբերյալ: Չնայած ձախորդություններին, Փարլի Պ. Պրատի իմաստությունն ու առաքինությունն աճում է, քանի որ հավատարիմ է մնում ավետարանին:
Բոննի Հ. Քորդոն	(6) Բոննի Հ. Քորդոնի կրտսեր թոռնիկը խնդրում է ավելի շատ սուրբ գրություններ կարդալ: Խաղաղությունը, որը նա զգում է իր մոր աղոթքից, Բոննի Հ. Քորդոնին քաջություն է տալիս վստահել Տիրոջը: Ծառայելով ուրիշներին, քաղցկեղով հիվանդը ուժ և քաջություն է ստանում դիմակայելու իր հիվանդությանը:
Վալերի Վ. Քորդոն	(55) Պատանի Բոննի Հ. Քորդոնը տեսնում է, թե իր ընտանիքն ինչպես է օրհնվում տասանորդ վճարելով:
Յոքին Ի. Կոստա	(112) Մինչ Յոքին Ի. Կոստան հանդիպում է միսիոներներին, նա դառնում է խոնարհ և ապաշխարությանը վերաբերվում է որպես դեպի զարգացում և երջանկություն տանող ճանապարհի:
Հենրի Բ. Այրինգ	(15) Ավստիրիայում Եկեղեցու խոնարհ անդամները թույլ են տալիս, որ Սուրբ Հոգին լուսավորի այն սրահը, որտեղ նրանք անցկացնում էին հաղորդության ժողովը: Սուրբ Հոգին թույլ է տալիս Հենրի Բ. Այրինգին իր անհնազանդ փոքրիկ տղային տեսնել այնպես, ինչպես Աստված է տեսնում նրան: (19) Նույնիսկ լավագույն տեխնոլոգիաները չեն փոխարինում անձնական հայտնությանը: (82) Հենրի Բ. Այրինգը ապավինում է այն խոստմանը, որ Հոգին կլինի իր սրտում և հրեշտակները կսատարեն իրեն, երբ նա քահանայության ծառայություն է մատուցում:
Ս. Սքոթ Գրոու	(121) Ս. Սքոթ Գրոուի ծնողները և զարմիկները ծառայում են միսիայում: Ս. Սքոթ Գրոուն վկայում է Երեց Նիլ Ա. Մաքսվելի հոգևոր զտման մասին:
Ջոյ Դ. Ջոնս	(87) Մեծ եղբայրը պահում է ծնողներին տված իր խոստումը՝ չկատակել իր հինգամյա քրոջ հետ:
Քերոլ Ֆ. Մակքոնկի	(9) Մեղուների դասարանի 13-ամյա մի նախագահ օգնում է իր ընկերներին կատարել իրենց տնային գործերը, որպեսզի նրանք կարողանան հաճախել եկեղեցի:
Ռասսել Մ. Նելսոն	(39) Մի Դափնի պահում է իր խոստումը՝ մասնակցել ցցի Սփոփող Միության ժողովին, չնայած նրան որակազրկում են նախահանգային մրցույթին մասնակցելու հնարավորությունից:
Ս. Մարկ Փալմեր	(114) Որպես միսիայի նախագահ, Ս. Մարկ Փալմերը սովորում է «տեսնել» միսիոներներին և սիրել նրանց՝ ինչպես Հայրը և Որդին են սիրում նրանց:
Ռոնալդ Ա. Ռասբենդ	(93) Որպես լիաժամկետ միսիոներ, Ռոնալդ Ա. Ռասբենդն օգտագործելով ոտքը, թույլ չի տալիս, որ դուռը փակվի: Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդը հուշում է ստանում այցելել և օրհնել Եկեղեցու անդամներին Էկվադորում՝ այնտեղ տեղի ունեցած երկրաշարժից հետո: Որպես միսիայի նախագահ, Ռոնալդ Ա. Ռասբենդը խրախուսում է միսիոներներին գործել ըստ առաջին հուշման:
Դեյլ Գ. Ռենլանդ	(29) *«Թշվառները»* վեպում մի եպիսկոպոսի կողմից ցուցաբերված կարեկցանքը մղում է Ժան Վալժանին փոխել իր կյանքը: Եվրոպայում բնակվելիս, պատանի Դեյլ Գ. Ռենլանդը ենթարկվում էր ծաղրի ու հալածանքների:
Գարի Բ. Սաբին	(52) Մի սկաուտ տղա գիշերն անցկացնում է մրսելով: Փչած տոպրակը նորից վերադառնում էր իր նախկին դիրքին, քանի որ «ամուր էր ներքուստ»: Գարի Բ. Սաբինի հայրն ուսուցանում է իր երկու նավաստի ընկերներին, ովքեր տպավորված էին նրա արդարակյաց օրինակով:
Ուլիսես Սոարես	(33) Լիաժամկետ միսիոները նորացնում է իր հանձնառությունը, ջանասիրաբար ծառայելով Աստծուն իր քրոջ մահվան լուրն իմանալուց հետո:
Գարի Ի. Սթիվենսոն	(117) Գարի Ի. Սթիվենսոնը տպավորված է ինսնամյա տղայի՝ ընտանեկան երեկոյի ժամանակ ուսուցանած դասով: Մի հուշում երիտասարդ Սթիվենսոնին փրկեց բոժոժավոր օձի հետ հանդիպումից: Միսիայի մի նախագահի ստացած հուշումը միսիոներներին փրկեց երկրաշարժից Ճապոնիայում: Ողբերգական ավտովթարից հետո ընտանիքի անդամները սփոփանք են ստանում Սուրբ Հոգուց:
Դիտեր Ֆ. Ուխդորֆ	(104) Դիտեր Ֆ. Ուխդորֆը մեծ ուրախություն է ապրում Մադրիդ Իսպանիա Տաճարի ավարտման կապակցությամբ, չնայած հրավիրված չէր նվիրագործման արարողությանը: Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստը հորդորում է նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆին՝ «չներշնչվել» եկեղեցու անդամների գովասանքից: Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերը խորհուրդ է տալիս նոր ղեկավարներին հետևել համար վեց կանոնին: Ցցի մի նախկին նախագահ կամավոր մաքրում է տարածքը ձիերի հետևից քաղաքի շքերթի ժամանակ:

Երեց Թեյլոր Գ. Գոդոյ

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Մի քանի տարի մասնագիտությամբ աշխատելուց հետո Երեց Թեյլոր Գ. Գոդոյը հայտնվեց կյանքի ճանապարհների խաչմերուկում:

Նա աշխատում էր որպես ատամնաբույժ և տեսնում էր իր ապագան ատամի վիրաբուժության թեմայով դասավանդելու մեջ: Սակայն քահանայության մի սիրելի և վստահելի ղեկավար հրավիրեց նրան աշխատել սեմինարիաների և ինստիտուտների համար:

Թողնելով վերելք ապրող կարիերան, երիտասարդ ատամնաբույժը հետաքրքիր ընտրություն կատարեց և 2017 թվականի ապրիլի 1-ին հաստատվեց որպես Գերագույն Իշխանավոր Յոթանասունական: Նրա գործընկերներից շատերը զարմացած էին, թե նա ինչպես կարողացավ հեռանալ մասնագիտությունից:

«Սակայն ես գիտեի, որ դա ճիշտ ընտրություն էր», - ասել է նա: Եկեղեցու նորադարձին բնորոշ է հավատքից բխող այդպիսի վստահություն: Ապացուցված է, որ կյանքի հիասքանչ հնարավորություններից և օրհնություններից է օգնել մարդկանց հայտնաբերել ու սիրել ավետարանը:

Եկեղեցու իր կրթական կարիերայի ընթացքում Երեց Գոդոյն աշխատել է որպես ինստիտուտի ուսուցիչ, համակարգող, տնօրեն և գործադիր տնօրեն: Վերջերս նա Հարավային Ամերիկայի հյուսիս-արևմտյան տարածքի սեմինարիաների և ինստիտուտների տնօրենն էր:

Թեյլոր Գիլլերմո Գոդոյ Աթանեյսիոն ծնվել է Պերուի մայրաքաղաք Լիմայում, 1968 թվականին, Թեյլոր Գոդոյի և Ադալգահինդա Աթանեյսիոյի ընտանիքում: Հայրը մահացել էր, երբ նա դեռ փոքր էր, և նրա սիրելի խորթ հայրը՝ Իլայաս Ռիբազան մեծացրել է նրան:Երեց Գոդոյը միացել էր Եկեղեցուն 17 տարեկան հասակում:

Պերուի Լիմա Հյուսիսային միսիայում ծառայելուց հետո, նա վերադարձավ իր հայրենի Արեքիպա քաղաքը: Այնտեղ նա ընկերացավ մի երիտասարդ կնոջ՝ Քերոլ Պաչեկոյի հետ: Նորադարձներն ամուսնացան 1994թ. մայիսի 31-ին Լիմա Պերու տաճարում: Նրանք երկու երեխաների ծնողներ են:

Երեց Գոդոյը ատամնաբույժի բակալավրի աստիճան է ստացել Սանտա Մարիա Կաթոլիկ Համալսարանում 1993 թվականին և կառավարման մագիստրոսի աստիճան՝ Մադրիդի Տեխնիկական Համալսարանում 2006 թվականին:

Նա ծառայել է որպես եպիսկոպոս, բարձրագույն խորհրդական, ցցի նախագահ, հասարակական կապերի տարածքային տնօրեն և Տարածքային Յոթանասունական: ■

Երեց Ջոնի Լ. Քոչ

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Երեց Ջոնի Լուիզ Քոչը Բրազիլիայի Եկեղեցու երկրորդ սերնդի անդամ է: Նրա ծնողները՝ Լուիզ և Էտելկա Քոչերը, իրենց ամուսնության վաղ տարիներին այցելել են տեղական տարբեր եկեղեցիներ՝ հոգևոր ճշմարտությունը գտնելու նպատակով:

Մի օր, երբ նրա մայրը սրտանց աղոթքով խոստացել էր հետևել Աստծուն, ժամեր անց միսիոներները թակել էին նրանց դուռը: Վեց ամիս անց նրանք մկրտվեցին:

Երեց Քոչը ծնվել է 1962թ. և մեծացել է Ջոյնվիլում (Սանտա Կատարինա, Բրազիլիա): Եկեղեցու այնպիսի ղեկավարների ազդեցությունը, ինչպիսիք են Երեխաների Միության նվիրված ուսուցիչը, հոր նման հոգատար եպիսկոպոսը, ցցի վստահ նախագահը, օգնել է նրան պարտավորվել՝ ապրել ավետարանով:

Բրազիլիայի Սան Պաուլո Հյուսիսային Միսիայում լիաժամկետ միսիան ավարտելուց հետո Երեց Քոչը վիճակագրություն է ուսումնասիրել Բրիգամ Յանգ Համալսարանում (Պրովո, Յուտա, ԱՄՆ): «Բրազիլիա վերադառնալիս ես այցելեցի իմ ընկերներից մեկի ծուխը, որտեղ հանդիպեցի իմ ապագա կնոջը», - ասել է Երեց Քոչը: «Նա մոտեցավ ինձ և հարցրեց, թե արդյոք ես ամուսնացա՞ծ եմ»: Ութամսյա հեռակա ընկերությունից հետո, երբ ընդամենը 15 օր էին միասին, նա ամուսնացավ Լիլիան Միշել Լյուդվիգի հետ 1988թ. ապրիլի 26-ին Սան Պաուլո Բրազիլիայի տաճարում: Նրանք ունեն երկու զավակ:

ԲՅՀ-ն ավարտելուց և բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճան ստանալուց հետո Երեց Քոչն աշխատել է միջազգային լոգիստիկայի բնագավառում: 25 երկար տարիների ընթացքում նա աշխատել է տարբեր կազմակերպություններում, մինչև այն պահը, երբ կանչվեց Եկեղեցու լիաժամկետ ծառայության:

Երեց Քոչը ծառայել է որպես եպիսկոպոս, ցցի նախագահ և Տարածքային Յոթանասունական: Նա Մոզամբիկ Մապուտո Միսիայի նախագահն էր այն պահին, երբ կանչվեց որպես Գերագույն Իշխանավոր Յոթանասունական:

«Իմ վկայությունն աստիճանաբար է կառուցվել, ժամանակի ընթացքում, ավետարանով ապրելու շնորհիվ ստացած հոգևոր փորձառությունների հիման վրա», - ասել է Երեց Քոչը: Տեր Հիսուս Քրիստոսի, Նրա Եկեղեցու և մարգարե Ջոզեֆ Սմիթի հանդեպ իմ ամուր վկայության հիմնական տարրը Մորմոնի Գիրքն է»: ■

Երեց Ադիլսոն դե Փոլա Պարելլա

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Երբ Երեց Ադիլսոն դե Փոլա Պարելլան ութ տարեկան էր, երբ միսիոներները սկսեցին ուսուցանել նրա ընտանիքին Մարգարե Ջոզեֆ Սմիթի և ավետարանի վերականգնման մասին:

«Նույնիսկ փոքր հասակում ես համոզված էի, որ Ջոզեֆ Սմիթը իրոք տեսել էր Աստծուն և Հիսուս Քրիստոսին», - ասել է Երեց Պարելլան, ով 2017թ. ապրիլի 1-ին հաստատվեց որպես Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական: «Այդ օրվանից ես երբեք չեմ կասկածել դրանում»:

Երեց Պարելլան ծնվել է 1962 թվականին Ֆիորավանտե և Վանի դե Փոլա Պարելլայի ընտանիքում, Բրազիլիայի Գուարուջա տեղանքում, որն Ատլանտյան օվկիանոսի ափին է և Սան Պաուլո քաղաքի հարևանությամբ:

Նրա երկու ավագ եղբայրները ծառայել էին միսիայում: Նրանց օրինակները, ինչպես նաև սիրող եպիսկոպոս՝ Անգելինո Բորգես դե Ֆրեյտասի ազդեցությունը, ով ուղղորդում էր նրան Ահարոնյան Քահանայություն կրելու ժամանակ, նրա մեջ ցանկություն առաջացրեցին ծառայելու լիաժամկետ միսիայում: Միսիոներական ծառայությունն ամրապնդեց նրա մեջ «Աստծո և Նրա Որդու գոյության իրողությունը, ինչպես նաև այն, որ մենք բոլորս Աստծո զավակներն ենք»:

Բրազիլիայի Պորտո Ալեգրե միսիայում ծառայելուց հետո, Երեց Պարելլան ուսանել է Բրիգամ Յանգ Համալսարանում (Պրովո, Յուտա, ԱՄՆ), որտեղ ստացել է կապի ոլորտի բակալավրի աստիճան և բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճան: Նա եղել է Kodak Polychrome Graphics ընկերության գործադիր տնօրենը և Korn Ferry International ընկերության գործընկերը: Բոլորովին վերջերս նա Caldwell Partners ընկերության գործընկերն էր:

Նա ամուսնացել է Իլեյն Ֆինհոլդի հետ 1988թ. դեկտեմբերին Սան Պաուլո Բրազիլիայի Տաճարում: Նրանք հինգ որդիների ծնողներ են:

Երեց Պարելլան ծառայել է որպես ճյուղի նախագահ, եպիսկոպոս, բարձրագույն խորհրդական, ցցի նախագահության խորհրդական, Տարածքային Յոթանասունական, և Բրազիլիայի Բելու Օրիզոնտի միսիայի նախագահ՝ 2009-2012 թթ.:

Միսիոներներին հանդիպելուց ի վեր նրա կյանքը ճանապարհորդություն է եղել, որի ընթացքում պիտի հասկանար ութ տարեկանում իր ունեցած զգացողությունները: Եկեղեցի հաճախելը, Աստծո խոսքը շարունակ սովորելը և համաձայն պատվիրանների ապրելու ձգտումը ընդլայնել են նրա տեսլականը, որը ձևավորվել է փոքր հասակում՝ ճշմարտության անմիջական ընկալումից: «Սա իսկապես Աստծո արքայությունն է երկրի վրա», - ասել է նա: ■

Երեց Ջոն Ք. Փինգրի Կրտսեր

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

«Իմ վկայությունն աճել է ժամանակի ընթացքում, քիչ-քիչ, աղոթքներիս պատասխանները ստանալու միջոցով, զգալով Հոգին, երբ կարդում էի սուրբ գրությունները, ապաշխարելով և ծառայելով Տիրոջը», - ասել է Երեց Ջոն Ք. Փինգրի Կրտսերը, ով 2017թ. ապրիլի 1-ին հաստատվել է որպես Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական:

Նա ծնվել է 1966թ. Սոլթ Լեյք Սիթիում (Յուտա, ԱՄՆ), Քարմեն և Ջոն Ք. Փինգրի Ավագի ընտանիքում: Իր կյանքը ձևավորելու հարցում նա գնահատում է իր ծնողների նվիրվածությունը:

«Իմ ծնվելու հաջորդ օրը հայրս ինձ նամակ էր գրել», - ասել է Երեց Փինգրին: «Նա պահել էր այդ նամակը և հետագայում, երբ ես մեկնեցի ծառայեու լիաժամկետ միսիայում, նա ուղարկեց ինձ այն: Նամակը բաղկացած էր իր վկայության մի քանի էջերից և այն դասերից, որոնք նա ցանկանում էր, որ ես սովորեի իմ կյանքում: Երբ կարդացի, Հոգին վկայեց ինձ, որ այն, ինչ ուսուցանել են ծնողներս վերականգնված ավետարանի մասին, ճշմարտություն է»:

Երեց Փինգրին ծառայել է Մասաչուսեթս Բոստոն իսպանալեզու միսիայում:

Յուտայի Համալսարանում նա աստիճաններ է ստացել անգլերենից և քաղաքական գիտություններից, ինչպես նաև բիզնեսի կառավարման մագիստրոսի կոչում՝ Հարվարդի Բիզնես Դպրոցից: 1990թ. նա ամուսնացել է Անն Փոզսլեյի հետ և նրանք հինգ երեխաների ծնողներ են:

Նրա գործունեության մեծ մասն ուղղված է եղել մարդկանց օգնելուն: Նա եղել է մարդասիրական բուժօգնությամբ զբաղվող կազմակերպության նախագահը և երկու առողջապահական ընկերությունների փոխնախագահ:

Նա եղել է Տեխաս Հյուստոն միսիայի նախագահը 2011-2014թթ., և ծառայել է որպես Տարածքային Յոթանասունական, ցցի նախագահ, եպիսկոպոս, երեցների քվորումի նախագահ և ինստիտուտի ու սեմինարիայի ուսուցիչ:

«Տերն ասել է. «եթե դու ցանկանաս, դու կլինես այն միջոցը, որով շատ բարիք կգործվի այս սերնդի մեջ» (ՎԵՈՒ 11.8), - ասել է Երեց Փինգրին: «Իմ կարծիքով Տերն ասում է. «Ես կօգտագործեմ քեզ այլ մարդկանց կյանքում բարիք անելու համար, եթե դու թույլ տաս ինձ»: Եթե մենք փնտրենք հնարավորություններ, Երկնային Հայրը կօգտագործի մեզ մեկ ուրիշի կյանքը օրհնելու համար: ■

Երեց Բրայըն Ք. Թեյլոր

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Բրայըն Քինգ Թեյլորը 2017թ. ապրիլի 1-ին հաստատվել է որպես Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական:

Երեց Թեյլորը ծնվել է 1964թ. Օգդենում (Յուտա, ԱՄՆ), Լաուելլ Մունի և Մարի Քինգ Թեյլորի ընտանիքում: Նա մեծացել է Քեյսվիլում: Ընտանիքի հինգ երեխաներից նա չորրորդն էր, և նրանք բոլորը սիրում էին զբաղվել ձկնորսությամբ և սպորտով:

Նրա ավագ եղբայրը՝ Քրեյգը բասկետբոլային ակումբի կրթաթոշակ ուներ Լոգանի Պետական Համալսարանում (Յուտա) և որոշման առաջ էր կանգնած՝ ծառայել միսիայում, թե շարունակել ուսումը քոլեջում:

«Մի երեկո ճաշի ժամանակ ես ասացի նրան. «Գիտես ինչ, եթե դու գնաս միսիա, ես էլ կգնամ»,- հիշում է Երեց Թեյլորը: Ի վերջո, երկու եղբայրներն էլ ծառայեցին, ընդ որում, Երեց Թեյլորը գնաց Իսպանիայի Սևիլիա միսիա:

Միսիայից առաջ Երեց Թեյլորը խաղացել է Բրիգամ Յանգ Համալսարանի բասկետբոլի թիմում 1982-1984թթ., Դեվին Գ. Դյուրրանթի հետ, ով ներկայումս ծառայում է որպես Կիրակնօրյա Դպրոցի Գերագույն Նախագահության անդամ:

ԲՅՀ-ում նա ծանոթացել է իր ապագա կնոջ՝ Ջիլլ Ֆեդերսթոունի հետ: Ուսանողական իր ծխում Ջիլլն ուսուցանում էր ավետարանի վարդապետության դասարանում: Եղբոր հրավերով Երեց Թեյլորն այցելեց նրա դասարանը և հանդիպեց նրան: Հարաբերությունները վերածվեցին սիրավեպի և նրանք ամուսնացան 1987թ. ապրիլի 30-ին Սոլթ Լեյքի Տաճարում: Նրանք յոթ երեխաների ծնողներ են:

Քույր Թեյլորը Բարձրագույն Իշխանավոր Երեց Վոգն Ջ. Ֆեդերսթոունի և քույր Մարլեն Ֆեդերսթոունի յոթ երեխաներից միակ դուստրն է: «Նրանք իսկապես շատ շփվող ու բարի էին», - Երեց Թեյլորն ասել է կնոջ եղբայրների մասին: Ես ինձ անմիջապես սիրված զգացի»:

ԲՅՀ-ում բակալավրի աստիճան ստանալով, Երեց Թեյլորը հիմնել է բազմաթիվ բիզնեսներ, այդ թվում մի կազմակերպություն, որը զբաղվել է հասարակական անվտանգության գործակալությունների միջև կատարվող տագնապային զանգերը համակարգող ծրագրի ստեղծմամբ:

Նա ծառայել է որպես ինստիտուտի ուսուցիչ, բարձրագույն խորհրդական, ծխի Երիտասարդ Տղամարդկանց նախագահ, ցցի նախագահ, իսկ Յոթանասունականի կանչը ստանալու պահին նա Տեխաս Դալլաս միսիայի նախագահն էր: ■

Երեց Տանիելա Բ. Վեյքոլո

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Երեց Տանիելա Բիու Վեյքոլոն 1994թ. մարտին մկրտվելուց հետո իր կյանքի ամեն մի օրը նվիրել է Տիրոջ ծառայությանը:

Նա ծնվել է 1967 թվականին, Լոմալոմա փոքրիկ կղզում (Լաու, Ֆիջի), Տանիելա Վոսա և Թեմալեսի Բուադրոմո Վեյքոլոների ընտանիքում: Երեց Վեյքոլոն վեց երեխաներից ամենափոքրն էր: «Ես մեծացել եմ մի շատ համեստ տանը, սակայն մենք հարուստ էինք միմյանց նկատմամբ ունեցած սիրո դրսևորումներով», - ասել է նա:

12 տարեկանում Երեց Վեյքոլոն հեռացավ ծնողական տնից, որպեսզի 12-19 տարեկան մյուս 500 երիտասարդ տղաների հետ հաճախի գիշերօթիկի դպրոց: «Դա ինձ կրթող լավ հիմք էր», - ասել է նա: «Այդտեղ ես սովորեցի ինքնակարգապահ լինել»:

Նա հանդիպում էր Անիտա Հերբերտա Մոյմոյի հետ, ով արդեն մեկ տարի նորադարձ էր: Նրանք ամուսնացան 1987թ. օգոստոսի 22-ին Սուվայում (Ֆիջի):

Երեց Վեյքոլոյի համար դարձի գործընթացը ակնթարթային չի եղել և զույգի ամուսնության առաջին ութ տարիների ընթացքում նրանք հանդիպել են շատ միսիոներների հետ: «Ութ տարիների ընթացքում ես չորս անգամ ավարտել եմ միսիոներական զրույցների փաթեթը: Ես հանդիպել եմ 24 միսիոներների հետ», - ասել է նա:

Վերջապես Եկեղեցու անվան մասին միսիոներներից մեկի տված պարզ հարցը մկրտվելու միտք առաջացրեց նրա մոտ: «Եկեղեցին պետք է կոչվի իր տիրոջ անունով: Ինձ համար դա այդպես էր», - ասել է նա:

Երեց Վեյքոլոն և նրա կինը կնքվել են Նուկու-ալոֆա Թոնգա Տաճարում 1995 թվականին: Նրանք երկու երեխաների ծնողներ են:

Նրա մկրտությունը արագ հաջորդվեց ծառայության հնարավորություններով: Մկրտությունից երկու շաբաթ հետո նա կանչվեց ծխի Երիտասարդ Տղամարդկանց նախագահություն և կնոջ հետ միասին ուսուցիչ լինել սեմինարիայում: Մեկ տարի չանցած նա ընդունեց ճյուղի նախագահի կոչումը: Հետագայում նա ծառայել է որպես խորհրդական ցցի նախագահությունում, ցցի նախագահ և Տարածքային Յոթանասունական: Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական կանչվելու պահին նա Արկանզաս Լիթլ Ռոք միսիայի նախագահն էր:

Երեց Վեյքոլոն ուսանել է կառավարման և հանրային վարչարարություն և ստացել է կառավարման մագիստրոսի աստիճան: Վերջերս նա Ֆիջիի Եկեղեցու ծառայությունների կենտրոնի կառավարիչն էր: ■

Ջին Բ. Բինգհեմ

Սփոփող Միության Գերագույն Նախագահ

Միացյալ Նահանգների տարբեր մասերում ապրած Քույր Ջին Բ. Բինգհեմը գնահատում է այն փաստը, թե ինչպես է ավետարանը ամուր ազդեցություն ունենում միջավայրի փոփոխության պարագայում:

Նա ծնվել է 1952 թվականին Պրովոյում (Յուտա, ԱՄՆ), Ռոբերտ և Էդիթ Ջոյ Բարրուսների ընտանիքում: Նա մեծացել է վեց քույրերի և երկու եղբայրների հետ: Քույր Բինգհեմը դպրոց է գնացել ԱՄՆ-ի Տեխասում և Միննեսոտայում, իսկ բարձրագույն կրթությունը ստացել է Նյու Ջերսիում: Նա, նրա եղբայրներն ու քույրերը միակ ՎՕՍ աշակերտներն էին իրենց դպրոցներում մինչև Նյու Ջերսի տեղափոխվելը, որտեղ ի ուրախություն իրեն, նա դասարանում հայտնաբերեց մի աղջկա, որն իրենց նոր ծխից էր:

Երբ նա և Բրյուս Բինգհեմը ամուսնացան Պրովո Յուտա տաճարում 1972թ. դեկտեմբերի 22-ին, նրանք տեղափոխվեցին Իլլինոյս, որտեղ Բրյուս Բինգհեմը պիտի շարունակեր իր ուսումը:

Եղբայր և Քույր Բինգհեմներն ունեցել են երկու երեխա, բայց նրանք իրենցն են համարել նաև այն երեխաներին, ում շրջապատել են ծնողական հոգատարությամբ: Նա ընտանեկան կյանքի տեսության մասնագիտական աստիճան է ստացել և երբ իրենց կրտսեր երեխան ավագ դպրոցում էր, վերադարձել էդպրոց և ստացել մանկավարժության մագիստրոսի աստիճան:

Սփոփող Միությունում Քույր Բինգհեմն առաջին կոչումը ստացավ իր անդրանիկ երեխայի ծնունդից անմիջապես հետո: «Ինձ կանչեցին վարելու մայրության վերաբերյալ դասընթացներ: Դա լավ հնարավորություն էր՝ սովորել մյուս քույրերի օրինակներից, ինչպես նաև ուսումնասիրելու ձեռնարկը»:

Քույր Բինգհեմը շատ էր շրջապատում, երբ ծառայում էր Երեխաների Միության Գերագույն վարչության անդամ և Երեխաների Միության Գերագույն Նախագահության խորհրդական: Նա ականատես է եղել այն մարտահրավերներին ու օրհնություններին, որ ունեն ողջ աշխարհի Եկեղեցու անդամները:

Նա հույս ունի, որ Սփոփող Միության քույրերը գնահատում են միմյանց: «Ուրիշների հետ համեմատվելը գայթակղություն է, անարդյունավետ մի բան, որը հակառակն է այն ամենին, ինչ Երկնային Հայրն է ցանկանում մեզ համար»: Նա ասում է, որ Սփոփող Միությունն օգնում է յուրաքանչյուր քրոջ հասկանալ, թե ով է ինքը հավերժական թագավորությունում: «Երբ մենք կենտրոնացնում ենք մեր կյանքը Հիսուս Քրիստոսի վրա, մենք իսկապես գիտենք, թե ով ենք մենք», - ասել է նա: ■

Շարոն Յուբանկ

Սփոփող Միության Գերագույն Նախագահության Առաջին Խորհրդական

Որպես ՎՕՍ մարդասիրական ծառայությունների նոր աշխատակից, Շարոն Յուբանկն ականատես է եղել թշվառության, տխրության և վշտի, որոնք դժվարացրել են նրա գործունեությունը: Աղոթքի միջոցով նա սկսեց հասկանալ, որ թեև ինքն օգնում է Տիրոջը՝ հոգ տանել Նրա զավակների մասին, դրանից մեծ պատասխանատվություն նա չի կարող կրել: «Հիսուս Քրիստոսն է զբաղվում դրանով: Նա կկրի այս բեռը: Նրանք Տիրոջ ժողովուրդնեն և Նա լսում և պատասխանում է մարդկանցաղոթքներին»: Այդ պատասխանը փոխեց մարդկանց ծառայելու և հասնելու նրա ընդունակությունը:

Տարիներ անց, Քույր Յուբանկը, որպես ՎՕՍ Բարեգործությունների՝Եկեղեցու մարդասիրական ձեռքի տնօրեն, օգնություն է տրամադրել և ինքնապահովման հորդորել կարիքի մեջ գտնվողներին ամբողջ երկրագնդով մեկ:

2017թ. ապրիլի 1-ին հաստատվելով Սփոփող Միության Գերագույն Նախագահությունում, նա կշարունակի իր դերը՝ որպես ՎՕՍ Բարեգործությունների տնօրեն: ՎՕՍ Բարեգործությունների և Սփոփող Միության միջև կա մի «մեծ կապակցող օղակ», երբ Սփոփող Միության Գերագույն Նախագահության անդամները գտնվում են ՎՕՍ Բարեգործությունների տնօրենների խորհրդում», - բացատրել է նա: Երկու կազմակերպություններում ունեցած նրա պարտականությունները կամրապնդեն այդ օղակը:

Շարոնը ծնվել է 1963 թվականին ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի Ռեդդինգ քաղաքում: Նա Մարկ և Ջին Յուբանկների յոթ երեխաներից ավագնէ: Քույր Յուբանկը մեծացել է Բաունթիֆուլում (Յուտա, ԱՄՆ), 10 ակր (4 հա) տարածքով հողամասում, որը մոտ էր Յուտայի լեռներին, որտեղ Յուբանկ երեխաներրծիրան էին հավաքումվերանորոգում ջրցանները:

Քույր Յուբանկը ստացել է անգլերենի և պատմության բակալավրի աստիճան Բրիգամ Յանգ Համալսարանում (Պրովո, Յուտա) և ծառայել է Ֆինլանդիայի Հելսինկյան Միսիայում:

Եկեղեցու բարօրության բաժանմունքում իր աշխատանքից բացի, Քույր Յուբանկն աշխատել է Capitol Hill-ում (Վաշինգտոն, ԱՄՆ), եղել է փոքր բիզնեսի համասեփականատեր և ապրել է Ճապոնիայում ու Ֆրանսիայում:

Յուրաքանչյուր հնարավորություն «հավատքի դրսևորում» է եղել, որն օգնել է նրան սովորել այն հմտությունները, որոնք նա օգտագործում է այսօր, թույլ է տվել նրան հանդիպել հրաշալի մարդկանց թե՛ Եկեղեցում, և թե՛ Եկեղեցուց դուրս և պարգևել է նրան սեր ու գնահատանք աշխարհի շատ մշակույթների, լեզուների և ուտեստների նկատմամբ: ■

Ռեյնա Ի. Ըբարթո

Սփոփող Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդական

Քույր Ռեյնա Ի. Ըբարթոն ծնվել է 1963 թվականին Մանագուայում (Նիկարագուա), Նոել Բլանկոյի և Դելբի Կարդոզայի ընտանիքում: «Ծնողներս միշտ քրտնաջան աշխատել են, որ կարողանան ապահովել մեզ»,- ասել է Քույր Ըբարթոն: «Ես շատ երջանիկ մանկություն եմ ունեցել»:

Երբ նա 9 տարեկան էր, 1972թ. դեկտեմբերի 23-ին, կեսգիշերից հետո երկրաշարժը ցնցեց Մանագուան: «Ես փրկվեցի, քանի որ իմ ետևում կահույքի կտոր կար, բայց ոտքերս փլատակի տակ էին մնացել»: Լսելով նրա և նրա մոր աղաղակները, հարևանները եկել էին նրանց դուրս հանելու փլված կավաշեն տան բեկորների տակից: Փլատակների մեջ հարևանները հայտնաբերեցին ավագ եղբոր մարմինը քրոջ անկողնու կողքին: «Նյութական ունեցվածքն այնքան ժամանակավոր է, կարևորը մեր ընտանիքն է»,- ասել է նա:

21 տարեկանում Քույր Ըբարթոն իր ընտանիքի հետ արտագաղթեց Միացյալ Նահանգներ: Ապրելով Սան Ֆրանցիսկոյում (Կալիֆորնիա), նա ծանոթացավ միսիոներների հետ և որոշեց հաճախել Եկեղեցի: «Ոտքս այդ շինության մեջ դնելուն պես ես զգացել եմ Հոգին: Ցցի համաժողով էր և ես այնպիսի զգացում ունեի, որ յուրաքանչյուր ուղերձն անձամբ ինձ համար էր», - ասել է նա: Նա մկրտվեց 1989 թվականին:

Այդ ժամանակ նա հանդիպեց Կարլոս Ըբարթոին և նրանք ընկերներ էին դարձան: Նրանք շարունակում էին շփվել, նույնիսկ այն ժամանակ, երբ Քույր Ըբարթոն տեղափոխվեց Օրեմ (Յուտա): Նրանք ամուսնացան 1993թ. մայիսի 8-ին Ջորդան Ռիվեր Յուտա Տաճարում: Նրանք երեք զավակների ծնողներ են:

Քույր Ըբարթոն, ով 2017թ. ապրիլի 1-ին հաստատվել է Սփոփող Միության Գերագույն Նախագահությունում, ավելի քան 25 տարի աշխատել է թարգմանչական բնագավառում, ներառյալ Novell Inc. և Lemoine միջազգային կազմակերպություններում: Ամուսիններն այժմ փոքրիկ թարգմանչական գործակալության սեփականատերեր են: Չորս տարի նա սովորել է արդյունաբերական ճարտարագիտություն Կենտրոնական Ամերիկյան Համալսարանում (Մանագուա, Նիկարագուա) և զուգահեռաբար 1997թ. համակարգչային գիտությունների աստիճան է ստացել Յուտա Վալի պետական քոլեջում:

Քույր Ըբարթոն ծառայել է Եկեղեցու բազմաթիվ կոչումներում, այդ թվում եղել է Երեխաների Միության գերագույն վարչության անդամ 2012-2016թթ.: ■



Քրիստինա Ֆրանկո

Երեխաների Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդական

Երիտասարդ տարիքում Քույր Քրիստինա Բ. Ֆրանկոն հասկացել է, որ եթե հարց ունի, կարող է աղոթքով դիմել Երկնային Հորը՝ պատասխան ստանալու համար:

«Ես հիշում եմ, որ երբ 11 տարեկան էի, մոտեցել էի մայրիկիս և մի վարդապետական հարց տվել նրան»,- ասել է նա: «Նա պատասխանեց իմ հարցին, բայց ասաց. «Դու չպետք է իմ խոսքը հիմք ընդունես»: Այդպիսով, ես աղոթեցի ու հարցրի Երկնային Հորը, թե արդյո՞ք այդ բանը ճիշտ է»:

Նա ստացավ իր աղոթքի պատասխանը և այդ օրվանից գիտի, որ ունի Երկնային Հայր, Ով սիրում է իրեն և կպատասխանի իր աղոթքներին:

Նա հաստատվել է Երեխաների Միության Գերագույն Նախագահությունում 2017թ. ապրիլի 1-ին: Քրիստինա Բեատրիզ Ֆրագան ծնվել է 1958 թվականին Հյուգո Ռ. և Մարիա Ա. Գոդոյ Ֆրագաների ընտանիքում, Բուենոս Այրեսում (Արգենտինա):

Երբ երեք տարեկան էր, միսիոներները թակեցին նրանց տան դուռը: Ութ ամիս ուսումնասիրելով և հաճախելով Եկեղեցի, զույգը միացավ Եկեղեցուն և ընտանիքը սկսեց ապրել ավետարանով: Երեխաների Միությունում նա հանդիպել էր Ռոդոլֆո Ք. Ֆրանկոյին, ով հետագայում դարձավ նրա լավագույն ընկերը:

Երբ նա 18 տարեկան էր Քույր Ֆրանկոյի ընտանիքը տեղափոխվեց Յուտա (ԱՄՆ): Այդ ժամանակ ինքը և Ռոդոլֆոն գիտեին, որ ցանկանում են ամուսնանալ, սակայն Ռոդոլֆոն որոշ ժամանակ ծառայեց Արգենտինայի բանակում: Նրանք նամակներ էին գրում միմյանց, և երբ Ռոդոլֆոն ավարտեց զինվորական ծառայությունը, նրանք ամուսնացան 1978թ. դեկտեմբերի 15-ին Սոլթ Լեյքի Տաճարում: Նրանք երեք որդիների ծնողներ են:

Գնալով Քույր Ֆրանկոյի հոր հետքերով, ով ժամագործ էր, զույգը շուրջ երեք տասնամյակ աշխատել է ժամացույցների խանութում Սոլթ Լեյք Սիթիում:

Քույր Ֆրանկոն ծառայել է Եկեղեցու շատ պաշտոններում: 2005-2010թթ. նա ծառայել է Երեխաների Միության Գերագույն վարչությունում, և այն պահին, երբ կանչվեց Երեխաների Միության Գերագույն նախագահություն, նրա ամուսինը ծառայում էր որպես Արգենտինայի Ռեզիստենսիա Միսիայի նախագահ, և նրանք ծառայում էին միասին: ■

Հայտարարվել են նոր կոչումներ

Գերագույն համաժողովի ժամանակ հայտարարվել է Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունականի վեց նոր կոչման, Սփոփող Միության գերագույն նոր նախագահության և Երեխաների Միության գերագույն նախագահության վերակազմավորման մասին:

Գերագույն Իշխանավոր Յոթանասունական են կանչվել ծառայելու Երեց Թեյլոր Գ. Գոդոյը, Երեց Ջոնի Լ. Քոքը, Երեց Ադիլսոն դե Փոլա Պարելլան, Երեց Ջոն Ք. Փինգրի Կրտսեր, Երեց Բրայան Կ. Թեյլորը և Երեց Տանիելա Բ. Վեյքոլոն:

Ջին Բ. Բինգհեմը ծառայելու է Սփոփող Միության գերագույն նախագահ, Շարոն Յուբանկը՝ առաջին խորհրդական և Ռեյնա Ա. Ըբարթոն՝ երկրորդ խորհրդական: Այս կոչումը ստանալուց առաջ Քույր Բինգհեմը ծառայել է որպես Երեխաների Միության գերագույն նախագահության առաջին խորհրդական: Բոննի Հ. Քորդոնը, ով ծառայում էր որպես Երեխաների Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդական, հայտարարվել է որպես նոր առաջին խորհրդական, իսկ Քրիստինա Բ. Ֆրանկոն՝ երկրորդ խորհրդական:

Կենսագրականները տրված են էջ 135-ից սկսած: Հայտարարվել են նաև Տարածքային Յոթանասունականների 36 կոչումներ (տես էջ 44): ■

Սփոփող Միության նպատակը

Սփոփող Միությունը թարմացրել է իր նպատակի ձևակերպումը: Այժմ այն այսպիսին է. «Սփոփող Միությունը պատրաստում է կանանց հավերժական կյանքի օրհնություններին, մեծացնելով նրանց հավատքը Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի ու Նրա Քավության հանդեպ, ամրացնելով անհատներին, ընտանիքները և տները՝ արարողությունների և ուխտերի միջոցով և միասնական ուժերով աշխատելով կարիքավորների օգնության ուղղությամբ»:

Հայտարարությունը պարունակում է լրացուցիչ գաղափարներ, որոնք կօգնեն վերջին օրերի սուրբ կանանց հասկանալ Սփոփող Միության յուրաքանչյուր քրոջ սուրբ ինքնությունը, հավերժական աշխատանքը և նպատակը: ■

Հինգ նոր տաճարներ

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հայտարարել է հինգ լրացուցիչ տաճարների կառուցման մասին, որոնք տեղակայված կլինեն հետևյալ քաղաքներում.

Բրազիլիա, Բրազիլիա: Բրազիլիայի Բրազիլիա տաճարը երկրում թվով 10-րդը կլինի, ընդ որում, վեցը գտնվում են շահագործման մեջ, իսկ երեքը՝ կառուցման փուլում: Միացյալ Նահանգներից և Մեքսիկայից հետո Բրազիլիան երրորդ է վերջին օրերի սրբերի քանակով (ավելի քան 1.3 մլն): Բրազիլիայի բնակչությունը մոտ 211 մլն. է:

Մեծ Մանիլա, Ֆիլիպիններ: Այս տաճարը կլինի երկրորդը Մանիլայում և չորրորդը՝ Ֆիլիպիններում: Ֆիլիպիններում կան մոտ 750000 վերջին օրերի սրբեր, իսկ ընդհանուր բնակչությունը կազմում է 104 մլն. մարդ:

Նայրոբի, Քենիա Տաճարը կծառայի ավելի քան 30000 անդամների Արևելյան Աֆրիկայում, այդ թվում 13000 անդամների Քենիայում, որի բնակչությունը կազմում է 48 մլն.: Այդպիսով, Աֆրիկայում գործող, կառուցվող և հայտարարված տաճարների ընդհանուր թիվը կդառնա ութը:

Պոկատելլո, Այդահո, ԱՄՆ. Պոկատելլո Այդահո Տաճարը վեցերորդը կլինի Այդահոյում, որի 1,7 մլն. բնակչությունից մոտավորապես 450000 վերջին օրերի սրբեր են:

Մարատոգա Սփրինգս, Յուտա, ԱՄՆ. Այս տաճարը կգտնվի Յուտայի արագ աճող տարածքներից մեկում և կդառնա նահանգի 18-րդ տաճարը: Յուտայում, որտեղ տեղակայված է Եկեղեցու գլխավոր վարչությունը, կան 2,1 մլն. անդամներ, իսկ նահանգի բնակչությունը մոտավորապես 3,1 մլն. է:

Հայտարարված հինգ նոր տաճարների հետ տաճարների ընդհանուր թիվը կկազմի 182, այդ թվում՝ գործող տաճարների ընդհանուր թիվը կկազմի (155), հայտարարված կամ կառուցման/վերանորոգման փուլում գտնվողներինը՝ (27):

2016թ. հոկտեմբերի գերագույն համաժողովից հետո ԱՄՆ-ում նվիրագործվել են Ֆորտ Կոլլինզ Կոլորադո, Սթար Վալի Վայոմինգ և Հարթֆորդ Կոնեկտիկուտ տաճարները, իսկ Սուվա Ֆիջի տաճարը վերանվիրագործվել է:

Ապագա նվիրագործումները ծրագրվել են ստորև նշված կարգով

ՏԱՃԱՐ	ՆՎԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ
Փարիզ Ֆրանսիա	21 մայիսի, 2017
Այդահո Ֆոլս Այդահո (ԱՄՆ)	4 հունիսի, 2017 (վերանվիրագործում)
Տուկսոն Արիզոնա (ԱՄՆ)	13 օգոստոսի, 2017
Մերիդիան Այդահո (ԱՄՆ)	19 նոյեմբերի, 2017
Սեդար Սիթի Յուտա (ԱՄՆ)	10 դեկտեմբերի, 2017

Հողի նախապատրաստման արարողություններ են կատարվել Վիննիպեգ Մանիտոբա (Կանադա), Կինշասա Դեմոկրատական Հանրապետության Կոնգոյի, Բառանքիլլա Կոլումբիայի, Առեքիպա Պերու և Ռիո դե Ժանեյրո Բրազիլիայի տաճարների համար:

Նշվում է նաև, որ մինչ շինարարական աշխատանքներ են տարվում Հռոմ Իտալիա Տաճարում, այցելուների կենտրոնում տեղադրվել են Հիսուս Քրիստոսի և առաջին Տասներկու Առաքյալների արձանները, իսկ սրահի վրա տեղադրվել է Մորոնի հրեշտակի արձանը: ■

Թարմ տեղեկությունների համար այցելեք **temples.lds.org:**

Կրթության ուղին

Առաջին Նախագահությունը հայտարարեց Եկեղեցում համաշխարհային բարձրագույն կրթություն տրամադրող նոր հաստատության ստեղծման մասին, որը կոչվում է ԲՅՀ - Համաշխարհային Ուղի: Նորաստեղծ հաստատությունը կսկսի գործել 2017 թվականի մայիսի 1-ից: Հաստատությունը կրթական հնարավորություններ կապահովի նրանց համար, ովքեր այլ կերպ չէին կարող ունենալ դրանք:

«Ուղին մի կամուրջ է դեպի քոլեջի առցանց կրթության աշխարհ և ճանապարհ է դեպի բարեկեցիկ ապրուստի հնարավորություններ», ասել է Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը՝ Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդականը:

Լրացուցիչ տեղեկություն կարող եք գտնել **pathway.lds.org-ում:** ■

Առաքյալների համաշխարհային ծառայությունը շարունակվում է

Արգարեներն ու առաքյալները շարունակում են ծառայել ողջ աշխարհում (տեսՎևՈւ 107.23)։ Անցած վեց ամիսների ընթացքում.

Դեմ առ Դեմ հեռարձակման ժամանակ, որը տեղի էր ունեցել **Փալմիրայում (Նյու Յորք, ԱՄՆ),** Նախագահ Հենրի Բ. Այրինգը և Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը կոչ են արել Եկեղեցու երիտասարդներին ձեռք բերել անձնական վկայություն։ «Փորձեք ինքներդ համոզվել, որ այս բաները ճշմարիտ են»,- ասել է Նախագահ Այրինգը։

Մեքսիկայում Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը ներկայացավ Պատգամավորների ազգային պալատի առաջ (Կոնգրեսի ստորին պալատ), որտեղ Եկեղեցին բարձր գնահատական ստացավ կրոնական ազատությունը պաշտպանելու և ընտանիքներն ամրացնելու ուղղությամբ իր կատարած ջանքերի շնորհիվ։ Նախագահ Նելսոնը հանդիպել էր նաև անդամների և միսիոներների հետ և ասել էր, որ անդամները «գործուն ուժ են իրենց համայնքներում բարին գործելու հարցում»։

Արիզոնայում, ԱՄՆ Երեց Դալլին Հ. Օուքսը կոչ է արել Եկեղեցու անդամներին պաշտպանել կրոնական ազատությունը։ (Լրացուցիչ տեղեկության համար այցելեք **religiousfreedom.lds.org:**)

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը ելույթ է ունեցել Փարլիս Կրիկ (Սուահիլի) ճյուղի անդամների համար **Սոլթ Լեյք Սիթի, Յուտա, ԱՄՆ:** Ճյուղի անդամներից շատերը աֆրիկյան ազգերի փախստականներ են, ընդ որում, Նախագահ Ուխդորֆն ինքն էլ երկու անգամ փախստական է եղել։ «Միշտ հիշեք, որ ուր էլ որ լինենք, տունը՝ ավետարանն է», - ասել է նա։

Երեցներ Մ. Ռասսել Բալլարդը և Թոդ Քրիստոֆերսոնը ներկա են գտնվել հռոմեական կաթոլիկ թեմի նոր եպիսկոպոսի կարգման ծիսակատարությանը Սոլթ Լեյք Սիթիում և ողջունել են նրան համայնքում։

Սուրբ Երկրում Երեց Հոլլանդը և Երեց Քվենթին Լ. Քուքը միացել են վերջին օրերի սրբերի ղեկավարներին և ԱՄՆ-ից հրեա բարձրաստիճան հյուրերին, ովքեր հավաքվել էին **Երուսաղեմի** պատմական հողի վրա՝ նշելու Երեց Օրսոն Հայդի 175-րդ հոբելյանը (1805–1878), ով Տասներկու Առաքյալների Քվորումից էր, նվիրագործելով երկրի տարածքը որպես հրեաների հավաքատեղի։

Ժամացույցի սլաքի ուղղությամբ, ձախ վերևի անկյունից. Երեց Բեղնարն այցելում է Եկեղեցու անդամներին Ֆիլիպիններում, Նախագահ Ռասել Մ. Նելսոնը հանդիպում է Պատգամավորների պալատի անդամների հետ (Մեքսիկայի Կոնգրեսի ստորին պալատ)՝ քննարկելու կրոնական ազատությունը, մորմոն և հրեա առաջնորդների ընտրյալ խումբը ԱՄՆ-ից այցելում է Իսրայելի վարչապետ՝ Բենյամին Նեթանյահուին, Երեց Սթիվենսոնը ողջունում է երիտասարդ չափահասին, ով ծառայում է որպես խորհրդական «Երիտասարդներին զորացնելու համար» համաժողովում (Ուրուգվայ), դեռահասները մասնակցում են ուղիղ հեռարձակմանը Երեց Հոլանդի և Նախագահ Այրինգի հետ Պալմիրայում, (Նյու Յորք, ԱՄՆ), Երեց և Քույր Ռենլանդները Տոնգայում հանդիպման ժամանակ ողջունում են քույրերին, և Երեց Ռասբենդն այցելում է մանկական օնկոլոգիական հիվանդանոցը Գվատեմալա Սիթիում, Գվատեմալա։

Երեց Հոլլանդը հանդիպել է նաև անդամների և միսիոներների հետ **Ճապոնիայում, Կորեայում** և **Գուամում,** որտեղ «մենք կարողացանք վստահեցնել նրանց, որ կունենան [պայծառ] ապագա»,- ասել է նա: Նա նշել է, որ համազգային հեռարձակումների ուղիղ միացումները«հնարավորություն են տվել լայնորեն տարածել մեր ուղերձները», կապ հաստատելով տասնյակ հազարավոր անդամների հետ:

Նյու Յորքում (ԱՄՆ) Երեց Դեյվիդ Ա. Բեղնարը մասնակցություն է ունեցել ամուսնության թեմայով ֆորումում, ասելով, որ մեր ժամանակի ամենախոշոր խնդիրներից մեկը, որի շուրջ բազմահավատք համայնքները պետք է միասնական լինեն՝ օգնելով մարդկանց հասկանալ ամուսնության ճշմարիտ իմաստն ու նպատակը:

Ճապոնիայի և **Կորեայի** վերջին օրերի սրբերին այցելելու ժամանակ Երեց Բեղնարն ասել է, որ Եկեղեցին դանդաղ բայց կայուն աճ է գրանցում Ասիայում: «Անհնար է չտպավորվել վերջին օրերի այս սրբերի աշխատասիրությամբ, մեծահոգությամբ և հավատարմությամբ», - ասել է նա: Երեց Բեղնարը դիմել է նաև **Ֆիլիպինների** Եկեղեցու հազարավոր անդամներին և ուսուցանել է Եկեղեցու 21 միսիաներից 7-ում:

Մեքսիկայում Երեց Նիլ Լ. Անդերսենը խորհուրդ է տվել Եկեղեցու անդամներին հաղթահարել խոչընդոտները, որոնք հետ են պահում նրանց տաճար այցելելուց, Հանգստության օրը սուրբ պահելուց և ընտանեկան կապերն ամրապնդելուց: Նա հրավիրել է նրանց Փրկիչին լիարժեք բերել իրենց կյանք:

Երեց Քվենթին Լ. Քուքն այցելել է **Ֆիլիպիններ** այնտեղ ծառայելուց 20 տարի անց, որպես նոր կանչված Բարձրագույն Իշխանավոր: Նա ասել է, որ Ֆիլիպինների Եկեղեցին այն ժամանակների համեմատ կրկնապատկվել է: «Այնտեղ, որտեղ ճյուղեր էին, այժմ ցցեր են: Այն ժամանակ մեր ճանաչած երեխաներն այժմ վերադարձած միսիոներներ են: Վերադարձած միսիոներներն այժմ ցցերի նախագահներ են: Հրաշալի է տեսնել Եկեղեցու աճը»,- ասել է նա:

Բոլիվիայում և **Պերուում** Երեց Քուքը խորհուրդ է տվել անդամներին կենտրոնանալ առ Տեր Հիսուս Քրիստոս հավատքի վրա: Նա ասել է, որ երիտասարդները և երիտասարդ ամուրիները բացառիկ են և ցույց են տալիս իրենց սերը Փրկիչի և Նրա Քավության ու Հարության հանդեպ:

Աֆրիկայի արևմտյան տարածքում Երեց Գարի Ի. Սթիվենսոնն ասել է, որ իր այցը հնարավորություն է ընձեռելանդրադառնալ այն սիրուն և ուրախությանը, որոնք վերջին օրերի սրբերը գտնում են ավետարանում, չնայած իրենց հանդիպած «մարտահրավերներին ու ձախորդություններին»:

Ավելի ուշ, **Ուրուգվայում, Չիլիում** և **Արգենտինայում** Երեց Սթիվենսոնը ելույթ է ունեցել «Երիտասարդներին զորացնելու համար» թեմայով համաժողովում: Նա ասել է, որ երիտասարդներից շատերն են «միսիա գնալու որոշում կայացնում, որոշում՝ հաստատուն մնալու տաճարում ամուսնանալու իրենց նպատակին . . . և [ստանալով] բարձրագույն կրթություն»:

Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդը **Կենտրոնական Ամերիկայի տարածաշրջանի** անդամներին և միսիոներներին հորդորել է հավատարիմ մնալ իրենց ուխտերին և դժվար ժամանակներում նայել դեպի Տերը: Նա այցելել է մանկական օնկոլոգիական հիվանդանոց **Գվատեմալայում,** ելույթ է ունեցել Եկեղեցու կողմից հովանավորվող կրոնական ազատությանը նվիրված սիմպոզիումում **Էլ Սալվադորում** և հանդիպել է **Նիկարագուայի** նախագահի հետ:

Տոնգայում Երեց Դեյլ Գ. Ռենլանդը հանդիպել է թագուհու և թագավորական ընտանիքի մյուս անդամների հետ: Նա նաև այցելել է **Ավստրալիա** և **Նոր Զելանդիա,** որտեղ անդամները խնդրել են նրան փոխանցել իրենց սերը Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին: ■

Եկեղեցու այս ղեկավարների ծառայության մասին թարմ տեղեկությունները կարելի է տեսնել նրանց Ֆեյսբուքյան էջերում և **prophets.lds.org** *կայքում:*

Ավելի լավ միսիոներներ, ավելի լավ ուսուցիչներ

Համաշխարհային հեռարձակմամբ 422 միսիաներից գրեթե 71000 երեցներ և քույրեր ստացան ուսուցում՝ ինչպես ավելի լավ միսիոներներ և ավելի լավ ուսուցիչներ լինել թեմայով: Ուսուցման ժամանակ հայտարարվեցին Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից հաստատված փոփոխությունները: Օրվա նոր ժամանակացույցը միսիոներներին թույլ կտա ավելի ճկուն օգտագործել իրենց ժամանակը և ավելի լավ հարմարվել այն տարածքին, որտեղ ծառայում են:

Ավելի ճկուն ժամանակացույցի նպատակն է՝ օգնել միսիոներներին բարձրացնել օրվա արդյունավետությունը, ավելի ոգեշնչված նպատակներ դնել, արդյունավետ ծրագրեր կազմել, լինել ավելի առողջ և լավագույնս օգտագործել ազատ կամքը՝ ժամանակի տնօրինման վերաբերյալ արդար որոշումներ կայացնելիս: Դա նրանց թույլ կտա նաև ավելի շատ ժամանակ տրամադրել դրսի աշխատանքին:

Հայտարարված մյուս փոփոխությունը «հիմնական ցուցանիշների» թվի նվազեցումն էր, որոնք միսիոներներն օգտագործում են իրենց աշխատանքի առաջընթացը զեկուցելու համար: Միսիոներներին հիշեցրին, որ *«Քարոզիր իմ ավետարանը»* գրքի բոլոր սկզբունքները կարևոր են և պետք է կիրառվեն: ■



Նոր ապրանքներ և ռեսուրսներ

Ներկայացվում են այն ապրանքներն ու ռեսուրսները, որոնք Եկեղեցին վերջերս մատչելի է դարձրել:

Սուրբ գրությունների պատմություններ և ներկելու գրքեր: Սուրբ գրությունների անհատական և ընտանեկան ուսումնասիրությունը խրախուսելու նպատակով Եկեղեցին թողարկում է սուրբ գրությունների պատմությունների նոր ռեսուրսներ, սկսած մի շարք ներկելու գրքերից, որոնք նախատեսված են 2-8 տարեկան երեխաների համար: PDF անվճար տարբերակները գտնվում են **scripturestories.lds.org** կայքում, իսկ տպագիր տարբերակները կարելի է պատվիրել **store.lds.org**-ից և Բաշխման Ծառայությունների կենտրոններից:

Ներկելու գրքերը կթարգմանվեն այն լեզուներով, որոնք ունեն սուրբ գրությունների ՎՕՍ հրատարակություններ: Թարգմանված տարբերակները հասանելի կդառնան 2017թ., սկզբում իսպաներեն, պորտուգալերեն, ֆրանսերեն, ճապոներեն, կորեերեն, չինարեն (ավանդական), գերմաներեն, ռուսերեն և իտալերեն:

Սուրբ գրություններ. Առաջին Նախագահությունը հայտարարել է սուրբ գրությունների եռահատորի նոր թարգմանության մասին ֆրանսերեն, որը հասանելի է **écritures.lds.org**-ում և Gospel Library բջջային հավելվածում: Թարգմանությունը ներառում է բառային փոքր փոփոխություն հաղորդության աղոթքներից մեկում: Նրանք նաև հայտարարել են, որ եռահատորի խորվաթերեն թարգմանությունը նույնպես հասանելի է առցանց: Եռահատորի տպագիր հրատարակությունները խորվաթերեն, ռուսերեն և իսլանդերեն նույնպես արդեն մատչելի են:

Թարմացված Ավետարանի Գրադարան հավելված: Այն հավելվածը, որն օգտագործվում է անդամների կողմից ամբողջ աշխարհում՝ սուրբ գրությունները, համաժողովի ելույթները և այլ նյութեր ուսումնասիրելու համար, վերջերս թարմացվել է և թողարկվել թե iOS, և թե Android տարբերակների համար: 4-րդ տարբերակում ուսումնասիրության գործիքներն ավելի ինտուիտիվ են, հատկանիշները և հնարավորություններն ավելի միավորված են, և կան նոր վիդեո ուսուցողականներ: Քանի որ ողջ բովանդակությունն այժմ մշակելի է, դուք կարող եք ներկել, ավելացնել մեկնաբանություններ, ստեղծել կապուղիներ, պիտակներ, և դասավորել ամբողջ պարունակությունը նոթբուքների մեջ: Կարող եք մշակել տեսանյութերը, սուրբ գրությունների գլխագրերը և ուսումնական օժանդակ նյութերը, որոնք թվարկված են տարբեր դասերի ձեռնարկներում, օրհներգերում, Երեխաների Միության երգերում և այլն:

Թարմացված ՎՕՍ գործիքների հավելված: 3.2.0 տարբերակի ՎՕՍ Գործիքներ բջջային հավելվածն ավելի է հեշտացնում տաճարի այցը: Ավելացված հնարավորությունները թույլ են տալիս անդամներին տեսնել իրենց նշանակված տաճարը, գտնել մոտակա հինգ տաճարները, կապ հաստատել տաճարի հետ, կամ իմանալ, թե երբ է այն փակվում, և հիշեցում ստանալ իրենց երաշխավորագրի ժամկետը լրանալուց առաջ: ■

Ուսուցանել Փրկիչի ձևով

«Մենք բոլորս ցանկանում ենք ուսուցանել այնպես, ինչպես Փրկիչն է ուսուցանել»,- ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը ուսուցիչների համաշխարհային հեռարձակման ժամանակ Նոյեմբերի 5-ին, 2016թ.: «Նրա հրահանգը պարզ էր, ուղիղ և զորավոր»:

Երեց Հոլլանդն ասել է, որ *Ուսուցանել Փրկիչի ձևով* նյութն օգնում է բարելավել ուսուցումը Եկեղեցում: Նույն նպատակին են ծառայում նաև ուսուցիչների խորհրդի և նորակոչ ուսուցիչների կողմնորոշման ժողովները, որոնցմասին քննարկվել է հեռարձակման ժամանակ: Հեռարձակումը մատչելի է 10 լեզուներով **teach.lds.org** կայքում, որտեղ կան նաև տարբեր տեսանյութեր և ուսուցումը լավացնողող այլ նյութեր: ■

Ընտանիք

Հայտարարություն աշխարհին

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահություն և Տասներկու Առաքյալների Խորհուրդ

Մենք՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը, պաշտոնապես հայտարարում ենք, որ տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից և, որ ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում՝ Իր զավակների հավերժական ճակատագրի համար:

Մարդկային էակները՝ տղամարդիկ և կանայք, բոլորն արարվել են Աստծո պատկերով: Յուրաքանչյուրը երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և, որպես այդպիսին, յուրաքանչյուր ոք ունի աստվածային բնույթ և ճակատագիր: Սեռն անհատի հիմնական բնութագիրն է նախաերկրային, երկրային և հավերժական կյանքի և նպատակի:

Նախաերկրային աշխարհում հոգևոր որդիներն ու դուստրերը ճանաչում և երկրպագում էին Աստծուն, որպես իրենց Հավերժական Հորը և ընդունում էին Նրա ծրագիրը, ըստ որի պետք է ֆիզիկական մարմիններ ձեռք բերեին և աշխարհիկ փորձ կուտակեին դեպի կատարելություն ընթանալու և իրենց աստվածային ճակատագիրը որպես հավերժական կյանքի ժառանգներ բացառիկ կերպով գիտակցելու համար: Երջանկության աստվածային ծրագիրը հնարավորություն է տալիս, որ ընտանեկան կապերը շարունակվեն մահից հետո: Սուրբ տաճարներում կատարվող սուրբ արարողություններն ու ուխտերը հնարավոր են դարձնում անհատների համար՝ վերադարձը դեպի Աստծո ներկայությունը, իսկ ընտանիքների համար՝ հավերժական միասնությունը:

Ադամին և Եվային Աստծո կողմից տրված առաջին պատվիրանը վերաբերվում էր որպես ամուսին և կին նրանց ծնող դառնալու հնարավորությանը: Մենք հայտարարում ենք, որ դեռևս ուժի մեջ է Իր զավակներին տված շատանալու և երկիրը լցնելու վերաբերյալ Աստծո պատվիրանը: Մենք հայտարարում ենք նաև Աստծո այն պատվիրանը, որ ծնունդ տալու սուրբ զորությունը պետք է օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին:

Մենք հայտարարում ենք, որ երկրի վրա կյանքի ստեղծման ուղիները ղեկավարվում են Աստծո կողմից: Մենք հաստատում ենք կյանքի սուրբ լինելը և նրա կարևորությունն Աստծո հավերժական ծրագրում:

Ամուսինը և կինը սուրբ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց և երեխաների համար: «Որդիքը Տիրոջ ժառանգությունն են» (Սաղmws ճԻԷ.3): Ծնողների սուրբ պարտականությունն է՝ դաստիարակել երեխաներին սիրո և առաքինության մթնոլորտում, ապահովել նրանց նյութական և հոգևոր կարիքները, ուսուցանել նրանց սիրել և ծառայել մեկը մյուսին, պահել Աստծո պատվիրանները և օրինապաշտ քաղաքացիներ լինել, որտեղ էլ, որ ապրեն: Ամուսիններն ու կանայք՝ մայրերն ու հայրերը հաշվետու կլինեն Աստծո առջև այս պարտականությունների իրականացման համար:

Ընտանիքը հաստատված է Աստծո կողմից: Տղամարդու և կնոջ ամուսնությունը հիմնական մասն է Նրա հավիտենական ծրագրի: Երեխաները պետք է ծնվեն ամուսնացած ծնողներից և դաստիարակվեն մոր և հոր կողմից, ովքեր ընդունում են ամուսնության խոստումը և հնազանդվում դրան ողջ հավատարմությամբ: Ընտանեկան կյանքում երջանկության հասնելու ամենամեծ հավանականությունն այն դեպքում է, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա: Հաջողակ ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում և պահպանվում են հավատի, աղոթքի, ապաշխարության, ներողամտության, հարգանքի, սիրո, կարեկցանքի, աշխատանքի և առողջ ու ստեղծարար միջոցառումների սկզբունքներով: Ըստ աստվածային ծրագրի՝ հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքները սիրով ու առաքինությամբ, և պատասխանատու լինեն ապահովելու ընտանիքի կենսական կարիքներն ու պաշտպանությունը: Մայրերը, հատկապես, պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակման համար: Այս սուրբ պարտականություններն իրականացնելիս, հայրերն ու մայրերը պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար գործընկերներ: Անաշխատունակությունը, մահը կամ այլ իրավիճակները կարող են անհրաժեշտություն առաջացնել, որպեսզի փոփոխվեն ընտանիքի համար հոգ տանողների դերերը: Անհրաժեշտության դեպքում ընտանիքները կարող են ապավինել նաև մերձավորների օգնությանը:

Մենք զգուշացնում ենք, որ այն անհատները, ովքեր խախտում են ողջախոհության ուխտերը, բռնություն են գործադրում իրենց կանանց, ամուսինների կամ երեխաների հանդեպ, կամ թերանում են ընտանեկան պարտականությունները կատարելիս, մի օր հաշվետու կլինեն Աստծո առջև: Դեռ ավելին, մենք զգուշացնում ենք, որ ընտանիքի քայքայումը անհատներին, համայնքներին և ազգերին կպատճառի այն դժբախտությունները, որոնց մասին կանխագուշակել էին հին ու նոր մարգարեները:

Մենք դիմում ենք պատասխանատու քաղաքացիներին և կառավարության պաշտոնյաներին ամենուր, որպեսզի պայմաններ ստեղծեն և միջոցառումներ անցկացնեն ուղղված ընտանիքների, որպես հասարակության հիմնական միավորների, պահպանմանն ու ամրապնդմանը:

Որպես իր ուղերձի մի մաս՝ այս հայտարարությունը կարդացվել է Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի կողմից Կանանց Սփոփող Միության գերագույն ժողովին 1995թ. սեպտեմբերի 23-ին, Սոլթ Լեյք Սիթիում:

«Մենք անհանգստությունների ու ամբարշտության մեծ ժամանակներ ենք ապրում: Ի՞նչը կպաշտպանի մեզ մեղքից ու չարից, որ այնքան տարածված է աշխարհում այսօր», - հարցրեց Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Եկեղեցու 187-րդ ամենամյա գերագույն համաժողովին: «Ես հաստատում եմ, որ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին ամուր վկայությունը կուղղորդի մեզ դեպի անվտանգություն:. . . Ես քաջալերում եմ յուրաքանչյուրիս աղոթքով ուսումնասիրել Մորմոնի Գիրքը և խորհել դրա մասին ամեն օր: Երբ կարդանք այն, մենք կկարողանանք լսել Հոգու ձայնը, կդիմակայենք գայթակղություններին, կհաղթահարենք կասկածն ու վախը և երկնային օգնություն կստանանք մեր կյանքում»:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ԱՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 021445201 9